տել, որ Աւստրիայի գերեզմանը Թիւրքիայի գերեզմանից խոր է փորված. Նրա երակների մէջ վազող արիւնը, նրա կեանքը և ոյժը սլավիանութիւնն է: Այրանցիները սլավիաններից շրջապատված են և եթէ Աւստրիան կամենում է ապրել, պէտք է եղբայրական յարաբերութիւններ կապէ սլավեան երիտասարդ հօսանքի հետ»:

ԱՆԳԼԻԱ

Բրէդլօի գործը վճռվեցաւ անգլիական պարլամենտում: Մինիստրութիւնը այս օրերս խորհուրդ ունեցաւ և վերջապէս առաջարկեց համայնքների ժողովին հետեւեալ վճիռը:

«Ամեն մի անդամ համայնքների ժողովի իրաւունք ունի փոխարինել երդումը հաստատ խոստումով:»

Այդ վճռին աւելացրած է, որ իւրաքանչիւր անգլիացի կարող է դատ սկսել պարլամենտական այն անդամի դէմ, որ առանց երդման ընդունվել է պարլամենտում:

Յայտնի է որ անգլիական ոչ մի դատարան երբէք դատ չի սկսի այդ տեսակ գործի մասին:

Այդպիսով մինիստրութիւնը առաջարկեց մի րէզօլուցիա, առանց Բրէդլօի անունն անգամ յիշելու:

Մինիստրութեան այդ առաջարկութիւնը ընդունվեցաւ միաձայն: Ուրեմն այսօր կամ վաղը Բրէդլօ կրկին կը ներկայանայ պարլամենտին: Պահպանողական կուսակցութեան ընդդիմադրութիւնը այդ հարցի մէջ յաղթված է և մինիստրութիւնը յաղթող է դուրս եկել այդ խնդրի մէջ:

Ֆրանսիական լրագիրները, մանաւանդ «Débats» լրագիրը վրդովված են անգլիական պարլամենտի դէմ: Ի՞նչ իրաւունք ունի անգլիական պարլամենտը, ասում են ֆրանսիական թերթերը, քննութեան տակ դնել իր անդամների կրօնական համոզմունքները: Պարլամենտը ինկվիզիցիա չէ: Անգլիական պարլամենտը ցոյց տուեց իր կատարեալ կեղծաւորութիւնը:

Բրէդլօից անգլիական պարլամենտը փախչում է այն պատճառով գլխաւորապէս, որ նա հանրապետական է և սաստիկ հակառակորդ է արդեան անգլիական պետական հիմնարկութիւնների: Նա, օրինակ, այն կարծիքի է, որ լորդերի պալատը պէտք է բոլորովին ոչնչանայ:

ԹՈՒՐՔԻԱ

«Polit. Corresp.» լրագրին գրում են Կ. Պօլսից հետևեալը:

Որովհետև Աբեդդին փաշայից մշակված րէֆօրմների ծրագիրը Հայաստանի համար պաշտօնապէս դեռ չէ հաղորդված պետութիւնների դեսպաններին, բայց ներկայացրած է նրանց մասնաւոր կերպով, այդ պատճառով դեսպանները դեռ չեն քննել կատարելապէս այդ ծրագիրը: Ընդհանուր առմամբ այդ պրօէկտը անբաւականացուցիչ և նպատակին անհամապատասխան է համարվում: Կասկած չը կայ, որ եթէ մի համայնքի մէջ, որտեղ քրիստոնեաները փոքրամասնութիւն են կազմում պաշտօնեաները և ժանդարմները կրօնովին մահմեդականներից, քրիստոնեաները դարձեալ անպաշտպան կը լինեն: Դեսպանները անհրաժեշտ են համարում կազմել Հայաստանի համար, կամ ինչպէս թերթերը ասում են Քիւրդիստանի համար, մի առանձին օրգանական կանոնադրութիւն, որ սահմանէր Հայաստանի մէջ Արեւելեան Ռումելիայի պէս մի դրութիւն:

Գերմանական լրագրի այդ տեղեկութեան վրա մենք մեր կողմից աւելացնենք, որ Արեւելեան Ռումելիայի սահմանադրութիւնից աւելի լայն սահմանադրութիւն մենք չենք էլ ցանկացել և չենք էլ ցանկանայ առ այժմ Հայաստանի համար: Դա կը լինէր փրկութիւն ազգերի Թիւրքաց Հայաստանի համար:

ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 20 յունիս

Պատերազմի պատրաստութիւններն փութով առաջ կը տանի կառավարութիւնը, այլ ևս տարակոյս չը կայ թէ Բերլինի դեսպանաժողովի որոշումը Յունաց և Թրքաց միջև պատերազմ է, եթէ Եւրոպա իւր ներկայացուցիչներու որոշումն ուզէ որ Թիւրքերն ընդունին: Անգամ մը որ Բ. Դուռը Եւրոպայի չը հնազանդելու որոշումը տայ, Մօնթէնեգրոյի համար ալ նոյն ընթացքին կը հետևի: Բայց արդեօք վախճանը իրեն օգտակար կըլլայ, տարակուսական է. սակայն այս միջոցին Հայաստանի բարեկարգութեանց խնդրին առճիաց համար ոև է կարեւորութիւն չունենար, Եւրոպայի ընծան Եւրոպայի կը վերադարձնէ: Ցէրութեանց ծանուցագրի երրորդ կէտին, որ է հայկական խնդիրը, կառավարութիւնը իւր պատասխանը հաղորդեց դեսպանաց: Այդ պատասխանը տաճկական նենգ քաղաքագիտութեան կատարեալ օրինակն է, և ցոյց կուտայ թէ Բ. Դուռը տակաւին զենքովքա խաղալու յամառ կայի:

Նախորդ նամակաւ հաղորդած էինք թէ Հայաստանի բարեկարգութեանց համար մի քանի միջոցներ կը խորհուէին, յորոց մին պիտի ընդունէր Բ. Դուռը: Այժմ Բ. Դուռը կը պատասխանէ դեսպանաց թէ «Մասնաւորապէս հայ ժողովրդեան համար ոև է բարեկարգութիւն երբէք չընդունիր, այլ ամբողջ ասիական Թիւրքիան մէկ աչքով կը նկատէ և ամենուն հաւասարապէս բարեկարգութիւն պիտի շնորհէ, և թէ այս բանին լաւագոյն միջոցն կը համարի Եւրոպայի Տաճկաստանի կազմակերպութեան համար պատրաստուած ծրագիրներն ի մի ունենալով, նմանօրինակ կազմակերպութիւն մը ներմուծել անդ»:

Եթէ տաճիկներն լաւ ճանչցած չըլլայինք անշուշտ այս յայտարարութիւնը զմեզ պիտի գոհացնէր, բայց այդ պատասխանին քիչ շատ ուշադրութիւն ընծայողը անմիջապէս պիտի տեսնէ թէ ասիկա նպատակ չունի դա, բայց եթէ բարեկարգութեանց խօսքն երկար ժամանակի մը յետաձգել: Երկու տարի է որ Բերլինի վեհաժողովն որոշեց Եւրոպայի Տաճկաստանի համար մասնաւոր կազմակերպութիւն ի գործ դնել, և այդ երկու տարիներու մէջ, Եւրոպիոյ աչքին առջև, ինչ ըրաւ Թուրքիա: Գնա Յանձնաժողովը նիստեր կը գումարէ, պատրաստութիւններ կը տեսնէ և Աստուած միայն գիտէ թէ որ ժամանակ իւր աշխատութիւնները պիտի վերջացնէ. ամեն մէկ նաւին Թուրքիոյ ներկայացուցիչներն աղաւ էն խնդրոց վրա երկարօրէն վիճաբանելով, ուզածնուն չափ երկարել գործը, բայց որ մը անշուշտ կը վերջացնեն և կարգը կուգայ զայն ի գործ դնելու, որ ձգենք թէ ինչպէս կըլլայ: Այնուհետև նորէն կը սկսին վիճաբանութիւնք ասիական գաւառաց համար, զի ինչպէս յայտնի է, այդ ծրագիրն իբր հիմ պիտի ծառայէ, զի եթէ ամբողջապէս զայն ի գործ դնել ուզուէր Ասիոյ մէջ, այն ատեն խնդիրն ուրիշ կերպարանք կառնէր: Յանձնաժողովը պիտի կարօտի լաւ տեղեկութիւններ ունենալ Հայաստանի, Արաբիոյ, Ասորեստանի, և այլն մասանց վրայ. պիտի տեսնէ որ միօրինակ ծրագիր կարելի չէ ամենուն համար. առանձին առանձին ծրագիրներ պատրաստելու է, մանաւանդ որ նոյն իսկ եւրոպական գաւառաց համար ալ առանձին կազմակերպութեանց պէտք կը տեսնեն: Ալ կը սկսին մտածել, վիճել, խորհել, ինչ և է բաւական ատեն կանցնի: Այս միջոցիս Բ. Դուռը իւր ներկայացուցիչներէն դժգոհ կըլլայ, կը փոխէ զանոնք կամ հարկը կը ստիպէ նոր պաշտօնի մը կոչել զանոնք. յաջորդներն լաւ մը գործը չեն գիտեր, պէտք է աղէկ մը հասկնան, ժամանակի կարօտ է: Ենթադրենք թէ լմնցուցին, անշուշտ ամեն ջանք կընեն որ քրիստոնեայ տարրերն՝ սկար պաշտպանութիւն մը լինի, և այս արհեստին մէջ վարպետ են: Բ. Դուռը կը քննէ այս ծրագիրը, կառաջարկէ բարեփոխութիւններ. Յանձնաժողովը նորէն քննութեան կառնու, և մինչ այս մինչ այն, տարիները կը սահին, Բ. Դուռը Եւրոպիոյ հարցմանց կը պատասխանէ թէ ինչ ընէ, անհատակ իւր Յանձնաժողովոյ ձեռամբ կը գործէ, կիսակատար ծրագիր մը ինչպէս ի գործ դնէ. այսպէսով բաւական տարիներ կը վաստկի, ո գիտէ ինչ կըլլայ ինչ չըլլար այս միջոցիս: Միայն մէկ ստոյգ բան մը գիտէ Բ. Դուռը թէ երկու երեք տարուան օգնութեամբ և ամեն տեսակ նենգութիւններով սոսկալի հարուածներ կրնայ տալ Հայաստանի. Նոր հրկիզութիւններ, նոր սովեր, բանի համաճարակ հիւանդութիւններ, կեղեքումներ, դրամագլուխներն փճացնելու եղանակներ, վերջապէս ժողովուրդ մը ոչնչացնելու այն ամեն ճարտար միջոցները, որոց համար տաճիկներն սքանչելի յատկութիւններ ունին: Ի՞նչ պիտի ընէ Եւրոպա: Եթէ եւրոպական մամլոյ հաւատանք, հայկական խնդիրն կարգադրելն Եւրոպիոյ շահն է և թէ պիտի փութան այդ կարգադրութիւնն ընել: Սակայն Կ. Պօլսի ազգային պաշտօնական շրջանակներն պ. Գօշէնի վրա աւելի մեծ յոյսեր կը տածէին և զինքն այսքան չափաւորեալ չէին կարծեր. երկիւղը սկըսած է տարածուիլ, թէ արդեօք Հայաստանի խնդրոյ համար պ. Գօշէն ալ Լէյարդի գաղափարներով պիտի մտանէ. Պատրիարքը և Գօշէն երբ անցեալ օր Հայաստանի բարեկարգութեանց վրա կը խօսին, պ. Գօշէն զարմացմամբ կը հարցնէ Սրբազանի—ուրեմն դուք կուզէք Հայաստան մը կազմել—Գօշէնի այս զարմացական հարցումը, եթէ ներելի լինէր ռամկական բացատրութիւն մը գործածել, պիտի ըսէինք թէ, տաք ապուրին մէջ պաղ ջուր լեցնելու կը նմանէր:

Ի՞նչ ընենք որ մեք խելքի պակասութիւն ունինք, երբ դեսպան մը, երբ մեծ այցելուներ, Կ. Պօլիս եկած ժամանակին միայն Պատրիարք մը տեսնելու առիթ կունենան և ոչ այլ ոք հայերէն, բնական է որ իրենց գաղափարներն մեծապէս ազդեցութիւն ստանան մեր հակառակորդներէ, որք չարաչար կը ջանան զիրենք շրջապատել: Մեծ փափագ և քիչ խելք—ահա այս է մեր արդի վիճակը:

Թիւրքերն մեր ամեն գործոց լաւ ուշադիր ըլլալով, ըստ այնմ ական կը փորեն: Ուրիշ անթիւ գրեցինք թէ կառավարութիւնը հայկական պահանջմանց դէմ քիւրդերն կը պատրաստէ. եթէ մէկ կողմէ պիտի զինէ զանոնք, միւս կողմէ դիւանագիտութիւն պիտի ուսուցանէ նոցա: Երէկ Թիւրք թերթերն կը հաղորդեն թէ Շէյխ Իպատուլլահ հանդերձ մի քանի քիւրդերով պատգամաւոր կուգայ Կ. Պօլիս ի դիմաց քիւրդ ժողովրդեան: —Ի՞նչ բանի համար գալերնին, տարակոյս չը վերցնէր, հայ պահանջմանց դէմ քիւրդ պահանջումներ ընել, և ցոյց տալ եւրոպական դեսպանաց թէ հայկական ինքնավարութեան բառը երբ արտասանուի, ամեն քիւրդերն ի զէն պիտի դիմեն: Դժբաղդաբար շատ դժուարութիւն պիտի չունենան զուրկինքերն համոզելու. մինչ նոյն իսկ մենք չենք որ ամեն տեղ պոռացինք թէ քիւրդերն զէնք ունին, մենք զէնք չունինք: Այսօր ամեն կողմ գաղափար տարածուած է թէ քիւրդերն թէպէտ և վայրագ, բայց կորիճ են,—սխալ գաղափար, բայց ինչ օգուտ արմատ ձգած է: Երբ զինեալ ժողովուրդ մը պահանջներ կունենայ և անզէն ժողովուրդ մը պահանջներ կունենայ, հաւանական է որ յաղթանակը զինեալը տանի:—Բայց ով կը խօսի այս պատգամաւորներն, դա յայտնի է որ ինքնակոչ են:—Կայ քիւրդ ժողովուրդ մը որ պահանջումներ ընէ.—ոչ.—Բայց քանի որ խլամութիւնը Թրքաց հնարքն է, ուզածին պէս կը գործածեն. վաղը կը տեսնես թէ տեղական խլաութեան ազդեցութեամբ կը յարձկին հայոց վրա քիւրդերն, և հոս կառավարութիւնը կը յայտարարէ թէ հայոց ինքնավարութեան խնդիր կայ և դորա համար է, մինչդեռ խռովարարն մաքէն չանցնիր: Դիւանագիտական հարցերու մէջ Թրքաց հետ մրցելու համար շատ խակ ենք—Սովու համար անչափ խաղեր խաղացին մեզ և յաջողեցան, ինչ կրցանք ընել,—դեռ երէկ տեղւոյս եւրոպական թերթերն զարմացմամբ կը հրատարակեն թէ հետագրատանց նորընտիր պաշտօնեայն սովեալ յանձնաժողովոյ եկած հեռագիրներն չը յանձներ կեդրոնական ժողովոյ և թէ ժողովն մեծ անտարբերութեան մէջ է. Թերթերն այս լրոյն չեն ուզեր հաւատալ, բայց այսօր կեդրոնական յանձնաժողովէն տուեցինք թէ կատարելապէս ճիշդ է:—Զարմանալու բան չը կայ:

Պ. Արդար երէկ մեկնեցաւ աստի: Ամէն անոնք որ առիթ ունեցան իրեն հետ տեսնվելու մեծապէս գոհ եղան և կը փափագէին որ երկար ատեն դեռ Կ. Պօլիս մնար. կը լսենք թէ հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան մասին մի քանի բարեկամաց հետ կարգադրութիւններ բրած է, միայն փափագելի է որ այդ պարոնները չը մոռնան իրենց խոստումներն պ. Արդարի բացակայութեան միջոցին Կ. Պօլսոյ մէջ դաս մը անձինք կան որ բարձր ընկերութեան կը վերաբերին, ստարական մը մեծամեծ յոյսեր կրնայ դնել նոցա վրայ, բայց պէտք է գիտնալ որ նոցա աւելի լաւ խորհրդատուներ են, քան թէ գործ տեսնողներ: Պ. Արդար վերջի երեկոյ Դպրոցասէր—Հայուհեաց Օրթագիւղի ազգասէր վարժարանը այցելեց. անցեալներն առիթ ունեցայ ծանօթացնել «Մշակի» ընթերցողաց այս անձնուէր ու խելացի ազգեանց ընկերութիւնը, որ լուիկ մնջիկ Հայաստանի համար նախակրթիչ վարժուհիներ կը պատրաստէ, դաստիարակելով Կ. Պօլիս գտնվող հայաստանցի աղքատիկ աղջիկներն: Շատ զարմացաւ պ. Արդարը, երբ լսեց թէ վերջերս Տփղիսէն չորս հարիւր ռուբլի նուէր մը զոր խրկած են հոս Դպրոցասէր Հայուհեաց Ընկերութեան, իրենց չէ յանձնուէր, այլ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան: Իրենք չէին գիտեր թէ այս գումարը իրենց եկած լինի, բայց պ. Արդար ապահովցուց թէ այս անուամբ ժողված են, և թէ տիկնայց յանձնաժողովի մէջ է նաև տիկին Յովհաննիսեանց, հետևաբար ոև է տարակոյս չունէր, ուստի Պատրիարքարանի պիտի դիմեն և խնդրեն որ այս գործին վրայ տեղեկութիւն տան: Մեք ևս կը խնդրեմք Տփղիսի ազնուահի տիկիններէ, որ հաճին այս մասին տեղեկութիւն մի հաղորդել «Մշակի» միջոցաւ: Զի լաւ է որ ամեն ընկերութեանց համար ժողվածներն իրենց յանձնուին, եթէ սխալում լինի վստահութիւնը կրնայ պակսիլ: Ազգանուէր Հայուհեաց ընկերութիւնն ալ շատ յարգելի է, և փափագելի է որ անոր համար ևս հանգանակութիւն լինի:

Այս երեկոյ հրատարակուած թերթերն կը հաղորդեն թէ՝ դեսպանք գոհ չեն եղած կառավարութեան պատասխանէն հայկական խնդրոյ մասին և թէ եւրոպական տէրութեանց ներկայացուցիչներն միաձայն հաւանութեամբ պիտի հաղորդեն Բ. Դրան թէ իրենք իրենց ծանուցագրին մէջ ամբողջ ասիական Թիւրքիոյ համար բարեկարգութիւն չեն պահանջած, այլ յատկապէս Հայաստանի համար յենլով Պերլինի դաշնագրի վրայ. Թիւրք մամուլը ցաւ կը յայտնէ որ յատուկ Հայաստան գաւառ մը ճանաչելով, Եւրոպա նորա համար առանձնաշնորհեալ բարեկարգութիւններ կը պահանջէ.—Կը խօսուի նաև Անգղիայէն առ Գօշէն եկած մասնաւոր հրահանգներու վրայ, այս հրահանգներն մեզ նպաստաւոր կը կարծուի: Տեսնենք:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 27 յունիսի: Զաւնխսու ներված է: Գլէդստոնը չէ կամենում վիրաւորել Ռուսաստանի արժանաւորութիւնը, նա կամենում է շարունակել բարեկամական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ:

Կ. ՊՕԼԻՍ, 28 յունիսի: Հուսէյն փաշա նշանակված է պատերազմական մինիստր:

ՓԱՐԻԶ, 28 յունիսի: Չափաւորական կուսակցութեան բոլոր լրագիրները ասում են որ սենատը քուէարկեց երէկ կատարեալ ներողութիւն: Նրանք հրաւիրում են պատգամաւորների ժողովը ընդունել օրէնքի ծրագրի այն նոր ձեւակերպութիւնը, որ նրան տալ է սենատը:

ՎԱՐՇԱՎԱ, 27 յունիսի: Դատարանը ծծկեր երեխաներին ջնջելու գործի պատճառով պատժի դատապարտեց, Նեժէօլին զրկել բոլոր իրաւունքներից և առաւելութիւններից և ուղարկել գործաւորների տունը ամենածանր աշխատանքների համար երեք տարով պօլիցիայի հսկողութեան տակ. Նիֆէրսին չորս տարով բանտի դատապարտել և 4 ամսով եկեղեցական ապաշխարութեան, Սոխմպիակին երեք ամսով:

Կ. ՊՕԼԻՍ, 29 յունիսի: Դադի Օսման փաշա հրաժարական է տալիս պատերազմական մինիստրի պաշտօնից և մնում է պալատի մարշալ:

ԼՕՆԴՕՆ, 30 յունիսի: Բրիտանական ամբարձած գիւքեր Կաբուլի մօտ հրամայված է ոչնչացնել: «Times» լրագիրը համարում է Օսման փաշայի հրաժարականը մի ապացոյց, որ Սուլթանը ընդդէմ է այժմ Եւրոպայի կամքին ընդդիմադրութիւն անելուն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 91 1/8 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակը արժէ 228 ր. 25 կ., երկրորդ 223 ր. 50 կ., արեւելեան առաջին 91 7/8 ր., երկրորդ 91 ր. 50., երրորդ 91 ր. 25 կ., ոսկի 7 ր. 76 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25 15/32 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 218 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 268 ֆր. 75 սանտիմ Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է,

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՒՆՆԵՐ

ПО СЛУЧАЮ ОТЪѢЗДА ВОВСЕ СЪ КАВКАЗА ЗА-ГРАНИЦУ

Капитанъ князь Константинъ Макаровичъ Орбеліани объявляетъ, что продаетъ оставшееся послѣ смерти отца, Макарія Орбеліани, имущество, именно: трехъ-этажный домъ на Головинскомъ проспектѣ, съ флигелями, гдѣ помѣщается гостинница «Россія», и имѣнія въ Тифлисской губерніи и уѣздѣ, именно: деревня Геуары, населенная жителями, 4,174 десят., Вашлеванъ—450 десятинъ, съ садами, домомъ и пристройками; дача въ Коджорахъ, домъ и земля $2\frac{3}{4}$ десятины; лѣсъ сосновый, строевой и дубовый 3,100 десят. въ Локскомъ ущельи, Шулаверскаго уѣзда, около Чатахскаго завода; имѣніе на Мокрыхъ-горахъ, около молоканскаго селенія Воронцовки, подъ названіемъ Каракала — 5,500 десят. Всѣ имѣнія обмежеваны и имѣются планы; коляска, фаэтонъ, верховыя лошади, баранта и рогатый скотъ.

3—3

ՄՕԶԴՈՒԲԻ

Հայոց օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի վարժուհի նպատակաւոր պայմաններով: Յանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրատանը պայմանների մասին տեղեկութիւն համար:

5—10

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օէօգրաֆիական պատկերներ 20% զիջում մեծ վերարկուներ 6—20 ր., խոզանակներ պատվիճուած են լոյի մէջ առանձնա հա անպլիական խանութի համար, ամենապատ ածելիներ, արկղիկով 4 ր., նեֆիլդի դանակներ 3—20 ր. գիւժիներ, բրիտանական մեծ տալի թէյամաններ 30 կ.,—3 ր., ցիտրատ մագնեզիա, թիւրքական շերբէթ և ծարաւը բացող նիւթ 70 կ., ամենապատ պօրտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

Համեմատեցէք անգլիական խանութի թէյն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի Ֆունտը2 բուրլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

24—100

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ երեխաների 4 ր., տղամարդկերանց 9—20 ր., ամբողջ հագուստը, պէջակ 5 ր., ՈՐՏԵՂ Է ԾԱԽՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամպէյ, դարսաբոն, արկղ, դրապ, փօստի թուղթ, թուբէշ կարթաիքի և կաուքերի համար, կալենկօր և այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համեղ մաբարաներ, կօնֆետներ հազի գէմ, պաներ, մարմնեղէա, ամանեներ, կարբօլեան փոշի, սապօն, պարսկական փոշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄԵՆԱԺԱՆ գներով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

20—20

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 30-ից ապ. ՅՈՒՐԻՆՈՎԻ և ընկ. գեղերի ԽԱՆՈՒԹԸ և ՊԱՀԵՍՏԸ կը լինի ԽԻՏԱՐՈՎԻ տանը, Եաբուրովի տան կից, որտեղ դանւում է նահանգական փարչութիւնը Մուդէուի գիմացը:

2—3

ԳԵՐԱԶԱՆՑ ԱԼԻՒՐ 2-որդ ՏԵՍԱԿԻ

Պատահած մաքուր յօրինից առանց թեփի, բերած է Կյոկից և ծախվում է Կուկիայում նոր բացված պահեստում, ելլեզավէտինակի փողոց, տուն Քանանօվի, Փօթիխինիլիսեան երկաթուղու փարչութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս Կյոկից բերած և Փօթիում պահվող 5000 պուդ մաքրված գարի:

4—5 (2)

ՄԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, *որ գիտէ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿԱՆԽՏՕՐՉԱԿԻ ԳՈՐԾԱԿԱՏՏԱՐԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Յանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:*

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՏԱՆ 9—13 ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Օրաւէվիչ ներքին հ., Ծատնանց կանանց և երեխաների հ., Քիրիլիսեան երկաթուղու փարչութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս Կյոկից բերած և Փօթիում պահվող 5000 պուդ մաքրված գարի:

Երեքշաբթի. Մինսկիվիչ խիրուրգիական հ., Վ. զօրօվ վիներական և բողազի հ., Էֆխե աչքի հ., Ռախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլազօվ, Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցկի Ռուվոմակի ներքին հ., Շտեյմրօսկի կեներական և կաշու հ., Առաուծառուրօվ կանանց հիւանդութիւններից:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վինեքսան և բողազի հ., Ծատնանց կանանց և երեխաների հ., Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ., Գրուզաբանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինսկիվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլազօվ և Լիսիցկի ներքին հ., Ռախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմրօսկի և Ասատուռօվ վինեքսան և կաշու հ., Բարսեղեան ջղային և հոգեկան հ.:

Շաբաթ. Մինսկիվիչ խիրուրգիական հ., Վ. զօրօվ վինեքսան և բողազի հ., Էֆխե աչքի հ., Ռախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմրօսկի վինեքսան և կաշու հ., Բարսեղեան ջղային և հոգեկան հ.:

Շաբաթ Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ., Ռօվոմակի վինեքսան և բողազի հ., Էֆխե աչքի հ., Ռախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլազօվ, Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ., Գրուզաբանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինսկիվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլազօվ և Լիսիցկի ներքին հ., Ռախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմրօսկի և Ասատուռօվ վինեքսան և կաշու հ., Բարսեղեան ջղային և հոգեկան հ.:

Շաբաթ Լիսիցկի և Վերմիշևի ներքին հ., Ռօվոմակի վինեքսան և բողազի հ., Էֆխե աչքի հ., Ռախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմրօսկի վինեքսան և կաշու հ., Բարսեղեան ջղային և հոգեկան հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ապրատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարսեղով չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բարանդուրովի տանը:

Առաւօտեան 9 ր ե խա ապրատ հիւանդներին բժշկանոցի տումակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կէտահի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի վերակաց Լիսիցկի:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

ԻՒԼԻՒ ՀՆՆԻԻ ՅԻՄԵՐՄԱՆԻ,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ԻՕԼՇԱՅԱ ՄՈՐՍԿԱՅԱ, № 42

Առաջարկում են արտասահմանի ամենալաւ գործարաններից նորերում ստացված երաժշտական գործիքներ:

ՋՈՒՔԱԿՆԵՐ $2^1/_2$ ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 150 ր., ԿՆՏՆՏՈՑՆԵՐ (сжычекъ) 50 կ., $1^1/_2$ ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանգ մինչև 25 ր., ԱՐԿԱՆԵՐ $2^1/_2$ ր., $5^1/_2$ ր., 6 ր., 7 ր., 10 ր. և աւելի թանգ մինչև 20 ր.: Հին իտալական և գերմանական ջութակներ մինչև 600 ր.: ՋՈՒՔԱԿՆԵՐ փոքր դիրքի երեխաների համար 2 ր. 50 կ. մինչև 30 ր.: Ջութակի չհօլա (ինքնուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.: ԱԼՏԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանգ: ՎԻՕԼՕՆՉԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանգ մինչև 600 ր.: Վիօլանչելի չհօլա 4 ր.: ԿՕՆՏՐԲԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանգ: ԳԻՏԱՐ 3 ր. 50 կ., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Գիտարի չհօլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 2 ր., 3 ր.: ՅԻՏՐԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Ցիտարայի չհօլա 2 ր., 3 ր. 50 կ., նօտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իւրաքանչիւր տետրակը: ՄԱՆԴՕԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ. չհօլա 3 ր.: Ամենալաւ իտալական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՕՆ 40 կ., 50 կ., 1 ր., 50 կ., 2 ր., 6 ր.: Սուրդին կանիֆոլ և այլ պատկանելիք: ՄԵՏՐՕՆՕՄ 8 ր., 12 ր.: Երկաթի ծալվող ՊԻՊԵՏՐՆԵՐ 5 ր.: Երկաթի ծալվող պիւպետրներ մամականերով 6 ր., 8 ր.: Գերմանական ԳԱՐՄՕՆՆԵՐ 4 ր., 4 ր. 50 կ., 5 ր. 50 կ., 7 ր. 50 կ., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ: Գարմօնիայի չհօլա և նօտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1 ր. 50 կ., իւրաքանչիւր տետրակը: ԿՕՐՆՈՓԻԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Շհօլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 4 ր., 5 ր.: ԱԼՏՕՐՆ, ՆԵԱՆԱՓՈՂԵՐ, ՏՐՕՄԲՕՆՆԵՐ, ՖԼԻՑԱՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ: Շհօլա (ինքնուսուցիչ) $1^1/_2$ ր., և 3 ր. նօտաներ 40 կ., $1^1/_2$ ր., 3 ր. իւրաքանչիւր տետրակը: ԿԱՐՆԵՏՆԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր.: Կարնետի չհօլա 4 ր., Բեկհօլօ, Զականի, Ֆլաժօլետներ: Անգլիական ԿՕՆՑԵՐՏԻՆՕ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր., և թանգ մինչև 160 ր.: Շհօլա 3 ր., նօտաներ 50 կ., 75 կ., 1 ր., $1^1/_2$ ր., Գերմանական կօնցերտինօ 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր.: Շհօլա (ինքնուսուցիչ) 75 կ., նօտաներ 40 կ., և 1 ր. իւրաքանչիւր տետրակը: Երաժշտական արկղներ 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր.: ՖԻՊՐԱՐՄՕՆՆԵՐ 90 ր., 100 ր. 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանգ: ԳԱՐՄՕՆՆԵՐ ՖԼԻՑԻ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր., 90 ր.: ԳԱՐՄՕՆՆԵՐ ֆիրմաի ՕՐԳԱՆՈՎ 175. և 225 ր.: ՇԱՐՄԱՆԿԱ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.: Իտալական չարմանկաններ 150 ր., 200 ր., 250 ր.: ՕՐԳԱՆՆԵՐ Թաչուններ համար 10 ր., 15 ր.: Թմբուկներ, լիտաւրներ, բանչուկներ, բանդօնիան, մետալական չրթունքների բերկաներ, եաանկիւնիներ, գործաններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշդութեամբ: Յանապարհածախսը գնողինն է: Ծախվում են հատով և մեծ քանակութեամբ:

1—1

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Ծախվում են ԸՆԿՈՒԶՆՈՒՑ լաւ շինված ՊԱՀԱՐԱՆՆԵՐ (շիտաֆներ) երանց բոլոր յարմարութիւններով: Կարելի է տեսնել ամենայն օր Սօլօլակ, տուն իշ. Սաւվաւտովի, Վարշավսկայա պեկարնիա:

5—5 (2)

Ծուխի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՅԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԻ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԻՑ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ:

7—40

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, բեմբլիներ, գանահներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապօն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

15—20

Маленькій магазинъ дешевыхъ и modныхъ матерій для дамскихъ платьевъ, открытый Г-жею Чернышевой, переведенъ изъ Головинскаго проспекта въ домъ Г-жи Варламовой, на Воронцовской Набережной, противъ Сабанскаго моста.

Въ Тифлисѣ Кавказская книжная торговля З. П. Грикурова.

15—20

Вышелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ **„Сборника свѣдѣній о Кавказѣ“**, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«ТИФЛИСЪ ПО ОДНОДНЕВНОЙ ПЕРЕПИСИ 25-го МАРТА 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложеніями, а именно:

1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;

2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);

3) копія съ плана Тифлиса по царевичу Вахушту (1739 г.);

4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Береништама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна **4 руб. сер.**; на пересылку прилагается за 5 фунт.

Дозволено Цензурою 1 Іюля 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միքելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 113 Յուլիսի 3 (15) 1880 Յուլիսի 3 (15) № 113

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թղթակցութիւն գրւում են միմիայն խմբագրատան մէջ։

Յատուկ պատգամներ գրւում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նոցի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկուսից մէկը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ղարսից։ Նամակ Նոր-Նախիջեւանից։ Նամակ Շուշուց։—Արտաքին տեսութիւն։ «Новое Время» լրագիրը հայերի մասին։ Թիւրքիա։ Ֆրանսիա։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ԵՐԿՈՒՍԻՑ ՄԷԿԸ

Մինչև այժմ յայտնի չէ ինչ սկզբունքին է հետևում Թիւրքիան Յայաստանում վերանորոգութիւններ մտցնելու գործում՝ կրօնական, թէ ազգային սկզբունքին։ Մինչև այժմ յայտնի չէ ինչ տեսակէտից է նայում լուսաւորված Եւրոպան տեսական Թիւրքիայում բնակվող ժողովրդների վրա, որոնց համար բարենորոգութիւններ է պահանջում՝ արդեօք նայում է Եւրոպան նրանց վրա, որպէս ազգութիւնների վրա, թէ որպէս կրօնական համայնքների վրա։

Ի հարկէ եթէ Թիւրքաց Յայաստանի ազգաբնակութիւնը կը բաժանվի այն ձևով, որ մի կողմ կը դրվին բոլոր մահմետականները, իսկ միւս կողմ միմիայն հայուսաւորչականները,—այդ վերջինների թիւը շատ նշանաւոր չի եղելայ և մահմետականները, ի հարկէ, մեծամասնութիւնը կը կազմեն։

Նայց մեր կարծիքով, որպէսզի լինելու համար, պէտք է երկուսից մէկն անել՝ կամ պէտք է բաժանել Յայաստանի ամբողջ ազգաբնակութիւնը երկու որոշ խմբերի վրա՝ արդարութեամբ գործ դնելով կրօնական սկզբունքը, կամ բաժանել այդ ազգաբնակութիւնը երկու որոշ խմբերի վրա՝ գործ դնելով ազգային սկզբունքը։

Առաջին դէպքում, եթէ մէկ կողմ են դնում մահմետականներին, միւս կողմ պէտք է դրնել ոչ թէ միայն հայ-լուսաւորչականներին, այլ Յայաստանում բնակվող բոլոր քրիստոնեաներին, այն է՝ հայ-լուսաւորչականներին, հայ-բողոքականներին, հայ-կաթոլիկներին, հայ-յունադաւանների, օրթոդոքս յոյներին, կաթոլիկ յոյներին, ասորի-Նեստորեանների, ասորի բողոքականներին, ասորի-կաթոլիկներին, կաթոլիկ դահլեճին է, կամ կաւտարեալ անհատակացողութիւն է։

Երկուսից մէկը, կրկնում ենք մենք. եթէ յիշում էք բոլոր մահմետականներին, յիշեցէք և բոլոր քրիստոնեաներին։ Իսկ եթէ յիշում էք հայերին, ուրեմն ազգային տեսակէտից էք սկսում նայել ազգաբնակութեան վրա, այն ժամանակ յիշեցէք բոլոր հայերին, ուրեմն և մահմետական հայերին։

Ներլինի դաշնագրի 61-րդ յոդուածում Եւրոպան նեղ կրօնական հայեացքին չէ հետևել, այլ հետևել է յայն ազգային պրինցիպին։ Նա չէ պահանջել վերանորոգութիւններ Յայաստանում բնակվող այն հայերի համար միայն, որոնք ենթարկվում են Էջմիածնի վանքի հոգևոր իշխանութեանը, այլ ամեն հայերի համար։

Ինչ գործ ունի կրօնը ազգութեան հետ։ Մի ազանդի համար բէֆօրմներ չէին պահանջի, այլ մի ամբողջ ազգի համար։ Իսկ հայոց ազգը Թիւրքաց Յայաստանում բաղկացած է լուսաւորչական հայերից, բողոքական հայերից, կաթոլիկ հայերից, յունադաւան հայերից և մահմետական հայերից։

Թող այս տեսակէտից նայելով հայերի վրա Թիւրքիան հաշւի նրանց թիւը և թող այն ժամանակ Եւրոպան հասկանայ՝ իրաւունք ունի արդեօք հայոց ազգը կաւտարեալ ինքնավարութիւն ըստանալու։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

—

Մայիսի 23

Ուզարկում ենք ձեզ մի դուսար, որ ժողովեցինք Կարսի հայ հասարակութիւնից յօգուտ վաճառականի սովելոց։ Չը նայելով տեղիս սովին և անպատմելի թանգութեանը, պէտք է ասել որ ժողովրդը հասկանալով ընդունելս մեր առաքելութիւնը և իր ազգասիրական քաղաքից ամենայն ջերմեռանդութեամբ տուց այդ նուէրները։ Նուիրատուց ցուցակից կը տեսնէք, որ ոչ մի պարոն փոքր ի շատէ նշանաւոր գումար նուիրած չէ, սոյն պատճառը հասկանալի կը լինի, եթէ ասենք որ այդ գումարը ժողովել ենք գրեթէ հասարակութեան մէջից և սորին դասակարգերից, իսկ տեղիս հարուստ հայ ազգասէրներից չէ ազ իւ ա զ ան ե ր ը, մի քանի բացառութեամբ, չը կամեցան մասնակցել, վախենալով որ մի գուցէ ղրկվին իրանց պաշտած կիսատուսածից։ Սակայն այնու ամենայնիւ մեզ գոյք և կը յաջողէր աւելի մեծ գումար ժողովել, եթէ մի հանգամանք արգելք չը դառնար։ Սորանից առաջ գաղթական ալաչկերտցիներին և տեղիս բնակիչ հայ ազգասէրներին հաց մատակարարելու համար սրբազան առաջնորդի յորդորանօք ժողովրդեան զոհաբերութեամբ հաւաքվեցաւ 2500 ր., այդ գումարից Յարութեան տօնին 400-ի չափ բաժանվեցաւ ազգասէրներին, իսկ մնացեալ գումարի մի մասը պնա. ևս բոլորովին չէ հաւաքված իսկ միւս մասը մանաւանդ անգամների համաձայնութեամբ տուած է մի վաճառականի տոկոսով, երևի այն նպատակով, որ այդ գումարը իր բարդ տոկոսներով աճելով, 50 տարուց ետը, գալոց սովի ժամանակ գործածվիր։ Այո, միայն այդպէս կարելի է բացատրել այդ գումարի տոկոսով տալը այս ձգնաժամին մէջ, երբ կարծի ամեն մի դրան առաջ թափված կը տեսնէք հայ գաղթականներ իրանց մերկ և բոկոտն երեխաներին ձեռքներից բռնած հաց մուրալով։ Մանաւանդ այդ տեսակ անձերի վարմունքը իրանց յանձն առած պաշտօնի մէջ խոչնդոտ դարձաւ մեզ աւելի նպատակաւոր գումար ժողովելու յօգուտ վանայ սովալուկների, ուստի որ կը դիմէինք փող խնդրելու մի պատասխան կը առանայինք տերկու. ամիս առաջ էլի ժողովեցին, բայց ժողոված փողերի գործադրութիւնը չը տեսանք, մենք մեր փողերը աւելի լաւ կը պահէինք, քան թէ ուրիշները։ Մի այլ իրողութիւն ևս արժանի է ուշադրութեան, այն է՝ թէև կարեւոր զարմանալի անտարբերութիւնը դէպի ազգային գործերը ընդհանրապէս և մանաւանդ սոցա սառնասիրտ վերաբերվելը դէպի Թշուառ վանեցիքը։ Շրջելով խանութները, մենք ոչ մի կարսեցի խանութպետերից չը կարողացանք ոչինչ առանալ։ «Ամեն մարդ Թող իր գլխի չարչէն տեսնէ», ահա քսա մեծի մասին ինչ պատասխան էինք առանում, մինչ զի յետին ազքատ օտարականը իր կարողութեան չափ նուիրում էր, և ընդհանրապէս պէտք է ասել, որ ղբթիթէ բոլոր նուիրատուները, շատ փոքր բացառութեամբ, օտար քաղաքացիք են, և մեծ մասամբ ալէքսանդրապօլցիք։ Ահա և սոցա ցուցակը, որը կը խնդրեմ տպագրել։

Կ. Ադամիկեանց 35 ր., Ս. Մաւրուկեանց 30 ր., Գ. Էհրամկեանց 15 ր., տ. Ս. Ղազարեանց 15 ր., Ա. Ղազարեանց 10 ր., Գ. Կամկամեանց 10 ր., Գ. Յարութիւնեանց 10 ր., Ս. Բազդասարեանց 10 ր., Գ. Էհրամկեանց 10 ր., Գ. Ադամեանց 10 ր., Կ. Մկրտչեանց 10 ր., Մ. Պալասեանի 10 ր., Յ. Ալվազեանց 7 ր., Ս. Բարաթեանեաց 7 ր., Յ. Լալայեանց 5 ր., Ա. Սաֆրազեանց 5 ր., Ղ. Գարագաշեանց 5 ր., Ա. Շահպարեանց 5 ր., Գ. Գալատեանց 5 ր., Գ. Գրիգորեանց 5 ր., Ս. Մըկրտումեանց 5 ր., Յ. Կիւրեղեանց 5 ր., Ս. Կուզիկեանց 5 ր., Թ. Ղալթաղկեանց 5 ր., Ս. Խաչատուրեանց 5 ր., Գ. Տէր-Անտոնեանց 5 ր., Գ. Գալանթարեանց 5 ր., Մ. Աբաջեանց 5 ր., Ա. Զաքիկեանց 5 ր., Մ. Խանամիրեանց 5 ր., Ս. Պատասեանց 5 ր., Կ. Արապզուլեանց 5 ր., Մ. քահանայ Տէր-Մելքիսեդեկեանց 5 ր., Վ. Նիկողոսեանց 4 ր., Գ. Ղազարեանց 4 ր., Յ. Կրասիլնիկեանց 4 ր., Մ. Պօղոսեանց 3 ր., Գ. Թէլեթեանց 3 ր., Տ. Բէժանեանց 3 ր., Ա. Միրզոյեանց 3 ր., Ս. Ատոյեանց 3 ր., Մ. Տէր-Ատոմեանց 3 ր., Ն. Տէր-Ատեփանեանց 3 ր., Բ. Աբաջեանց 3 ր., Յ. Վարդապատրիկեանց 3 ր., Գ. Խրխրեանց 3 ր., Վ. Սարգսիկեանց 3 ր., Մ. Մուրատեանց 3 ր., Օր. Կ. Ղարիբեանց 3 ր., Յ. Նալբանդեանց 3 ր., Ա. Զինկարեանց 3 ր., Խ. Ղուկասեանց 3 ր., Յ. Գօխիկեանց 3 ր., Ղ. Աստվածատրեանց 3 ր., Վ. Յարութիւնեանց 2 ր., Н. Алексѣевъ 2 ր., Յ. Ղարիբեանց 2 ր., Յ. Միրիմանեանց 2 ր., պ. Մարանջեանց 2 ր., Մ. Նալբանդեանց 2 ր., Ս. Ղարիբեանց 2 ր., Գ. Մէրկուրով 2 ր., Թ. Մարգարեանց 2 ր., Գ. Աբաջեանց 2 ր., Ս. Սիմոնեան-

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

«НОВОЕ ВРЕМЯ» ГЛАВНЫЙ ОРГАНЪ ДЛЯ ВСѢХЪ ЧИТАЮЩИХЪ ПО-РУССКИ

Цѣна 5 коп.

Выходитъ ежедневно, кромѣ послѣ праздниковъ.

Подписная цѣна: на годъ 12 р., на полгода 6 р., на 3 мѣсяца 3 р., на 1 мѣсяцъ 1 р.

Иногородные подписываются исключительно въ Конторѣ.

Адресъ Конторы: Невскій, уголъ Троицкой, домъ № 27.

Редакція открыта отъ 10 часовъ утра до 2 часовъ ночи.

Адресъ Редакціи: Невскій, уголъ Троицкой, домъ № 27.

Телефонъ № 53.

Объявленія принимаются въ Конторѣ Редакціи, въ Отдѣленіи Конторы при Главной Почтѣ, въ Отдѣленіи Конторы на Невскомъ, уголъ Троицкой, и въ Отдѣленіи Конторы на Невскомъ, уголъ Садовой.

Цѣна строки петитъ: на 1-й, 2-й и 3-й страницахъ 50 коп., на 4-й страницѣ 25 коп.

Объявленія 50 к., Б. Зеленая 50 к., Бассейная 50 к., Бассейная 25 к., Бассейная 40 к., Гагаринская 20 к., Гороховая 20 к., Гороховая 25 к., Гороховая 40 к., Гороховая 20 к., Гороховая 20 к., Гороховая 40 к., Гороховая 20 к., Гороховая 40 к., Гороховая 40 к., Гороховая 40 к., Гороховая 15 к., Гороховая 25 к., Гороховая 15 к., Гороховая 15 к., Гороховая 15

բութեան։ Քուրդերը շատ վնասներ հասցրին հայերին։ Սովի ժամանակ քուրդերը յափշտակում էին, կողոպտում էին և սպանում էին հայերին, բայց չը նայելով սրան, վերջինները (հայերը) օգնում էին քուրդերին և զանազան տեղերից որպէս օգնութիւն իրանց ուղարկած փողերի և պաշարեղէնների 25% բաժանեցին նրանց։ Քուրդերը, տեսնելով, որ թիւրքաց կառավարութիւնը, որի վրա յոյս ունէին, թողնում է նրանց մեռնել, այն ինչ հայերը, իրանց զոհերը, նրանց օգնութիւն են հասցնում, բոլորովին շփոթված էին։ Իսկոյն այս բանից յետոյ եկան քուրդերի առաջնորդները հայերի մօտ և յայտնեցին, որ նրանք պատրաստ են խաղաղ և հաշտ ապրել հայերի հետ։ Մի և նոյն ժամանակ, բանը նրա մէջն է, որ քուրդերը մեծ մասամբ մահմեդականութիւն ընդունած հայեր են. ինչպէս նրանք կէս-մահմեդական և կէս-քրիստոնեաներ են։ Տարին մի անգամ նրանք քրիստոնեայ եկեղեցիներին ուխտաւոր են ընծայում, իրանց մօտ հայ քահանայ են հրաւիրում, տալիս են նրան աղօթքներ կարդալ, երբ հիւանդանում են, և մահից առաջ մինչև անգամ հաղորդվում են։ Հետևաբար, եթէ հայերին և քուրդերին հանգիստ թողնեն, նրանք միմեանց հետ համաձայն կապրեն։ Քուրդերը նեղացնում են հայերին, որովհետև մահմեդական իմամները գրգռում են նրանց հայերի դէմ։ Հայերը սիրում են կարգը և նրանց մէջ կրթված մարդիկ կան. հայ ժողովուրդը զօրեղ է, այնպէս որ բաւական է երկրի կառավարութիւնը յանձնեն նրանց և զէնք տան նրանց ժանդարմերի կազմակերպելու համար, որ կարճ ժամանակում նահանգը կատարելապէս բարեկարգվի։ Ամենալաւ ապացոյց, որ հայերը զէնք չեն գործածի քուրդերի դէմ նրանցից վրէժ առնելու համար, կարող է ծառայել հայերի քրիստոնէական յարաբերութիւնը դէպի վերջինները սովի ժամանակ, երբ որ նրանք իրանց ստացած օգնութիւնից մաս հանեցին քուրդերին։

ԹԻՒՐՔԻԱ

«Голосъ» լրագրի մէջ տպած է հետևեալ առաջնորդող յօդուածը։

Գործերի դրութիւնը Թիւրքիայի մէջ դարձեալ անհանգստացնող բնաւորութիւն է ստանում։ Միաժամանակ կոնֆերենցիայի աշխատանքների վերջանալու հետ, Թիւրքիայից այնպիսի լուրեր են ստացվում, որոնք ապացուցանում են, որ թիւրքաց ֆանատիկոսութիւնը չափազանց գրգռված է։ Հեռագիրը մեզ հաղորդեց Նովօ-Բազարի նահանգապետի կորուստը։ Պէտք է ասել, որ այդ հեռագիրը բաւական կասկածաւոր է (Նորերումս ստացված հեռագիրը հաղորդեց, որ նահանգապետը սպանված չէ, այլ վիրաւորված), բայց ուշադրութեան արժանին այդ հեռագրի ճշգութիւնը չէ, այլ քրիստոնեաներին թշնամի այն տրամադրութիւնը, որ տիրում է մահմեդականների մէջ։

Մի և նոյն ժամանակ Կ. Պօլսից այնպիսի տեղեկութիւններ են ստացվում, որոնցից երևում է, թէ Թիւրքիայի մայրաքաղաքի մէջ էլ սկսում է տիրել նոյն տրամադրութիւնը։ «Times» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը այդ մասին չափազանց նշանաւոր և հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում։ Նա պատմում է, որ մի քանի ժամանակ է, ինչ սուլթան Աբդուլ-Համիդ մտածում է, որ քրիստոնեայ պետութիւնները վճռել են արտաքսել թիւրքերին Եւրոպայից և ոչնչացնել Օսմանեան պետութիւնը։ Նրա կարծիքով Թիւրքիային այդ վտանգից ազատելու համար միակ միջոց կայ, այն է յամառութեամբ ընդդիմադրել Եւրոպայի բոլոր պահանջներին։ Աբդուլ-Համիդի խորհրդատուները, ցանկանալով իրանց տիրոջ հաւանութիւնը ստանալ, իրանց ա ն հ ա շ տ ֆանատիկոսներ են ցոյց տալիս և հաւատացնում են սուլթանին, որ նա կարող է ստիպել Ռուսաստանին և Անգլիային զիջումներ անել, եթէ նա, իբրև «բոլոր մահմեդականների խալիֆա», կը դիմէ այդ երկու պետութիւնների մահմեդական հպատակներին։

Անգլիական լրագրի թղթակիցը այնուամենայնիւ չէ հաւատում այդպիսի մտադրութիւնների ճշմարտութեանը և մտնում է, որ սուլթանը կը վախենայ այն «անձնական պատասխանատուութիւնից», որի մասին նրան ակնարկեց պ. Գօշէն իր առաջին տեսութեան ժամանակ։ Այս ենթադրութիւնը թէպէտ ճշմարիտ է, բայց այնուամենայնիւ պէտք է ի նկատի ունենալ, որ սուլթանը կընդդիմանայ պետութիւնների պահանջներին և այնպիսի միջոցների կը դիմէ, որոնց նա գործ էր դնում Բօսնիան և Հերցեգովինան աւստրիական զօրքերով գրաւելու և Չերնոգորիայի հետ վերջին դաշնագրութիւնը կապելու ժամանակ։

Շատ կարելի է, որ թիւրքաց կառավարութիւնը կը համաձայնի կոնֆերենցիայի վճռի հետ Յունաստանին երկիրներ զիջելու վերաբերութեամբ, բայց մի և նոյն ժամանակ կը պատուիրէ «տեղացի մահմեդականներին» ընդդիմանալ այդ երկիրները Յունաստանի հետ միացնելուն, իսկ իր զօրքերին կը հրամայէ փախչել և ապստամբների հետ միանալ։ Այս ենթադրութիւնը 'ի նկատի ունենալով, հաւանական է, որ սուլթանը դիմէ ամբողջ աշխարհի մահմեդականներին, պահանջելով նրանցից պաշտպանութիւն և օգնութիւն քրիստոնեայ պետութիւնների «սարսափելի մտադրութիւնների» դէմ։

Դուցէ դժուար լինի այժմ խանգարել Բ. Դրան այդ դիտաւորութիւնները, բայց Կ. Պօլսի մէջ կը սխալվէին, եթէ կերևակայէին, որ այս անգամ էլ այդ գործերը անպատիժ կը մնան։ Եթէ սուլթանը կը մոռանայ եւրոպական թագաւորի պարտաւորութիւնները, նրա հետ այնպէս կը վարվեն, ինչպէս ասիացի վայրենիների առաջնորդի հետ։

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալը։

Ֆրանսիական սենատը ընդունեց պատգամաւորների ժողովից հաստատված ամնիստիայի օրէնքի նախագիծը, միայն այնպիսի խմբագրութեամբ, որին ընդդէմ էր մինիստրութիւնը։ Այդ խմբագրութիւնը, որ առաջարկված է սենատի անդամ Բօգերիանից, բացատրում է ամնիստիայի շնորհելը հրդեհներ գցողներին և մարդասպաններին, իսկ Մարսել Բարտի խմբագրութիւնը պահանջում էր ամնիստիա չը տալ այն բոլոր քաղաքական աքսորականներին, որոնք հասարակ քրէական յանցանքներ են գործել, ուրեմն ընդունված խմբագրութիւնը զիջում է անում մինիստրութեանը։ Շատ դժուար է հասկանալ, թէ մինիստրութեան նախագահ Ֆրէյսինէ ինչ պատճառով էր ընդդիմանում Բօգերիանի խմբագրութեանը։ Առողջ դատողութիւնը պարզ ասում է, որ մի քաղաքական կարգադրութիւն ընդհանուրի մասին չէ կարող վերաբերվել քրէական հասարակ յանցաւորներին։ Ինչպէս պ. Ֆրէյսինէ պէտք է համաձայնէր Բօգերիանի խմբագրութեան հետ գոնեա այն պատճառով, որ կառավարութեան հակառակորդները առիթ չունենային ասելու, թէ կառավարութիւնը աքսորում է եզուիտներին և վերադարձնում է նրանց սպանողներին։

Մինիստրութիւնը գործի վրա ուրիշ կերպ նայեց։ Նա Բօգերիանի վերոյիշեալ խմբագրութեանը գերադասեց պ. Լարիշի առաջարկած հականախագիծը, որ պահանջում էր նոյն անպայման ամնիստիան, միայն կառավարութեան նախագծից այլ ձևով։ Լարիշի հականախագիծը մերժվեցաւ 12 ձայների անծամանութեամբ։ Դրանից յետոյ Բօգերիանի խմբագրութիւնը ընդունվեցաւ 143 ձայների բազմութեամբ 138-ի դէմ, չը նայելով, որ նախագիծը քննող մասնաժողովը բոլորովին ընդդէմ էր ամնիստիա շնորհելուն և Ժիւլ Սիմօնն էլ նոյն մտքով ճառ ասաց։

Այնուամենայնիւ գործը դեռ վերջացած չէ։ Ֆրանսիական սահմանադրութեան համեմատ պատգամաւորների ժողովից ընդունված և սենատից փոփոխված օրէնքի նախագիծը վերադարձվում է պատգամաւորների ժողովին երկրորդ քննութեան համար։ Եթէ պատգամաւորների ժողովը կընդունի սենատի խմբագրութիւնը, նախագիծը օրէնքի ոյժ կը ստանայ, հակառակ դէպքում սենատը ստիպված կը լինի նորից քննել իրան վերադարձրած սկզբնական նախագիծը։

Եթէ կառավարութիւնը և պատգամաւորների ժողովը հարկաւոր կը համարեն սպասել, սենատի մէջ նորից վիճաբանութիւններ կը լինեն և այդ դէպքում դուցէ կընդունվի կառավարութեան սկզբնական նախագիծը։ Այս դէպքում գործը կերկարի և յուլիսի 2 (14)-ին, ֆրանսիական ազգային տօնին, կառավարութիւնը չի կարողանայ յայտնել այն հ ա ն գ ս տ ա ց ն ո ղ մ ի ջ ո ց ը (ամնիստիա), որի անհրաժեշտութիւնը Գամբետտա իր ճառի մէջ գեղեցիկ կերպով նկարագրեց։

Դուցէ պատգամաւորների ժողովը ի նկատի առնէ վերոյիշեալ հանգամանքը և ընդունէ սենատի խմբագրութիւնը։ Այս դէպքում կարող է պատահել, որ Ֆրէյսինէի մինիստրութիւնը հրաժարական տայ և Լէօն Գամբետտայի մինիստրութիւն կազմվի։ Ֆրէյսինէի մինիստրութիւնը իր հանրապետական նուանդատ միջոցներով բաւական դժուարութիւններ է ծագեցրել, որոնց վերջացնելու համար անհրաժեշտ է Գամբետտայի մինիստրութիւնը։

Բերլինի լրագիրներին Փարիզից գրում են հետևեալ տեղեկութիւնները եզուիտների հիմնարկութիւնները փակելու մասին յունիսի 30-ից։

Այսօր առաւօտ դը-Սեվր փողոցի մէջ գտնված եզուիտների բնակարանի փակելու մասին ստացվել են հետևեալ տեղեկութիւնները։ Երբ պօլիցիականները պաշտօնական հագուստով սկսեցին բնակարանի դռները բաղխել, նրանք իսկոյն բացվեցան։ Մի քանի մարդիկ կամենում էին պօլիցիայի հետ մտնել բնակարանը, բայց նրանց արգելեցին։ Պօլիցիան փողոցում ներկայ եղողներից մի քանիսին կալանաւորեց և միայնակ մտաւ։ Առաւօտեան 4½ ժամին փողոցում ներկայ եղողների թիւը հասաւ 500-ի։ Նրանց թւում կային ուսանողներ և մի քանի կանայք։ Քսան մարդկերանցից բաղկացած պօլիցիան մաքրեց փողոցը։ Հաւաքված ամբոխը հետևեց պօլիցիայի հրաւէրին և այդ ժամանակ լսում էին մի կողմից «կեցցեն եզուիտները», «կեցցէ ազատութիւնը», միւս կողմից «կեցցէ հանրապետութիւնը»։ Հինգից քառորդ անց եկաւ պատգամաւոր կղերական Բօդրի-Դասօն, բայց պօլիցիան նրան ներս չը թողեց, չը նայելով նրա բողոքին։ Պօլիցիան չը թողեց նոյնպէս մի քահանայի մտնել բնակարանը։ Մի քանի անձինք քահանայից օրհնութիւն խնդրեցին, իսկ պատգամաւորը խնդրեց օրհնել Ֆրանսիա։ Մօտ եօթ ժամին եկաւ պօլիցիական պրեֆեկտ Անդրիէ և երկու պօլիցիականների հետ մտաւ բնակարանը։ Շուտով այնտեղից դուրս եկան միաբանութեան երեք անդամները։ Մնացած անդամները փակվել էին իրանց խցերի մէջ, այնպէս որ արհեստաւորներ կանչեցին դռները կոտրելու համար, իսկ ժամի եօթից յետոյ մնացած անդամները մէկը միւսի ետևից սկսեցին թողնել բնակարանը։ Պատգամաւորների ժողովի երեք անդամներ և երեք ուրիշները, որոնց թւում էր և «Union» լրագրի խմբագիրը, կալանաւորվեցան։ Եզուիտների հեռանալուց յետոյ մի քանի մարդիկ մտան բնակարանը և կանչում էին «կեցցեն եզուիտները», բայց նրանց պօլիցիան քշեց։ Ժամը տասին այդ փողոցի մէջ կատարեալ հանգստութիւն էր տիրում։ Եզուիտները դատարաններին գանգատներ են տուել կառավարութեան ոյժ գործածելու դէմ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Բէյրութի» ընկերութեանը հաղորդում են Կ. Պօլսից յունիսի 20-ից, որ Բայազէդի, Ալաշկերտի և Վանի նահանգներում դեռ ևս սովը շարունակվում է։ Բնակիչները անցնում են ռուսաց սահմանը։ Հաղորդում են, որ 10,000 մարդ, գլխաւորապէս քիւրդեր, սովամահ են եղել։

—Լրագիրները հաղորդում են, որ եզուիտներին արտաքսելու և հոգևոր միաբանութիւնների հիմնարկութիւնները փակելու պատճառով մինչև այժմ մօտ 49 դատաւորներ հրաժարվել են իրանց պաշտօններից, որպէս զի կառավարութեան ճնշման տակ, իրանց խղճի հակառակ վճիռներ չը տան եզուիտների և առհասարակ հոգևորականների գանգատներին։ Հրաժարական տուող պրոկուրորների թիւը նոյնպէս մեծ է։

—Կ. Պօլսից ստացված տեղեկութիւնների համեմատ այնտեղ հասել է Բէյրութի նահանգապետը, որ իր հետ բերել է Միտհադ-փաշայի նամակները։ Այդ նամակներով Միտհադ-փաշա նշանաւոր վերանորոգութիւններ է առաջարկում և իր համար աւելի ընդարձակ իրաւունքներ է պահանջում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 29 յունիսի։ Պաշտօնական լրագրի մէջ տպած է մի հրաման, որով կարգադրվում է, մի պատժի սպառնալիքով, բոլորովին ազատել 1870 և 1871 թուականների ապստամբութեան պատճառով բոլոր դատապարտվածներին, նոյնպէս և նրանց, որոնք մասնակցել են հետևեալ ապստամբական շարժումներին։

ՓԱՐԻԶ, 1 յուլիսի։ Երէկ երեկոյեան Հենրի Ռօշֆօր հասաւ Լիօնի երկաթուղու կայարանը։ Նրան մեծ ամբոխ էր սպասում։ Բուլվարը լցնող ամբոխը «մարսէլիէզ» էր երգում։ Պատգամաւորների ժողովը ընդունեց օրէնքի նախագիծը։ Լիօնի մէջ վերականգնվում է կենտրոնական քաղաքային վարչութիւն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յուլիսի։ Ներքին առաջին 5% փոխառութեան տիրաժի գլխաւոր տարած գումարները։

№ սէրիի	№ տոմս.	տար. գումար.
19108	25	200,000
261	18	75,000
17966	46	40,000
15851	34	25,000
164	14	10,000
17324	47	10,000
14895	25	10,000
5416	38	8000
155	13	8000
17053	47	8000
1556	41	8000
4520	35	8000
16452	5	5000
5526	35	5000
13901	47	5000
5721	31	5000
12410	37	5000
8245	2	5000
10380	35	5000
9858	14	5000

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՒՆՆԵՐ

ПО СЛУЧАЮ СЪѢЗДА ВОВСЕ СЪ КАВКАЗА ЗА-ГРАНИЦУ

Капитанъ князь Константинъ Макаровичъ Орбеліани объявляетъ, что продаетъ оставшееся послѣ смерти отца, Макарія Орбеліани, имущество, именно: трехъ-этажный домъ на Головинскомъ проспектѣ, съ флигелями, гдѣ помѣщается гостинница «Россія», и имѣнія въ Тифлисской губерніи и уѣздѣ, именно: деревня Геуары, населенная жителями, 4,174 десят., Вашлеванъ—450 десятинъ, съ садами, домомъ и пристройками; дача въ Коджорахъ, домъ и земля $2^3/_4$ десятины; лѣсъ сосновый, строевой и дубовый 3,100 десят. въ Локскомъ ущельи, Шулаверскаго уѣзда, около Чатахскаго завода; имѣніе на Мокрыхъ-горахъ, около молоканскаго селенія Воронцовки, подъ названіемъ Каракала — 5,500 десят. Всѣ имѣнія обмежеваны и имѣются планы; коляска, фаэтонъ, верховыя лошади, баранта и рогатый скотъ.

3—3

ՄՕԶՊՕՔԻ

Հայոց օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի վարժուհի նպատակաւոր պայմաններով: Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրատանը պայմանների մասին բանակցելու համար:

6—10

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախսում են օէօզրաֆիական պատկերներ 20% զիջում մավ. վերարկուներ 6—20 ր., խոպանականներ պատվենֆուրված են լզի մէջ առանձնապէս անգլիական խառնուքի համար, ամենալաւ ածելիներ, արկղիկով 4 ր., Շեֆիլդի դանակներ 3—20 ր. գիւժինը, բրիտանական մեծաթիւ էժանագներ 30 կ.,—3 ր., ցիտրատ մագնեզիա, թիւրքական շերքէմ և ծարաւը Բագնոյ նիւթ 70 կ., ամենալաւ պօրտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

Համեմատեցէք անգլիական խառնուքի թէյին գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ցուներ համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խառնուքներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խառնուքի Ցուներ2 բուքլանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

25—100

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ երեխաների 4 ր., տղամարդկանց 9—20 ր., ամբողջ հադուստը, պիջակ 5 ր., ՈՐՏԵՂ Է ՇԱԽՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամպէյ, պարուսին, տրիկօ, դրապ, փօսաի թաղիք, թաւիշ կարասիքի և կառքերի համար, կալենկօր և այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համէզ մոթորաններ, կօնֆետներ հագի դէմ, պաներ, մագնեզիա, ամաններ, կարբօլեան փոշի, սապօն, պարսկական փոշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄՆԱԿԻՒԱՆ գներով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

20—20

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ երեխաների 4 ր., տղամարդկանց 9—20 ր., ամբողջ հադուստը, պիջակ 5 ր., ՈՐՏԵՂ Է ՇԱԽՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամպէյ, պարուսին, տրիկօ, դրապ, փօսաի թաղիք, թաւիշ կարասիքի և կառքերի համար, կալենկօր և այլն 25% ուրիշ տեղերից էժան: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համէզ մոթորաններ, կօնֆետներ հագի դէմ, պաներ, մագնեզիա, ամաններ, կարբօլեան փոշի, սապօն, պարսկական փոշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄՆԱԿԻՒԱՆ գներով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

20—20

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 30-ից պ. ՅՈՒՐԻՆՕՎԻ և ընկ. դէպերի ԽԱՆՈՒԹԸ և ՊԱՀԵՍՏԸ կը լինի ԽԻՏՏԱՐՕՎԻ տանը, Նարուրովի տան դիմաց, որտեղ գտնվում է նահանգական փաստաթղթերը Մուզէումի դիմացը:

2—3

ՄԷԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, *որ գիտէ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿԱՆՏՕՐՉԻԿԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ կամ թարգմանի տեղ ունենալ: Յանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեան:*

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Սրկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Օրալեվիչ ներքին հ., Թօփնեանց կանանց և երեխաների հ., Քիւչաբեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խիրուրգիական հ., Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Թէյլ աչքի հ., Ախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօզլատօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդովսկի ներքին հ., Շտէյմբօսկի վիներական և կաշու հ., Ասատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բոզագի հ., Թօփնեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց՝ սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Օրբելաբթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևիչ խիրուրգիական հ., Կրասնօզլատօվ և Լիսիցեվ ներքին հ., Ախտուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօսկի և Ասատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Շտենկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաջնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տանիքով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտօր Լիսիցեվ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

ԻԼԻԻ ՀԵՆՐԻԽ ՅԻՄԵՐՄԱՆ,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ԳՕԼՇՏԱՅՆ ՄՕՐՍԿԱՅԱՍ, № 42

Առաջարկվում են արտասահմանի ամենալաւ գործարաններից նորերուստ ստացված երաժշտական գործիքներ:

ՋՈՒՅԹԱԿՆԵՐ $2^1/_2$ ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 150 ր., ԿՆՏՆՏՈՑՆԵՐ (смычекъ) 50 կ., $1^1/_2$ ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանգ մինչև 25 ր., ԱՐԿԱՆՆԵՐ $2^1/_2$ ր., $5^1/_2$ ր., 6 ր., 7 ր., 10 ր. և աւելի թանգ մինչև 20 ր.: Հին խառատական և գեղանատական ջութակներ մինչև 600 ր.: ՋՈՒՅԱԿՆԵՐ փոքր դիրքի երեխաների համար 2 ր. 50 կ. մինչև 30 ր.: Ջութակի չհօա (ինքնուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.: ԱԼՏԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանգ: ՎԻՕԼՕՆՉԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանգ մինչև 600 ր.: Վիօլոնչելի չհօա 4 ր.: ԿՕՆՏՐԲԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանգ: ԳԻՏԱՐ 3 ր. 50 կ., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Գիտարի չհօա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 2 ր., 3 ր.: ՑԻՏՐԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Ցիտարի չհօա 2 ր., 3 ր. 50 կ., նոտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իւրաքանչիւր տետրակը: ՄԱՆԴՕԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ. չհօա 3 ր.: Ամենալաւ իտալական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար. ԿԱՄԵՐՏՕՆ 40 կ., 50 կ., 1 ր., 50 կ., 2. ր., 6 ր.: Սուրգին կանեֆօլ և այլ պատկանելիք: ՄԵՏՐՕՆՕՄ 8 ր., 12 ր.: Երկաթի ծալվող ՊԻՊՕՏՐՆԵՐ 5 ր.: Երկաթի ծալվող պիւպիտրներ մամակալներով 6 ր., 8 ր.: Գերմանական ԳԱՐՄՕՆՆԵՐ 4 ր., 4 ր. 50 կ., 5 ր. 50 կ., 7 ր. 50 կ., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ: Գարմոնիայի չհօա և նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1 ր. 50 կ., իւրաքանչիւր տետրակը: ՕՐՆՈՊԱՏԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Շհօա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 4 ր., 5 ր.: ԱԼՏՖՕՐՆ, ՆՇԱՆԱՓՈՂՆԵՐ, ՏՐՕՄՓՕՆՆԵՐ, ՖԼԻԳԱՆՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ: Շհօա (ինքնուսուցիչ) $1^1/_2$ ր., և 3 ր. Նոտաներ 40 կ., $1^1/_2$ ր., 3 ր. իւրաքանչիւր տետրակը: ԿԼԱՐՆԵՏՆԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր.: Կլարնետի չհօա 4 ր., Բեկհօլտ, Զականի, Ֆլաժօլետներ, Անգլիական ԿՕՆՑԵՐՏԻՆՕ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր., և թանգ մինչև 160 ր.: Շհօա 3 ր., Նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., $1^1/_2$ ր., Գերմանական կօնցերտինօ 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր.: Շհօա (ինքնուսուցիչ) 75 կ., Նոտաներ 40 կ., և 1 ր. իւրաքանչիւր տետրակը երաժշտական արկղներ 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր.: ՖԻՍԳԱՐՄՕՆՆԵՐ 90 ր., 100 ր. 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանգ: ԳԱՐՄՕՆՆԵՐ ՖԼԻԳԱՆ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր., 90 ր.: ԳԱՐՄՕՆՆԵՐ ֆիւտաի ՕՐԳԱՆՈՎ 175. և 225 ր.: ՇԱՐՄԱՆԿԱ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.: Իտալական չարմանկաներ 150 ր., 200 ր., 250 ր.: ՕՐԳԱՆՆԵՐ թաչունների համար 10 ր., 15 ր.: Թմբուկներ, լիտավրներ, բունչուկներ, բանգօներ, մետալական չրթունքների բլուկաներ, եռանկիւնիներ, գարմոններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշդութեամբ: Քանտարտճածախսը գնողին է: Ծախվում են հատով և մեծ քանակութեամբ:

1—1

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Աբհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարանները: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով գրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթական անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք տրվին մետրիկական և ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Աբհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամուր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մտնելու համար նրանցից պահանջվում է. Կրթիչ-քրիստոնէական վարդապետութեան կարճառօտ հրահանգները և օրբատան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուաբանութենից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամանակի, դրամի, կշռոքի և այլ չափերի գիտեցողը:

Ցուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱԿԱՆ ՊԵԿՄԵՆԻՈՆ կից կը բացվին ՍՆՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի առանալ ԿԱՖԻ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ: 18—40

Փարիզի եզուիտների արտաքսելու ձևի մանրամասները յայտնի են ընթերցողներին: Պօլիցիական գործակատարները de Sèvres փողոցում գտան եզուիտների «պահապաններ» մի ամբողջ խումբ, որ կազմված էր պատգամաւորներից և սենատորներից, որոնց մէջ կար մինչև անգամ արդարութեան նախկին մինիստր, պ. Էրնու: Այդ բոլոր պահապանները միմեանց առաջը կտրելով և մեծ եռանդով անդադար պնդում էին պօլիցիական գործակատարներին, որ նրանք զեղծում են օրէնքը և յիշեցնում էին այն ծանր պատասխանատուութիւնը, որին Ֆրանսիայում ենթարկվում է այդպիսի զեղծումն գործող իրաքանչիւր ատիճանաւոր: Աչքառութիւնը, մի ուրիշ պօլիցիականները չը շփոթվեցին և շարունակ կատարեցին իրանց տուած յանձնարարութիւնը: Նրանք սպիպված էին կոդ-սէքներ կոտրել, անհնազանդ եզուիտների գլխարձութիւնը, իրբև վաճառականական դասին պատկանող անձինք, որոնք իրենց մի կօպէկը հազար ուսումնարանի հետ չեն փոխի, ոչինչ չէ կարող անել կալուածների համար, բան որում նա այն ժամանակ պէտք է անվարձ ճանապարհորդութիւններ անի, այստեղ այնտեղ գնայ, իր դատքանից մի քանի օր պրկվի, ուստի կալուածական խնդրում նա ոչ մի աջակցութիւն չէր կարող անել Սեդրակեանին և չարաչար, և այդ հանգամանքը միայն պատճառ է Սեդրակեանին իրեն անգղջութեան և անփորձութեան համար, ըստ որում ամենքին յայտնի է, որ ներկայ հոգաբարձուների ընտրութեան գլխաւոր պատճառն ինքն Սեդրակեանն էր, որը այդ պարագայում, չը չարժվեց բոլորովին անաչառապէս, այլ ընտրել տուաւ այն 3 հոգաբարձուներին (որոնք միակ հոգաբարձու են հաշվում այսօր իրականապէս) միմիայն Նորա համար, որ գոնա Պապաջանեանի հակառակ կուսակցութեան մարդիկ էին: Այժմեան հոգաբարձութիւնը բաղկացած է 8 անձերից, որոնցից 4-ը նոյն իսկ իրենց ընտրութեան սկզբներում պ. Պապաջանեանի պատճառով հեռացել և հրաժարվել են իրենց պաշտօնից, իսկ մեւս չորսը—պ. պ. Հախումեան, Բէկլարեան—Բաթայեան, Բահաթուրեան—Բաթայեան և Թամբրեանց Թաղեոս համարվում են բուն հոգաբարձու, բայց գործողները միայն վերջին երեքն են, իսկ առաջինը—պ. Հ. Հախումեանը, որ ամենից ազնիւ և միակ բանիմաց անձն է, դժբախտաբար մինչ վերջին ժամանակները անհատական հանգամանքներից ստիպված, չէր մասնակցում գործերին: Այդ պատճառով միակ առաջարկը մնացել էր պ. պ. Բէկլարեանին, Բահաթուրեանին և Թամբրեանին, որոնք մի մի վաճառականական ախպարներ են ներկայացնում և հոգաբարձութեան քօղի տակ ծածկում են իրենց գործերը նոյն իսկ ուսումնարանի վերաբերմամբ: Ում յայտնի չէ Շուշում որ հոգաբարձու պ. Բաթայ Բէկլարեանը ահա մօտ 10 տարի է գրաւել է անբռնաբարար քաղաքի ամենալաւ տեղում գտնված ուսումնարանատիպական հողը, չինել է իրեն համար պարտէզ առանց մի կոպէկի վարձատրութիւն տալով ուսումնարանին: Ո՞ւմ յայտնի չէ, որ նորա բարեկամ Ցովսէփ Ղուկասեանը, որն առաջ եղել է հոգաբարձու (Արդիս եպիսկոպոսի ժամանակ) և այժմ կանդիդատ է, իր հոգաբարձութեան ժամանակ գրաւել է պ. Բէկլարեանի հետ միասին դարձեալ ուսումնարանապատկան դետին և իր համար տուն կառուցել: Թէ պ. Բէկլարեան և Ղուկասեան, իրբև հոգաբարձուներ, իրենց դէմ գտատար չեն հանդիսանում, այդ բացատրելի է. թէ պ. Բահաթուրեան և Թամբրեան նոյնպէս չեն հանդիսանայ ուսումնարանի իրաւանց պաշտպան ընդդէմ Բէկլարեանի և Ղուկասեանի, իրբև նոցա ամենամերձ ազգական, այդ էս բացատրելի է և կարելի այդպիսի չարչիների համար, բայց որ Արիստակէս վ. Սեդրակեանն է լռում և չէ հետաքրքրվում յայտնի հոգեվարքողներից իմանալ ինչ որ նոքա գործել են, դա մեզ շատ զարմացնում է, մանաւանդ որ մի քանի ամսից յետոյ կը լրանայ տասն տարին, յորմէ հետէ այդ գետինները յափշտակվել են և այն ժամանակ ուսումնարանը կը կորցնի որ և է իրաւունք վէճ բաց անելու: Չաւատացնում ենք ս. Սեդրակեանին, որ այդպիսի երկկերանանի քաղաքականութեամբ ոչինչ չի շահի և միմիայն մէջոց կը տայ բարեացներին չաքուանակնկալ իրենց կեղտոտութիւնը: Եթէ հոգաբարձու Բէկլարեանը կամենայ, կարող է հինգ դնել օրիորդական դպրոցի շինութեան, և դորա համար մենք նորա ջիբից մի կոպէկ անգամ չենք պահանջում, բաւական է, որ նա գործածի այդ շինութեան վրա այն գումարը, որ մի բարեպաշտ մարդ, մեռնելիս յանձնել է իրեն պ. Բէկլարեանին, իբրև իր կտակակատարի, Շուշաքաղաքացի պ. Խանդամիրեան մեռնելիս կտակել է 32,000 բուբլի, որը և յանձնել է պ. Բէկլարեանին գործածելու ճաշատաձահանձոյ գործի համար: Եթէ պ. Բէկլարեան հասկացող և ազգասէր մարդ է, ինչպէս կամենում են հաւատացնել մեզ ամենք, նա իրրև հոգաբարձու պէտք է լաւ համոզված լինի, որ Շուշին, իբրև հայ քաղաք խիստ կարևորութիւն ունի մի հատ օրիորդական դպրոցի, և ինչ բան կարող է առաւել ազատաձահանձոյ լինել, քան իգական սեռի գատմութեան համար մի սրբատեղի, որտեղ չքաւոր օրիորդներ կարող էին ձրիաբար ուսում առնել և անմահացնել կտակողի անունը: Բայց ամբողջ 3 տարի Սեդրակեան և ուսուցիչներ չեն կարողանում համոզել Բէկլարեանին այդ բանի մէջ.

Նագդ փող է աւաչարկում, այլ մի ստոյգական է տալիս, որ երբ կունենայ՝ կը տայ.... Անցնում է մի ժամանակ, կալուածները մնում են բարձի թողած. վաստացած Սեդրակեանը դարձեալ դիմում է հոգաբարձութեան, որն այս անգամ կամենալով միխիթարել նորան, ներկայացնում են մի նոր անձ իբրև ամենատալիս և ամենաբարեխիղճ մի պ. Փիրումեանին, որին, իբրև այնիւ և ապրատէր մարդու, նչանակում են տարեկան 1500 բուբլի ռոճիկ: Այս անգամ ևս Սեդրակեան հաւատում է հոգաբարձուների խօսքին, որոնք, ի հարկէ, զգուշանում են հակացնել նորան, թէ պ. Փիրումեանը, որը 400 բուբլիով գաւառապետի մօտ գրագիր է եղել, արձակվել է իր պաշտօնից, իբրև անպիտան մարդ: Սակայն ազահութիւնը մի վատ խոտ է և միայն Փիրումեանի պէս մարդիկներ չեն վարակվել դորանով. 400 բուբլուց գրագիրը յանկարծ գաւառապետի ռոճիկ ստանալով իր բարեկամ և ազգական հոգաբարձուների չնորհով, ձգտում է աւելի ևս շատ ստանալ, ուստի վարձում է մարդիկ, ուղարկում է կալուածները և պատուիրում է հաւաքել բոլոր եկամուտները և ուղղակի իր տունը բերել: Երբ այդ բոլորը կատարվում է, այն ժամանակ միայն Սեդրակեան հասկանում է թէ ինչ օձին են հանել իր գլխին, բայց հինգ բոպէ չատ անցած.... Այժմ Փիրումեան դեռ դատատանով պահանջում է իր ռոճիկի մնացորդը, իսկ հոգաբարձութիւնը նորանով է միխիթարվում, որ ամբողջ կալուածների եկամուտի տեղ Նա կարող է Փիրումեանին մի երկու ամսվայ ռոճիկը չը տալ. Այսպէս ուրեմն Սեդրակեանի բոլոր աշխատութիւնը, ջանքը կալուածների վերաբերմամբ դուբ անցան, և դորա պատճառը, ինչպէս տեսանվեցաւ, ինքն չէ, այլ, իր միամտութիւնն ասեմ, թէ անզգուշութիւնը: Սեդրակեան բացի հոգաբարձուներից ոչ ոքի չէր ուզում ճանաչել, նա կարծութիւն չէր զգում ժողովրդին դիմել, ուստի և նա չը կարողացաւ ժողովրդական մարդ դառնալ: Ահա 3 տարի է, որ այդ հոգաբարձութիւնը գոյութիւն ունի և այդ 3 տարուայ ընթացքում նա միայն մի անգամ հարկաւոր համարեց գնալ և պատել կալուածներում մի քանի տեղ. Նա մինչև անգամ չը գիտէ, թէ որտեղ են այդ կալուածների սահմանները, ինչ տեսակ անտառներ կան: Հոգաբարձութիւնը, իրբև վաճառականական դասին պատկանող անձինք, որոնք իրենց մի կոպէկը հազար ուսումնարանի հետ չեն փոխի, ոչինչ չէ կարող անել կալուածների համար, բան որում նա այն ժամանակ պէտք է անվարձ ճանապարհորդութիւններ անի, այստեղ այնտեղ գնայ, իր դատքանից մի քանի օր պրկվի, ուստի կալուածական խնդրում նա ոչ մի աջակցութիւն չէր կարող անել Սեդրակեանին և չարաչար, և այդ հանգամանքը միայն պատճառ է Սեդրակեանին իրեն անգղջութեան և անփորձութեան համար, ըստ որում ամենքին յայտնի է, որ ներկայ հոգաբարձուների ընտրութեան գլխաւոր պատճառն ինքն Սեդրակեանն էր, որը այդ պարագայում, չը չարժվեց բոլորովին անաչառապէս, այլ ընտրել տուաւ այն 3 հոգաբարձուներին (որոնք միակ հոգաբարձու են հաշվում այսօր իրականապէս) միմիայն Նորա համար, որ գոնա Պապաջանեանի հակառակ կուսակցութեան մարդիկ էին: Այժմեան հոգաբարձութիւնը բաղկացած է 8 անձերից, որոնցից 4-ը նոյն իսկ իրենց ընտրութեան սկզբներում պ. Պապաջանեանի պատճառով հեռացել և հրաժարվել են իրենց պաշտօնից, իսկ մեւս չորսը—պ. պ. Հախումեան, Բէկլարեան—Բաթայեան, Բահաթուրեան—Բաթայեան և Թամբրեանց Թաղեոս համարվում են բուն հոգաբարձու, բայց գործողները միայն վերջին երեքն են, իսկ առաջինը—պ. Հ. Հախումեանը, որ ամենից ազնիւ և միակ բանիմաց անձն է, դժբախտաբար մինչ վերջին ժամանակները անհատական հանգամանքներից ստիպված, չէր մասնակցում գործերին: Այդ պատճառով միակ առաջարկը մնացել էր պ. պ. Բէկլարեանին, Բահաթուրեանին և Թամբրեանին, որոնք մի մի վաճառականական ախպարներ են ներկայացնում և հոգաբարձութեան քօղի տակ ծածկում են իրենց գործերը նոյն իսկ ուսումնարանի վերաբերմամբ: Ում յայտնի չէ Շուշում որ հոգաբարձու պ. Բաթայ Բէկլարեանը ահա մօտ 10 տարի է գրաւել է անբռնաբարար քաղաքի ամենալաւ տեղում գտնված ուսումնարանատիպական հողը, չինել է իրեն համար պարտէզ առանց մի կոպէկի վարձատրութիւն տալով ուսումնարանին: Ո՞ւմ յայտնի չէ, որ նորա բարեկամ Ցովսէփ Ղուկասեանը, որն առաջ եղել է հոգաբարձու (Արդիս եպիսկոպոսի ժամանակ) և այժմ կանդիդատ է, իր հոգաբարձութեան ժամանակ գրաւել է պ. Բէկլարեանի հետ միասին դարձեալ ուսումնարանապատկան դետին և իր համար տուն կառուցել: Թէ պ. Բէկլարեան և Ղուկասեան, իրբև հոգաբարձուներ, իրենց դէմ գտատար չեն հանդիսանում, այդ բացատրելի է. թէ պ. Բահաթուրեան և Թամբրեան նոյնպէս չեն հանդիսանայ ուսումնարանի իրաւանց պաշտպան ընդդէմ Բէկլարեանի և Ղուկասեանի, իրբև նոցա ամենամերձ ազգական, այդ էս բացատրելի է և կարելի այդպիսի չարչիների համար, բայց որ Արիստակէս վ. Սեդրակեանն է լռում և չէ հետաքրքրվում յայտնի հոգեվարքողներից իմանալ ինչ որ նոքա գործել են, դա մեզ շատ զարմացնում է, մանաւանդ որ մի քանի ամսից յետոյ կը լրանայ տասն տարին, յորմէ հետէ այդ գետինները յափշտակվել են և այն ժամանակ ուսումնարանը կը կորցնի որ և է իրաւունք վէճ բաց անելու: Չաւատացնում ենք ս. Սեդրակեանին, որ այդպիսի երկկերանանի քաղաքականութեամբ ոչինչ չի շահի և միմիայն մէջոց կը տայ բարեացներին չաքուանակնկալ իրենց կեղտոտութիւնը: Եթէ հոգաբարձու Բէկլարեանը կամենայ, կարող է հինգ դնել օրիորդական դպրոցի շինութեան, և դորա համար մենք նորա ջիբից մի կոպէկ անգամ չենք պահանջում, բաւական է, որ նա գործածի այդ շինութեան վրա այն գումարը, որ մի բարեպաշտ մարդ, մեռնելիս յանձնել է իրեն պ. Բէկլարեանին, իբրև իր կտակակատարի, Շուշաքաղաքացի պ. Խանդամիրեան մեռնելիս կտակել է 32,000 բուբլի, որը և յանձնել է պ. Բէկլարեանին գործածելու ճաշատաձահանձոյ գործի համար: Եթէ պ. Բէկլարեան հասկացող և ազգասէր մարդ է, ինչպէս կամենում են հաւատացնել մեզ ամենք, նա իրրև հոգաբարձու պէտք է լաւ համոզված լինի, որ Շուշին, իբրև հայ քաղաք խիստ կարևորութիւն ունի մի հատ օրիորդական դպրոցի, և ինչ բան կարող է առաւել ազատաձահանձոյ լինել, քան իգական սեռի գատմութեան համար մի սրբատեղի, որտեղ չքաւոր օրիորդներ կարող էին ձրիաբար ուսում առնել և անմահացնել կտակողի անունը: Բայց ամբողջ 3 տարի Սեդրակեան և ուսուցիչներ չեն կարողանում համոզել Բէկլարեանին այդ բանի մէջ.

վրա ձեռք գնել, լսել պատգամաւորների և սենատորների վերաբերանքները:

Մինչդեռ բնակարանի մէջ գլխաւոր դերասանները բարեխղճութեամբ կատարում էին իրանց դերերը, փողոցում ամուսկ էին հանում և վրդովվում էին կրթված վարձկանները: Պատկերը գեղեցկացնելու համար այստեղ էլ ոչինչ չէր մոռացված: Ամբոխի մէջ նկատվում էին մաքուր, բայց համեստ հագնված կանայք, երիտասարդները ձեռքին: Նրանք հագիւ էին պահում իրանց արտասուքները: Գանգատվեցաւ նոյնպէս մի հարուստ անուանի տիկին, որ կառքով շտապով մտնելու պօլիցիականներին և սիսեց բղաւել: «Ուրեք ստրկութեամբ և անտանելիութեամբ էք վարվում»: Երբ պօլիցիականները կամենում էին նրան կալանաւորել, ամբոխի մէջ տասնեակ անձինք գտնվեցան, որոնք նրան յանկարծ ճանապարհին և սիսեցին բղաւել. «Ձեռք մի տաք, կոմսուհի գԱրսկան է, օտարականուհի: Ձէր մոռացված նոյնպէս հատարակական կանանցով լի կառքը: Այդ կանայք բղաւում էին «կորչին եզուիտները»: Հատարակական կանանցով լի կառքը եզուիտները պատրաստել էին, որ զրգռեն ամբոխը և տխիր տան հակահանրապետական լրագրիրներին ասել, որ փողոցում մարտի 23-ի հրամանների օգտին ձայն տուին միայն Փարիզի հատարակութիւնից մերժվածները:

Եզուիտները հոդացել էին, որ յունիսի 30-ի սարսափելի անցքի մասին միայն Ֆրանսիական հակահանրապետական լրագրիրները չը խօսեն: Եզուիտները մեծ ճարպիկութեամբ կարողացան իրանց կողմը դարձնել աղդեցութիւն ունեցող օտար լրագիրների թղթակից-ներին: Օրինակ Լօնդօնի «Times» լրագրի թղթակից պ. Բլովից եզուիտների եռանդուռ պաշտպան հանդիսացաւ: Յունիսի 30-ին առաւօտ Փարիզից աշխարհի ամեն կողմերը թռան այնպիսի բանդագուշութեան հեռագրեր, որոնք եզուիտների համար ցանկալի էին:

Խաբեպայութիւնը աջողվեցաւ կատարելապէս: Ֆրանսիական կառավարութիւնը կարծես ամաչեցաւ իր համարձակութիւնից: «Պահպանողական» մերթան վրդովվեցաւ: Այն շրջանները և մարդիկ, որոնք դեռ երէկ ծափահարում էին եզուիտների աքսորելուն Պօրտուգալիայից, Աւստրիայից, Ռուսաստանից և այլն, որոնք դեռ երէկ եռանդով հաստատում էին Իգնատիոս Լօյոլայի հիմնած միաբանութեան սկզբունքների «հակասոցիալականութիւնը», այդ մարդիկ միաձայն սկսեցին պախարակել պ. Ժիւլ Գրեվիի մինիստրներին ասելով, որ նրանք վախեցան ասե կամ «ոչնչից» և, ամենամեծ չափաւորութիւն պահպանելով, փակեցին եզուիտական մի քանի միաբանութիւններ, որոնք Ֆրանսիայում օրէնքի հակառակ գոյութիւն ունէին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 7 յուլիսի: «Times» լրագիրը հաղորդում է, որ Կարուլի դատարկելը սկված է: «Daily News» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, որ Ագունի մէջ Փօքր Ասիայում (դուրս Ադանա, որ Կիլիկիայի մէջ է) քրիստոնեաների կոտորած է եղել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94⅜ բ., երկրորդ 92⅛ բ., երրորդ 93 բ., 50 կ., չորրորդ 93 բ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 բ., 50 կ., երկրորդ 223 բ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 բ. 75 կ., երկրորդ 91⅜ բ., երրորդ 91⅛ բ., ոսկի 7 բ. 77 կ.: Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 25⅜ պէնս, ռուսաց 100 բ. Համբուրգի վրա 216 մարկ, 75 պֆ., Փարիզի վրա 267 ֆր. 25 սանտիմ: Բօրսայի արտադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Չէ որ նա գործնական մարդ է և դու ինչ կուզես ասա, բայց այդ փողը իր համար չհանցնել ամենալաւն է: Պ. Բէկլարեան անչուշտ մոռանում է, որ այդ փողը մի բոպէ անգամ իր մօտ պահելու իրաւունքը չունի.—Սակայն ընթերցողը թող չը կարծէ որ մեր պարոն հոգաբարձուները չունեն ազգասիրական գործեր և ոչ մի օգուտ չեն տուած ուսումնարանին. ոչ. Նոքա իրրև վաճառականներ, դիմում են ամեն միջոցի ուսումնարանը հարստացնելու համար և յաջողութիւն են գտնում իրենց ձեռնարկութեանց մէջ: Հոդաբարձու Բաթա Բահաթիրեան, իր նպաստակին աւելի շուտ հասնելու համար, յարմար է համարում ուսումնարանը առևտուրի դուքան շինել և հաւատարիմ դուքանական կանոններին նա ամբողջ ժամերով աշխատում է մի կոպէկ աւելի հանել խնդրարկուից: Ահա մի խնդիր կին իր որթի ձեռքից բռնած դիմում է պ. հոգաբարձուին, և խնդրում, որ հոգաբարձութեան կողմից հրատարակված յայտարարութեան համեմատ իր աղքատ որդուն ընդունեն ի թիւս ձրիավարժների.—Ոչ, ասում է պ. Բաբան, ևս կընդունենք որդիդ, երբ դու կը տաս 5 բուբլի.—«Աստուած գիտէ, որ յետին թշուառ աղքատ եմ, ոչինչ չունեմ.»—Դէ, լաւ, 4 բուբլի 50 կոպէկ տաբր.—«Ջեմ կարող.— Հը, 20 կոպէկ էլ կը պակասեցնեմ.... Եւ այսպէս չարունակվում է մինչև որ 5 բուբլուց իջնում է 2 բուբլի 20 կոպէկ և ընդունում է աղքատ երեխային: Շատ անգամ պ. Բաբան դարձեալ խնայողութիւն է համարում մի 20 կոպէկ պոկել նորանից, որին հոգաբարձութիւնը վճռել է բոլորովին ձրի ընդունել: Ի հարկէ, չատերը պ. Բաբայի այդպիսի ջերմեռանդութիւնը վերագրում են նորա աստուածապաշտութեան, ուստի և չեն պանում դովասանք թափել նրա գլխին:

(Կը չարունակվի)

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПО СЛУЧАЮ СЪѢЗДА ВОВСЕ СЪ КАВКАЗА ЗА-ГРАНИЦУ

Капитанъ князь Константинъ Макаровичъ Орбеліани объявляетъ, что продаетъ оставшееся послѣ смерти отца, Макарія Орбеліани, имущество, именно: трехъ-этажный домъ на Головинскомъ проспектѣ, съ флигелями, гдѣ помѣщается гостинница «Россія», и имѣнія въ Тифлисской губерніи и уѣздѣ, именно: деревня Геуары, населенная жителями, 4,174 десят., Вашлеванъ—450 десятинъ, съ садами, домомъ и пристройками; дача въ Коджорахъ, домъ и земля $2\frac{3}{4}$ десятины; лѣсъ сосновый, строевой и дубовый 3,100 десят. въ Локскомъ ущельи, Шулаверскаго уѣзда, около Чатахскаго завода; имѣніе на Мокрыхъ-горахъ, около молоканскаго селенія Воронцовки, подъ названіемъ Каракала — 5,500 десят. Всѣ имѣнія обмежеваны и имѣются планы; коляска, фаэтонъ, верховыя лошади, баранта и рогатый скотъ.

3—3

ՑԵՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 30-ից պ. ՅՈՒԼԻՆՈՎԻ և ընկ. դեղերի ԽԱՆՈՒԹԸ և ՊԱՀԵՍՏԸ կը լինի ԽԻՏԱՐՈՎԻ տանը, Եարուլովի տան կից, որտեղ գտնվում է նահանգական վարչութիւնը Մուղէում դիմացը:

3—3

ՄՕԶԴՕՔԻ

Հայոց օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՀԻ նպաստաւոր պայմաններով: Յանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը պայմանների մասին բանակցելու համար:

9—10

Համեմատական անպիտան խառնուքի թէյն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խառնուքներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խառնուքի Ֆունտը 2 բուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

28—100

ՓՈՐՁԱՌՈՒ ՀԱՇԻՎԱՊԱՀ

Որ նորերում է եկել, ցանկանում է տեղ ունենալ: Համաձայն է նոյնպէս անցած տարիներից ետացած տարեկան ՀԱՇԻՒՆԵՐԸ կազմել և թողած ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ և ԲԱԼԱՆՆԵՐԸ կարգի բերել: Հասցէն Թողնել Փարիզ Հիւրանոցում № 4:

9—10

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օդեօդրաժիական պատկերներ 20% զեղչումով վերարկուներ 6—20 ր., խոզանակներ պատվիճակուած են լզի մէջ ատամները լաւ անգլիական խառնուքի համար, ամենալաւ ածելիներ, սրկղիկով 4 ր., շնիքիլի գանակներ 3—20 ր. գիւժիներ, բրիտանական մետալի թէյամաններ 30 կ.,—3 ր., դիտարանակներ, Թիւրքական շերբէթի և ծարաւը բացնող նիւթ 70 կ., ամենալաւ պօրտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

ԳԵՂԱՋԱՆՁ ԱԼԻՒՐ 2-որդ ՏԵՍԱԿԻ

Պատահմամբ մարդս ցորենից առանց թեփը բերված է նկատից և ծախվում է կատարեալ բերված պահեստում, Եկատերինակի փողոց, առն Քանանովի, Փօքիթիշվիլեան երկհարկանոց փաշտութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս նկատից բերված և Փօքիում պահվող 5000 պուդ մաքրված գարի:

5—5 (2)

ՄԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտէ Հայերէն, ռուերէն և ֆրանսերէն լեզուները, կամենում է ԿԱՆՈՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Յանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:

ԲԺԵԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՒԱՒԻՈՑԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Գօրալիվիչ ներքին հ., Գօաթենաանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շուեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջրային և հոդևկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խիրուրգիական հ., Վ. գօրօվ վիներական և բոցաղի հ., Իւյա աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեազօվ, Լիսիցով և Վերմիշև ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցով և Ռուդովսկի ներքին հ., Շուեյմբօրսկի կենտրական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւններից:

Հինգշաբթի. Վ. գօրօվ վիներական և բոցագի հ., Գօրինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցով և Վերմիշև ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիտի և ատական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեազօվ և Լիսիցով ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շուեյմբօրսկի և Աստուածատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեվ ջրային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցով և Վերմիշև ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Եանկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. գօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւեաւօյ 0 գ բ ե խ ա ղքատ հիւանդները բժշկանոցի առանձակի ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւեաւեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դերեկատոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրամաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախադիտելիք (իբրև Հայրենագիտութեան դասերի օրինակ արուած է Թիֆլիսի Հայրենագիտութիւնը), հետը պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

դումարով առնողներին դիմումն կը լինի Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը բացառական:

1—20

Էկ. բանդրազօղու երկաթ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկաթ. դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց.
Ստեփան Խաչակեանց.

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարանները: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները հաստատակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով գրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթական անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք տրվին մկրտիկական և ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամեր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մտնելու համար նրանցից պահանջվում է. Կրօնից-քրիստոնէական վարդապետութեան կրճատուած հրահանգները և սրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, Թուաբանութենից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մասին բերանացի, ժամանակի, դրամի, կշռքի և այլ չափերի գիտենալը:

Ծանուցանում ենք ընդհանուր գիտութեան, որ մեր տպարանում տպվում են հետևեալ գրքերը:

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է 9-ից. Դրիդորեանցի «Ռովկասեան դրամագառանոցում ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախադիտելիք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով. Աշխատասիրութիւն Ն. Սիմէոնեանց: Գինն է 35 կոպ. դումարով առնողներին 20% զեղչում կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մասնավարժական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոցա գները: Ուսար քաղաքացիք դիմում են:

Въ Тифлисѣ. Кавказская книжная торговля З. П. Грикурова.

20—20

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

Հրացաններ, բնվօլվերներ, դանակներ, դրիչներ, անուշահոտութիւններ, սապօն, գալոշաններ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

18—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Дозволено Цензурою 8 Іюля 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 118 Յուլիսի 10 (22) 1880 Յուլիսի 10 (22) № 118

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տխուր համբաւ.—Ներքին տեսութիւն. Մի նկատողութիւն. Կովկասի և Անդրկովկասի հայ կաթոլիկ հոգեւորականները. Նամակ Շուշուց. Նամակ Խոփագրին.—Արտաքին տեսութիւն. Նամակ Գերմանիայից.—Մշակի հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Ղարաբաղի թեմը և նրա կալուածական խնդիրը.

ՏԽՈՒՐ ՀԱՄԲԱՒ

Թիւրքաց կառավարութեան ձեռքով մահմեդական փանատիկոսութեան գրգռելը բերեց իր բոպասնելի պտուղները: «Միջազգային հեռագրական ընկերութեան» երէկվայ հեռագիրը բերեց մեզ մի շատ տխուր համբաւ: Կ. Պօլսից հաղորդում են որ Փոքր-Ասիայում սկսվեցաւ քրիստոնեաների կոտորածը....

Ահա, ուրեմն այն Թիւրքիան, որից Եւրոպան րէֆօրմներ է պահանջում և որ անդադար պատասխանում է թէ Թիւրքիահպատակ քրիստոնեաների գանգատները սուտ են, թէ քրիստոնեաները Թիւրքիայում շատ լաւ են ապրում, թէ Բ. Դուռը ինքն էլ փափագում է իր հպատակ երկիրներում անյապաղ բարենորոգումներ մտցնել և նրանց իրագործման համար վաղուց է որ պատրաստութիւններ է տեսնում...

Ուրեմն վաղը կամ միւս օրը Թիւրքիան հաւասարութեան բովանդակ սկզբունքի վրա հիմնված րէֆօրմներ պէտք է մտցնի իրան հպատակ երկիրներում, իսկ այսօր կոտորել է տալիս իր մահմեդական հպատակների ձեռքով իր քրիստոնեայ հպատակներին....Դորանից աւելի մենք կարող ենք եզրակացնել թէ որքան անկեղծ են Թիւրքիայի խօսքերը, որքան արդիւնաւոր կը լինեն նրա խոստացած րէֆօրմները:

Բայց որքան էլ տխրալի, ցաւալի լինէր հեռագրական ընկերութեան միջոցով մեզ հաղորդված լուրը, այնու ամենայնիւ, պէտք է խոստովանվել որ միայն այդ տեսակ ցաւալի և խոշոր դէպքեր, ինչպէս քրիստոնեաների կոտորածը, արաբների ապստամբութիւնը, կամ Հայաստանի սովը կարող են քաղաքակիրթ և մարդասէր Եւրոպայի ուշադրութիւնը դարձնել Օսմանեան պետութեան իսկական դրութեան վրա, այդ տեսակ դէպքերը միայն Եւրոպայի աչքերն են բաց անում....

Ուրեմն թող կոտորեն, թող ճնշեն, թող արուեստական կերպով իրանց երկիրների մէջ սով ացնեն Եւրոպայում ազատութիւն համարվող վայրենի մոնղոլները, թող ստիպեն իրանց անհնարին կառավարչութեամբ հպատակ ազգերը ապստամբվելու,—այդ միակ միջոց է, որ Եւրոպան վերջապէս ուշքի գայ և ուշադրութիւն դարձնէ Թիւրքիահպատակ ազգերի անմխիթար դրութեան վրա:

Լաւ է բացարձակ վայրենի և բարբարոս գործողութիւն, քան թէ ծածուկ ճնշում՝ լուսաւորութեան և մարդասիրութեան դիմակով:

Թո՛ղ Թիւրքիան ցոյց տայ իրան ամբողջ աշխարհի առջև այնպէս, ինչպէս կայ,—գուցէ այն ժամանակ Եւրոպան այլ ևս չի խաբվի փարիզում ուսում առած Թիւրք դիպլոմատների կեղծ խոստումներով և վերջապէս կը համոզվի որ Օսմանեան պետութիւնը վաղուց է որ կորցրել է քաղաքական, պետական կեանքով ապրելու իրաւունքը:

Մի պետութիւն, որ դիտմամբ սով է գցում իր հպատակների մէջ, որ սովը ցցելուց յետոյ արգելում է օգնութիւն հասցնել իր սովատանջ հպատակներին, որ իր հպատակների մի մասի փանատիկոսութիւնը պաշտօնապէս գրգռում է իր հպատակների միւս մասի դէմ, որ կոտորել է տալիս իր հպատակների մի մասը միւս հպատակների ձեռքով—մի՞թէ այդ տեսակ վայրենի պետութիւն լուսաւորված, քաղաքակիրթ, մարդասէր Եւրոպան ընդունակ է համարում մի անկախ, առանձին, պետական հիմնարկութիւն, քաղաքական մարմին կազմելու...

Երբ որ Եւրոպային ասում էք թէ Թիւրքիահպատակ փոքրիկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԸ ԵՒ ՆՈՐԱ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

—

Շատ պարզ է, որ հոգաբարձութիւնը դիմում է այդպիսի միջոցների ուսումնարանի համար եկամուտ գտնելու գլխաւորապէս այն պատճառով, որ այդպիսի միջոցների գործադրութիւնը չէ պահանջում իրանցից ոչ ճանապարհորդութիւն և ոչ էլ գլխացաւ, ինչպէս այդ կարող էր պատահել, եթէ նոքա իրանց բոլոր ուշադրութիւնը դարձնէին կալուածների վրա: Այդ մասամբ դեռ ներելի է, բայց երբ ամբողջ հոգաբարձութիւնը իր նախագահի, այն էլ Սեդրակեանի պէս զարգացած մարդու հետ միասին, դիմում են նոյն նպատակով այնպիսի միջոցների, որոնք սաստիկ գայթակղեցնում են ժողովուրդը, դորա դէմ չը բողոքել և այդ արարքը չը դատապարտել, մենք, գոնէ մեր կողմից, ազնուութիւն չենք համարում: Ղարաբաղի հոգեւոր դպրոցի հոգաբարձութիւնը չէ ամաչում հրապարակաւոր աճուրդախօսութիւն նշանակելու թեմի մէջ գտնված սրբութիւնները կապալով տալու համար: Թէ Ղարաբաղի ժողովուրդը մի առանձին բարեպաշտութեամբ և ջերմեռանդութեամբ յարգում է իր բազմաթիւ սրբերը և ուխտատեղիները, ամեն տարի 3—4 անգամ յոյսով և հաւատով դիմելով նոցա դուռը, դա հանրածանօթ իրողութիւն է: Երեւակայեցէք, ուրեմն, թէ ինչ ահագին գայթակղութիւն է տարածվում բարեպաշտ և տգէտ ժողովրդի մէջ, երբ նա տեսնում է, որ նոքա, որոնք իր կարծիքով, պէտք է այդ բարեպաշտութեան պաշտպան հանդիսանան, այդպիսի անպատկառութեամբ են վերաբերվում դէպի սրբութիւնները: Թէ ինչ անբարոյականացուցիչ ազդեցութիւն է ունենում այդ տեսարանը ժողովրդի վրա, և թէ ինչ վնասաբեր հետեւանք կարող է արտադրել, դա անկասկած է, ով որ փոքր ինչ ուսումնասիրել է պատմութիւնը: Բաւական է, եթէ յիշենք այն հետեւանքը, որ ունեցաւ ինդուլգենցիայի առեւտուրը Գերմանիայում պապական հոգեւորականութեան կողմից: Եթէ այդպիսի պատմական փաստ չը գիտեն հոգաբարձուները, եթէ նոքա, իրանց տեսակէտից նայելով, այդպիսի միջոցները անպատիւ չեն համարում և չեն հասկանում նոցա աղետալի հետեւանքը, դա ներելի է, որովհետեւ ինչ կարելի է պահանջել տգէտ և անհեռատես անձերից, ինչ կարելի է պահանջել բաղաններից և Թաթոսներից, որոնք ինքեանք հարստացած լինելով ամեն տեսակ ներելի թէ աններելի, կեղտոտ թէ մաքուր միջոցներով, սրբութիւնները ածրգով ծախելուն մէջ նոյնպէս հարստութեան մի միջոց են տեսնում: Բայց երբ այդ բանը համակրում և թոյլատրում է մի հոգեւորական, որը ոչ տգէտ է և ոչ անհեռատես, որը լաւ ծանօթ է պատմութեան, դա չափից դուրս անբարեխղճութիւն է: Դեռ մի Էջմիածնի վարդապետից այդպիսի բան կարող էինք սպասել, բայց առանց «Դրէպերի» հայ թարգմանչից, ճշմարիտ, անսպասելի էր, առաւել այն պատճառով, որ Սեդրակեան գուցէ բոլորովին անգիտակցաբար ապացուցանում է մի մոլեռանդ կարգի այն յայտնի պրինցիպը—նպատակը արդարացնում է միջոցը—որի դէմ, ինքն, իբրև հայկական եկեղեցու վարդապետ, պէտք է ամեն ուժով մաքառէր:

Այս խորհրդածութիւններից պարզ է, որ հոգաբարձութիւնը դիմում է այդպիսի միջոցների, եկամտի ուրիշ աղբիւրներ չունենալու պատճառով, թէև այդպիսի աղբիւրներ մեծ թւով կարելի էր գտնել, եթէ հոգաբարձութիւնը բաղկացած չը լինէր հնացած, փտած բաղաններից և հասարակաց ու հաստագլուխ թաթոսներից ու կերակուրներից, այլ իր մէջ ունենար աշխոյժ, գործունեայ, երիտասարդական ուժեղ տարր: Եթէ չը լինէր Արիստակէս Սեդրակեան վարդապետը, եթէ նա ևս գործէր այնպէս, ինչպէս գործել են իր նախորդները և չը յատկացնէր ուսումնարանին այն մի քանի նոր եկամուտները, որոնք առաջ առաջնորդների և կոնսիստորիայի ու Սինոդի անդամների գրպաններին էին յատկացրած, ինչպէս օրինակ քահանայական ձեռնադրութիւնից, մէտրիքական տալուց, պսակագրամից, հոգեբաժնից, քահանաներին տուգանքի ենթարկելուց և ուրիշ այդպիսի աղբիւրներից գոյացած արդիւնքը, անշուշտ, ուսումնարանը, նիւթական կողմից, խիստ աղիողորմ վիճակի մէջ պիտի լինէր: Եւ որովհետեւ շատ քիչ յոյս կայ, որ ներկայ հոգաբարձութիւնը աշխատէ ապահովացնել ուսումնարանի նիւթական դրութիւնը, բարեկարգելով կալուածները և նրա վրա մի առանձին ուշադրութիւն դարձնելով, ուստի շատ փափագելի է, որ Վ.եհ. Հայրը բարեհաճէր յետ դարձնել Սեդրակեան վարդապետին իր թեմը, իբրև ամենայարմար և փորձառու անձը և միակ առաջնորդ ու վարդապետը, որ կարող էր օգնել ուսումնարանի բարգաւաճման ներկայ հանգամանքի մէջ:

Թէ ներկայ 3 հոգուց բաղկացած հոգաբարձութիւնը բացի այն, որ նիւթականապէս ոչ մի օգուտ չէ տալիս, այլ և բարոյապէս վնաս է պատճառում դպրոցին, կարելի է իմանալ հետեւեալ օրինակից: Եթէ օրիորդական դպրոցը Շուշու մէջ աւելի կանոնաւոր է ընթանում քան տղայոցը, դորա պատճառը գլխաւորապէս այն է, որ ուսուցչական խումբը մի առանձին ուշադրութիւն է դարձնում նորա վրա: Ղարաբաղի մէջ ընտանեկան կեանքը ամեն [illegible] դրութեան մէջ է. այստեղ նոյն բռնակալութիւնը, նոյն սարսափելի նախապաշարմունքները, որոնք շատ տեղերի հայերին յատուկ են: Արական ազգայ սերունդը, իբրև փողոցային ազատ կեանքին ենթակայ, շուրջ է մնում որ և իցէ դաստիարակութիւնից և ինչ որ մի կողմից ուսումնարանը շինում է, միւս կողմից այդ շինածը փողոցը քանդում է. այդ է պատճառը, որ բացի բարձր ուսումնարաններում իրենց ուսումը շարունակող սակաւաթիւ երիտասարդութիւնից, տեղական բազմաթիւ երիտասարդական տարրը բարոյապէս բոլորովին փչացած է. Նորա միակ իդէալն է գնալ Մարսէլ իբրև վաճառական, մի քանի տարի զուարճանալ այնտեղ և վերադառնալով Շուշի ամուսնանալ մի գեղեցիկ օրիորդի վրա: Հասկանալի է, թէ որպիսի բարոյական պաշարներով է վերադառնում իր հայրենիքը այդպիսի երիտասարդը, որը անցնելով ֆրանսիական հեշտասիրութեան ամեն տեսակ քուրաներից, ի վերջոյ վարակված այդպիսի հեշտասիրութեան բոլոր հետեւանքներով—զանազան վեներական հիւանդութիւններով, հարկաւոր է համարում այնուհետեւ ընտանիքի տէր դառնալ, և անմեղ, խեղճ էակներ, զուարթ ու առողջ աղջիկները ստիպված են այդ բարոյական հրէշների ընկեր դառնալ: Ահա այդ փչացած ընտանեկան կեանքի մէջ թարմ, առողջ կեանք, բարոյական բողբոջ հաստատելու համար պէտք է իգական սերունդի դաստիարակութեան վրա առանձին խնամք տանել, բաւ որում օրիորդների դպրոցի մէջ ստացած բարոյական կեանքի սերմերը այնպէս դիւրաւ չեն կարող փչանալ, երբ նոքա աւելի սահմանափակված կեանք վարելու համար, ազատ են փողոցային կեանքի ազդեցութիւնից: Միւս կողմից յայտնի է թէ ոչ մի երիտասարդութիւն այնքան անտարբեր չէ դէպի ազգայնութեան գաղափարը, որքան Շուշու երիտասարդութիւնը: Ի հարկէ, օրիորդները ստանալով բուն ազգային դաստիարակութիւն և կրթութիւն, կարող էին ապագայում իրենց մեռած ընտանիքի կազմակերպութիւնը դէպի լաւը փոխել և իբրև մայրեր, մի աւելի լաւ և բարոյական սերունդ պատրաստել: Ահա դէպի այդ ցանկալի նպատակին էր ձգտում ուսուցչական խումբը գոնէ հասկացող մասը, բայց ինչ արած որ խումբի երեքանեայ աշխատութիւնը կարող է փչանալ մի տգէտ և կեղտոտ հոգաբարձուի հրամանով: Հո-

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

Ա. Ա.

ՂԱՀՔԱՆԱՑՈՒՆ ՏԵՍԻՉԸ

ՊԻՏԻ ԴԱՐՁՆԻ ՎՐԱՆ

—

Վերջերս Ամերիկայի մամուլը մեծ տեղ էր հատկացրել Ղահքանացուն տեսիչի մասին հետաքրքրական հոդվածների։ Ամերիկացի լրագրողները, որոնք ուզում էին ծանոթանալ Ղահքանացու կյանքի ու գործունեության հետ, դիմել էին Ամերիկայում Թուրքիայի դեսպանին, որպեսզի նա իրենց ծանոթացնի Ղահքանացուի հետ։ Դեսպանը, հարկավ, խոստացել էր կատարել նրանց խնդրանքը։ Ամերիկացի լրագրողները, սակայն, ոչ մի անգամ չեն տեսել Ղահքանացուին։ Նրանք ստիպված են եղել գոհանալ միայն նրանով, որ տեսել են Ղահքանացուի նկարը։ Ամերիկացի լրագրողները, սակայն, ոչ մի անգամ չեն տեսել Ղահքանացուին։ Նրանք ստիպված են եղել գոհանալ միայն նրանով, որ տեսել են Ղահքանացուի նկարը։ Ամերիկացի լրագրողները, սակայն, ոչ մի անգամ չեն տեսել Ղահքանացուին։ Նրանք ստիպված են եղել գոհանալ միայն նրանով, որ տեսել են Ղահքանացուի նկարը։

Ղահքանացուն տեսիչը—մարդ է, ինչպես ամենքս։ Նա ունի երկու ձեռք, երկու ոտք, մի գլուխ, մի սիրտ, մի լյարդ, մի փայծաղ, մի ստամոքս, մի ուղեղ, մի ողնաշար, մի ...

Fonds A.R.A.M

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Ալիշանեան

Երկու տարի առաջ, երբ Ամերիկայի Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան առաջին տարեդարձն էր, ես ուրախութեամբ գրեցի այդ մասին, որովհետեւ ամենայն ուրախութեամբ կը տեսնենք ամէն նոր ձեռնարկ, որ կը ձգտի ի նպաստ մեր ազգին։ Ուրախութիւնս աւելի մեծ էր, որովհետեւ այդ միութիւնը կազմուած էր ոչ միայն մեր հայրենակիցներէն, այլ նաեւ ամերիկացի բարեսէր անձերէ, որոնք ոչ միայն իրենց անձնական նիւթական օգնութիւնը կը խոստանային, այլ նաեւ իրենց ազդեցութիւնը։ Ես ուրախ էի, որ ամերիկացիք կ՚ուզէին մեզ օգնել, որ մեր ազգին մէջ ալ կը տարածուէր այն ոգին, որ կը տիրապետէ ամերիկացիներուն մէջ, այսինքն՝ ոգին ինքնօգնութեան։ Ես ուրախ էի, որ մեր ազգին մէջ ալ կը ստեղծուէր այն կազմակերպութիւնը, որ ամերիկացիներուն մէջ կը կոչուի Charity Organization Society

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՖԻԼԻՊՈՊՈԼ, 7 յուլիսի: Սկօբելեվի մարմինը, որ ուղեւորւում էր Ֆիլիպօպոլ այնտեղ մի հիւանդանոց հիմնելու համար, երէկ երեկոյեան սպանուած է Զերատն քաղաքի մէջ, Ֆիլիպօպոլից ոչ հեռու: Նրա ապահովը, ամիտան և բոլոր ուղեկիցները կոտորած են: Անյայտ սպանողները գեռ բռնուած չեն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յուլիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ սենատի առաջին դեպարտամենտի օրեր—պրօկուրօրի Տարիօվ լուսաւորութեան մինիստրի օգնական է նշանակուած:

ՖԻԼԻՊՈՊՈԼ, 8 յուլիսի: Սկօբելեվի մօր սպանութեան տեղը ուզարկուեցան ժանդարմներ և գօրքեր: Սպանողը գտնուեցաւ և երան շրջապատուած տեսնելով, ինքնասպանութիւն գործեց: Նրա երեք համախոհները կալանաւորուած են:

ԱՔԻՆԲ, 7 յուլիսի: Ցունական պատգամաւորների ժողովի գումարումը յետաձգուած է մինչև սեպտեմբեր:

ԼՕՆԴՕՆ, 8 յուլիսի: «Times» լրագիրը հաղորդում է, որ Սկօբելեվի մօր սպանողը եղել է ուս կապիտան Ուսոմ: Նա իրան սպանեց րեվոլվերով: Ուրիշ անկախութիւնների համեմատ նրա սպանութիւնը ուշացած է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՕԶԻՈՒԹ

Հայոց օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՀԻ նպատակաւոր պայմաններով: Ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատունը պայմանների մասին բանակցելու համար:

10—10

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ցունիսի 30-ից ապ. ՅՈՒՐԻՆՕՎԻ և ընկ դեղերի ԽԱՆՈՒԹԸ և ՊԱՀԵՍՏ կը լինի ԽԻՏՏԱՐՕՎԻ տանը, Եաթուրովի տան Ա13, որտեղ գտնւում է նահանգական վարչութիւնը Մուղէու մի դիմացը:

3—3

Համեմատելիք անպիտան խանութի թէյին գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը թուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

29—100

ՓՈՐՁԱՌՈՒ ՀԱՇԻՎՊԱՀ

Ով նորերում է հկել, ցանկանում է տեղ ունենալ: Համաձայն է նոյնպէս անցած տարիներից ճեղքած տարեկան ՀԱՇԻՒՆԵՐԸ կազմել և թղթած ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ և ԲԱԼԱՆՍՆԵՐԸ կարգի բերել: Հասցէն թողնել Փարիզ Հիւրանոցում № 4:

10—10

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օվէօգրաֆիական պատկերներ 20% զիջում ամպ. վիրաբուններ 6—20 ր., խոզանակներ պատժհետևյալ են լցի մէջ առանձնա հա անդլիական խանութի համար, ամենատա ածելիներ, արկղիկով 4 ր., Շեֆիլդի դանակներ 3—20 ր. դիւժինը, բրիտանական մետալի թէյամաններ 30 կ.,—3 ր., գիտարատժանելիքներ, թիւրքական շերբէթ և ծարաւը բացեցնող նիւթ 70 կ., ամենատա պօրտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

ԳԵՐԱԶԱՆՑ ԱԼԻՒՐ 2-որդ ՏԵՍԱԿԻ

Պատասխան մաքուր ցորենից առանց թեփը բերած է կտկից և ծախվում է Կուկիայում նոր բացված պահեստում, նիւթ գավէտնակի փողոց, առն Քանանովի, Փօթխիշիլիանի երկաթուղու վարչութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս կտկից բերած և Փօթխում պահվող 5000 պուդ մաքրված գարի:

5—5 (2)

ՄԷԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտէ հայերէն, ռուերէն և ֆրանսերէն լեզուները, կամենում է ԿԱՆՈՏՕՐՉԱԿԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Յանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Սրկուշաբթի. Դավրօնակի կանանց հիւանդ. Չօրաշաբթի. Ներքին հ., Օատաննա կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խերուրգիական և աչքերի հ., Շառեմբօսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Ներեքշաբթի. Մինկեվիչ խերուրգիական հ., Վզօրով վիներական և բոզադի հ., Բիլյա աչքի հ., Բախուռաով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլադով, Լիսիցեվ և Վիմիշևի ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդվօսկի ներքին հ., Շառեյմբօսկի կենտրական և կաշու հ., Ասատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բոզադի հ., Օատիեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշևի ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և մոտական օրգանների հ.:

Ուրբաթ. Դավրօնակի կանանց հ., Մինկեվիչ խերուրգիական հ., Կրասնօգլադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուռաով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շառեյմբօսկի և Ասատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշևի ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Յանկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնւում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առանձնաբար Օրթելա ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օվէօգրաֆիական պատկերներ 20% զիջում ամպ. վիրաբուններ 6—20 ր., խոզանակներ պատժհետևյալ են լցի մէջ առանձնա հա անդլիական խանութի համար, ամենատա ածելիներ, արկղիկով 4 ր., Շեֆիլդի դանակներ 3—20 ր. դիւժինը, բրիտանական մետալի թէյամաններ 30 կ.,—3 ր., գիտարատժանելիքներ, թիւրքական շերբէթ և ծարաւը բացեցնող նիւթ 70 կ., ամենատա պօրտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Դպրաճեմատանոցի և ծախւում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵՑՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախապատկերք (իրրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

դուռարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը բազաբական:

2—20

Ազնւ-բանդրագոլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձու { Սարգիս Միրզայեանց. / Եսայեան Խաչակեանց.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառւում է Զաք. Գրիգորեանցի «Կովկասեան դրավաճառանոցում» Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախապատկերք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով. Աշխատասիրութիւն Ն. Սիմիոնեանց: Գինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զիջում կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մաթեմատիկական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոցա գինները: Ծառայ քաղաքացիք դիմում են:

Въ Тифлисѣ. Кавказская книжная торговля З. П. Григурова.

20—20

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄ

Հրացաններ, բեմբերներ, դանակներ, դրիչներ, անուշահոտութիւններ, սապոն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

19—20

Ռազաբային ուսումնարանական մանաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մանաժողովի անունով գրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթակալ անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք տրվին մետրիկական և ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և ներանցից պահանջվում է: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամեր կողմից պէտք է ունենան առաջին դասատուն մտնելու համար ներանցից պահանջվում է. Արծնից-քրիստոնէական վարդապետութեան կարճատօ հրահանգները և սրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուաբանութենից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամանակի, դրամի, կշռքի և այլ չափերի գիտենալը:

Ցուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՑԱ ՊԵԿԱՐՆԻՑԻՆ կից կը բացվին ՍԵՆՆԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱՓ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ԸՍՐԵՐ: 21—40

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Дозволено Цензурою 9 Іюля 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 119 Յուլիսի 11 (23) 1880 Յուլիսի 11 (23) № 119

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի. Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Նացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անպատճառ հարկաւոր է.—Ներքին տեսութիւն. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Ցուլնատան. Արևելք և Ֆրանսիա.—«Մշակի» նւագիրներ.— Յայտարարութիւններ.— Բանասիրական. Քրդահայք.

ԱՆՊԱՏՃԱՌ ՀԱՐԿԱՒՈՐ Է

Հայի ձայնը չէ լսում Եւրոպան, հայ լեզուն չէ հասկանում եւրոպացին։ Թիւրքաց Հայաստանի դրութեան մասին տեղեկութիւնները Եւրոպան ստանում է դարձեալ հայերից, երբ որ սրանք խօսում կամ գրում են օտար լեզուներով....

Ինչքան էլ ուժեղ լսյանես հայոց լրագրում, ինչքան էլ բողոքես հայոց թերթի մէջ Թիւրքիայի բարբարոսութեան կամ Եւրոպայի անտարբերութեան դէմ,—ոչինչ չէ օգնում, որովհետև հայոց լրագիրը, ամսագիրը, գիրքը կամ բրօշիւրը օտարներից ոչ ոք չէ կարդում և օտար ոչ մի լրագիր մեր գրուածները չէ արտատպում։

Մեր ձայնը Եւրոպային լսելի անելու համար անպատճառ հարկաւոր է որ հայերը ունենան օտար լեզուով մի օրգան։

Մեր կարծիքով ամենից լաւ կը լինէր հրատարակել Ռուսաստանում՝ Ս. Պետերբուրգում, կամ Մոսկվայում մի շաբաթաթերթ ֆրանսերէն և ռուսերէն լեզուով, որի նպատակը լինէր պաշտպանել Թիւրքաց հայերի շահերը, բացատրել նրանց դրութիւնը Եւրոպային։

Ի հարկէ կարելի էր հիմնել այդ տեսակ շաբաթաթերթ կամ փոքրիկ ամսագիր ոչ թէ միայն Ս. Պետերբուրգում կամ Մոսկվայում, այլ նոյն իսկ Թիֆլիսում,—բայց դրա համար քիչ շատ նիւթական միջոց է հարկաւոր, գոնէ սկզբում մի փոքրիկ դրամագլուխ է հարկաւոր։

Մենք ունենք մեր աչացին ծախսերը «Մշակի» վրա, եթէ ոչ մենք ուրախութեամբ յանձն կառնէինք և այդ տեսակ թերթի հրատարակութիւնը, որի պահանջը սաստիկ զգացվում է այժմ։ Բայց եթէ մեր ունեւորները մեզ ամենափոքրիկ գումարն անգամ խոստանային այդ հրատարակման համար, մենք ուրախութեամբ յանձն կառնէինք հրատարակել Թիֆլիսում մի հայոց օրգան ֆրանսերէն և ռուսերէն լեզուներով, որ պաշտպան հանդիսանար Թիւրքաց հայերի գործի։

Եւ չը պէտք է մոռանալ որ այդ տեսակ թերթ հարկաւորութիւն չը կայ տարիներով հրատարակել։ Այս րոպէիս հայոց խնդիրը վճռվում է, հիմա ուրեմն պէտք է խօսել, գործել։ Մէկ տարուց յետոյ կամ հայոց խնդիրը լաւ կը վճռվի,—այն ժամանակ այնուհետև Թիւրքաց հայերը պէտք չեն ունենայ մի պաշտպան լրագրի մէջ, կամ Թիւրքիայի հայերը ոչինչ չը ստանալով Եւրոպայից, բոլորովին կանհետանան որպէս ազգութիւն աշխարհիս երեսից, որովհետև բոլորն էլ կը գաղթեն իրանց հայրենիքից,—և այն ժամանակն էլ մի հայոց օրգան, մի թերթ որ պաշտպանէր հայոց դատը Եւրոպայի առաջ, նոյնպէս աւելորդ կը լինի....

Ուրեմն այդ տեսակ թերթ հիմնելով այժմ, բաւական է մի տարի միայն հրատարակել նրան, գուցէ թէ լաւ կը վերջանայ հայոց խնդիրը։

Կը սպասենք, արդեօք արձագանք կը գտնի հայերիս մէջ մեր այդ առաջարկութիւնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, յուլիսի 10-ին

Ցօգուտ վանի սովատանջների յուլիսի 8-ին ժողովեցաւ՝ վանքի մայր եկեղեցու գաւթում.

Օսանեանց 20 կ., Բօրխոլեանց 1 ր., Գասպարեանց 20 կ., Ավամազեանց 20 կ., Աւագեանց 10 կ., Պօլսեցի հայ 1 ր., Եսայեանց Առաքել 1 ր., Դուչայեանց 1 ր., Տէր-Մարկոսեանց 20 կ., Своя 1 ր., Մարգարեանց 1 ր., փրկչեանց մի ֆրանկ —փոխեցինք 40 կոպէկի հետ 40 կ., Մանվելեանց Աւետիս 40 կ., Մանուկեանց Մարգար 1 ր., Աբրահամեանց Արտեմ 1 ր., Արզումանեանց Խաչատուր 40 կ., № № 1 ր., Օնանեանց 20 կ., Գաբրիէլեանց 40 կ., Խաչատուրեանց Արտեմ 20 կ., Ճաւեանց տիկին 20 կ., Ազգամանեանց Արտեմ 20 կ., Քոչարեանց 1 ր., Օմանը 20 կ., Եղիազարեանց տիկին 1 ր., Խարազեանց 20 կ., Ըմանք 1 ր.։ Գումարն է 15 ր. 70 կ.։ Ազքատներին բաժանեցինք 40 կ.։ Մնում է 15 ր. 30 կ.։

Սմբատ Հովսէփեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 յուլիսի

Տարակոյս չը կայ որ մտաւորապէս զարգացած թէ մէկ անհատ լինի, թէ մէկ ամբողջ ազգ՝ միշտ աւելի արտօնութիւններ է վայելում քան թէ չը զարգացածը և չը կրթվածը։ Բայց զարգացածն ու կրթվածը միանգամայն հաստատապէս համոզված է որ անհնարին է վայելել այն արտօնութիւնները և գերազաս գիրքը, եթէ նա չարունակ չը կատարէ և իր պարտականութիւնները։ Բարոյական աշխարհում իրաւունքն ու պարտականութիւնը և պարտականութիւնն ու իրաւունքը այնքան սերտ իրար հետ կապված են, որքան պատճառն ու արդիւնքը թէ ֆիզիքական և թէ բարոյական երեւոյթներում։

Հայ ազգը ճանաչել է, որ ինքն մտաւորապէս մի քանի աստիճան բարձր է կանգնած իրան շրջա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԴԱՀԱՅՔ

Վասակ հայ մ'էր։

Կը լսենք թէ Տիարպէքիրի հայ-բողոքական հասարակութեան պատուելի հովիւ պ. Թովմաս Պօյաճեան ինք էր որ երբ անգղիական հիւպատոս պ. Թրօթթըր առաջին անգամ Տիարպէքիր եկաւ, ջանաց համոզել զայն թէ «Հայաստան» բառը գործածելու պէտք չը կար, ըստ որում բոլոր այն Վիլայէթներն, որոց վրա պ. հազարապետին իրաւասութիւնը կը տարածուէր, Քրդստան էին միայն։ Այս պ. Թովմաս Պօյաճեան ինք էր, որ ինքզինք երկրին անցեալն և ներկայն կատարելապէս հմուտ ցուցնելով, յաջողեցաւ համոզել զպ. Թրօթթըր թէ հայ ազգութիւն մ'այլ ևս միգական բան մ'էր. և իւր դրդմամբ է եղեր, որ պ. Թրօթթըր անտրան մը խմբագրեր և Անգղիոյ Աշխարհագրական Արքունի Ակադեմիային զրկեր է՝ հաստատելով թէ Կարնոյ, Վանայ, Բաղէշու, Քարբերդի և Տիարպէքիրի Վիլայէթք Քրդստան են։ Պ. Պօյաճեանի խորհրդով է եղեր որ պ. Թրօթթըր՝ օտարազգի մը՝ որ բնականաբար այս խնդրոյ վրա ինքնին բաւական տեղեկութիւն չէր կրնար ունենալ, իւր տեղեկագրին մէջ Հայաստանի մը գոյութիւնն հերքելու համար սա կերպ փաստաբանութիւն մ'բրեր է. «Ըստ որում անիշխանական և ոչ—կազմակերպեալ երկիրներու մէջ տիրող անունն այն ցեղին անունը կը լինի, որոյ լեզուն ամենէն աւելի կը խօսուի, և որոյ ձեռքն են երկրին արհեստներն, և որոյ սովորութիւններն և հաւատոր նոյն երկրին սովորութիւններն և հաւատոն են, այսինքն, նկատելով որ այդպիսի վիճակի մէջ գտնուող երկիրներն ոհան քաղաքակրթութեան գլխաւոր տարրքը ներկայացնող ցեղին անունը կը յորջորջուին, և նկատելով որ Կարնոյ, Վանայ, Բաղէշու, Քարբերդի, և Տիարպէքիրի Վիլայէթներուն մէջ ամենէն աւելի խօսուող լեզուն քրդերէն է, հայք ալ նոյն լեզուն կը գործածեն. թէ արհեստները քրդական արհեստներ են, ժողովրդեան հաւատոը քրդական է, սովորութիւններն ու աւանդութիւններն աշքրդական, հետևաբար, բոլոր այդ տեղերը Քրդստան են, մանաւանդ թէ հոն քուրդերն ամենաբացարձակ մեծամասնութիւն ունին ուրիշ ոև է ժողովրդեան վրա, և այդ Վիլայէթներուն համար «Հայաստան» անունն այլ ևս պատմական անուն մ'է։ Այս փափոխութեան մի օրինակն է Ամերիկայի Միացեալ—Նահանգներն, ուր Հնդիկ—բարբարոս ցեղը քաղթականաց առջև տեղի տուած էր և հետզհետէ աներեւնալով, նոր երկիր մ'երևան ելած էր հոն. նոյնպէս հայք քրդաց առջև տեղի տուած են և Քրդստան Հայաստանի յաջորդած է»։

Թէև մեր այս տեղեկութիւնները «կը լսենք» ի սովորական ձևով կը հրատարակենք, սակայն ամենայնիւ տանց կէտ առ կէտ ճշդութեան կըրնանք երաշխաւորել, դժբաղդաբար։ Այս տեղեկութիւնները մեզ տուող անձն երկար ժամանակ Եւրոպա և Կովկասիա բնակած պատուարժան և արժանահաւատ ազգային մ'է, որ անցեալ տարի պ. Թրօթթըրի կընկերանար անոր ուղևորութեանց մէջ, և պ. Թովմաս Պօյաճեանի բոլոր այս հակահայկական քաջագործութեանց ականատես վկայ լինելէ զատ, անոր խորհրդով պ. Թրօթթըրի շինած տետրակն ալ իւր աչօք տեսած և կարդացած է. Ինչպէս գիտեն մեր ընթերցողք, պ. Թրօթթըր մինչև մեծ վստահութիւն ունեցած է պ. Թովմաս Պօյաճեանի, այն է Տիարպէքիրի բողոքական պատուելին վրա, որ ինք Տիարպէքիրէն բացակայ եղած ժամանակներուն համար զայն իրեն փոխանորդ կարգած է, և պ. Թովմաս Պօյաճեան անգղիական հիւպատոսի փոխանորդի ստորագրութեամբ գրութիւններ ունեցած է վերջին կայսրութեան տետրակին մէջ։ Արդէն պ. Թովմաս Պօյաճեան Տրապիզոնի անգղիական հիւպատոս հաչակաւոր պ. Փալկրավի հետ ալ սերտ յարաբերութիւններ ունեցած լինելով, կը լսենք թէ պ. Փալկրավ Հայաստանի նկատմամբ երեք տարի առաջ հրապարակաւ յայտնած գաղափարներն, որք լորտ Բարնարվմնի հետ իւր վիճաբանութեան պատճառ եղան, Տիարպէքիրի բողոքական պատուելի պ. Թովմաս Պօյաճեանէն առած էր։

Նոյնպէս, այս սքանչելի հայասէր պ. Թովմաս Պօյաճեանի տուած տեղեկութեանց յենլով, պ. Թրօթթըր ցեղագրական քարտէս մը շիներ է վերոյիշեալ հինգ Վիլայէթից համար, յորում տարբեր գոյներով կը յայտնէ եղեր քրդաց կամ քրդախօս հայոց բնակած տեղերն, և զուտ հայախօս հայոց բնակած տեղերն, այնպէս որ, շնորհիւ պ. Թովմաս Պօյաճեանի տեղեկութեանց, այս քարտէսին վրա միայն ակնարկ մը նետել բաւական է եղեր հասկնալու թէ հայք ամենաչնչին տարր մ'են այն երկրին մէջ, զոր սովորաբար Հայաստան և Հայրենիք կանուանեն՝ լոկ ազգային զգացմամբ։

Արդէն պ. Թովմաս Պօյաճեանի անգղիական կայսրութեան տետրակին մէջ հրատարակեալ գրութիւններն ալ հակահայկական զգացմամբ կը բուրէին, և սա էր որ փիլիպպոս հայրենիքի կրուէն այնքան ձախող և չափազանցեալ կերպիւ ներկայած էր անգղիական հասարակութեան. սա էր որ անմիջապէս Անգղիոյ արտաքին գործոց նախարարութեան հեռագիր քաշելով այնպէս ցուցած էր իբր թէ հայք զիրար կը ջարդէին տիրացուական վէճերու պատճառաւ. և իւր այս գործունէութեան շնորհիւ էր որ, ինչպէս լրագիր ընթերցողք կը յիշեն, յանձամ Լոնտրային աշխարհի չորս կողմը հեռագիրներ զրկուեցան՝ Տիարպէքիրի հայոց վայրագ գործերը ծանուցանելու։

Բայց միայն ասոնք չեն եղած պ. Թովմաս Պօյաճեանի ծառայութիւններն առ ազգն։ Արդէն ամեն Տիարպէքիրցի բողոքական կը վկայէ թէ երբ տեղւոյն բողոքականաց վարժարանին մէջ հայոց պատմութիւն կը դասախօսուէր, պ. Թովմաս Պօյաճեան ինք էր որ այս ուսումը վերցուց դպրոցէն, ըսելով թէ ազայք հայոց պատմութիւնն իբր վէպ կրնան կարդալ և զբօսնուլ, բայց չարժեր որ դպրոցի մէջ ուսման ասարկայ ընեն զայն։ Տիարպէքիրի ազգային իշխանութիւնք կը վկայեն թէ երբ որ և է հարստահարութեան տեղեկագիր մը կը տանէին պ. Թովմաս Պօյաճեանին՝ իբրև Անգղիական հիւպատոսի փոխանորդին, պ. Պօյաճեան թէ այն տեղեկագրերն, և թէ ուրիշ հայ ազբիւրներէ եկող նմանօրինակ բոլոր տեղեկագրերը չափազանցեալ նկատելով, հաւատ չէր ընծայեր, և նոյն բանը պ. Թրօթթըրի առջև ալ ընելով, ի վերջոյ կը յաջողէր հայերն իբրև ստախօս և զրպարտիչ ներկայել Անգղիոյ ներկայիչին առջև, թէև գրուած բաները կրնային կատարելապէս ստոյգ

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ժամը, երբ պիտի լուծվէր Նրա կենաց և մահուան խնդիրը, երբ Նրա դարևոր վէրքերը կամ պիտի բժշկվէին և կամ աւելի պիտի ասասկանային,—մի այսպիսի օրհասական րոպէում հայ-կաթոլիկ համայնքը նայում էր գործի վրա կատարեալ սառնասրտութեամբ։

Անցեալ պատերազմի ժամանակ, երբ Ցաճկատանի հայը սթափվեց իր դարևոր քնից, երբ ըղգաց իր թշուառ դրութիւնը, երբ ճանաչեց իր իրաւունքները և ներկայ պահանջը,—այդ ժամանակ նա մեր վէրքերը բաց արեց եւրօպայի առջև և սկսեց կարեկցութիւն խնդրել։ Մի և նոյն ժամանակում հայ ազգի մի մասը, հայ—կաթոլիկ համայնքը, մեզ անտարբերութեան մէջ։ Մենք կարծելով յիշում ենք, որ Բերլինի վեհաժողովի գումարման միջոցում, հայ—կաթոլիկները, փոխանակ իրանց հայ լուսաւորչական եղբայրների հետ միաբանվելու, և իրանց ազգային ցաւերի համար դարման խնդրելու,—հայ-կաթոլիկները այդ միջոցում թէ Կ. Պօլսի մէջ և թէ դաւառներում զբաղված էին խայտառակ կրօնական վիճաբանութիւններով, և Հասունի մասին էին մտածում....

Կաթոլիկ հոգևորականութեան վրա անկարելի է յայտ դնել, որովհետև Նրա իդէալը Հռոմն է, իսկ նպատակը Թիւրքաց անկարգ կառավարութեան պահպանութիւնը։ Մեր յոյսը ազատամիտ հայ-կաթոլիկ երիտասարդութեան վրա է։ Այժմ հայ-կաթոլիկ երիտասարդութիւնը, կատարեալ համոզմունքով և անկեղծ սրտով պէտք է բարձրացնէ ազգային միութեան դրօշը, որի արդիւնքը պէտք է լինի մեր ընդհանուր չարիքի պաշտպանութիւն, հայութիւն և սէր։ Բայց ազգային միութիւնից, ոչ մի ուրիշ միջոց չէ կարող փրկել Հայաստանը Թիւրքիոյ բարբարատութիւնից։ Այդ միութիւնից միայն կը սարսափի Թիւրքիան։ Ժամանակ է, աշխատենք չը կորցնել թանգագին ժամանակը։—Գործելու և միասիրտ, միաբան գործելու ժամանակ է։

Թիւրքիան, որպէս միշտ, իր չարերը պահպանելու համար, չը պիտի դադարէ մեր և լուսաւորչականների մէջ խառնութիւններ ձգելուց։ Նա ոչ սակաւ երկպառակութիւններ սերմանեց նոյն իսկ մեր կաթոլիկների մէջ։ Այժմ, որպէս նշանից երևում է, աշխատում է նա գործին մատնելով կրկին յուզել մոռացված հարցերը, որ ոչ սակաւ վնասներ պատճառեցին մեզ։ Այդ պէտք է ի նկատի ունենան հայ-կաթոլիկները։ Հայաստանը այժմ ողջունում է իր զաւակներին, բայց միայն ազգային միութեան դրօշի տակ ցանկանում է տեսնել նրանց։ Նա խնդրում է զոհաբերութիւն և աշխատանք։ Մեր ապագան կորած է, եթէ օգուտ չը քաղենք հանգամանքներից, իսկ մեր վատ եկեղեցական առաջնորդները, որոնցից մէկը և ամենագլխաւորը, որ յայտնի է իր զաւակն անցնելով և ներկայով, յաւիտենական նախատանքի դրօշը կընդունէ իր ճակատի վրա ազնուական պատմութիւնից, որովհետև մեզ ձգեց Հռոմի ճանկերի մէջ....

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ծանուցանենք մեր բոլոր բարեկամներուն եւ հաճախորդներուն, թէ մեր հրատարակած գործերը կը գտնուին մեր գրավաճառանոցին մէջ, որ կը գտնուի Պոլսոյ Գումգափու թաղին մէջ, Ս. Նշան եկեղեցւոյ դրացի, թիւ 1։

Ներկայ տարուան մէջ հրատարակուած են հետեւեալ գործերը.

Ա. Ա. Ծ-յի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Fonds A.R.A.M

ՎՂՎՈՂՄՈՒՆ ԱՐԵՎՄՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Նախագահ—Վիլեամ

ՆԱՄԱԿ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ

(Ա. Ղազարեանի)

Ի վերջոյ, 3 տարի

Ընթերցող հայրենակիցներ, ձեր ուշադրութեան կը յանձնենք, կարծեմ, առաջին անգամ հայ գրականութեան մէջ, ամբողջական վէպ մը, որ կը գրուի ոչ թէ ձեռագրի մը համար, այլ անմիջապէս տպագրութեան համար։ Ուրեմն, ինչպէս կը տեսնէք, ամէն բան կանխապէս պատրաստ է, ամէն բան կանխապէս տրամադրուած է, որպէսզի հեղինակը ազատ ձեռքերով կարենայ գործել, ստեղծել, առանց ուրիշ մտահոգութեան, քան միայն գրական։

Ես ալ, որ ձեզի կը ներկայացնեմ այս վէպը, ոչ մէկ ուրիշ նպատակ ունիմ, քան ձեզ հետաքրքրել, ձեզ հրապուրել, ձեզ ստիպել, որ կարդաք մինչեւ վերջ, առանց ձանձրանալու, առանց ձեզ ձանձրացնելու։ Ես ալ, ինչպէս ամէն հեղինակ, կ՚ուզեմ, որ իմ գործս ընդունելի գտնուի ձեր կողմէ, որ ձեր ուշադրութեան արժանանայ։ Ես ալ, ինչպէս ամէն հեղինակ, կ՚ուզեմ, որ իմ գործս ձեզ հետաքրքրէ, ձեզ հրապուրէ, ձեզ ստիպէ, որ կարդաք մինչեւ վերջ, առանց ձանձրանալու, առանց ձեզ ձանձրացնելու։

Ինչպէս կը տեսնէք, ես ալ ամէն բան կանխապէս պատրաստած եմ, ամէն բան կանխապէս տրամադրած եմ, որպէսզի ես ալ ազատ ձեռքերով կարենամ գործել, ստեղծել, առանց ուրիշ մտահոգութեան, քան միայն գրական։

Ուրեմն, ինչպէս կը տեսնէք, ամէն բան կանխապէս պատրաստ է, ամէն բան կանխապէս տրամադրուած է, որպէսզի հեղինակը ազատ ձեռքերով կարենայ գործել, ստեղծել, առանց ուրիշ մտահոգութեան, քան միայն գրական։

Ես ալ, որ ձեզի կը ներկայացնեմ այս վէպը, ոչ մէկ ուրիշ նպատակ ունիմ, քան ձեզ հետաքրքրել, ձեզ հրապուրել, ձեզ ստիպել, որ կարդաք մինչեւ վերջ, առանց ձանձրանալու, առանց ձեզ ձանձրացնելու։ Ես ալ, ինչպէս ամէն հեղինակ, կ՚ուզեմ, որ իմ գործս ընդունելի գտնուի ձեր կողմէ, որ ձեր ուշադրութեան արժանանայ։ Ես ալ, ինչպէս ամէն հեղինակ, կ՚ուզեմ, որ իմ գործս ձեզ հետաքրքրէ, ձեզ հրապուրէ, ձեզ ստիպէ, որ կարդաք մինչեւ վերջ, առանց ձանձրանալու, առանց ձեզ ձանձրացնելու

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունում եմ իմ տանն բոլոր ծախիւք, միջակ վճարով, ծննդական կանանց, նոյնպէս և այնոցիկ կանանց որոնք ունեն կանայի հիւանդութիւնք: Գահպանութիւնն և նկատողութիւն յատկապէս իմով հսկողութեամբ և անմիջապէս օգնականութեամբ հմուտ բժշկի. ի տան Կարատիւնկի № 24. ի Սաբինի փողոցի վրա.

Ակուշերկա Մ. Ֆիլչակով.

2—2 (1)

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄԱՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Արծրունու գրչէի մէջ: Գուլպաներ (տղամարդկանց և կանանց), Թաշկինակներ, պարուսիներ, պատկերներ, Հոսանէջրեր, Հրացաններ, բէվօլվերներ, կոդակէքներ, սղոյներ, դանակներ, դղալներ, ցիտրատ-մագնեզիա Ծարաւից և այլն. այժմ ծախում են 25%—50% էժան քան Թէ ուրիշ տեղ:

4—10

Համեմատեցէք անգլիական խանութի Թէյն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆունտի համար այն Թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով Թանգ են ծախում և այդ խանութի Ֆունտը 2 բուբլիանոց Թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող Թէյի հետ:

32—100

ՓՈՐՁԱՌՈՒԻ ՀԱՇԻԱՊԱՀ

Ըր նորերում է եկել, ցանկանում է տեղ ունենալ: Համաձայն է նոյնպէս անցած տարիներից Ջեցած տարեկան ՀԱՇԻՒՆԵՐը կազմել և Թողած ՎԱՃԱՌԱԿԱՆՆԱԿԱՆ ԳՐՔԵՐը և ԲԱԼԱՆՍՆԵՐը կարգի բերել: Հասցէն Թողնել Փարիզ հիւրանոցում № 4:

10—10

ՄՕԶԻՕՔԻ

Հայոց օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐԺՈՒՀԻ նպաստաւոր պայմաններով: Ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿՈՒՅԹ» խմբագրատունը պայմանների մասին բանակցելու համար:

10—10

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Յունիսի 30-ից պ. ՆՈՒՐԻՆՕՎԻ և ընկ ղեղերի ԽԱՆՈՒԹԸ և ՊԱՀԵՍՏԸ կը լինի ԽԻՏԱՐՕՎԻ տանը, Եարուրովի տան կից, որտեղ գտնվում է նահանգական վարչութիւնը Մուզէումի դիմացը:

3—3

Շուտով ամուսնի տակից դուրս կուգան Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

Ա զգայինն ընտանեկան աշխարհիք. 1-ն տարուայ ուսմունք, և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Ա զգայինն դիւցազնական աշխարհիք. 2-դ տարուայ ուսմունք և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Նահապետական աշխարհիք և հայրենիքը. 3-դ տարուայ ուսմունք և ընթերցմունք, երկրորդ տպագրութեամբ:

1—5

Բաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով գրված, արվում են քաղաքային վարչութեան հերթական անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք արվին մկրտական և ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամուր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մտնելու համար նրանցից պահանջվում է. Կրծնից-քրիստոնէական վարդապետութեան կարճառօտ հրահանգները և սրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, Թուաբանութենից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամանակի, դրամի, կշռաքի և այլ չափերի գիտնալը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Զօրալեվիչ Ներքին հ., Բօտխանացի կանանց և երեխաների հ., Փուշարեանց խորուրգիական և աչքերի հ., Շահմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեանի ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խորուրգիական հ., Վզօրօվ վիներական և բորոտի հ., Իվյի աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօզլեպօվ, Լիսիցեվ և Վինոգրադով Ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդվօվսկի Ներքին հ., Շահյմրօրսկի կիներական և կաշու հ., Ասատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօվ վիներական և բորոտի հ., Բօտխանացի կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ Ներքին հ., Փուշարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խորուրգիական հ., Կրասնօգլեպօվ և Լիսիցեվ Ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շահյմրօրսկի և Ասատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեվ Ջղային և Ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ Ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Եանկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և Ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւաւօտյան Օրթխա աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դերկատար Լիսիցեվ:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Ջ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԹԱՆԵԱՑ ԸՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵՆՑԻՑ:

Ա. ՏԱՐԻ նախապատմէլիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

6—20

Աղջկանց դպրոցում երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց.
Ասատուր Իսահակեանց.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ ԵԻ ԸՆԿ. յայտնում է այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան դլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Դէմակովի տան վերին յարկը Գանօվսկայա փողոցի և Երիվանսկայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մուտքերի ստանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հասուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում ստանում է այն 20 համարներին, որոնք ցոյց են տրված վիկայականի մէջ չորս ամիսների: Ցանձնարարում է և ծախում է մանաւանդ անձանց ամեն տեսակ անշարժ կայքեր, կօմիսիայով ծախում է ապրանքներ և նիւթեր: Մատուցանում է տպված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և դասարկ տեղեր քրէհով տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը մնում է.

1) Պահելու համար մինչև պահանջվելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%, 2 տարով և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կոպէկի պայ ունեցողների մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Պարտամուրհակով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի տարի ժամանակով 10%, մի շաբաթի ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

1—10 (2)

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, բէվօլվերներ, դանակներ, գրչէներ, անուշահոտութիւններ, սապօն, գուլպաներ, Թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

20—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օշեոպրաֆիական պատկերներ 20% զիջումով. վերարկուներ 6—10 ր., խոզանակներ պատվիճակուած են լդի մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենալաւ ածելիներ, արկղիկով 4 ր., նետիլդի գանակներ 3—20 ր. դիւժինը, բրիտանական մետալի Թէյամաններ 30 կ.,—3 ր., գիտրատ-մագնեզիա, Թիւրքական շերբէթ և ծարաւը բացող նիւթ 70 կ., ամենալաւ սպօրտվիչն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՑԻ ՊԵԿԱՐՆԻՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կաթելի կը լինի առանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷ և պատրաստված հանդիպին գանագան ԸՋԻԵՒ:

23—40

Дозволено Цензурою 15 Іюля 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 123 Յուլիսի 17 (29) 1880 Յուլիսի 17 (29) № 123

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Փոխվելուց գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յաղորդագրքերը պիտուց են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տան օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք անշնորհ ենք։ — Ներքին տեսութիւն։ Գաւառական թղթակցութիւններ։ Նամակ Շուշուց։ Նամակ Խրտպրին։ Նկարին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Բէռլինի Նամակ Աւստրիայից։ — «Մշակի» հեռագիրները։ — Յայտարարութիւններ։

ՄԵՆՔ ԱՆՇՆՈՐՀ ԵՆՔ

Ամեն բանի մէջ շնորհակալ է հայը, ամեն բանի մէջ յառաջադէմ և ճարպիկ է, բայց մի բանի մէջ շնորհ չունի—նա իր ունեցած բարեմասնութիւնները, իր կատարած սխրագործութիւնները երևան հանելու, ուրիշներին ցոյց տալու և նրանց համեմատ յարգանք և պատիւ պահանջելու շնորհ չունի։ Ինչ որ գործել է նա, ինչ որ կատարել է, միշտ ծածկել է անյայտ և մոռացվել է ազգերի յիշողութիւնից։ Նա մինչև անդամ չը կարողացաւ իր պատմութիւնը մոռնալ հին, քաղաքակիրթ ազգերի պատմութեան շարքում, թէև ինքը նրանցից մէկն է եղել։

Ուրիշները իրանց լուից ուզում են շինում և աշխարհին ցոյց են տալիս, բայց մենք մեր ուղտերը թաղցնում ենք։ Այդ առած է դարձ ոչ այնքան հայի համեստութիւնից, որքան նրա անհոգութիւնից։

Յունաստանի անկախութեանը նպաստեց ոչ այնքան այդ ազգի արիւնը և ազատասէր եռանդը, որքան այդ երկրի ափերակների բնակիչները, որոնք, որպէս հնութեան և ճարտարութեան արդիւնքը, սիրելեան ամբողջ Եւրոպայում։ Լուսաւոր աշխարհը մտածեց թէ ափսոս է, որ մի այսպիսի հանճարաւոր ազգ կորչի և ոչնչանայ վայրենի թուրքերի ձեռքում, մի ազգ, որ այնքան մեծ ծառայութիւններ է մատուցել մարդկութեանը թէ իր արհեստով և թէ իր դիտութիւնով։

Մեր լրագրութիւնը մի քանի ամիս առաջ հրատարակեց, թէ առաջիկայ տարվայ մէջ Թիֆլիսում կազմվելու է հնադէտների ժողով, և հրաւիրեց ձեռնհաս անձինքներին պատրաստել այդ ժողովի համար հայոց հնութեան վերաբերեալ հետազօտութեան նիւթեր։ Բայց տակաւին, որքան մեզ յայտնի է, մի նշանաւոր պատրաստութիւն չէ եղել պատրաստութիւն չէ եղել

Ի նկատի ունենալով այն, որ մի այսպիսի ժողով մեր կողմերում առաջին անգամն է դումարվում, և պիտի հետազօտէ կովկասեան ազգերի կուլտուրական առանձնութիւնները,—հայերը, որ միշտ առաջնակարգ դեր են խաղացել այդ երկրի պատմութեան մէջ, պէտք է աշխատէին ցոյց տալ իրանց հնութեան յիշատակարանները, որով կը յայտնվի, թէ իրանք ինչ տեղ էին բռնում կովկասեան ցեղերի մէջ։ Այսպիսի ժողովները յաճախ չեն կրկնվում, և գիտութեան առջև իրանք հայերը պարտական կը մնան, երբ իրանց մասին ոչինչ չենք ցոյց տայ, և միշտ անյայտ կը ճնան, որպէս մինչև այսօր ճնացել են։

Մեկանից աւելի ասոր և աւելի աննշան ցեղերի գործիչները եռանդով աշխատում են, և մեծ պատրաստութիւններ են տեսնում հնագէտների ժողովի համար։ Ինչ կը լինի, երբ ժողովը կը վերջանայ և հնագէտները աւելի բարձր կարծիք կը կազմեն, օրինակ, վրացիների մասին և հայերը կը ճնան անյայտ։ Չէ՞ որ, նրանց կարծիքը կը տարածվի ամբողջ լուսաւոր աշխարհում։

Մեր մէջ միայն մէկ մարդ է աչքի ընկնում, որ այդ ժողովի համար աշխատում է,—պ. Երիցեանը. իսկ մեր այն երևելի հնագէտները, որոնք Մոսկվայում և Ս. Պետերբուրգում փառք են վայելում, որոնք հայերի վրա խօսելիս միշտ եւրօպական աղբիւրներին են դիմում և իրանցից մի նոր միտք չեն յայտնում,—այդ պիտանականները իրանց տեղում անշարժ նստած են, և չեն մտածում, որ գոնե այժմ որ և իցէ օգուտ բերէին իրանց հայրենիքին։

Մեզ պատահեց այս օրերում լինել պ. Քիւրքջեանի արհեստանոցում և տեսնել նրա լուսանկարչական աշխատութիւնները, որոնք գլխաւորապէս առնված են Անի քաղաքի տեսարաններից։ Պ. Քիւրքջեանը ժամ հինգ ամիս անցուցել է Կապրատունեաց մայրաքաղաքի աւերակների մէջ և հանել է բոլոր հնութիւնների պատկերները, ինչ որ կարողացել է ապատ ճնալ ժամանակի և մահմետական բարբարոսութեան կոծանիչ ձեռքից։

Պատկերները ներկայացնում են իւրաքանչիւր մի աւերակ ամբողջապէս վեր առած, և նրա մանրամասները (դետալ) առանձնապէս վերառած։ Ոչ մի արձանագրութիւն, ոչ մի խորտակված սիւն, ոչ մի կամարի ճնացորդը առանց ուշադրութեան չէ թողված։ Վերառած քաղաքը ամբողջութեամբ կենդանանում է պ. Քիւրքջեանի պատկերների մէջ։ Ճշտութեան, պարզութեան և արհեստի կողմից, պատկերները անհամեմատ գեղեցիկ են։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը որ առաջիկայ տարում պէտք է կազմվի Թիֆլիսում հնագէտների ժողով, յոյս ունենք, որ պ. Քիւրքջեանի աշխատութիւնները մեծ յոյս պիտի սիրեն ներշնչեն նրա հիանալի ճարտարապետութեան վրա, որի մէջ հայ մարդու հանճարը երևան է գալիս իր բոլոր արհեստագիտական ուժով։ Եւ պատուելի լուսանկարը այդ իսկ նպատակով պատրաստում է իր պատկերները, որ ներկայացնէ հնագէտների ժողովին։

Պատկերների թիւը հասնում է մինչև վեց հարիւրի. նրանք, բացի Անիի աւերակներից, ունված են և Աշտարակունեաց ժամանակների հնութիւններից. կան և մի քանի բևեռագիր արձանագրութիւնների լուսանկարներ, կան կոթածանված բերդերի և պալատների տեսարաններ։

Պ. Քիւրքջեանը նպատակ ունի իր պատկերներից կազմել մի ամբողջ ալբոմ հանդերձ պատմական, հնագիտական տեղեկութիւններով, և տեսնել, թէ արդեօք մեր հասարակութիւնը կը գտնվի նրան այդ վերջին նպատակը, որովհետև մեր քարքար ուսում ստացած ճարտարապետներից, գոնե մեկին էլ չենք ճանաչում, որ օգնէր նրան, որ հետաքրքրվէր այսպիսի չնչին բաներով, որոնց մէջ ոչ նիւթական շահ կայ և ոչ արտօնութիւն...

Ց. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Եթէ ուշադրութեամբ կարդալու լինենք մեր պարբերական հրատարակութեանց գաւառական թղթակցութիւնները, և մի քանի տարի հայացք ձգենք նոցա բովանդակութեանը, մենք կը տեսնենք, քէչ բացառութեամբ, որ մեր գաւառական թղթակցութիւնների մեծ մասը վերաբերվում են հասարակաց բնաւորութեանց, անձնական, ընական նախանձին, և թշնամական առերութեանը։ Մի և նոյն ժամանակ, այդպիսի թղթակցութիւնները արտօնվում են տանուտէր թղթակցութեան պիտակի տակ։ Այդպիսի թղթակցութիւնների արդիւնքը այն է լինում, որ կարելով մանուլի անունը, ի չար գործածելով նրա հասարակութիւնը և շփոթելով հասարակաց կարծիքը, լրագրական էջերում լցվում են միմեանց հակառակ բովանդակութեամբ անվերջանալի յօդուածներ, որոնց արժանաւորութիւնը գառնում է նոյն իսկ խմբագրատեսների միմեանց դէմ լարված պրութիւնը։ Այդ դէպքում գրականութեան և լրագրի պատիւը ամրոխի առաջ կորցնում է իր արժանաւորութիւնը, որովհետև ամրոխը, որքան էլ անաչառ լինէր դէպի տպագրական խօսքը, այնու ամենայնիւ մի բնական դժրութիւ կը զգայ իր մասին արած դրպարտութիւնների դէմ։ Ու այդ երևոյթը կը վերջանայ միգանում այն ժամանակ, երբ թղթակցութիւնները կը ճանաչվեն գրականական ամենաթիւնը, ձշմարիտ հասարակաց շահը, և հետևապէս ազգային լրագրութեան պատակաւելի պաշտօնը։ Այժմ ազգի կարիքը պահանջում է լրագրական խօսքերով արծարծել ամրոխի մէջ ազգայնութեան գաղափարը, և այդ գաղափարը ընդհանրացնել ամրոխի դատնական մասերի մէջ։ Ներկայ ազգային վիճակը պահանջում է յատկապէս անունով ազգային միութիւն կազմել հայ—ազգի բոլոր մասերի մէջ, արմատացնել այդ գաղափարը և մշակել նրան բարոյական հիմունքների վրա։ Այդ գաղափարը պէտք է ըմբռնեն լրագրական թղթակցութիւնները, որոնք ժողովրդի թարգման պահնալով. արծարծեն ընդհանուր ազգի խորհրդածութիւնները։ Թէև լրագրութիւնը, շատ անգամ իր առաջնորդող յօդուածներով յարատևում է կրթել և ազգութեան

Fonds A.R.A.M

ԱՄԵՆԱՀԱՍ ՀԱՄԱՐ

1 յունվ.

Ներկայումս ամենքն էլ խոսում են ընդհանուր ապստամբության մասին, որ պիտի բռնկվի Թուրքիայի տարբեր վայրերում։ Ինչպես հայտնի է, Ալբանիայի 1-ին, որ մեզ հարևան է, ապստամբությունը սկսվել է դեռևս մարտի վերջերին։ Մեզ հասած լուրերի համաձայն՝ ապստամբները ունեցել են մի քանի հաջողություններ։ Ինչ վերաբերում է Մակեդոնիային, ապա այնտեղ ևս ապստամբությունը սկսվել է դեռևս մարտի վերջերին։ Ըստ որոշ տեղեկությունների՝ ապստամբները ունեցել են մի քանի հաջողություններ։ Ինչ վերաբերում է Կրետեին, ապա այնտեղ ևս ապստամբությունը սկսվել է դեռևս մարտի վերջերին։ Ըստ որոշ տեղեկությունների՝ ապստամբները ունեցել են մի քանի հաջողություններ։ Ինչ վերաբերում է Կիպրոսին

պատճառով: Այդ կէս դարվայ ընթացքում Բէլգիան խաղաղ ճանապարհով կարողացաւ պատուաւոր տեղ բռնել եւրոպական ժողովուրդների ընտանիքի մէջ: Բէլգիական ազգային այդ տօնը, որ նուիրված է ժողովրդի նիւթական և բարոյական խաղաղ առաջադիմութեան յիշատակներին, նշանակութիւն ունի ոչ թէ միայն Բէլգիայի համար, ոչ թէ միայն իւրաքանչիւր ազգի և պետութեան համար, որ հասկանում է պատմական փորձի նշանակութիւնը և որ անհրաժեշտութիւն է զգում անցեալի օրինակներից օգուտ քաղել, այլ ամբողջ աշխարհի համար: Դա ազատութեան տօն է, որ ամբողջ աշխարհի համար թանգագին է:

Բէլգիան մի փոքրիկ պետութիւն է և շրջապատուած է այնպիսի տարրերով, որոնք պատրաստ են յաջող դէպքին վերջ դնել նրա անկախ գոյութեանը և որոնց դէմ նա միայն 100,000 զինուոր կարող է դուրս բերել: Այդ փոքրիկ Բէլգիան հսկայական քայլերով առաջ է գնում նիւթական և բարոյական բարօրութեան ճանապարհի վրա:

Ինչի մէջն է ծածկված այդ մեծական զարգացման գաղտնիքը: Ինչի մէջն է այն գաղտնիքը, որ աշխարհին քանակութեամբ զօրքեր ունեցող եւրոպական ոչ մի պետութիւն չէ համարձակվում ձեռնամուխ լինել թոյլ Բէլգիայի անկախութեանը:

Այդ գաղտնիքը ժողովրդական մտաւոր ույժերի զարգացումն է և այդ ժողովրդի գիտակցական պետական կեանքն է:

1815 թուականին Վիէննայի դաշնագրի հիման վրա, իբրև նահանգ Հօլանդիայի հետ միացրած, Բէլգիան 15 տարիների ընթացքում համբերում էր միջազգային այդ անիրաւութեամբ իր վրա դրած անտանելի լուծը: Հօլանդիայի թագաւորը ոչ թէ միայն ոչինչ չը գործեց բէլգիացիներին իրանց անտանելի վրութեան հետ հաշտեցնելու համար, այլ ընդհակառակը աւելի էլ սաստկացրեց նրանց թշնամութիւնը դէպի հօլանդացիք: Բէլգիան չը կարողացաւ հաշտվել Հօլանդիայի տիրապետութեան հետ: Ժամանակը և լաւ կառավարութիւնը գուցէ մի ժամանակ անհետացնէին այդ թշնամութիւնը, բայց Հօլանդիայի թագաւորը չը կամեցաւ սպասել ժամանակի բնական ընթացքին: Նա բացարձակ ույժը աւելի լաւ համարեց և բէլգիացիք միշտ զգում էին այդ ույժի ճնշումը: Ամբողջ վարչութիւնը հօլանդացիների ձեռքին էր, Բէլգիայի բոլոր շահերը զոհվեցան Հօլանդիայի շահերին: Հօլանդիայի պարտքերի մեծ մասը Բէլգիայի վրա դրվեցաւ և ամենանեղական սահմանադրութիւնը որոշում էր բէլգիացիների յարաբերութիւնը դէպի Հօլանդիայի թագաւորը:

Այսպիսի դժուար դրութեան մէջ էր Բէլգիան, երբ 1830 թուականի Ֆրանսիական յեղափոխութիւնը Ֆրանսիական գահի վրա Լուդովիկ-Ֆիլիպին բարձրացրեց: Նոր թագաւորի ազատամիտ անունը կենդանացրեց բէլգիացիների յոյսերը:

Կղերական և ազատամիտ կուսակցութիւնների կռիւները Բէլգիայի պատմական պակասութիւն էին կազմում և ներքին երկպառակութեան պատճառ էին դառնում: Կաթօլիկ ուժեղ կուսակցութիւնը միշտ կարողանում է հաշտվել իւրաքանչիւր կառավարութեան հետ, եթէ նա չէ խլում այդ կուսակցութեան արտօնութիւնները: Հոգևոր ուսումնարանների փակելը, հոգևորականների հալածելը, որոնք չէին կամենում երդվել Հօլանդիայի թագաւորին, իբրև բողոքական թագաւորի, միացրին բէլգիական երկու կուսակցութիւններին:

Ֆրանսիայից արտաքսված մի քանի ազատամիտներ օգուտ քաղեցին Կարլ X-ի անկումից և մտածողից լինելով Լուդովիկ-Ֆիլիպպի վրա, որի օգնութիւնը Բէլգիայի ազատութեան համար կարելի էր սպասված համարել, կարողացան իրանց հայրենակիցների ազգասիրութիւնը զարթեցնել: Մի ամիս չանցաւ Ֆրանսիայի կառավարութեան փոխվելու օրից, երբ Բրիւսելի մէջ 1830 թ. օգոստոսի 24-ին օտար կառավարութեան դէմ թշնամական ցոյցեր կատարվեցան: Այդ օրը բէլգիացիք հրաժարվեցին տօնել Հօլանդիայի թագաւորի ծնունդը: Միւս օրը արքունական թատրոնում խաղացվում էր «Պորտիչի համրը» օպերան: Նէապօլիտանցիների ապստամբութեան պատկերը Բէլգիայի ժողովրդական շարժման նշանը դարձաւ: Թատրոնի մէջ եղած բէլգիացիք ոգևորված աղաղակներով ընդունեցին այդ պատկերը, իսկ թատրոնը շրջապատող ժողովուրդը նրանց արձագանք տուեց: Պաշտօնական լրագրի խմբագրութիւնը, պօլիցիական վարչութիւնը, արդարութեան մինիստրի բնակարանը մի րոպէում քանդվեցան ժողովրդից: Արքունական պրօշիաները և զօրքարանները նոյնպէս ոչնչացան: Ամեն տեղ ժողովրդական զօրքեր և հասարակական ապահովութիւնը պահպանող մասնաժողովներ կազմվեցան: Հօլանդական զօրքերը յաղթվեցին բէլգիական ժողովրդական զինուորներից:

Բէլգիայի վիճակը որոշելու համար Լօնդոնի մէջ եւրոպական պետութիւնների ներկայացուցիչների կօնֆերենցիա կազմվեցաւ, որ երկար բանակցութիւններից յետոյ բէլգիական ազգային մասնաժողովի հետ, յայտնեց Բէլգիայի անկախութիւնը:

Բէլգիացիք իրանց համար թագաւոր ընտրեցին, որ 1831 թ. յուլիսի 21-ին հանդիսով մտաւ Բէլգիայի մայրաքաղաքը, երդվեց հաւատարիմ մնալ սահմանադրութեանը, որին մինչև մահ երբէք չը դաւաճանեց:

Այդ ժամանակից ի վեր կէս դար է անցել, տասնեակներով կղերական և ազատամիտ կառավարութիւններ են փոխվել, բաւական դժուարութիւնների և փորձերի ենթարկվեց այդ փոքր երկիրը, բայց նրա պետական կեանքի ամենածանր րոպէներում անգամ իր սահմանադրութեան հիմնական սկզբունքները—խղճի և խօսքի ազատութիւնը երբէք խախտված չեն: Ոչ Լուդովիկ-Ֆիլիպպի խարհուրդները, ոչ հզօր Նապօլէօն III-ի սպառնալիքները չը կարողացան ստիպել բէլգիական թագաւորին սահմանափակել ժողովրդական իրաւունքները: Թագաւորների ունեցած հաւատարմութիւնը դէպի սահմանադրութիւնը և նրա յարգանքը դէպի ժողովրդի իրաւունքները ազատեցին Բէլգիային այնպիսի անկարգութիւններից, որոնք կարող էին վնասել նրա անկախութեանը անգամ: 1848 թուականի յեղափոխական փորձերը անաջող հետևանքներ ունեցան, որովհետև ժողովրդից սիրված թագաւորը աւելի լաւ համարեց թողնել իր գահը, քան թէ պաշտպանել նրան զէնքով ժողովրդի ցանկութեան հակառակ:

Կղերական և ազատամիտ կուսակցութիւնների երբէք չընդհատված վէճերը չը կարողացան իրական ազդեցութիւն ունենալ սահմանադրութեան հիմունքների վրա. ոչ թէ միայն ազատամիտները, այլ և կղերականները, երբ այս վերջինների ձեռքին է եղել կառավարչական ղեկը, միաձայն պաշտպանել են խղճի և մամուլի ազատութիւնը: Մինչև անգամ այսպէս անուանված «կաթօլիկական հաշտութեան» մինիստրութիւնը, որ միաժամանակ ատելի էր թէ ազատամիտ և թէ կղերական կուսակցութեանը, կարողացաւ պաշտպանել տպագրական խօսքի ազատութիւնը, չը նայելով հզօր Նապօլէօն III-ի սպառնալիքներին, որ պահանջում էր յետ տալ Ֆրանսիային փախած եղբայրներին, որոնք Նապօլէօնի կեանքին ձեռնամուխ էին եղել: Գերմանիայի այդպիսի փորձերն էլ 1875 թուականին անաջող անցան:

Բէլգիական ամենաւ ազատամիտ կառավարութիւնը իշխանութիւն ստացաւ 1878 թ. յուլիսի 20-ին և մեծ հեղինակութիւն ունի: Կառավարութեննից պաշտպանված ազատ խօսքը և մամուլը անշնորհակալ չը գտնվեցան դէպի իրանց հովանաւորող երկիրը: Եւրոպայում ամենամեծ անկարգութիւնները և չարիքները, անիշխանութեան և կօմունայի վարդապետութիւնները չը քարոզվեցան Բէլգիայի մէջ, նոյն Բէլգիայի մէջ, որտեղ նրանք կարող էին բոլոր միւս երկիրներից աւելի ազատ հնչվել և չը պատժվել:

Ամենալի ազատութիւնը նիւթականապէս թոյլ Բէլգիայի բարոյական ույժի աղբիւրներից մէկն է: Միւս աղբիւրը՝ ժողովրդական կրթութեան առաջին զարգացումն է:

1848 թւին Բէլգիայի ազգային ուսումնարանների մէջ սովորում էին 450,000 երեխաներ և 190,000 հասակաւորներ, 1870 թուականին առաջինների թիւը 600,000-ի, իսկ երկրորդների թիւը 217,000 հասաւ: Այժմ այդ թւանշանները աւելի էլ բարձրացել են: Ամբողջ ազգաբնակութեննից կարդալ և գրել գիտեցողները 80% են կազմում: Ժողովրդական լուսաւորութեան համար արած ծախսերի շատանալը ակներև է դարձնում նրա զարգացման աստիճանը: 1876 թուականի բիւջէտի համեմատ որոշված էր ժողովրդական լուսաւորութեան համար 8,197,000 ֆրանկ ծախսել, նոյն նպատակի համար 1879 թուականի բիւջէտը որոշում է 14,254,599 ֆրանկ: Երեք տարվայ ընթացքում կրթութեան համար արած ծախսերի քանակութիւնը 6,057,599 ֆր. շատացաւ. գրեթէ երկու անգամ:

Ինչպիսի բարեկութեամբ և նախանձով պէտք է նայեն այժմ այդ փոքր պետութեան առաջադիմութեան վրա այն մարդիկ, որոնք պետական հանգստութեան գրաւականը ժողովրդի տգիտութիւնն են համարում: Նաստութիւններին նրանք պատասխանում էին, բայց ակներև օրինակին անկարելի է պատասխանել: Նոյն իսկ այդ մարդիկ, խաւարի և ստրկութեան այդ պաշտպանները Բէլգիային կորուստ էին նախագուշակում, որովհետև նա աւելի լաւ համարեց լոյսը, քան թէ խաւարը, ազատութիւնը, քան թէ շղթաները և ստրկութիւնը: Այսպիսի օրինակի առաջ խաւարի այդ պաշտպանները պէտք է լռեն:

Բէլգիական ժողովուրդը հպարտութեամբ կարող է տօնել իր անկախութեան 50 ամեայ յոբելեանի հանդէսը, որովհետև նա խաղաղ յաղթութիւն է մարդկային մտքի և ոգու, կոպիտ ույժի դէմ, ճշմարտութեան, դարևոր նախապաշարմունքի դէմ, օրինաւորութեան՝ կամայականութեան դէմ: Ցանկանանք այդ աշխատող ժողովրդին նոր աջողութիւններ իր ազատ կեանքի ասպարիզի վրա: Նրա աշխատանքները և օրինակը առանց հետևանքի չեն մնայ մարդկութեան համար:

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

—

Վիէննա, 6/18 յուլիսի

Այսօր Աւստրիայի մայրաքաղաքում կատարվեցաւ Եւրոպայի որսորդների ժողովի ընդհանուր հանդէսը, որին ներկայ էին մինչև 12,000 որսորդներ: Լրագիրներում քանի մի ամիս առաջ հրատարակված էր այդ ժողովի մասին և նշանակված օրը համարեա բոլորը ներկայ էին: Քաղաքի բոլոր փողոցները զարդարված էին գոյնզգոյն դրօշակներով, ամեն տեղ երևում էր ընդհանուր ուրախութիւն և ոգևորութիւն: Այն փողոցի վրա, որտեղից պիտի անցնէր հանդէսը, վաղ առաւօտից երկու կարգ զինուորներ էին կանգնեցրած:

Հանդէսը սկսվեց 10 ժամին: Առաջ անցաւ հրաշէջների գունդը իր դրօշակներով և առանձին երաժշտների խմբով: Նրանցից յետոյ անցան կայսրի հօրեղբայրը և եղբայրը բոլոր պալատականներով:

Ամբողջ քաղաքը թնդաց կեցցէների ձայներով: Ցետոյ մին միւսից յետոյ անցան ամեն երկիրների որսորդները իրանց դրօշակներով և իրանց հետ բերած երաժշտական խմբերով:

Բոլորից բազմաթիւ և գեղեցիկ հագուստներով ու տեսքով էին շվէյցարացի որսորդները, որոնց ժողովուրդը մեծ համակրութեամբ ընդունեց: Շատերը ժողովրդից իրանց գլխարկներն ու թաշկինակները կորցրին: Ոչ սակաւ գրաւիչ էին տիրօլցի որսորդները իրանց գոյնզգոյն հագուստներով: Բոլորից յետոյ անցան առհասարակ Աւստրիայի և մանաւորապէս Վիէննայի որսորդները հերցօգ Ալբրէխտի և իր ամուսնու առաջնորդութեամբ: Ժողովրդի գոռում և գոչումը չափ և սահման չունէր: Վերջապէս անցան քաղաքային վարչութեան ներկայացուցիչները:

Հանդէսը գումարվեցաւ մի մեծ հրապարակի վրա Ֆրանց-Յօվսէֆի անունով կառուցված զօրանոցի հանդէպ: Տասն րոպէից յետոյ յայտնվեցաւ կայսրը նորին մեծութեան կայսրուհու հետ: Ժողովուրդը մեծ բերկրութեամբ ընդունեց իր թագաւորին:

Այն ժամանակ տասն և երկու հազար որսորդները գունդ գունդ գնացին քաղաքից դուրս մի մեծ դաշտի վրա և այնտեղ սկսեցին զանազան որսորդական փորձեր և հրաձգութիւններ անել: Որսորդների ճարպկութիւնը և նրանց յաջողակութիւնները նպատակների վրա զարմանք էին ազդում: Ամենաաջողակները ստացան թանգագին մրցանակները, որ պատրաստել էր Վիէննայի քաղաքային գանձարանը: Դրանից յետոյ տրվեցաւ փառաւոր և մեծահանդէս ճաշ, որտեղ հրաւիրված էին Վիէննայի զինուորական և քաղաքական աստիճանաւորները:

Ինձ զարմացրեց այն, որ ես չը տեսայ այդ զանազան երկիրներից եկած որսորդների թւում Ռուսաստանի որսորդների ներկայացուցիչներից ոչ մինը: Մի գերմանացի ինձ ասեց, այդ այն պատճառով է, որ ռուսները չունեն որսորդական կազմակերպված ընկերութիւններ, ուրեմն չունեն և հմուտ որսորդներ:

Այդպիսի հանդէսներ կրկնվում են տասն և երկու տարի մի անգամ Եւրոպայի այլ և այլ մայրաքաղաքների և մեծ քաղաքների մէջ: Աւելորդ չեմ համարում ասել, որ յիշեալ հանդէսին ներկայացել էին որսորդներ մինչև անգամ Ամերիկայի Միացեալ Նահանգներից և Ամերիկայի միւս հանրապետութիւններից:

Սիրտս արիւնով լցվում էր երբ մտածում էի որ խեղճ հայի անունը երբէք չէ յիշվում այս տեսակ համաշխարհային հանդէսներում: Արդեօք ինչ քանի մէջ պէտք է յայտնվի հայ մարդը:

Հ. Առավեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 13 յուլիսի: Բ. Դրան պատասխանը պետութիւնների գրութեանը երէկ ուղարկվեցաւ: Բ. Դուռը մերժում է Բերլինի կօնֆերենցիայի որոշած սահմանը, համաձայն է բանակցութիւններ սկսել սահմանները ուղղելու մասին, բացառելով Եանինա, Մեցեվօ և Լարիսսա:

ՓԱՐԻԶ, 14 յուլիսի: «Rappel» լրագիրը հաղորդում է իբրև լուր, որ Վիկտօրիա թագուհին մի նամակով խորհուրդ է տուել սուլթանին ընդունել Բերլինի կօնֆերենցիայի վճիռը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 12 կ., երկրորդ 91 ր. 87 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 50 կ., երկրորդ 222 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 90 ր., 75 կ., ոսկի 7 ր. 83 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25 1/3 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 214 մարկ, Փարիզի վրա 267 ֆր. 75 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդառնում եմ իմ տանը բոլոր ծախիւքս միջակ վճարով, ծննդական կանոնոյ, նոյնպէս և այնպիսի կանոնոյ որոնք ունեն կառոյցի հիւանդութիւնը: Պահպանութիւնն և նախատրութիւն յատկացնէս իւով հակոտութեամբ և անմիջապէս օգնականութեամբ հմուտ բժշկի. ի տան Կարատիւնակի № 24. ի Սաբբելի փողոցի վրա.

Ակուշերկա Մ. Ֆիլչակով.

2—2 (1)

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄԱՌԱՑ ՎԱՃԱՌ ԱՆԴԱՍԱԿԱՆ ԻՆՆՈՒԹՈՒՄ Արծրունու գրքերի մէջ: Գուլպաներ (ատամարդկերանց և կանանց), թաշկինակներ, պարուսիներ, պատկերներ, հոտաւէտ ջրեր, հերայաններ, բէվօլվերներ, կողպէքներ, պոյներ, դանակներ, գլաներ, ցիտրատ-մագնեզիա ծախում են այժմ. այժմ ծախում են 25%—50% էժան քան թէ ուրիշ տեղ:

5—10

Հաճեցեալք անպլխական խառնութի թէյին գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ժուռնալ համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խառնութիւնում 30%-ով թանգ են ծախվում և այդ խառնութի ժուռնալ2 բուլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

33—100

Նուագով մանուկի տակից գտրա կոպան Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

Ա գգայ ին ընտանեկան աշխարհ. 1-ն տարուայ ուսմունք, և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Ա գգայ ին պիւցապանական աշխարհ. 2-ր տարուայ ուսմունք և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Նահապետական աշխարհ և հայրենիք. 3-ր տարուայ ուսմունք և ընթերցմունք, երկրորդ տպագրութեամբ:

2—5

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԱՒԱՐԻՉ

քաղաքի մէջ մանուկ դպրոցի համար պահանջվում է մի հմուտ

ՎԱՐԺԱՊԵՏ ՀՈՑՈՑ ԵՒ ՕՐԻՈՒՀԱՑ

լեզուների համար խիստ նպատակաւոր պայմաններում: Ցանկացողները կարող են դիմել ՀՈՎՀՈՎԱՆՆԻ քարտուղարան պ. ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆՑԻ կանտորը:

ՓՈՐՁԱԼՈՒԻ ՀԱՇԵՒԱՊԱՀ

Որ նորերում է հին, յանհանում է տեղ ունենալ: Համաձայն է նոյնպէս անցած տարիներից ճեղած տարեկան ՀԱՇԻՒՆԵՐԸ կազմել և Թղած ՎԱՃԱՌԱԿԱՆԱՊԱՏԱՌ ԴՐՔԵՐԸ և ԲԱԼԱՆՄՆԵՐԸ կարգի բերել: Հասցէն Թղտնել Փարիզ հիւրանոցում № 4:

10—10

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ընկալչ առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով պրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթական անդամին առնուազն օր առաջուանում 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք տրվին Մատրիկական և ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշված է 12—16 տարեկան: Երեխաները ամուր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մանելու համար նրանցից պահանջվում է. Կրծնից-բրխատնեական վարդապետութեան կարճատօտ հրահանգները և սրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել. հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, Թուաբանութենից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրներին մտաւոր լուծումը, ժամանակի, դրամի, կշռոքի և այլ չափերի գիտենալը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՒԱՆԻՈՑՆԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Արկածաբթի. Դավրօնսկի կանանց հիւանդ. Դօրալեվիչ նեղքին հ., Թօախնեանց կանանց և երեխաների հ., Բիւշաբկանց խերուրգիական և աչքերի հ., Շառմբօրսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ:

Երեքշաբթի. Մինհիվիչ խերուրգիական հ., Վզօրօվ վիներական և բողազի հ., Իհյա աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Պրաշնօզլեապօվ, Լիսիցեվ և Վիմիշեվ նեղքին հ:

Չաբաքշաբթի. Լիսիցեվ և Օսիպովսկի նեղքին հ., Շառկյմբօրսկի կնիներական և կաշու հ., Ասուաճատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօվ վիներական և բողազի հ., Թօախնեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ նեղքին հ., Բուրաչեվ խերուրգիական և աչքերի հ., Ասուաճատուրօվ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շառկյմբօրսկի վիներական և կաշու հ., Բարայեվ ջղային և նեղքին հ:

Շաբաթ. Լիսիցեվ և Վերմիշեվ նեղքին հ., Բուրաչեվ խերուրգիական և աչքերի հ., Կրասնօգլեապօվ և Լիսիցեվ նեղքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շառկյմբօրսկի վիներական և կաշու հ., Բարայեվ ջղային և հոգեկան հ:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ նեղքին հ., Բուրաչեվ խերուրգիական հ., Վզօրօվ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շառկյմբօրսկի վիներական և կաշու հ., Ասուաճատուրօվ վիներական և կաշու հ., Բարայեվ ջղային և նեղքին հ:

Կիրակի. Վզօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անխարճ ապրած հիւանդ նեղքին առնուազն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բարաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և նեղքին հ. Համար: Մնակարաներ գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բոյանուբովի տանը:

Առանձնապէս Օրրեխա ապրած հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է առնուազն օր, առնուազն ժամանակ:

Բացի կիրակի օրերից առնուազն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է ճանկարարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դերեկտոր Լիսիցեվ:

Ամէն մարդու տակից գտրա կոպան Գրիգորեանցի) Կոմկատեան Գրամաճառանոցի և ծախվում է բացառապէս նորա տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵՑԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախապատրաստիչ (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Ամէն տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

7—20

Էջ. քահանայապետու երկսեռ դպրոցաց բարձր դասատուն համար հարկաւոր է մեզ ուսումնական տարուան համար առաջաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձու { Արշիս Միրզոյեանց. Ղազար Խահակեանց.

ԱՒԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵՒՕՐ ԿԱՑՈՒՄՈՎ, ԵՒ ԸՆԿ.

յայտնում է այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Դժակելի տան վերին յարկը Գանձակեցու փողոցի և Երիվանակայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի ապրու և մաքսերի առանալու համար գրասենեակը հաստատ օրերում է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարեկան ընթացքում ժամ ունի տարածից այն 20 հանարներին, որոնք ցոյց են տրված վիճակահանութեան մէջ չորս տարիների: Յանձնարարութեամբ գնում է և ծախում է մանուածոյ անձանց ամեն տեսակ անշարժ կալքեր, կօմպանիաների ծախում է տարանքներ և նրբեթներ: Ծախում է տրված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և գաւառի տներ քրէհոգ տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է:

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%, 2 տարով և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կամ ի պայ ունեցողներին մանաւոր պայմանաւոր տուրքերին 3%: Պարտամանրհատով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթի ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ գանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

2—10 (2)

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, բէվօլվերներ, դանակներ, պրիչներ, անուշահոտութիւններ, սապօն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

20—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Ծախվում են օդեօդրաֆիական պատկերներ 20% զեղչ տեփերարկուներ 6—10 ր., խոզանակներ պատվիճակներում են լրի մէջ աւետարանական խառնութի համար, ամենապատճառներ, արկղիկով 4 ր., շեֆիլդի դանակներ 3—20 ր. դեժմներ, բրիտանական մետալ թէյամաններ 30 կ.—3 ր., ցիտրատ-մագնեզիա, բէնզինա շերբեթ և ծարաւը Բագեցող նրբեթ 70 կ., ամենապատ օդային և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

Յունիսի 1-ից վարձատվում է ԳԵՂԵՑԻԿ ՏՈՒՆ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԻ, ՇՕԿՈԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանգստին դանագան ՐԶԲԵՐ:

24—40

Дозволено Цензурою 16 Іюля 1880 г. Тифлисъ.

Տպագրան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 124 Յուլիսի 18 (30) **1880** Յուլիսի 18 (30) № 124

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի: Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրվայ կենսական հարց:—Ներքին տեսութիւն. Նամակ Շուշուց:—Արտաքին տեսութիւն. Թիւրքիա. Ֆրանսիա:—«Մշակի» հեռագիրներ: — Յայտարարութիւններ: — Բանասիրական. Յունաստանի ազատութիւնը:

ՕՐՎԱՅ ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ

«Մշակի» մայիսի 27-ի և 28-ի համարներում «Օրվայ կենսական հարց» յօդուածով ցոյց տուեցինք ազգայնոցս մի մեծ ընկերութիւն կազմելու անհրաժեշտութիւնը, ընկերութիւն, որը լինի սիրտ, որից բղխելով կենսաբեր երակները կը թափանցեն ամենուրեք, ուր կայ հայի «ախ»: Այն օրվանից սկսեց արծարծվել այդ միտքը, մեր բարեմիտ երիտասարդները այդ հարցը դարձրին իրանց համար խօսակցութեան և հոգատարութեան առարկայ, մանաւանդ որ գաղափարը ինքն ըստ ինքեան հայ ազգի պատմական թշուառ ճգնաժամի բերմունքն է:

Մի ազգ, որ իր վրա պատմական անասելի նեղութիւնները, կոտորածը, աւերումն և գաղթականութիւնը կրելուց յետոյ, ենթարկվի այնուհետև մշտական աւարառութեանց, ջնջման և մանաւանդ սովի և տարափոխիկ հիւանդութիւնների ճիրաններին, նոյն այդ ազգը չունենայ ոչ մի ընդհանուր կապ, և ոչ մի բարեկարգեալ կազմակերպութիւն՝ որի նպատակը լինի սառը դատողութեամբ, ծանր կշռելով, կանոնաւոր կերպով գործ կատարելը, բոլոր մշտական և ժամանակաւոր ծագած թշուառութիւնների առաջն առնելը,—եթէ, ասում ենք, այդ բոլորը պակասի մի ազգի մէջ և ազգը թողնի իր հազար ու մէկ թշուառութիւններից պատճառված իներցիային,—անշուշտ նա կորստեան անդունդը կը գլորվի:

Այդ ընկերութեան անհրաժեշտութիւնը պարզապէս զգալուց յետոյ, կը մնայ միայն մշակել մի ծրագիր, որը յարմար լինէր գաղափարի ոգուն: Հասկացող, կրթեալ անձինք երբէք պակաս չեն մեր մէջ, ամեն տեղ, ամեն քաղաքում կը գտնվեն նոքա. Հարկաւոր է մի կազմակերպութիւն ունենալ, որպէս զի այդ բոլոր անձինքը գործեն մի ճանապարհով, նպատակայարմար ճանապարհով:

Ո՞վ չէ ցանկանում, որ մեր ուսումնարանները խառն ու շփոթ դրութիւն չունենան. առաջարկվում է ահա մեր ծխական դպրոցների սովորական ընթացքը բարենորոգելու, հարց է ծագում ուսումնարաններ հիմնելու, ուր աւանդվեն և արհեստներ, բայց դոքա, կարծեմ, ընդհանուր հասարակական հարցեր են: Չը մոռանանք և այն, որ մեր ծխական դպրոցները Վեհափառ Կաթողիկոսի իրաւասութեան և հովանաւորութեան ներքոյ են գտնվում: Այդ մի հարց. բայց քանի բազմակողմանի են մեր կենսական և մտաւոր պէտքերը, այնքան բազմակողմանի պէտք է լինեն մեր գաղափարները և նոցա գործադրութեան եղանակը: Ո՞վ չէ ցանկանում, որ մենք մեր ձեռքին արհեստ ունենանք, մեր գլխումը խելք և գրպաններում փող, ո՞վ չէ ցանկանում որ մենք լինենք կուշտ և խելացի քաղաքացիք, բայց և ով չը գիտէ ընկերութիւնների փրկարար նշանակութիւնը:

Այս մտքերը կրկնելովս չենք կարծում նորութիւններ յայտնել, քաւ լիցի. մենք միայն արտայայտում ենք այն, ինչ որ, պարզն ասած, ամեն մի փոքր ի շատէ հասկացող բարեմիտ անձի ուղեղի մի անկիւնում նստած է: Մարդը պէտք է այս աշխարհիցը չը լինի, որ խորթ նայի այս բանին: Դեռ գուցէ, շատ սակաւ ենք խօսում այս մտքի մասին, նորան սկզբնական համարներով, այդ մտքի վերջին տողերն էլ շատ հասկանալի են շատերին: Ասում են մի քանիները ինչու նոյն այդ գաղափարը չիրագործենք «գաղթելոց օգնող կոմիտետի» ձևքով, նորա հովանաւորութեան տակը մտնելով: Այնքան ասեց «Մշակը», այնքան խօսեց, որ դրդէ այդ «կոմիտետը» դէպի մի շարժողութիւն, բայց հնար չեղաւ: Ինչ հարկ կայ, ինչ կապ ունի այս նոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Յունաստանը մինչև 1820 թւականը գտնվում էր տաճկաց լծի տակ: 15 դարու վերջերում օսմանցիք Կ. Պօլիսը առնելուց յետոյ տարածելով իրանց իշխանութիւնը ամբողջ Բալկանեան թերակղզու վրա, տիրեցան նոյնպէս և ամբողջ Յունաստանում տիրելով միանգամայն բոլոր ամրոցներին և քաղաքներին: Յոյները առաւել քան 350 տարի շարունակ հեծեծում էին տաճկական դառը լծի տակ, ողբալով կորուսած անկախութիւնը և հնադարեան փառքը: Չը նայելով այն դառը վիճակին, որի մէջ գտնվում էր նրանց հայրենիքը քարուքանդ, աւերակ քաղաքներով և աւաններով, չը նայելով որ օսմանցւոց տէրութիւնը դեռ կորուսած չէր իր զօրութիւնը, այնու ամենայնիւ նրանք չը կորցրին իրանց յոյսը և հաւատը, թէ կը գայ մի ժամանակ, երբ բարեյաջող հանգամանքները թոյլ կը տան նրանց թօթափել բռնաւորի լուծը և նորից ազատութիւն վայելել: Առաւել ևս մեծանում էր նրանց յոյսը երբ տեսնում էին, թէ ինչպէս մեծազօր Սուլթանի տէրութիւնը հիւսիսային արծուի հարուածների տակ նուաղում էր և քայքայվում: Մանաւանդ այն կռիւները, որ վարեց օսմանցոց տէրութիւնը սրանից հարիւր տարի առաջ ռուսաց Եկատերինա կայսրուհու հետ, սաստիկ թուլացրին նրան, այն ջարդը որ տուեցին Սուվորովը և Ռումեանցեվը սուլթանի զօրքերին միանգամայն պակասեցրին տաճկաց իշխանութեան ույժը և կորցնել տուեցին այն սարսափը, որ ի վաղուց տիրում էր տաճկահպատակ ազգերին, լցնելով մի և նոյն ժամանակը ազատութեան յուսով և ձգտումով տաճկահպատակ սերբացիներին, չարնագորցիներին, ռումինացիներին և յոյներին: Ամենայն անգամ երբ ծագում էր պատերազմ տաճկաց և ռուսաց մէջ, այս փոքրիկ ազգերը նոյնպէս զինվում և պատերազմում էին ազատութեան համար, դաշնակից հանդիսանալով ռուսաց զօրքերին և ամեն այսպիսի պատերազմից յետոյ խաղաղութեան դաշնաների մէջ պատերազմող սլաւոն ազգերը ձեռք էին ձգում ինքնավարութեան իրաւունքներ: Մի քանի պատերազմներից յետոյ այս փոքրիկ ազգերը մեծ զոհեր անելով, վերջապէս հասան փոքր առ փոքր այն ազատութեան և անկախութեան, որ այժմ վայելում են: Բայց թէ արդեօք ինչ կը լինէր նրանց վիճակը, եթէ ցանկանալով ազատել հայրենիքը անտանելի վիճակից, զինվէին ոչ թէ զէնու զօրութեան, այլ լաց ու կոծի և դատարկ բողոքների: Նրանք լաւ էին հասկանում, որ արտասունքով երկիր ազատել չէ կարելի, այլ թէ այդ նպատակին հասնելու համար զոհաբերութիւններ են հարկաւոր, և վերաւ նրանք չէին խնայում ոչ սեփականութիւն, ոչ կեանք: Ամեն անգամ երբ սլավոնացին մահմետականից անպատւութիւն և չարագործութիւն էր տեսնում ընչից, կեանքի կամ թէ ընտանիքի պատւի դէմ, պաշտպանութեան համար չէր դիմում Թիւրք դատաւորին, որովհետև նա լաւ գիտէր, թէ ում կողմը նա կը բռնի, այլ թէ պաշտպանում էր իր անձը և ընտանիքը սուրը ձեռին: Եթէ մահմետականը աղջիկ էր փախցնում քրիստոնեայ ընտանիքից, սլավոնացին չէր գնում աղաչում և ընկնում ոտքերը, որ յետ դարձնէ և անամօթաբար չէր գնում սրան ու նրան հարցնելով, թէ արդեօք արժէ՞ փախցրած աղջիկը ետ խլել թէ ոչ, որ ոչ այլ ինչ է եթէ ոչ արտայայտութիւնը սառած հոգու և բթացած զգացմունքների, այլ թէ պատժում էր եղեռնագործին մահվան պատժով: Շնորհիւ այսպիսի ինքնապաշտպանութեան սլավոնների կողմից մահմետական տարրը չէր համարձակվում անպատիժ կերպով չարագործութիւններ անել և սլավոնները անձնապաշտպանութեամբ ցոյց տուին եւրոպացիներին, որ բոլորովին արժանի են ազատութեան և անկախութեան, որա հետևանքը եղաւ այն, որ ռումինացիք 1826 թւականին ձեռք ձգեցին ինքնավարութիւն, իսկ 1878 ին անկախութիւն: Սերբիացիք 1811—12 թ. պատերազմից յետոյ ռուսաց և տաճկաց մէջ, որին իրանք ևս մասնակցում էին, Բուխարէստի խաղաղութեան հիման վրա 1812-ին աւելացրին իրանց ինքնավարութեան արտօնութիւնները, իսկ 1878 երկար և արիւնահեղ պատերազմից յետոյ բոլորովին անջատվեցան օսմանցւոց պետութիւնից: Չերնոգորիան թէև համարվում էր տաճկաց կայսրութեան մի պրովինցիա, բայց իսկապէս միշտ ազատութիւն էր վայելում, իսկ 1878 Սերբիայի և Ռումինիայի հետ ստացաւ կատարեալ անկախութիւն: Նկարագրում եմ այստեղ յոյների ազատվելը ցոյց տալու համար, թէ ինչպիսի մեծամեծ զոհաբերութիւններ չը խնայեցին նոքա ազատութիւն ստանալու համար:

Ինչպէս վերևում յիշեցի Յունաստանը 15 երորդ դարու վերջերում ընկաւ օսմանցոց իշխանութեան ներքոյ, որ շարունակվեց 350 տարուց աւել մինչև 1820 թ. յոյները այդ բոլոր ժամանակը տաճկաց լծի տակ պինդ պահում էին իրանց կրօնը և եկեղեցական կազմակերպութիւնը, որ ինքն իրան մի այնպիսի հապ էր, որ արգելք էր դառնում խառնվելու նուաճված ազգը յաղթողի հետ, անքակ պահելով ազգայնութիւնը. Նրանց հոգևորական գլուխը՝ Կ. Պօլսի պատրիարքը մի և նոյն ժամանակ իշխան էր և աշխարհական գործերում միջնորդ էր հանդիսանում ծանր պարագաներում իր հօտի և սուլթանի կառավարութեան մէջ: 18 դարու վերջերում և այս դարու սկզբում պատահած պատերազմների ժամանակ ինչպէս Յունաստանի, նոյնպէս և Արշիպելագոսի յոյների վաճառականութիւնը հասաւ ընդարձակ և ծաղկած դրութեան, որի պաշտպանութեան համար ծովային աւազակներից Հիդրա, Պսարայ և Սպեցիա կղզիների բնակիչները կազմեցին զինուորված նաւեր: Այս նաւատորմը, որ շինված էր վաճառականական նպատակով և որ ապագայում ազատութեան համար սկսած պատերազմի ժամանակ մեծ ծառայութիւն արեց յոյներին, ամենևին չէր ընկնում թիւրքերի աչքերին և գուցէ արհամարհանքով էին նայում նրա վրա: Յոյների բարօրութեան աճման հետ շատանում էր և նոցա սէրը դէպի ուսումը, և պէտք է խոստովանած, որ ուսման ծարաւը լցուցանելու համար նոքա ոչինչ չէին խնայում, հիմնելով բազմաթիւ դպրոցներ հայրենիքում և մասամբ երիտասարդներ ուղարկելով արտասահման բարձրագոյն գիտութեանց համար: Կրթութիւնը նոյնպէս մեծ զարկ տուեց հայրենասիրութեան զարգանալուն և ճշմարիտ որ իրանց մատենագրութեան հետ ծանօթանալը, որ յիշեցնում էր հնադարեան հելլենական փառքը, չէր կարող ուժգին կերպով չազդել նոր յոյների վրա, յարուցանելով նրանց մէջ դառը կսկիծ դէպի այժմեան վիճակը և ձգտում նորից ձեռք բերել իրանց պապերի անկախութիւնը և փառքը: Արդէն 19 դարում Փարիզի յոյն ուսանողների մէջ կազմվեցաւ մի ընկերութիւն, որ գրականական պարապմունքների պատրուակաւ գաղտնի նպատակ էր դրած հայրենիքի ազատութեան հետամուտ լինել: Այս ընկերութեան անդամ էր և Րիգաս բանաստեղծը, որի պատերազմական երգերը յոյներին զէնքի էին հրաւիրում և անասելի կերպով ազդում էին երիտասարդութեան վրա, իսկ աւելի ևս աւելացաւ նրանց ներգործութիւնը, երբ յիշեալ բանաստեղծը Բելգրադի փաշայի հրամանաւ բռնվեցաւ և չարաչար կերպով նահատակվեցաւ: Վիեննայի կոնգրէսի ժամանակ (1815 թ.) փարիզի յոյն ընկերութիւնը ընդարձակվեցաւ ընդունելով իր մէջ բազմաթիւ անդամներ Ռուսաստանի և ուրիշ երկիրների յոյներից և դարձաւ քաղա-

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

Ս. Նալբանդեան

Ժողովրդական ազատութեան և ազգային անկախութեան մարտիկ

Ս. Նալբանդեան — Ազատութեան և անկախութեան մարտիկ, ժողովրդական ազատագրական շարժման գաղափարախօս, ռուսական բռնապետութեան դէմ պայքարող առաջին հրապարակախօսներից մէկը։ Նա ծնուել է 1829 թ. մայիսի 1-ին Նոր Նախիջևանում, հարուստ առևտրական ընտանիքում։ Նրա հայրը՝ Յովհաննէս Նալբանդեանը, ազգութեամբ հայ էր, իսկ մայրը՝ Մարիամ Լազարեանը, ռուսահայ էր։ Ս. Նալբանդեանը մանկութեան տարիներին ստացել է տնային դաստիարակութիւն։ Նա տիրապետել է հայերէնին, ռուսերէնին, ֆրանսերէնին, գերմաներէնին, լատիներէնին, յունարէնին, արաբերէնին, պարսկերէնին, թուրքերէնին։ Ս. Նալբանդեանը ուսումը շարունակել է Ռոստովի գիմնազիայում, ապա՝ Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետում։ Ուսանելով համալսարանում՝ նա ակտիւ մասնակցութիւն է ունեցել ուսանողական շարժմանը։ 1849 թ. ապրիլի 15-ին ձերբակալուել է և ազատութիւնից զրկուել մինչև 1850 թ. մայիսի 10-ը։

Ազատուելուց յետոյ Ս. Նալբանդեանը ապրել է Նոր Նախիջևանում, Ռոստովում, Մոսկուայում, Պետերբուրգում։ Նա ծանօթացել է Ն. Չերնիշևսկու, Ն. Դոբրոլիուբովի, Ն. Օգարեւի, Ա. Հերցենի, Մ. Պետրաշևսկու հետ։ Ս. Նալբանդեանը ակտիւ մասնակցութիւն է ունեցել Պետրաշևսկիների շրջանակի գործունէութեանը։ Նա կարդացել է Ֆուրիէի, Սէն-Սիմոնի, Ռոբերտ Օուենի, Լուի Բլանի, Պրուդոնի, Ֆեյերբախի, Հեգելի, Մարքսի, Էնգելսի, Ֆիխտէի, Շելլինգի, Կանտի, Ռիտերի, Ռանկէի, Մոմզէնի, Գիզոյի, Թիերի, Միշլէ

Ցունական հաւատարմատար Վրայյասի խաղաղասիրական յայտնութիւնները, որոնց նա առաւ Բերլինի մէջ այնտեղից իր հայրենիքը ուղևորվելու ժամանակ, չափազանց գրգռեց այստեղի ալբանացիներին, որոնք պատրաստվում էին Յունաստանի հետ պատերազմելու համար և, ինչպէս երևում է, անհամբերութեամբ սպասում էին այդ պատերազմին: Նեի-Զամի մեչետի մէջ եղած ցոյցերը բաւականաչափ ցոյց են տալիս այստեղի ալբանական գաղթականութեան պատերազմական տրամադրութիւնը: Դրանից յետոյ դարձեալ մի քանի անգամ ցոյցեր եղան: Ալբանական հին սովորութեան համեմատ մեչետը շրջապատող աւազին հրապարակի զանազան մասերի վրա ալբանական դրօշակներ կային: Ցեղերի առաջնորդները հրաւիրում էին ալբանացիներին զինուոր գրվել, գրում էին նրանց անունները և յայտնութիւնները: Զինուորների այսպիսի բացարձակ հաւաքելը իշխանութեան համաձայնութեամբ բաւական անհանգստացրին յոյներին: Ցունական դեսպանը խնդրեց պ. Գօշենին, որ նա միջնորդի սուլթանի մօտ զինուորների հաւաքելը դադարեցնելու համար: Ցոյները աւելի լաւ միջոց գտան այդ նպատակին հասնելու համար: Նրանք կաշառեցին մի ալբանացի պօլիցեականի, որ յայտնեց Խաֆիզ-փաշային, թէ ալբանացի նոր զինուորները մտադիր են մերժել սուլթանի իշխանութիւնը և Ալբանիան անկախ յայտնել և թէ այդ մտադրութեան մասին նրանք բացարձակ խօսում են: Խաֆիզ-փաշա իսկոյն արգելեց զինուորներ հաւաքել և թէպէտ ալբանացիները բողոքեցին այդ կարգադրութեան դէմ և հաստատեցին, որ լուրերը կաշառված էր, բայց հրամանը այլ ևս յետ չառնվեցաւ: Այն ժամանակվանից, ինչ Աբեդին-փաշա մինիստր նշանակվեցաւ, յոյները լուր են տարածել, որ նա Էպիրոսի բազմաթիւ անուանի ալբանացիների հետ մի գրութեամբ խնդրել են Դէօրգ Թագաւորից Էպիրոսը միացնել Յունաստանի հետ: Թէպէտ Աբեդին-փաշա մերժում է այդ լուրը, բայց շատերը հաւատացնում են, որ նա ճշմարիտ է:

ՖՐԱՆՍԻԱ

«Голосъ» լրագրի մէջ տպված է Փարիզից մի թղթակցութիւն, որ հետևեալ կերպով նկարագրում է յուլիսի 14-ի ֆրանսիական ազգային տօնը: Թղթակցութիւնը գրված է յուլիսի 15-ին:

Իբրև տօն երէկվայ օրը գրեթէ անաջող անցաւ: 1878 թուականի յունիսի 30-ի տօնի հետ նրան համեմատել անգամ չէ կարելի: Յուլիսի 14-ից դեռ երկու օր առաջ երկաթուղիների գնացքները դուրս էին տանում Փարիզից զանազան գիւղերը և ծովային ջրերը ամենքին, որոնք միջոց ունէին Փարիզից փախչելու և բերում էին Փարիզ գաւառական բնակիչներին, որոնք զուարճանալու այդպիսի դէպքերից միշտ օգուտ են քաղում:

Այդ տօնի անաջողութեան պատճառը իւրաքանչիւր ֆրանսիացի ուրիշ կերպ է մեկնում, նայելով, թէ այդ մեկնողը ինչ կուսակցութեան է պատկանում: Միապետականները հաւատացնում են, որ անաջողութեան պատճառը այդ օրվայ ընտրութիւնն էր: Բաստիլիայի վերցնելը և այդ բանտը պաշտպանող մի քանի տասնեակ ծեր զինուորների կոտորելը, նրանց կարծիքով, Ֆրանսիայի պատմութեան ամօթալի անցն է և այդ պատճառով ֆրանսիական հասարակութեան լուսաւորված մասը չը կամեցաւ մասնակցել այդպիսի օրվայ տարեդարձի տօնին: Հանրապետականները թէպէտ բարձրաձայն կանչում են, որ այդ օրը ժողովրդի մէջ չը տեսնված ոգևորութիւն էր տիրում, բայց իրանք էլ խոստովանվում են, որ բացի շրջականների բնակիչներից, Փարիզը չափաւոր կերպով մասնակցեց երէկվայ տօնին: Սովորաբար այդ երկու կողմերն էլ իրաւունք ունեն: Փարիզի բնակիչները առանց ոգևորութեան վերաբերվեցին գործին այն պատճառով, որ այդ բողէին նրանք առանձին պատճառ չունէին ուրախանալու և ոգևորվելու: Բաստիլիայի վերցնելու օրը կարելի էր միայն այն ժամանակ ազգային տօն դարձնել, եթէ դրանով Ֆրանսիայի մէջ բոլորովին վերջանար յեղափոխական տարրը և եթէ ազգաբնակութիւնը հաւատացած լինէր, որ այսուհետև նա կարող է խաղաղ և հանգիստ ապրել և յեղափոխութեան պտուղներից օգուտ քաղել: Տարաբաղդաբար այդպէս չէ: Այն մարդիկ, որոնք ներկայ րոպէում իշխում են, թէպէտ ամենքին հաւատացնում են, որ այսուհետև Ֆրանսիան իր զարգացումը կը շարունակի վերանորոգական ճանապարհով, բայց ամբոխը դրանց չէ հաւատում: Այս պատճառով շատերը կարծում են, որ կառավարութիւնը ֆրանսիական ազգային տօնի համար կարող էր աւելի աջող օր ընտրել, քան թէ յուլիսի 14, այսինքն այն օրը, երբ ֆրանսիական յեղափոխութիւնը առաջին անգամ բռնութեան ճանապարհի վրա կանգնեց:

Եթէ ամբոխի ոգևորութիւնը մեծ չէր, այնու ամենայնիւ պէտք է գովել ֆրանսիական հասարակութեանը նրա չափազանց բարեմիտ վարմունքի համար: Ամբողջ օրը Փարիզի մէջ ոչ մի կռիւ, ոչ մի անկարգութիւն և ոչինչ ցոյցեր չեղան: Երկու միլիոնաւոր ազգաբնակութիւնը շարժվում էր, զուարճութեան մի կենտրոնից դէպի միւսը անցնելով և ոչ մի տեղ չը հաւաքվելով, այնպէս որ շարժողութեանը արգելք լինէր: Հարիւրաւոր տեղեր կազմված էին զուարճութեան կենտրոններ: Վաղ առաւօտից մինչև կէս գիշեր ամբոխը զուարճանում էր և ոչ մի տեղ կարգապահութիւնը չը խանգարվեցաւ: Թէպէտ պահպանողական կուսակցութեան մամուլը առաջուց նախագուշակում էր, որ յուլիսի 14-ին անկարգութիւններ և ժողովրդական ցոյցեր կը լինեն, բայց առաջ էլ նրան ոչոք չէր հաւատում: Շատերը այնու ամենայնիւ սպասում էին, որ գոնէ մի փոքր ցոյց կը լինի որ և է արգելված միաբանութեան, կամ յետադիմական լրագրի խմբագրատան դէմ ինչպէս օրինակ «Gaulois» լրագրի, որ իր աններելի վերաբերութեամբ դէպի հանրապետութիւնը և իր ծաղրերով դէպի տօնին մասնակցողները, անկարգութեան պատճառ էր դառնում: Փարիզեցիք աւելի լաւ համարեցին այդ յարձակմունքներին արհամարհանքով պատասխանել: Ամբողջ աշխարհի մէջ այնպիսի մայրաքաղաք չը կայ, որտեղ ազգային տօնին այսպիսի խաղ ժամանակ այդքան ամբոխ մասնակցէր և տօնը այդքան խաղաղ և հանգիստ անցնէր, ինչպէս պատահեցաւ Փարիզում:

Յուլիսի 14-ի տօնի զինուորական բաժինը առաջուց կազմած նախագծի համեմատ կատարվեցաւ: Անսպասելին միայն հանրապետութեան նախագահ Գրեվիի ձառն էր, որ ամեն կողմից գեղեցիկ էր: Գրեվին չէ սիրում շատ խօսել, բայց երբ հարկաւոր է համարում խօսել, նրա ձառը հիանալի է լինում: Բոլոր լրագիրները առանց բացառութեան գովում են այն ազատասիրական ոգին և ազնուութիւնը, որով գեղեցկացրած էր Գրեվիի ձառի իւրաքանչիւր նախադասութիւնը:

Գրեվին հաստատեց, որ այդպիսի դէպքերում զօրքերին դիմելու ժամանակ, անհրաժեշտ է կուսակցութիւններից բարձր լինել և խօսել միայն հայրենիքի, միայն Ֆրանսիայի անունով: Ահա այդ ձառի կարճառօտ բովանդակութիւնը: «Օֆիցերներ, ունտեր-օֆիցերներ և զինուորներ, որոնք այս հանդիսին զօրքերի ներկայացուցիչներ էք: Հանրապետութեան կառավարութիւնը բաղդաւոր է, որ այժմ գտնվում է այս ճշմարիտ ազգային զօրքերի առաջ, որոնց Ֆրանսիան կազմում է իր ամենալաւ մասից, տալով նրան իր երիտասարդութիւնը, այսինքն տալով այն, ինչ որ իր ամենաթանգագինը, ամենաազնիւը, ամենառաջն է և այդպիսով ներշնչելով զօրքերի մէջ իր խելքը և իր զգացմունքները, ոգևորելով նրանց իր հոգով և դրա փոխարէն զօրքերից իր որդկերանցը յետ առնելով ճշմարտութեան համար կրթված զինուորական կարգապահութեան շկօլայի մէջ, որտեղից նրանք մտնում են Ֆրանսիայի քաղաքային կեանքի մէջ յարգանք դէպի իշխանութիւն, պարտաճանաչութեան զգացմունք, հաւատարիմ ոգի, ամենամեծ հայրենասիրութիւն և պատուասիրութիւն և զինուորական արհեստի քաջ բարեկործութիւններ, որոնք նրանց գեղեցիկ մարդիկ և քաղաքացիներ դարձնելու համար անհրաժեշտ են: Եթէ Ֆրանսիան ոչինչ չը խնայեց իր զօրքերին բարձրացնելու համար, զօրքերն էլ իրանց կողմից ոչինչ չը խնայեցին երկրի աշխատանքներին աջակից լինելու համար. աշխատանքի, ուսումնասիրութեան և զինուորական կարգապահութեան ճանապարհով զօրքերը դրաւական դարձան Ֆրանսիայի պատշաճաւոր յարգանքի և խաղաղութեան, որ նա կամենում է պահպանել: Այդպիսի զգացմունքներով հանրապետութեան կառավարութիւնը յանձնում է ձեզ այս դրօշակները: Ընդունեցէք սրանց իբրև գրաւական այն խորին յարգանքի, որ կառավարութիւնը ունի դէպի զօրքերը: Ընդունեցէք սրանց իբրև վկաների դէպի ձեր քաջութիւնը, ձեր պարտաճանաչութիւնը, ձեր հաւատարմութիւնը Ֆրանսիային, որ յանձնում է ձեզ այս դրօշակների հետ, այս ազնիւ նշանաբանների հետ իր պատիւ, իր երկրի և իր օրէնքների պաշտպանութիւնը:

Գրեվիի այդ կարճ ձառի վերջը միաձայն և ամեկալի աղաղակներով և ծափահարութիւններով ընդունվեցաւ: Գրեվիի լեզուն իսկ հանրապետութեան նախագահի լեզու էր:

Զինուորական հանդիսի մանրամասները հետևեալն են: Ուղիղ մէկի կէսին եկաւ հանրապետութեան նախագահը, սենատի և պատգամաւորների ժողովի նախագահների և մինիստրների ուղեկցութեամբ և տեղ բռնեց պատրաստված ամբիոնի վրա: Զինուորական մինիստր գեներալ Ֆարր, շրջապատված իր շտաբով և զօրաբաժինների հրամանատարներով, հանդիպեց նախագահին: Հրապարակի վրա, արդէն հրացանները պատրաստած, կանգնած էին Փարիզի քաղաքային զօրքերը և միւս բոլոր զօրքերի ներկայացուցիչները: Երբ նախագահը տեղաւորվեցաւ ամբիոնի վրա, երաժշտութիւնները սկսեցին «Մարսելիեզ» ածել և «Mont Valerién»-ից թնդանօթներ արձակվեցան:

Ամբիոնի կենդրոնը բռնել էին մինիստրները, դիպլօմատները և բարձր աստիճանաւորները, աջ կողմը սենատի, իսկ ձախ կողմը պատգամաւորների ժողովի անդամներն էին տեղաւորված:

Գրեվիի աջ կողմը սենատի նախագահ Լէօն Սէյ էր, իսկ ձախ կողմը պատգամաւորների ժողովի նախագահ Լէօն Գամբետտա: Գրեվիի դիմացը ամբիոնի առաջ կանգնած էին ձիով զինուորական մինիստրը, զինուորական շտաբը, զօրաբաժինների հրամանատարները և գնդապետները: Ձառը զինուորականներին ուղղված ասվեցաւ: Ծափահարում էին սենատորներ և պատգամաւորները, հասարակութիւնը անդադար աղաղակում էր „Vive la Bépublique, vive Grevy, vive L'armée" (կեցցէ հանրապետութիւնը, Գրեվի, զօրքերը:)

Հէնց որ Գրեվին վերջացրեց իր ձառը, սկսվեցաւ դրօշակներ բաժանելու հանդէսը: Հանդէսը աւելի փառաւոր կը լինէր, եթէ դրօշակները աւելի ծանր բաժանվէին: Իւրաքանչիւր գնդի դրօշակակիրը մօտենում էր հանրապետութեան նախագահին, որի մօտ պատահում էր իր գնդապետին և յանձնում էր նրան դրօշակը: Գնդապետը իջեցնում էր դրօշակը նախագահի առաջ, որից ստանում էր դրօշակը և դրօշակակրին տալուց յետոյ գնում էր իր գնդի մօտ: Դրօշակակիրները նախագահին երկու կողմից էին մօտենում, այդ պատճառով հանդէսը կէս ժամվայ մէջ վերջացաւ:

Դրօշակները ստանալուց յետոյ զօրքերը հանդիսաւոր քայլով անցան նախագահի առաջ: Զօրքերը չափազանց գեղեցիկ էին քայլում և անցեալ տարվանից աւելի լաւ էին պատրաստված:

Նոր դրօշակները չափազանց լաւ ճաշակով են շինված: Նրանց վրա ոսկեայ տառերով գրված են մի կողմից «Republique Française» (Ֆրանսիական հանրապետութիւն) «Honneur et Patrie» (պատիւ և հայրենիք), միւս կողմից գլխաւոր կռիւների անունները, որոնց գունդը մասնակցել է:

Վերջացնելով այս թղթակցութիւնը, չեմ կարող չը հիշել պօլիցեայի գեղեցիկ կարգադրութիւններով: Հազարաւոր կառքեր մըտնում էին Բուլօնի անտառը և դուրս գալիս առանց մի բոպէ կանգնելու. կարգադրութիւնները չափազանց խելացի էին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 15 յուլիսի: Այսօր հասաւ այստեղ մարկիզ Ցզենգ:

Կ. ՊՕԼԻՍ, 15 յուլիսի: Բ. Դրան պատասխանը պետութիւնների ընդհանուր գրութեանը, մինիստրներից հաւանութիւն ստացած և պատասխանի բնագիրը փոփոխութիւնների ենթարկած, առաջարկված է սուլթանին հաստատելու համար: Վիէննայի լուրը, իբր թէ պատասխանը յանձնված է պետութիւններին, սխալ է:

ՓԱՐԻԶ, 16 յուլիսի: Երէկ յանձնվեցաւ Բ. Դրան պատասխանը պետութիւնների ընդհանուր գրութեանը: Պատասխանը յայտնի է «Temps» լրագրի նախկին հեռագիրներից: Ֆրանսիական օֆիցերների Յունաստան ուղարկելը յետաձգված է:

ՎԻԷՆՆԱ, 16 յուլիսի: Բ. Դրան պատասխանը պետութիւնների ընդհանուր գրութեանը այստեղ սպասվում է ուրբաթ: Պատասխանը կազմել է Մուսուրուս-փաշա: Լուր է տարածված, որ Աբեդդին-փաշա հրաժարվում է իր պաշտօնից: Վերանորոգութիւնների մինիստրութիւն կը նշանակվի, եթէ գործը ծովային ցոյցերին հասնի: Եթէ պետութիւնների համաձայնութիւնը պահպանվի, միացեալ նաւատորմը խարիսխ կը գցի Մարմարեան ծովի մէջ Կ. Պօլսի հանդէպ:

ՕԴԷՍՍԱ, 16 յուլիսի: Այսօր առաւօտ «Նախիմով» շոգենաւով բերված է սպանված տ. Սկօբելեվի մարմինը: Արքեպիսկոպոս Պլատօն, մեծ եկեղեցու ատաղահը և հոգևորականութիւնը հոգեհանգիստ կատարեցին: Ներկայ էին իշխանութիւնը, բազմաթիւ ժողովուրդ, տ. Սկօբելեվի քոյրերը Պոլտավցևա և Թերեզօվա, Կարմիր Խաչի քոյրերը: Դագաղը ծաղիկներով զարդարած դըրվեցաւ վագոնի մէջ և այսօր ուղարկվեցաւ Ռեազան:

ԼՈՆԴՈՆ, 16 յուլիսի: Համայնքների ժողովում լորդ Հարտինգտօն կարդաց հետևեալ հեռագիրը Կանդահարից. Գեներալ Բերուսի պատերազմական ույժերը ոչնչացրած են, Կանդարի պահապան զօրքերը ամրոցն են քաշվում, Բօմբէյի բոլոր ազատ զօրքերին հրաման է տուած ուղևորվել Կանդահար: Սիմլայից զօրաժողով է գնում:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄՓՈՓԱԾ ՎԵՐՋՔ ԱՆԴԻԱԿԱՆ ԻՆՆՈՒԹՈՒՄ Աթծրատու զարկէի մէջ: Զուլպաներ (տղամարդկեր ու կանանց), թաշկինակներ, պարուսներ, պատկերներ, հոտաւէտ ջրեր, հրացաններ, բէվոլվերներ, կոպեկքներ, պղպեղ, զանակներ, դղալներ, ջիտրատ-մագնեզիա Ծարատից և այլն. այժմ Ծախվում են 25%—50% էժան քան թէ ուրիշ տեղ:

6—10

Համեմատեցէք անգլիական խառնուքի թէյին գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խառնուքներում 30%-ով թանգ են Ծախվում և այդ խառնուքի Ֆունտը2 բուլխանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. Ծախվող թէյի հետ:

34—100

Նուազով մամուլի տակից գտրա կաւզան Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

Ա զ գ ա յ ի ն ը ն ա ա ն ե կ ա ն ա շ խ ա տ ա ր հ ք. 1-ն տարուայ ուսմունք, և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Ա զ գ ա յ ի ն գ ի ւ ց ա զ ն ա կ ա ն ա շ խ ա տ ա ր հ ք. 2-գ տարուայ ուսմունք և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Ն ա հ ա պ ե տ ա կ ա ն ա շ խ ա տ ա ր հ ք և հ ա յ ր ե ն ի ք. 3-դ տարուայ ուսմունք և ընթերցմունք, երկրորդ տպագրութեամբ:

3—5

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԱՏԻՒՕ

քաղաքի մի մանուկ դպրոցի համար պահանջվում է մի հմուտ

ՎԱՐԺԱՊԵՏ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆԵՐԻ

խիստ նպատակաւոր պայմաններով: Յանկացողները կարող են դիմել ՀԱՊԻՆՕՎԻ քարտիսատան ու **ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆՑԻ** *կանոտրը:*

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՍԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՑ

Առաջիկայ 18⁸⁰/₈₁ ուսումնական տարին, յանկացողների համար Սեմինարիա (վարժապետական դպրոցը) մանելու, կան 4 վականսիաներ պատրաստական դասարան և 6 վականսիաներ առաջին դասարան մէջ: Խնդիրքները ընդունելութեան մասին տրվում են մինչև 15 օգոստոսը: Մրցողական հարցաքննութիւնները կը լինեն 20 օգոստոսից մինչև նոյն տարի 25:

1—3 (1)

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ Ծխականները հրաւիրում են յանկացողներին ներկայ գտնվել այդ եկեղեցու ՕՐՄԱՆ ՀԱՆԴԻՍԻՆ, ԿԻՐԱԿԻ, յուլիսի 20-ին, առաւօտեան 10 ԺԱՄԻՆ: ԿՆՔԱՀԱՅՐ լինել յանկացողները կարող են Վ.ԱՂՕՐՕՔ յայտնել եկեղեցու ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ, եկեղեցու գրասենեակում ԱՄՍՆԱՑՆ ՕՐ:

1—2

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը լինչպես առաջին, նոյնպես և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները տարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով գրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթական անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք տրվին մկրտիկական և Ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինին բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամեր կողմից պէտք է ունենան ու առաջին դասատուն մանելու համար նրանցից պահանջվում է. Կրօնից-քրիստոնէական վարդապետութեան կտրած օր հրահանդները և սրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուաբանութենից-տասնչին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամանակի, դրամի, կշռաքի և այլ չափերի գիտենալը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Ե ր կ ո ւ շ ա բ թ ի. Գ ա վ ր օ ն ս կ ի կանանց հիւանդ. Դ օ ր ա լ ե վ ի չ ներքին հ., Բ օ ա խ ն ե ա ն ց կանանց և երեխաների հ., Ֆ ի ւ չ ա ր ե ա ն ց խէրաբդիական և աչքերի հ., Շ ա կ մ ր օ ս կ ի վիներական և կաշու հ., Բ ա ր ա յ ե ա ն ջղային և հոգեկան հ.:

Ե ր ե ք շ ա բ թ ի. Մ ի ն կ ե վ ի չ խէրաբդիական հ., Գ ր օ ր օ վ վիներական և բոցագէ հ., Լ ե վ ի աչքի հ., Բ ա խ ո ւ ա ո վ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կ ր ա ն օ գ լ ե ա պ օ վ, Լ ի ս ի ց կ ի և Վ ե մ չ կ ի ներքին հ.:

Չ ո ր ե ք շ ա բ թ ի. Լ ի ս ի ց կ ի և Ռ ու պ օ վ ս կ ի ներքին հ., Շ ա ե վ մ ր օ ս կ ի կիներական և կաշու հ., Ա ա ռ ա ւ ա ծ ա ա ու ր օ վ կանանց հիւանդութիւնների:

Հ ի ն գ շ ա բ թ ի. Գ. Գ ր օ ր օ վ վիներական և բոցագէ հ., Բ օ ա խ ն ե ա ն ց կանանց և երեխաների հ., Լ ի ս ի ց կ ի և Վ ե ր մ ի շ և վ ներքին հ., Ֆ ի ւ չ ա ր ե ա ն ց աչքային և ականջ օրգանների հ.:

Ո ւ ր բ ա թ ի. Գ ա վ ր օ ն ս կ ի կանանց հ., Մ ի ն կ ե վ ի չ խէրաբդիական հ., Կ ր ա ն օ գ լ ե ա պ օ վ և Լ ի ս ի ց կ ի ներքին հ., Բ ա խ ո ւ ա ո վ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շ ա ե վ մ ր օ ս կ ի և Ա ա ռ ա վ ա ծ ա ա ու ր օ վ վիներական և կաշու հ., Բ ա ր ա յ ե վ ջղային և հոգեկան հ.:

Շ ա բ ա թ ի. Լ ի ս ի ց կ ի և Վ ե ր մ ի շ և վ ներքին հ., Բ ր օ վ կուրծքի հ., Ե ա ն կ օ վ ս կ ի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. Գ ր օ ր օ վ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բ ա ր ա ե վ հոթեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բազանդարովի տանը:

Ա ս տ ի ճ ա ր բ ժ շ կ ի 0 բ ր ե խ ա ն ց ներին բժշկանոցի տանտիկով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դերկատար Լիսիցկի

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրամաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԹԵՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱՐԿՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄՐՈՆԵՆՑԻՑ: Ա. **ՏԱՐՈ** նախադիտելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ. Բ. **ՏԱՐՈ** մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ. դուռնորով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. **ՏԱՐՈՆ** մասը քաղաքական:

8—20

Ազգ. քանդրատօրու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ ատարած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. / Ստեփան Խանհակեանց.

ԱՌԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՈՐ ԿԱԶՈՒՄՕՎ, ԵՒ ԸՆԿ. յայտնում է այդ առևտրական ասն գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակութեան պատճառով այդ ասն դիսաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Գժական ասն վերին յարկը Գանօվսկայա փողոցի և Երիվանակայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մուտքերը ստանալու համար գրասենեակը հայտարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխադրութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարեկան ընթացքում ժամն ունի տարածից այն 20 համարներին, որոնք ցոյց են տրված վկայականի մէջ հորս տրեքժներին: Ճանձնարարութեամբ գնում է և ծախում է մանուածք անձանց տոմսեն անձամբ կոչքեր, կօմիսիայով ծախում է տարանքներ և նրեխեր: Ծախում է տրված պայմանագրերներ, բնակարաններ, խառնուքներ և դասարկ տեղեր քրէհով տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է.

1) Գահնելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տարբերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%, 2 տարով և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կոպեկ պայ ունեցողներին մանաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Գարատանելը հատով յայտնի անձի տրամադրութեամբ փոդ տալու ժամանակ առնում է մի տրիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ յանկացողները կարող են առնել ամեն օր գրասենեակի կառավարչից:

3—10 (2)

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, բէվոլվերներ, դանակներ, զրնէներ, անուշահոտութիւններ, տաբաք, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

20—20

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Ծախվում են օդեկոլոնային պատկերներ 20% զեղումով. մերսելիներ 6—10 ր., խոզանակներ պատմինիատուրված են լդի մէջ առանձնապէս անգլիական խառնուքի համար, ամենատաճկերներ, արկղիկով 4 ր., շեֆիլդի դանակներ 3—20 ր. դիւժինը, բրիտանական մետալի թէյամաններ 30 կ.,—3 ր., ցիտրատ-մագնեզիա, թիւրքական շերբէթի և ծարաւը բացեցնող նրեխ 70 կ., ամենալաւ սլօրտֆէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵՏԱՐԲՈՒՐԳՅԱՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի տանալ ԿԱՖԻ, ՇՕԿՕԼԱԴ, թէյ և պատրաստված հանքային ջուրեր ԳԶԳԻՑ:

24—40

Дозволено Цензурою 17 Іюля 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 125 Յուլիսի 19 (31) 1880 Յուլիսի 19 (31) № 125

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կացի կիրակի և ուրբաթ օրերից)

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամէն չորեքշաբթի։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անձնաւորութիւն և ամբողջութիւն—Ներքին տեսութիւն։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ Մեծ-Վարագիվից։ Նամակ Ղզղիրից։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Գումարտակ։ Եւրօպայի տրամադրութիւնը։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրները—Յայտարարութիւններ։

ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ

—

Տգէտ, մոլեռանդ և խաւար մարդկանց յաճախ է ի անձնաւորութեան պակասութիւնը վերագրել ամբողջ Հասարակութեանը կամ ազգութեանը։

Այդ տեսակ խոշոր պակասութիւնից ազատ են ազատ ճիշդ Հասարակական առաջնորդները, Հասարակական օրգանները,—բայց դժբաղդաբար այսպէս չէ։ Շատ անգամ Հասարակական կարծիքի առաջնորդը, լրագրապետը նոյնքան տգէտ, նոյնքան մոլեռանդ, մանաւորապէս նոյնքան անգարգացած է, որքան ամենախաւար ամբոխը։

Մի օտարազգի գալիս է Թիֆլիս, գնում է փողոց, առնում է մի Հայ վաճառականի մօտ այս կամ այն առարկայ։ Հայ վաճառականը նրան խարում է, շատ թանգ է ծախում ապրանքը։ Եւ ահա օտարազգին մի Հայի պակասութիւնը սկսում է վերագրել ամբողջ ազգութեանը, սկսում է բոլոր Հայերին խաբեբայ անուանել։

Մեր խաւար, տգէտ և մոլեռանդ լրագրապետը, կամ Հասարակական գործիչը, վրդովվում է, ի հարկէ, օտարազգու վարմունքից, բայց չէ անցնում մի օր—և նոյն պարոնը սկսում է նոյն կերպով վերաբերվել դէպի իր կաթոլիկ կամ բողոքական Հայ եղբայրները։

Ասենք թէ մի որ և է Պոյաճեան դատաճանում է իր ազգութեանը,—միթէ այդ պատճառով մենք պէտք է յարձակվենք բոլոր Հայ-բողոքականների դէմ, ինչպէս այդ անում է օտարազգին, Հայհոյեմ ամբողջ Հայոց ազգութիւնը, որովհետև մի անգամ խարված է եղել մի Հայ վաճառականից։

Ինչ կասէին մեր ինտելիգենցիային պատկանող խաւար անձնաւորութիւնները, որոնք իրանց ուղեղի մէջ Հատ չատ խելք էլ չունենալով, յանդգնում են առաջնորդել Հասարակական կարծիքը, ինչ կասէին նրանք, եթէ նրանց տգիտութեան Հետևեմայինս, մի կաթոլիկ կամ բողոքական Հայ ասէր լուսաւորչական Հայերին՝ «Վանի առաջնորդ Երեմիա եպիսկոպոսի քարոզը ցոյց է տալիս որ լուսաւորչական եկեղեցու բոլոր Հոգևորականները տգէտ՝ անխելք, մոլեռանդ են....» Ընդուշտ դուք կը վերաբերվէիք որ մի Երեմիայի պակասութիւնը վերաբերում են ամբողջ Հոգևորականութեանը, և անկասկած կը պատասխանէիք. «Եթէ մենք ունենք Երեմիա եպիսկոպոսի պէս մի տխմար անձնաւորութիւն մեր Հոգևորական դասի մէջ, ուրիշ կողմից մենք թէ մեր անցեալում ունէինք երեքի, խելօք Հոգևորականներ, թէ մտաւոր ժամանակներում ունէինք Ներսէս Կաթողիկոսի պէս մի պետական մարդ, Ներսէսեանցի պէս մի գիտնական, ունենք և այս րոպէիս Ներսէս պատրիարքի, Խրիմեանի, Նարբէյի պէս լուսաւոր անձնաւորութիւններ մեր եկեղեցական դասակարգի մէջ։»

Ինչ որ չէք կամենում որ ձեզ անեն,—չը պէտք է ուրիշներին էլ անէք։ Եթէ չէք կամենում որ բողոքական կամ կաթոլիկ Հայը մի լուսաւորչականի պակասութիւնը վերաբերի ամբողջ ազգին, կամ դասակարգին,—չը պէտք է նոյնն անէք և նրանց վերաբերութեամբ։

Օրինակ շատ ցաւալի, վիրաւորելի, անարդար և միանգամայն պախարակելի կը լինէր, եթէ մի օտարազգի ուսումնասիրած լինելով Հայոց լեզուն և կարդալով մի որ և է յիշատ, բժշամիտ, մոլեռանդ, խաւար, անագնիս Հայոց լրագիրը,—այդ լրագրի մաքերի և նրա խմբագրի ստոր անձնաւորութեան համեմատ կազմէր իր կարծիքը և ամբողջ Հայոց ազգութեան մասին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

8 յուլիսի

Անցեալ յունիս ամսի 26-ին կատարվեցաւ էջմիածնում արժանավայելուչ եկեղեցական հանդիսով եպիսկոպոսական ձեռնադրութիւն։ Լէ որ լինելու պատճառով ասելի չատ բազմութիւն չը կար եկեղեցում վեհ. կաթողիկոսը ինքն չէր ժամարար հիւանդութեան պատճառով, այլ միայն կատարեց ձեռնադրութեան կարգը։ Նորապսակ եպիսկոպոսներն էին Ցանկաստանից եկած Հմայեակ Պիմաքեան, նախկին խմբագիր Կ. Պոլսի «Լոյսս ամագրի և այժմեան նոր առաջնորդ Երզնկայի վիճակում, և Ղևոնդ վարդապետ, Պիլեճիկի նոր առաջնորդ։ Այս անգամ Էջմիածնի միաբաններից ոչ ոք արժան չը համարվեցաւ եպիսկոպոսութեան։

Յաջորդ առաւօտ 5-ին Ս. Գայիանեան վանքի եկեղեցում արժանավայել հանդէսով ծայրագոյն վարդապետ առաքելութեան աստիճան երեանի պրօգիմնազիայի կրօնուսոյց կարապետ վարդապետ Ալվազեան, խորէն վարդապետ Մանթաշեան և Վահան վարդապետ Բաստամեան։ Ներկայ կաթողիկոսի օրով, գրեթէ 15 տարուայ մէջ, այս առաջին անգամն է որ տրվում է ծայրագոյնութիւնը էջմիածնի միաբաններին, մինչդեռ Տամկասարեանց ամեն արեզայ չատ չատով աստիճան է այդ բարձր եկեղեցական գիտնական կոչումը։

Գ. Մ.

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՎԱՐԱԳԻՎԻՑ

—

6 յունիսի

Գարնան սկզբից մինչև յունիսի 15 յորդառատ անձրևները անդադար տեղալով, չոր քարերն էլ սկսեցին կանաչել։ Իսկ յիշեալ ամսաթիւից մինչև այսօր ոչ միայն մի կաթիլ անձրև չէ ընկել թէ չատ երկրագործի արտի վրա, այլ մի և նոյն ժամանակ այնպիսի զարհուրելի չոր է լինում, որ բոլորը սկսել են խանձվել։ Ագաւօտեան առատ ցողերի օգնութեամբ միայն կարողացան արտերը դիմանալ ցերեկվայ կիզիչ չոքերին, որի տակ ոչ մի կենդանի հինգ րոպէ չէ կարող համբերել։—Միայն երկու լաւ անձրևի կարօտութիւն ունենք, այնուհետև այնքան առատութիւն կը լինի, որի նմանը չատ քիչ է տեսնված։

Անցեալ օրը Վաղարշապատի մի քանի բարեպաշտ կանայք բորիկ ոտքով մեծ ուխտ չրջելով մատաղի պատրաստութիւն էին տեսնում, որ անձրև գայ։ Ջը նայելով կարճատև երաչտութեանը, դարձեալ կարելի է ասել, որ արտերը վատ չեն։

Վերջին ժամանակներս Վաղարշապատում կրկնվում են գիշերային խոշոր գողութիւններ։ Աւելի զարմանալին այն է, որ անցեալ օրը ցերեկով մտան մէկ զարաքիլիսեցու տուն և ինչպէս պատմում են, հազար րուբլուց աւելի նադդ փող են տարել։ Զարհատան մարդիկ այս գողութիւնների առթիւ կատկածելիների են ենթարկվում, բայց դրականապէս ոչինչ դուրս չէ գալիս և չարագործները ուրիշների արդար վաստակը յափշտակելով, ուտում ու տիրոջ առաջ ման են գալիս։—Այժմ վարձված են գիշերապահներ։ Յանենք վերջ կը դրվի այդ անկարգութիւններին։

Ալէքսանդրապոլի չափուան հարեցողներից մի խումբ, որոնք չը գիտեմ ինչով են պարապում այսօր, գաւալ գուռնաչին առաջները գցած, դիւնաւ չիչեր և բաժաններ ձեռքները, չերքէզկաները հանած, չիբուխ ծուխ տալով, պարելով, գոնապան կենացներ կոնծելով, աւաւ, աւաւ» գոռալով, փողոցները չափելով, օր-ցերեկով մանում են բաղարը, կանգնում են մի գինեվաճառի խանութի առաջ, խմում են, դաւարի չիչերը լցնում են և վերջապէս դուրս են գալիս բաղարից, և այդպիսի խայտառակ հանդիսով կրկին մանում են բաղերը։ Օրիորդներ, կանայք, հարսներ դուրս են թափվում և կատրներից նայում էին հանդիսին։ Իսկ մի խումբ ջահել պատանիներ և մանուկներ դաւաթաճեամբ քաշ էին գալիս այս հարբեցողների ետեից, որոնք իրանց լիրբ օրինակներով վատ սերմեր են ցանում անփորձ մանուկների սրտի մէջ։

Արանից մի քանի չարաթ առաջ Սարիբէդ բէօվլէն ցանկանում էր մի ժողով կազմել՝ Վաղարշապատում պարապող օտարականների մասին, թէ որտեղացի են, ինչպիսի մարդիկ են, ինչ վարուց բռնուց տէր են, որքան ժամանակ են ուզում մնալ Վաղարշապատ և վերջապէս դրանց բոլոր գործունէութեանց վրա ուշք դարձնել, որ չը լինի թէ որեւէ մի թոկը կարած կայ, դայ Վաղարշապատ բուն դնի և բնիկներին էլ խարաբ անի։ Իմ կարծիքով սա չատ լաւ միտք է, եթէ իրագործվի։ Իսկ վերոյիշեալ չափաւորների սրած անկարգութիւնը յոյսով եմ, որ վերջինը կը լինի։

Ս.

ՆԱՄԱԿ ԽԵՐԻՐԻՑ

—

Յուլիսի 10-ին

Այս տարուայ սաստիկ թանգութեան ժամանակ Սարմալուի ամբողջ գաւառում տարածվեցաւ սոված քիւրդերի մեծ բազմութիւն, որոնք գլխաւորապէս եկել էին Բայազէդի կողմերից։ Սովի ժամանակ գրանք ապրում էին ողորմութեամբ, որ տանում էին հայերից, բայց երբ ձմեռը անցաւ, ցանքերը հասունացան, այժմ որ հունձքի ժամանակ է, նոյն քիւրդերը սկսել են գիշերները կողոպտել հնձած արտերի վրա մնացած խոբեները։ Եզդային ժողովուրդը քրդերի այս յամառութիւնները նախատգուշակելով, վաղօրօք խնդրեց գաւառապետին, որ արտերէ նրանց իրանց երկրից, բայց ոչինչ բաւականութիւն չը տացաւ։

Այս տարի հունձքը չատ առատ է. ցորենի խուլարը (30 պուդ), ծախվում էր առաջ 150 մինչև 200 րուբլի, իսկ այժմ 35—40 րուբլի։

Ղզղիրի երկաթ ղպրոցների հարցաքննութիւնը վերջացաւ չատ աջող կերպով։ Մանաւանդ օրիորդները բաւական առաջադիմութիւն էին արած թէ ուսման և թէ ձեռագործութեան մէջ։ Ը նայելով որ հարցաքննութիւնը տեսնց 15 օր, բայց հազարաձներից ոչ մինը ներկայ չէին։ Վարժապետների մէջ գովելի էին տեսուչ պ. Քալանթարեանցն և ուսուցիչ պ. Շավարշեանի ջանքերը։

Ղզղիրցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, ապրիլ

Նուիրատուների ցուցակը, որոնք փողոր նուիրեցին յոգուտ վանի սովատանջների։

Հովհաննէս Մրաք 1 ր., Ստեփաննէսեանց Մանուկ ախալցխացի 1 ր., Բայազէտցոց Նիկողայոս 20 կ., Ալաշկերտցոց Աստիան 1 ր., Միքելեանց 20 կ., Մերզեանց Ասեխա 30 կ., Աղաբէգեանց 35 կ., Սալմաբեանց 1 ր., Յակոբեանց 1 ր., Մուսայէլեանց Սահակ 40 կ., Ջաւախեանց Յովսէփ 20 կ., Ագասեւբեանց 10 կ., Մելիքեանց 1 ր., Ագաեանց 20 կ., Պապաեանց 40 կ.,

Fonds A.R.A.M

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԱԿՈՒԹԻՒՆ

ՍԻՒՆԻԿԻ

Ֆրանսիական լրագրները կը գրեն Սիւնիկի մասին հետեւեալ տեղեկութիւնները:

Սիւնիկ ամենէն աւելի ուշագրաւ տեղն է Ֆրանսիոյ մէջ, որովհետեւ հոն կը գտնուի Ֆրանսիոյ ամենէն մեծ ածուխի հանքերը: Ֆրանսիոյ ածուխի արտադրութեան մէկ երրորդ մասը կը հանուի Սիւնիկի շրջանէն: Ֆրանսիոյ ածուխի հանքերուն մէկ հարիւր հիսունհինգ հազար բանուորներէն քառասուն հազարը կը գտնուի Սիւնիկի շրջանին մէջ: Ֆրանսիոյ ածուխի հանքերուն մէկ հարիւր հիսունհինգ միլիոն ֆրանքի կապիտալէն քառասուն միլիոն

քեր կազմելու համար: 2) Անասունների զոզանալը արգելվում է. անասուն զոզացողը պէտք է վերադարձնէ նրան ստրոջը և մասնական պատժի ենթարկվի: 3) Մարդասպանը մահուան պատժի է ենթարկվում: Այդ օրէնքները կատարելու համար նոքրին պահապան զօրքեր են հաւաքվում:

Թէսալոնիկից առաքված լուրերը չափազանց անհանգստացնող են: Թէ քաղաքի և թէ նրա շրջակաների մէջ քրիստոնեայ բնակիչների վիճակը ահռելի և անտանելի է: Ալբանցիների առաջնորդ Սամսո-բէյ սարսափելի կերպով հալածում է քրիստոնեաներին, իսկ Թիւրքաց կառավարութիւնը ուշադրութիւն չը դարձնելով այդ մարդու գազանութիւնների վրա, ինքն էլ զրգռում է մահմետական բնակիչներին քրիստոնեաների դէմ: Քրիստոնեաների ամենօրեայ սպանութիւնները և նրանց կրած տանջանքները տիպիկօրէն նրանց դիմել Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Աւստրիայի և Իտալիայի հիւպատոսներին և խնդրել այդ պետութիւնների օգնութիւնը: Մի՞թէ Եւրոպան տեղեկացած չէ այդ վայրենութիւնների մասին և չի՞ հաստատում Քրիստոնեաների դէմ կատարուած ջարդերի ճշմարտութիւնը: Մի՞թէ Եւրոպան չի տեսնում, որ Թիւրքիան ոչ միայն իր քրիստոնեայ հպատակների, այլ և ամբողջ քրիստոնէութեան թշնամին է:

ԵՒՐՕՊԱՑԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

«Polit. Corresp.» լրագրի դիպլոմատական թղթակիցը գրում է Փարիզից հետևեալը յուլիսի 13-ից:

Եւրոպական քաղաքական գործերի դրութիւնը հետզհետէ ծանր բնաւորութիւն է առնում: Կարելի է նշանաւոր անցքերի սպասել, եթէ այդ դրութիւնը աւելի հանգստացնող բնաւորութիւն չը առնայ: Այդ նպատակին հասնելու համար պետութիւնների կողմից բարեմտութիւն և զգուշութիւն է պահանջվում: Եւրոպայի վիճակը կատարելու ժամանակ Թիւրքիայի վերաբերութեամբ: Կարելի է յուսալ, որ պետութիւնների մէջ համաձայնութիւն կը կայանայ, որպէս զի Եւրոպական նոր դժուարութիւններ չը ծագին: Առժամանակ Եւրոպայում երկու բնաբացք է նկատվում. մի քանի կառավարութիւններ համաւորապէս ցանկանում են սպասող քաղաքականութեանը հետևել Թիւրքիայի վերաբերութեամբ: Դրանք անգլիական, առւստաց և գուցէ դերմանական կառավարութիւններն են: Միւս պետութիւնները աւելի լաւ են համարում Թիւրքիայի վերաբերութեամբ պահպանողական քաղաքականութեանը հետևել: Այս վերջին տրամադրութիւնը տիրապետում է Փարիզի և Վիէննայի մէջ: Պետութիւնները սկսում են համաձայնութիւն կայացնել, որովհետև բոլորի շահերն էլ պահանջում են խաղաղութիւն պահպանել: Մի՞թէ հեղինակաւոր ձգտումները պատճառով Արևելքը նշանաւոր անցքերի ասպարէզ պէտք է դառնայ: Արևելքի բնակիչները պատրաստ են խնդրել միմեանց. դրա համար նրանք միայն նշանի են սպասում: Արդեօք Եւրոպան պէտք է տա՞յ այդ նշանը: Արդեօք նա չը պէտք է արիւնհոսութեան առաջն առնէ, կամ գոնեա սահմանափակել պատերազմական դաշտերի թիւը: Պետութիւնների այս նպատակը և այն ինչ որ նորերում պատահեց Ներսօգօրիայի վերաբերութեամբ, շատ լաւ նշան է համարվում: Անգլիան յայտնեց Թիւրքիային, որ չերնօգօրիական հարցին պէտք է վերջ դնել: Դրանից յետոյ Անգլիան առաջարկեց առաջ-ռօ-ունգարական կառավարութեանը երեք շաբաթ ժամանակամիջոց տալ Թիւրքիային Կօրտիի դաշնագրութիւնը կատարելու համար: Եթէ այս կամ այն պատճառով Կօրտիի դաշնագրութիւնը չը կատարվի, Եւրոպան կը տեսնի Թիւրքիային զիջել Դուլցինիո Ծովային ցոյցերի օգնութեամբ: Աւստրօ-ունգարական կառավարութիւնը առաջ մերժեց այդ առաջարկութիւնը, բայց յետոյ համաձայնեց ընդունել: Ռուսաստանը նոյնպէս համաձայնութիւն տուեց, բայց այն պայմանով, որ Ծովային ցոյցերի ժամանակ ոչ մի պետութիւն առանձին գործողութիւն չունենայ: Ներմանիան լաւ վերաբերվեց այդ առաջարկութեանը, բայց հրաժարվեց ուղարկել իր նաւերը: Աւելի մեծ ընդդիմադրութիւն Իտալիան ցոյց տուեց, որ պահանջում էր անպատճառ իրագործել Կօրտիի դաշնագրութիւնը: Վերջապէս իտալական կառավարութիւնը հետևեալ պայմանների հետ միասին գործել Դուլցինիոյ վերաբերութեամբ, եթէ Թիւրքիան հրաժարվի իրագործել Կօրտիի դաշնագրութիւնը: Այդ կէտի վերաբերութեամբ կառավարութիւն կայացաւ, որի մասին տեղեկութիւն առանալուց յետոյ Թիւրքաց կառավարութիւնը եռանդով վերաբերվեց գործին: Մինչև այժմ Թիւրքիան արաւում էր, թէ ինչ եռանդ կը ցոյց տայ Եւրոպան և արդեօք կը դիմե նա ոյժին: Եւրոպայի անհամաձայնութիւնից միշտ օգուտ քաղող Թիւրքերը կարծում էին, որ այս անգամ էլ այդ անհամաձայնութիւնը կը ազատ և իրանք զարձեալ օգուտ կը քաղեն: Բայց պետութիւնները համաձայն են գործում և Ր. Դուռը սկսում է զիջումներ անել:

ՆԱՄԱԿ ԹԻԹՐԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 5 յունիսի

Սուլթաններու սերայը միշտ նոյնը կը մնայ. Դաւ, սպանութիւն, յեղափոխութիւն հոն գրած են իրենց բոլոր: Մարդ չը գիտեր ինչ ահռելի գործեր կը կատարուին այդ ոսկեզօծ ապարանքներուն մէջ, բայց երբեմն երբեմն գաղտնիք մը դուրս թափանցելով, մեզ ըմբռնել կուտայ ինչ կրնայ լինել կեանքը այդ Սուլթանին չուրջը: Սերային բոլորտիքը պատերը բարձր են, թիւրքիոյ են քաջ պինուարները գիչեր ցորեկ կը հսկին դուրսը, իսկ ներսը կրաւած սևազէմ ծառայներու բանակ մը կայ որ կը հսկէ նոյնպէս: Այս ամեն արթուն աչոց հակոդութեանէն խուսափելով, կին մը սերայէն կը փախչի, կապ մը կը բանէ վարձով, Անգլիոյ դեսպանատունը կը դիմէ, պ. Կօչէնի կը ներկայանայ, անդլիական դեսպանին պաշտպանութիւնը կը խնդրէ, որու դէմ, սուլթանին դէմ: Ծիրաւի, զարմանալի բան, և հաւատալ դժուար կը թուի, եւ սակայն այս է իրողութիւնը: Ինչ է պատահեր արդեօք Սերային մէջ, ինչ ոճիր գործուեր է ինչ դաւադրութիւն: Դեռ չատ բան յայտնի չէ, բայց այս ճշմարիտ է թէ Սերային մէջ նուազ մը մարդիկ փորձ փորձելու վրայ էին ներկայ սուլթանը զահընկէց ընելու և իր տեղը Մուրատը նստեցնելու: Կիներ ալ կային այդ դաւադրութեան մէջ, որ Սերայէն դուրս ունէր ձիւղեր: Այս առաջին անդամը չէ որ Մուրատը զահին վրայ բարձրացնելու փորձ եղաւ, թերևս այս վեցերորդ, եօթներորդ անգամը լինի: Մինչև ցարդ կինները մեծ դեր չէին խաղած, այս հեղուն, կերևի թէ, մեծ դերն իրենց յանձնուած էր: Վեց սուլթանուհիներ, բոլորն ալ տարէց, 30—40 տարեկան, Սերային մէջ գործելու պաշտօն տառնձնած էին: Գաղանիքն երբ իմացուեցաւ, բարձրագոյն հրաման կկլլէ դանոնք խոկոյն խեղդամահ ընելու: Վեց դաւադիրներէն մին կը յաջողի, հրաշքով մը պրծիլ իր դահիճներուն ձեռքէն և կը դիմէ Անգլիոյ դեսպանին: «Ես դերի եմ, կըսէ, Անգլիա պարտականութիւն յանձն առած է, իր կնքած դաչինքներով, ազատել ամեն գերի իր տիրոջ ձեռքէն: Թիւրքիա թէև վերջերս գերեաց ազատութեան համար դաչինք կնքց Անգլիոյ հետ, բայց ազատութիւն տակաւին չէ ուզած տալ այնքան չերքէզ աղջկանց և կանանց, որը Սերային մէջ, փաչաներու ապարանքներու մէջ կր հիւծին ու կը մաշին: Ես չերքէզ գերի մ'եմ, մահկանացուներէս ի վեր Սերային մէջ փակուած, Անգլիոյ պաշտպանութիւնը կը խնդրեմ»: Պ. Կօչէն զինքը անգլիական կառավարութեան չռգենաւը կր զրկէ, ուելի ապահովութեան համար: Յայտնի է թէ ամեն ոք, բայց ոճրագործներէ, ապահով ապաստանարան կրնայ գտնել անգլիական չռգենաւու մը վրայ: Այսպէսով սուլթանուհին ամեն տեսակ բանտութենէ և հարատած զերի և ազատ կը մնայ:

Ամեն ոք կը հասկնայ թէ այս դէպքը չէր կրնար մեղ առանց ուրիշ և աւելի ծանր հետաքրքիր ունենալու: Նոր սուլթան Համիտն ինքն է, որ իւր գայրոյքը կը թափէ կալի Օսման փաշային վրայ զինքն իր նախարարութեան առաջնորդն ընտրելուն համար: Ըլլնլայի դիւցազն պաշտօներ Սերայը պահպանել և Սերային հետ իր տիրոջը անվնասաբերի և խանգարելի կեանքը: Այս դէպքին մէջ չատ արմատական չէ ցցուցած, մի յանցանք սրու համար, զրոյց կայ թէ, Օսման փաշա նախարարական աստիճանը կորցնելէն ի զատ մինչև իսկ աթոռ պիտի երթայ: Շատ մարդիկ Օսման փաշայի անկումն իմանալով կարծեցին թէ այդ եւրոպական դեսպանաց ճնշման արդիւնքն է և կամ մի նոր քաղաքականութեան նշանը: Զեն գիտեր խեղճերը թէ օսմանեան պետութիւն ընտրած բանը երկրի մը կառավարութիւնը չէ, այլ միայն Սերային կառավարութիւնն է: Թէ ինչեր կը դառնան հոն. փոխատական կինը, կըսեն թէ, քաղաքագէտ յայտնութիւններ ըրեր է: Իւր ամենակարևոր յայտնութիւնը քրիստոնական դեսպանին համար սա է եղեր թէ Անգղիոյ դեսպանին կոչմէ առ սուլթանն երբեմն երբեմն գրուած նամակները չատ անհատական կերպով կը թարգմանուին և սուլթանն անոնց մեղմ և չոդջորիչ ոճը տեսնելով մեծ կարևորութիւն չէ տուած երբէք այդ նամակաց: Պ. կօչէն իր առաջին թարգման պ. Սանտիսոնէն բացատրութիւն կը խնդրէ, խուզարկութիւններ կը վնին և սա յերևան կելլէ որ պ. Սանդիսոն թէ ներկայ և թէ նախորդ դեսպանաց թէ խօսքերը և թէ գրութիւնները չատ տարբեր կերպու թարգմաներ է: Խնդիրն ամենածանր է և չատ մը անհամաձայնութիւնից և չբնաց պատասխանատուութիւնը կը բեռցնեն այժմ պ. Սանդիսոնի վրայ: Անգղիոյ դեսպանն իր առաջին թարգմանը բանտարկած է և քիչ օրէն Լոնտրա պիտի դրկէ զատուելու համար: Անհատական սուլթանուհի մը որ թերևս ամեն քաղաքական դժուարութիւնից զաղանիքը բացատրէ և պատճառ լինի որ Լոնտրայի գաչինքը մի նոր և աւելի արդիւնաւոր մեկնութեան բռնէ իրքաղաքականութիւնը Թիւրքիոյ մէջ չատ ազէկ անելու:

* * *

ՆԱՄԱԿ ԹԻԹՐԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 18/30 յունիսի 1880

Ինչպէս պիտի վաստատականի սովը դեռ ճարակում է Ձերան չափ և աւելի ժխտական կերպով, վասն զի թող թէ դեռ հացը հին գինն է, նոքինները աւելի չատ են. աւելցաւ ասոր վրայ տևական տարափոխիկ հիւանդութիւններ, որով գրեթէ մի սպանդանոց է գարձել Հայկական մասնաժողովը չարունակում է փազեր հաւաքել և օգնել, սակայն ժողովուրդներնիս բոլորովին անհոգ է այդ մասին, մանաւանդ միջակ և հարուստ դասերը, որոց բոլորին ալ տուածը հատհատութեամբ խիստ քիչ է (միջոցի բացատրութեամբ) թող որ նուած անանկներ, որը մեծ վաճառական ըլլալով միայն 10 րուբլ տալու չամաչեցին, տասնց ամենին պատճառը կարելի է համարել միայն այն, որ ոչինչ զգացում չունին և բնաւ ազգասիրութիւն:

Ընդհակառակն եմք այս մասին մեր Հաւատառանցի եղբայրներէ, որք մեզմէ աւելի ջանքով աշխատասիրութեան և կաշխատանն դեռ մեզմէ աւելի հետու գըտնուելով հանդերձ:

Սակայն ազէկ գիտնանք, որ դեռ մեծամեծ գումարներ հարկաւոր են բուժելու համար այն վէրքերը, զոր չատ մը նամակներ սկսան մեզ իմացնել թէ. ձ[illegible] մեծ վաստգի մէջ էս. չնորհակալ եմք մանաւանդ ձեր խմբագրութենէն այն գործունէութեան մասին, որով ազգին մեծ բարերարութիւններ բրած է մինչ այսօր և չարունակում է դեռ, սակայն ջանից կրկնապատկելու ժամանակն է. Այսօրուան մեծ պէտքերնիս է որ հիւանդութիւն կնցած տեղեր մի քանի կարող բժիշկներ զրկուին, լաւ աւի որ տեղւոյս մասնաժողովը սկսած է կարգադրել դայս ալ, սակայն այս մասին տեղ աւելի գիւրութիւն և միջոց ունի և տեղւոյդ ազգասէր բժշկապետաց ալ մեծ ասպարէզ մըն է այս իրենց ազգասիրութիւնը ցուցնելու կը յուսամ որ թէ դուք և թէ հաստատութիւններդ արգէն զգացած էք այս պէտքը և կարգադրած. սակայն եթէ չէ, մեծ պէտք կայ այս մասին, վասնզի եթէ այդ տարափոխիկ ախտը տարածի, ինչպէս որ հաւանական է, դժուար կըլլայ առաջքը առնուլ տասնց մեծամեծ զոհերու, մանաւանդ Հայաստանի կողմերը ուր բնաւ տպէտ բժիշկ մը անգամ չը կայ. ահա վաստգականի եղբարց պէտքը երկու եղաւ. զրամ և օգնական բժիշկներ:

Եթէ տասնք չատով չը մտատակարարուին, վասնզը թերևս տարափոխիկ մեծնայ և այն տատն անկարելի ըլլայ փրկել հայրենիքնիս. միով բանիւ «Հայաստանի տպագան և կացութիւնը մեծ վտանգի մէջ է». Այսչէն տոյն տևական չարժատրին ալ գրել, տակայն թէ չատ երկարէ և թէ մեր կէտերով չըջապատեալ, անգործ և վատ ձեռքերով գործատ... որը ձեզ յայտնի ըլլալու են. Այժմ գրեթէ ուրիշ տատարիպ չը կայ, այլ միայն տահին տատկութիւնը, տեղւոյս մասնաժողովն ալ թէև չատ ուշ, սկսաւ երբեմն յողուածներ գրել. ազգային գործերը դեռ մեծ մասամբ կախ կը մնան. այժմ քաղաքական կէտով մեր միտքը գրատած է Պերլինի դեսպանաժողովը. մանաւանդ տեղւոյս դեսպանաց հատքաական ծանուցագիրը, որոյ երկու կէտերուն պատասխանեց Բ. Դուռն, տակայն Հայաստանի վերաբերեալ կէտին վրայ դեռ կը խորհի, բայց անյուսալի է որ յուսացած օգուտը ատյ, եթէ մեր տաթին հետ գործ չըլլատք և չը միաձայնք և ժամանակէն օգուտ չը քաղենք. Ար. պատրիարքը միշտ խաղն գործերով չըջապատեալ է, տոնն օր հարատատարութեանց չտքեր պատկատ չեն, մանաւանդ վաստգականէն, ուր քաբդերը դեռ կատերն անցնալի նման. Ուրեմն տեղացիէք տովին վրա այս ալ, ուրեմն ձեր կերթայ տատնկով վաստգականի գրութիւնը, եթէ մեծ ջանքեր չըլլան փրկելու Հայաստանի ժողովուրդը փոքր տուած է և տատ թէ ինչպէս պէտք է ինքզինքը պաշտպանել, այսօր քիչ մը կրնայ գործադրել, տակայն անդուռ սովը դեռ իր ճիրաններով կաչկանդելու և ոչնչացնելու կաչխատի և չտատով հետանալու միտք չունի:

Այս մասին վեհ. Հայրապետի ցոյց տուած տատնատութիւնը մեծ վէրք պատճառած է մեր դժբաղդ եղբարց, վասն զի հարկ էր որ նոքին վերատատութեան հովանաւորութեամբ ըլլար ամեն գործ, ամեն ճիգ չը խնայէր հայրենեաց այս ամենատիտանի մասին տպատութեանը, տատնց որոյ հայրենիքը պէտք է կորուսած նկատել. և արդեօք ունինք Հայաստանէն զատ յոյս մը, անխմանալի և անդուժելի խնդիր մը....

Լրագրոյդ 81-րդ թիւին մէջ կարդացի մի յողուած պ. Պոլսի հայ մամուլը վերնագրով, որոյ հեղինակը ամենայն իրատամբ կատագուցանէ տեղւոյս հայոց լրագրաց տատնատութիւնը, որը ամենատիշտ կերպով ոչինչ հետամուտ չեն հետու տեղեր բնակող հայերու մասին և ըլլալու ալ հոգս չունին, այլ միայն զիրար ըզկտել, մատնատրաց ծառայել, կամ քաղաքական յողուածներ գրել, խակ դուք այս և ամեն ազգային կէտերով ալ մեծ դիրը բռնած էք և չարունակեցէք, և ամեն կերպով իրատունք ունիք մեծ համակրութիւն վայելել ազդէն, ինչպէս որ վայելում էք:

Մի առաջարկութիւն ալ պատ. մեծատուն հեղինակ գրաֆֆիլինս իր բանատիրական գիտնիթիս մասին, այն է որ տատնց գաղարեցնելու լրագրոյդ մէջ, չարունակէ, տակայն տատնց ժամանակի կոբատիան մը պատմութիւն կազմէ և չուտով տպել տայ, որ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ, ինչպէս ուրիշ գործերը և մեծ փայլ պիտի տայ հայի պատմութեան: Նամակ գոցելու ժամանակս լսեցի որ Բերլինի դեսպանաժողովը յուսաց օգտակար կերպիս գծեր է տանմանագլուխը, որ արդէն յայտնի էր և թէ Բ. Դուռը մեծ նեղութեան մէջ կը գտնուի. երկու օր է արդէն մեծ ջանք կընէ տա կազմերը գօրութիւն ուղարկելու. Արդեօք հայոց գործն ալ դեսպանաժողովի տնդամներն վրա ելաւ, թէ մէկ կողմ ձգեցին:

***

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՊԵՐԼԻՆ, 17 յուլիսի: Երէկ մարկիզ Յոնոզ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ:

ԿԱՆԴԱՀԱՐ, 17 յուլիսի: Բերդայուլի վրա յարձակվող Եյուբ-խան 1200 մարդ և 36 հրետանօթ ունէր: Անգլիացիք կորցրին 2 հրետանօթներ:

ԼՕՆԴՈՆ, 17 յուլիսի: Հաստատ լուրերից երևում է, որ անգլիական կառավարութիւնը վճռել է ամենատարձ ժամանակում Հնդկատան օգնական զօրքեր ուղարկել:

ՎԻԵՆ, 17 յուլիսի: Երէկ ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ Բաւնղէ իր պաշտօնը վարելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 87 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխատութեան տոմսակը արժէ

Fonds A.R.A.M

223 ր. 50 կ., երկրորդ 222 ր. 75 կ., առեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր., 25 կ., երկրորդ 91 ր., 91 կ., ոսկի 7 ր. 84 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ 25 պէնս, ռուսաց 100 րուբլ Համբուրգի վրա արժէ 214 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 264 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչեւ այս ԱՄՍՎԱՑ ՎԵՐՋԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Արծրունու գալերէի մէջ: Գուլպաներ (տղամարդկերանց և կանանց), թաշկինակներ, պարուսինա, պատկերներ, հոտաւէտ ջրեր, հրացաններ, րէվօլվէրներ, կոլպէքներ, սղոցներ, դանակներ, գդալներ, ցիտրոն-մաղնեզիա ծարաւից և այլն. այժմ ծախվում են 25%—50% էժան քան թէ ուրիշ տեղ: 7—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը2 րուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ: 35—100

Նոր մամուլի տակից դուրս եկաւ Ս. Մանդինեանի հետեւեալ աշխատութիւնները.

Ազգային ընտանեկան աշխարհք. 1-ին տարուայ ուսմունք, և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Ազգային գիւղական աշխարհք. 2-դ տարուայ ուսմունք և ընթերցմունք, առաջին տպագրութեամբ:

Նախապատրաստական աշխարհք և հայրենիք. 3-դ տարուայ ուսմունք և ընթերցմունք, երկրորդ տպագրութեամբ: 3—5





Իր յատկութիւններով մաքրեր մարմնի, մանաւանդ տաքի մասների քրտինքից առաջ եկած փտածն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳՈՒՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների, դեղատների և դրոգիստների մօտ Գլխաւոր դէպօ Նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է Ձոնիվում, Վարշավայում, Նըէպօրովի փողոց, № 95. Գավանիի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է զգուշանալ խարդախումներից: 16—25 Վ. ԿՐՊԻՆՍԿԻ (1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ ծխականները հրաւիրում են ցանկացողներին ներկայ գտնվել այդ եկեղեցու ՕԾՄԱՆ ՀԱՆԴԻՍԻՆ, ԿԻՐԱԿԻ, յուլիսի 20-ին, առաւօտեան 10 ԺԱՄԻՆ: ԿՆՔԱՀԱՅՐ լինել ցանկացողները կարող են ՎԱՂՕՐՕՔ յայտնել եկեղեցու ՎԱՐԺՈՒԹԵԱՆԸ, եկեղեցու գաւթում ԱՄԵՆԱՅՆ ՕՐ: 2—2

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվին Թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով գրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթական անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք տրվին մետրիկական և ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պօլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամուր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մտնելու համար նրանցից պահանջվում է. Կրօնից-քրիստոնէական վարդապետութեան կարճառօտ հրահանգները և սրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուաբանութիւնից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը. ժամանակի, գրամի, կշռոքի և այլ չափերի գիտենալը:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Օրալեվիչ ներքին հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Թիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շաեմրօրսկի վեներական և կաշու հ., Բաքայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վ. գօրօվ վեներական և բաղանի հ., Բէյեր աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադօվ, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդվօվսկի ներքին հ., Շաէյմրօրսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. գօրօվ վեներական և բաղանի հ., Ռօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Թիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտօվ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շաէյմրօրսկի և Աստուածատուրօվ վեներական և կաշու հ., Բաքայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաքօվ կուրծքի հ., Եանկօվսկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. գօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարանով չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչեւ 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիկական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բալանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օրբելու աղքատ հիւանդներին բժշկանոցի ատամակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի գլխաւոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՀՐԱՏԱՐԱԿ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ հեռանարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրեւ հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեւոյն և մէկ պատկերներով, գինն է . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

9—20

Ընէքսանդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. Առաքել Խաչակեանց.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ ԵՒ ԸՆԿ. յայտնում է այդ առեւտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Դժակելի տան վերին յարկը Դվորցովայա փողոցի և Երիվանսկայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մուտքերի ստանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչեւ 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում մասն ունի տարածից այն 20 համարների, որոնք ցոյց են տրված վիճակահանի մէջ չորս տիրաժների: Ցանձնարարութեամբ գնում է և ծախում է մասնաւոր անձանց ամեն տեսակ անշարժ կալքեր, կօմիսիոյով ծախում է ապրանքներ և նիւթեր: Ծախում է տպված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և դատարկ տեղեր քրէհով տալու համար: Տուրքերին մինչեւ նոր կարգադրութիւնը վճարում է.

1) Պահելու համար մինչեւ պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%½, 2 տարով և. աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կարգի պայ ունեցողների մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Պարտամուրհակով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

4—10 (2)

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, րեվօլվերներ, դանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապոն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

20—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱԾ, հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ Էնֆիաճեանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

1—22

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՅԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ:

25—40

Fonds A.R.A.M

№ 126 Յուլիսի 22 (Օգոստոսի 3) **1880** Յուլիսի 22 (Օգոստոսի 3) № 126

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրւում են միայն խմբագրատան մէջ։

Յատուկ նամակներ պիտի ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կտակի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է առանց լիպուռվ։

Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր անգին 2 կոպէկ։

ՊԱՏՎԱՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր առաջը կատարվեցաւ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Բագուից։ Նամակ Ախալքալաքից։ Նամակ Վլադիկավկասից։ Նամակ Ղարսից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Կ. Պօլսի մէջ պատահած վերջին անցքերը։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանաստեղծական։ Հայոց ուսումնարանների նախագիծ։

ՄԵՐ ԱՍԱԾԸ ԿԱՏԱՐՎԵՑԱՒ

Կ. Պօլսի հայ ժողովուրդը, ինչպէս հաղորդում է ռուսաց «Голосъ» լրագրի թղթակիցը, երեւում է թէ հասկացաւ որ թիւրքաց արտաքին գործերի մինիստրի նոր օգնական, Դաղեան Յակոբութիւն բէյը դաւաճանել է իր ազգի գործին, յօրինելով Ռ. Դերեան կողմից մի պատասխան եւրոպական պետութիւններին, որի մէջ հաստատացնում է որ ամբողջ Յայաստանում հայերը միայն 17% են կազմում մահմեդական ազգաբնակութիւնից։

Ընթերցողի ուշադրութիւն ենք դարձնում մեր ներկայ համարի արտաքին տեսութեան մէջ արտագրած «Голосъ» լրագրի թղթակցութեան վրայ։

ՓԱՐԻԶ, 22 յուլիսի: Ընտրված են ընդհանուր խորհրդականներ 704 հոգի հանրապետականներից և 283 պահպանողականներից: Հանրապետականներ ձեռք բերին նոր 184 նստարաններ:

ԲՕՄԲԷՅ, 21 յուլիսի: Հեռագրական հաղորդակցութիւնը Կաբուլի հետ կտրված է, թելերը փչացած են Պէյվարի և Լատտաբանդի մէջ:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔՈՒ ՀՈՒՐԱՏԱՐԱՆ

Ընդունում է ամեն տեսակ գրքեր, նոտաներ, նկարներ, քարտեզներ, գրիչներ, մատիտներ, մատիտներ, մատիտ

№ 129 Յուլիսի 25 (Օգոստոսի 6) **1880** Յուլիսի 25 (Օգոստոսի 6) № 129

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թուղթակցութիւնք գրվում են միմիայն խմբագրատան անվ։

Յայտարարութիւնք գրվում են ուղղակի
Տփղիսում. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կացէք կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքաց Հայաստանը. — Նեղքին տեսութիւն. Նամակ Բագուից. Նամակ Բագուից. Նամակ Ալէքսանդրապօլից. Նամակ Շուշուց. Նամակ Գանձակից. Նամակ Նոր-Նախիջեւանից. Նամակ Նուխուց. Նամակ Լայտայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր. — Արտաքին տեսութիւն. Թիւրքիա. Րուսիա. Ֆրանսիա. Զրոյցօրիա. Արտաքին լուրեր. — «Մշակի» հեռագիրներ. — Յայտարարութիւններ.

ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Կ. Պօլսում հրատարակվող «Թէրճէմանը Լէֆքեար» հայոց լրագիրը տպել է նորերումս մի յօդուած «Հայաստան» վերնագրով, որի մէջ նկարագրում է Հայաստանի աշխարհագրական դիրքը, յիշում է թէ հայերի թիւը Թիւրքիայում, Ռուսաստանում և Պարսկաստանում ընդամենը 5 միլիոնի է հասնում, յետոյ անցնում է թիւրքաց Հայաստանի նկարագրութեան, բերելով Հայաստանի այդ մասի ազգաբնակութեան հետևեալ թիւանշանները։ Բաղում ենք յօդուածից հետևեալ տեղը։

«Թիւրքաց Հայաստանի ազգաբնակութիւնը կը բաժանվի հետևեալ կերպով։

«Հայ քրիստոնեայք, բաւական, կաթոլիկ և բողոքական հայք եւս մէկ տեղ առնելով, առաւել քան 2,000,000 հոգի են։ Հայ իսլամացեալք առաւելապէս միևնոյն աղանդի 500,000, հայ այլ և այլ քրիստոնեայք, իրր իսլամ հետևողաց 300,000 հոգի։ Ընդամենը 2,800,000 հոգի։

«Հայաստանի հին բնակչաց սերունդն են առնք եւս։ Լազք, այսինքն հին կոլքիացիք, կամ խաղտիք, կամ ուղղապէս ևս արմէնօ-բաղիպ 100,000, քիւրդ բնակաւոր և վաչկատուն 500,000 հոգի։»

Արեմն վերև յիշած 2,800,000 թուանշանի հետ, թիւրքաց Հայաստանի հին, բնիկ, ազգաբնակութեան թիւը կը լինի 3,400,000 հոգի։

«Իբրև կէս պաղթական, շարունակում է Կ. Պօլսի լրագիրը, առնք են. քաղդէացիք (քրիստոնեայ), չէրքէզք. ասպասլք, պարսիկք և այլն, բոլորը 400,000 հոգի, իսկ բուն պաղթականք ի Հայս կրնան համարվել առնք՝ թուրք (աւելի արևմտակողմն), թամթաղք, (սակաւաթիւք), թիւրքմէնք (վաչկատուն), արաբք (վաչկատուն), հրէայք և գրիսաոանեայ յոյնք և առորիք, բոլորը միասին 700,000 հոգի։»

Լրագիրը առերեսում է իր յօդուածին հետևեալ դատողութիւնները։

«Ինչպէս յայտնի կը տեսնվի, Հայաստանի բնակչաց՝ չորս հինգերորդականէն աւելին՝ երկրին բնիկն է։ Հայաստանը, ինչպէս քանի և աւելի միլիոն բնակիչ ունեցած առեն, նոյնպէս և անկէ եւս միշտ իր սեփական անունը պահած էր և ամէն երեք չորս դար առաջ նոյն քիւրդ և թիւրքմէն իշխանք, որոնք ժամանակ մը Հայաստանի վրա թագաւորեցին, կը յարգէին զայն և կանուանէին Հահի-Ըրմէն և ոչ Հահի-Թիւրքմէն կամ Հահի-Քիւրդ, բնակչաց նուաղելուն և գաւառաց նոր ազնուականութիւնը առանալուն համար երկրին սեփական անունը փոխելու հարկ մը չի տեսնելով։

«Հայաստան իր նախնի անունը պահելու ամէն յատկութիւնն ունի։ Հայ ազգին մեծամասնութիւնը հոն կը բնակի, նոյն երկրին բնակչաց ամէնէն կիրթ և յառաջադէմն, իրեն յատուկ եղած սեփականութիւններն պահած։ Իր լեզուն թէև չէ պաշտօնական, գրեթէ բոլոր երկրին մէջ տարածված է և հայերէն զատ կը խօսին զայն նաև Հայաստանի մէջ գտնվող յոյներէն, քաղդէացիներէն, ասորիներէն շատերը և նոյն իսկ մեծ բազմութիւն խաւերէն. իսկ հասկանալու գաղտ գրեթէ խիստ սակաւ է բացառութիւնը և այն սահմանաց ծայրերը։»

«Արբիլ, վերջացնում է իր յօդուածը Կ. Պօլսի լրագիրը, որ այսօր պաշտօնապէս անուանված է իր սեփական անունով, իր ասորի լեզուն պահած չէ, այլ ասորերէն կը խօսի, և բնակչաց հազիւ երրորդ մասը ասորի է, այլ և այլ հասարակութեանց բաժանված իրր բոլորովին զատ ազգ և հայ ազգին թուոյն հետ համեմատելով, աննշան թիւ մի կը կազմէ։»

Շատ ուրախալի է որ վերջին ժամանակները Կ. Պօլսի հայոց մամուլը սկսել է խղճմտութեամբ և լուրջ կերպով ուսումնասիրել թիւրքաց Հայաստանը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յուլիսի 12-ին

Բագուի «Մարդասիրական ընկերութիւնը», կարծեմ, իր գոյութիւնից սկսած ունեցել է իր մատենադարանը։ Բայց թէ այդ մատենադարանը տուել է արդեօք այն օգուտը, որը սպասելիս է եղել նորանից տեղիս հայ-հասարակութիւնը,—դա ուրիշ խնդիր է։

Թէև այդ, բայց այնու ամենայնիւ, միտք բերին վերջապէս ընկերութեան անդամները դրադարանական մասին վերաբերող իրանց պարտքը,—հանգիստ վերջապէս, որ պահարանում դարսած Աստուածաշունչները բաւական չէին հասարակութեան մէջ ընթերցանութիւնը զարգացնելու համար և դիմեցին այլ միջոցի, բաց արին «Մատենադարան ընթերցանութեան համար, գնեցին և բերել տուին նոր գրքեր, հաստատեցին կանոններ, վարձեցին պրապահ,—մէկ խօսքով հանգուցեալ գրադարանին յարութիւն տուին, նոր կեանք, նոր հոգի չնորհեցին։

Թէև Բագուի այդ նորաբաց մատենադարանը չունի դեռ ևս այնքան լաւ գրքեր, թէև գանվող գրքերն էլ ըստ ամենայնի լիակատար չեն, այնպէս որ խնդրողին պատահում է տանելով մի գրքի երկրորդ հատորը, որովհետև առաջինը չը կայ, կամ առաջինը—առանց չարունակութեան, և երբեմն էլ սկիզբը առանց քանի մի թերթերի,—բայց, այնու ամենայնիւ, չը պէտք է յուսահատվել, պէտք է յուսալ՝ որ կը գտգանայ, կը հարստանայ և կը բարեկարգվի։

Մատենադարանիս գրադահական պաշտօնը, բաւական ուշիկով վարում է Մելիք-Մուսայեանց ազգանունով մի երիտասարդ, բայց հասկանում է նա արդեօք իր առանձնած պարտաւորութիւնը, գուակցաբար պէտք է բացատրեան պատասխանեմ։ Այդ ևս չեմ իմանում այն խայտառակ անցքի մասին, որ նորերումս պատահել է այդ գրադարանում, այն է մի կամ գրադահի և մի այցելուի մէջ։

Մի վաճառական

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

31 մայիսի

Մայիսի 25 տեղիս «Մարդասիրական ընկերութիւնը» պիտի կատարէր իր գործունէութեան 16-րդ տարեդարձի յոբելեան։ Այդ առիթով նա հրաւիրեց քաղաքիս մէջ գտնվող ընկերութեան անդամներին և անդամահիներին ներկայ լինել Ս. Լուսաւորիչ եկեղեցում, ուր պիտի կատարվի այդ օրվայ պատշաճաւոր կայսրի համար գոհացողական մաղթանք, իսկ ընկերութեան հանգուցեալ անդամների համար հոգեհանգիստ, և այդպէս էլ եղաւ։

Այդ օրուայ տօնին մի առանձին նշանակութիւն տալու համար երկաւոր դպրոցների աւագուհի պ. Ա. Դրիգորեանցը մի ուսանողական հանդէս կատարեց ընկերութեան դահլիճում, երբ պատարագը վերջացաւ, բազմութիւնը հաւաքվեց ընկ. դահլիճը, որը բաւական գեղեցիկ կերպով զարդարած էր, որանդ պ. Ա. Դրիգորեանցը կարդաց ընկերութեան 16-րդ տարեդարձի առիթով մի գեղեցիկ ճառ, որի մի մասը վերաբերում էր կայսրին, որ այդպիսի մի առանձնաշնորհութիւն արել է Բագուին, նորա մէջ «Մարդասիրական ընկերութիւն» հաստատելով։ Երկրորդ մասի մէջ պ. Ճառախօսը յայտնում էր՝ թէ որքան մեծ նշանակութիւն ունի մի՛ որ և է ընկերութիւն հասարակական կեանքի մէջ, և ապա մանրամասնեց նա իր խօսքը «Մարդասիրական ընկերութեան» գործելով, նորա գործունէութիւնից մի քանի տեղեկութիւններ հաղորդեց հանդիսականներին։ Երրորդ մասի մէջ պ. Դրիգորեանցը ասաց, «Որովհետև «Մարդասիրական ընկերութեան» ընթացքը հանգուցեալ Լուսաւորչանցն է եղել, այդ պատճառով ցանկալի էր, որ ընկերութեան խորհրդական ժողովը, նորա անունը միշտ անմոռաց պահելու համար, մի բիւստ գնէր նորա վրա, ի հարկէ բաժանորդագրութեամբ։ Իսկ եթէ այս անգամ նա անուշադիր թողնվեցաւ այդ գիտաւորութիւնը, ասաց պ. Դրիգորեանցը, այնուհետև նա այս փոքրիկ ժողովրդով (որից տալով ուսանողներին) կրկնակի սիրտը դնել այդ գեղեցիկ գործին, յուսալով բազուցիների բարերարութեան և առատաձեռնութեան վրա։ Ասորը վերջացրեց նորանով, որ նոյն օրը հայոց Կաթուղիկոսի 13-րդ օծման տարեդարձն է և մենք, նորա հոգևոր որդիները, պիտի չնորհաւորենք նորան երկար կեանք։ Յետոյ մի օրիորդ կարդաց մի երախտագիտական ճառ դէպի «Մարդասիրական ընկերութիւնը», որից յետոյ ասվեցան առանձնաւորներ և պատմեցին ուսանողներից, որ գեղեցիկ տպաւորութիւն գործեցին հանդիսականների վրա։

Մ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Յուլիսի Ալէքսանդրապօլի վիճակային հոգևոր դպրոցի մէջ ուսանող աշակերտների պահասնց, որը հաւաքեցին յօդուտ վանայ ռազմալ հայ ժողովրդեան կատաղի դրամական նուէրներ։

Ա[illegible] սին 1 ր., Խոսրով Մխրզայեանց 1 ր., Թագէոս Մուսայեանց 1 ր., Յարութիւն Խաչատրեանց 1 ր., Յարութիւն Կարապետեան 1 ր., Ազատ Պահլաւունի 20 կ., Կարապետ Յակոբեանց 1 ր., Կարապետ Խաչիրեանց 1 ր., Գէորգ Անմղիկեանց 1 ր., Վանան Աճեմեանի 50 կ., Վասակ Յովհաննէս 50 կ., Համազասպ Աւետիսեանց 40 կ., Վահան Անդէոքեանց 20 կ., Յովհաննէս Համբարձումեանց 5 կ., Ենովք Հայրապետեան 10 կ., Մկրտիչ Փոսչեանց 5 կ., Յակոբ Մուսայեանց 15 կ., Արտաչէս Տայեանց 1 ր., Ալէքսանդր Պետրոսեանց 15 կ., Կարապետ Աղաթարեանց 15 կ., Համազասպ Արիշեանեանց 40 կ., Վաղարշակ Պետրոսեանց 30 կ., Երուանդ Լալայեանց 50 կ., Տիգրան Անմղիկեանց 1 ր., Համբակ Վանեցեանց 1 ր., Համազասպ Վանեցեանց 1 ր., Մկրտիչ Տէր Յովհաննէսեանց 20 կ., Կարապետ Տէր Յովհաննէսեանց 20 կ., Ալէքսանդր Խաչատրեանց 1 ր., Մկրտիչ Զաքչեանց 15 կ., Գարեգին Անմղիկեանց 20 կ., Արամ Շահբրեանց 1 ր., Մինաս Տէր Բարսեղեան 50 կ., Յովհաննէս Վազգենեանց 10 կ., Համբարձում Վարդենեանց 40 կ., Մկրտիչ Տէր-Մկրտչեանց 40 կ., Հայկ Զալալեանց 10 կ., Արամ [illegible]եանց 50 կ.,

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՊԱՏԱՐԱԳԱՐԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատարագ կը մատուցանուի Ս. Աստուածածին մայր եկեղեցւոյ մէջ Կիրակի, 1 յունուար, առաւօտեան ժամը 9-ին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Ս. Ծնունդի տօնին առթիւ Ս. Աստուածածին մայր եկեղեցւոյ մէջ կը կատարուի հանդիսաւոր պատարագ, որուն ներկայ պիտի գտնուին Ս. Ազգային Ժողովի անդամները։

կանոներու գործեր են որք մեզ չեն վերաբերիր բնաւ. բայց ինչպէս միշտ կործիք յայտնած եմք, Հռոմ կամ Վատիկան կառաւարել կնաթաթիւն մ՚է, որոյ սկզբունքն է հաստիչն աշխարհի վրայ տիրապետել՝ առանց ապրուեթիւն ձանձրանալու: Իսկ Հայաստանեայց եկեղեցւոյ սկզբունքն է ազատութիւն, և յայտնի է որ այս երկու եկեղեցեաց միջ եղած տարբերութիւնն ազատութեան և բռնատիրութեան պատնարգին է: Արդեօք մեր եկեղեցականք բաւական աչք բացած են այս ճշմարտութիւնը գիտնալով անոր համեմատ շարժելու, և ազգային եկեղեցին ձիզմիթեան խարամանկ հարուածներէն պահպանելու համար: Ազգային եկեղեցի բառով հասկանալու է կրօնական ազատութիւն, ժողովրդական իրաւունք, ներկայ ժամանակիս քաղաքակրթութեան սկզբունքներն, որոց ամենքը կարելի է պատուաստել ազատօրէն Հայաստանեայց եկեղեցւոյ վրայ, մինչդեռ Վատիկան զանոնք իրր մոլորութիւն՚ կը հրաշակէ:

Դժբաղդաբար գաւառաց միջ ոգեւորներ կրնան գտնուիլ, որք իրենց իրաւունքն նաեւ նման ոտք ատրի մը փոխարէն կը վաճառեն, թէպէտ և խնդակցութեան արժանի է որ այսպիսեաց թիւն առաջվրնէ խիստ նուազ է այժմ: Այսօր Հայաստանեայց եկեղեցւոյ ինքնագլխութիւնն ու անկախութիւնը գնահատող Հայերն ահագին մեծամասնութիւն կը կազմեն, որք գոնէ իրենց նախահարց այս թանկագին աւանդն անվթար պահել կ՚ուզենն: Արդեօք եկեղեցական դասն ալ պէտք եղած խնամքը կը տանի՞ այս մասին: Չը կայ կենդ մը որ Հռոմի դէմ այնչափ զօրաւոր լինի և այնչափ սոսկալի պատճառէ անոր, քան արդի սկզբանց ծաւալումը, լուսաւորութիւնն ու ազատամտութիւնը: արդեօք մեր գաւառական առաջնորդներն, որոց վրայ անցեալ օր ուշագրութիւն կը հրաւիրէինք, և հոգ պիտի տա՞նեն այս սկզբանց համեմատ ժողովրդական դաստիարակութիւնը ծաւալելու: Հայոց ընկերներուն վրայ ինկած են մեկ կողմէն բողոքական ձիզմիթներ, մեւս կողմէն պապական ձիզմիթներ, որք գանոնք խլելու համար ամեն ձիգ կը թափեն. բայց արդեօք Հայ ժողովուրդը պիտի կրնա՞յ իր անհատականութիւնը պահպանել այս կրկնակի ձեռնարկներուն դէմ.—այո՛ խնդիրն ազգային մեջ կրնայ լուծուիլ: Ամէնէրն դիտել կուտայ թէ քանի մը դարէ՛ի վեր Հռոմ Արեւելից միջ կորպինալ կարգած չէր, Տրապիզոնի Յոյն եպիսկոպոս մը կաթոլիկութիւն ընդունելով՝ Ֆէրարայի ժողովին միջ Յունաց կաթոլիկ եկեղեցւոյ հետ միութեան ջերմ պաշտպան կանգնած էր, և՛ի վարձատրութիւն իր այս ծառայութեան, Պապը դինք կարդինալ անուանած էր: Այսու ամենայնիւ Յոյնք ոչ միայն իրենց եկեղեցական անկախութիւնը պահեցին, այլ և իրենց աշխատութեամբ մեծամեծ յառաջդիմութիւններ ըրին. իսկ այն Յոյն կարդինալն առաջին և վերջին եղաւ իր տեսնին միջ. իր գաղափարը չը կրցաւ առաջ երթալ և այսու հետև անհնարին է որ առաջ երթայ: Գեր. Հասուն՝ Հռոմի սեռոտին մատուցած ծառայութեանց համար, որով կաթոլիկները լատինացնելու և Հայոց միջ պապականութիւնը ծաւալելու ձգնած է, վարձատրութիւն կընդունի կարդինալութեան աստիճանաւ: Բայց Յոյն կարդինալէն աւելի պիտի յաջողի՞ թէ ոչ: Թէպէտ և այս խնդրոյն ապագայն պիտի պատասխանէ, բայց այժմէն կրնամք գուշակել թէ քանի որ լուսաւորութիւնն ու ազատամտութիւնը ծաւալի՝ Հայաստանեայց եկեղեցւոյ ապագային ապահովեալ է: Ու այժմ այս դէպքը կը հասկնալ Հակահասունեանց դասին վրայ մեր յայտնած կարծիքն, այն է թէ Հռոմայ աչքն կորանալ պատ մ՚է նա, և քանի որ Հակահասունեանք չեն ուզեր Հայաստանեայց եկեղեցւոյ դիրքը վերադառնալ, Հռոմի մեղայ գալէն պատ ուրիշ միջոց չունին, և անհնար է իրենց որ Կաթոլիկ ձեռնով հանդերձ ազգային եկեղեցի կազմեն. այլ բան ամենայնի Հռոմի հետագնելու պարտաւոր են:

(Մնաց)

ԲՈՒՄԻՆԻԱ

«Polit. Corresp.» լրագրին գրում են Բուխարեստից հետեւեալը:

Բումինական արտաքին գործերի մինիստր պ. Բռէթիանու ուղեւորվեցաւ Արնայա իշխան Կարլի մօտ: Լաւ է ասուածված, որ Բռէթիանու մտադիր է իշխանին յանձնել իր հրաժարականը: Աւելի հաւանական է, որ Բումինական արտաքին գործերի մինիստրի ճանապարհորդութեան նպատակն է դիւկուլյումին անել արդէն վերջացած Աթաթարբիայի հարցի մասին և յայտնել մինիստրութեան վերջին խորհուրդի վճիռը՝ Բօլգարիայի հետ ունեցած անուանականութիւնները խաղաղ ճանապարհով վերջացնելու մասին: Բռէթիանուի բումինական ներկայացուցիչներին ուղղած շրջաբերականը յայտնում է, որ բումինական կառավարութիւնը ի նկատի կառնի մեծ պետութիւնների վճիռը Աթաթարիայի վերաբերութեամբ: Բումինական հիւպատոսները հաղորդում են, որ Վարնայի և Ռուչուքի մէջ յարաբերութիւնները չափազանցապատ են: Վարնա պատերազմական շատ նիւթեր են բերվում և այնտեղ գալիս են բազմաթիւ ռուս օֆիցիկներ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետեւեալը յուլիսի 3-ից:

Ցունական կառավարութիւնը այժմ պրոպագանդա երկու հարցերով է դրագրված: Դրանցից գլխաւորը այն ընդունելութիւնն է, որ կանի Բ. Դաւթը Բերլինի կոնգրեսինցիայի վճռին: Եթէ ինչպէս այդ վճիռը, նոյնպէս և Զերնոգորիային վերաբերեալը կընդունվի առանց բացարձակ պաշտօնական ընդդիմադրութեան, Ցունաստանը պէտք է պատրաստվի հիւպատոսական պատերազմի համար ալբանցիների և Թիւրք գործերի փախստականների հետ և մի և նոյն ժամանակ պէտք է համաձայնութիւն կայայնի Զերնոգորիայի և Բօլգարիայի հետ: Եթէ Բ. Դաւթը կը համարձակվի պաշտօնապէս մերժել Եւբօպայի միաձայն վճիռը, այս դէպքում հավիտ թէ Եւբօպան Ցունաստանի պատճառով իր արիւնը թափի: Միւս հարցը, որ նոյնպէս իր վրա է գրաւնում յունական կառավարութեան ուշադրութիւնը, Թիւրքայ պետական պարտքն է, որի մի մասը Ցունաստանը պէտք է վճարէ: Այդ պարտքը հօթ միլիարդից աւելի է: Ամենքը իրաւացի են համարում, որ այդ պարտքերի մի մասը Ցունաստանը վճարէ, բայց պետ ևս որոշված չէ, արդեօք այդ պարտքի մասը համեմատ կը լինի՞ այն երկիրների եկամուտին, որոնք կոնգրեսինցիայի վճռով համեմատ միանում են Ցունաստանի հետ: Երբ իր ժամանակին կամենում էին այս միջոցը Բօլգարիայի վերաբերութեամբ գործադրել, Ռուսաստանի ներկայացուցիչը չը համաձայնեց: Ակնհայտ է թէ այնպէս այդ հարցը կամ առանձին ժամանակով կը վճռի, կամ երկու հետաքրքրված պետութիւնների բանակցութիւնը և այն դէպքում, երբ կառավարլապէս կը որոշվի Թիւրքիայի ֆինանսական գրութիւնը և այն հարցը թէ Բ. Դաւթը իր բազմաթիւ պարտքերից ո՞րն է մտադիր հատուցանել:

ՉԵՐՆՈԳՈՐԻԱ

Ցնեւնիէից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետեւեալը:

Կարելի է հաստատել ասել, որ Զերնոգորիայի միջ, վերջին ծանր պատերազմի ժամանակ Փիւրբիայի հետ, գործերի դրութիւնը այնքան զժուար չէր, որքան այժմ, երբ այդ իշխանութիւնը բոլոր պետութիւններին հետ հաշտ է տարում: Ալբանցիները թէպէտ փոխոխամիտ են, բայց նրանց ունեցած թշնամութիւնը դէպի չերնոգորցիները դարեւոր է և նա տարածված է ալբանական բոլոր ցեղերի միջ առանց բացառութեան: Այս հանգամանքը ինհատի ունենալով, կարելի է զգալիօրէն կազմել Զերնոգորիայի գործերի դրութեան մասին: Երբ Բերլինի կոնգրեսը վճռեց տալ Զերնոգորիային Դուլցինի և Գուվայի նահանգները, շատերը իրաւացի կարծում էին, որ այդ վճիռը դժուար կը լինի իրագործել: Բ. Դաւթը չը կամենար այդ նահանգները գիջել և նրանց պաշտպանութիւնը ալբանցիներին յանձնեց: Գետոյ իշխան Նիկոլայ մի հեռագրով մերժեց այդ մեղագրանքը, որ, հետագրի համեմատ, հաստատում է Թիւրքայ կառավարութեան համաձայնութիւնը ալբանցիների հետ:

Ալբանցիները դիտում են Գուվան իրենց ազգային միութեան կենտրոն, և Գուվայի նահանգը ամենից աւելի ալբանական է: Ալբանցիները ամենայն ջանքով ձգտում են Գուվան Զերնոգորիային չը տալ: Ալբանցիները ուզում են Գուվան Թիւրքիայի հետ միացնել, որ նրանց համար ամենից աւելի ձեռնտու է: Ալբանցիները ամենայն ջանքով ձգտում են Գուվան Զերնոգորիային չը տալ: Ալբանցիները ուզում են Գուվան Թիւրքիայի հետ միացնել, որ նրանց համար ամենից աւելի ձեռնտու է: Ալբանցիները ամենայն ջանքով ձգտում են Գուվան Զերնոգորիային չը տալ: Ալբանցիները ուզում են Գուվան Թիւրքիայի հետ միացնել, որ նրանց համար ամենից աւելի ձեռնտու է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական համայնքների ժողովի մի անդամ հարց առաջարկեց կառավարութեանը Հայաստանի մէջ եղած ոճի մասին: Արտաքին գործերի մինիստրի օգնական Զարլզ Դիլկ պատասխանեց, որ Թագուհու կառավարութիւնը շատ անգամ առաջարկել է Բ. Դրանը Թէքիացնել Հայաստանի ազգաբնակութեանը ընծայելով Պ. Գոշենին հրամայած է առաջարկել Թիւրքայ կառավարութեանը, որ նա չուշացնի այդ մէջացի իրագործելը:

—Պ. Գոլսից «Polit. Corresp.» լրագրին գրում են յուլիսի 19-ից, որ անգլիական և ֆրանսիական դեսպանները՝ Գոշեն և Տիաոս վերջին ժամանակներ խորհրդակցում են միմեանց հետ Բ. Դրան կազմից գերմանական ատրճանաւորներին հրաւիրելու մասին. Ասում են, որ երկու դեսպաններն էլ համաձայն են առաջարկութիւն անել Թիւրքայ կառավարութեանը անյապաղ հիմնել միջազգային ֆինանսական մասնաժողով:

—Աթէնքից «Հավասի» ընկերութեանը հաղորդում են, որ յունական պետական միջոցը հրամայել է թեթև զօրաբաժիններ հրամանատարներին կամաւորներ ընդունել Նոյեմբեր և Ապրիլի ցանկացող մահմեդական բնակիչներին: Մահմեդական կամաւորները այնպիսի երդում կը տան, որ իր մէջ նրանց կրօնի դէմ ոչինչ չի բովանդակի: Աթէնքի քաղաքային վարչութիւնը ժողով կազմեց և վճռեց յայտնել Եւբօպային Աթէնքի յատկանշական չնորհակալութիւնը Բերլինի կոնգրեսինցիայի վճռի համար: Այդ վճռի օրինակները արդէն յանձնված են պետութիւնների դեսպաններին:

—Աթէնքից «Polit. Corresp.» լրագրին գրում են, որ ազգաբնակութեան պատերազմական տրամադրութիւնը անցաւ և տեղի տուեց գործերի աւելի խելացի գնահատութեանը: Աթէնքում վճռված է չը սկսել պատերազմական գործողութիւններ մինչեն պետութիւնները հրաւիրեն յունական կառավարութեանը դրաւել Յունաստանին վիճակված երկիրները:

—Կ. Պոլսից գրում են, որ յուլիսի 14-ին, Ֆրանսական ազգային տօնին, այնտեղի յունական մայր եկեղեցում աղօթեցին Ֆրանսիայի համար: Եպիսկոպոսը մի քարոզով դովեց Ֆրանսիան և այնուհետև ներկայ եղող մօտ 2000 յոյներ երաժշտութեամբ, որ «Մարսելեզ» էր ածում, ուղեւորվեցին Ֆրանսական դեսպան Տիաոյի տան մօտ: Բոյները բարձրաձայն կանչում էին «Կեցցէ Ֆրանսիա, կեցցէ նրա դեսպանը»: Պ. Տիաոս մի ճառով չնորհակալութիւն յայտնեց այդ ցոյցը անող յոյներին:

—«Հավասի» ընկերութեանը հաղորդում են Կ. Պոլսից, որ պ. Տիաոս յուլիսի 19-ին տեսութիւն ունեցաւ սուլթանի հետ և յայտնեց նրան, որ Ֆրանսական Հանրապետութեան նախագահը, դադարեցնելով իր պաշտօնի ժամանակաւոր բնաւորութիւնը, նրան Ֆրանսական դեսպան նշանակեց Կ. Պոլսի մէջ:

—Կ. Պոլսից «Daily News» լրագրին հաղորդում են, որ ռուսաց դեսպան Նելիդով Բ. Դրան ուշադրութիւնը դարձրեց ալբանցիների կռւի վրա չերնոգորցիների հետ և նախազգուշացրեց Թիւրքիային այդպիսի յարձակմունքների կրկնելուց. Թիւրքայ կառավարութիւնը իր վարչութենից ճիշտ տեղեկութիւններ պահանջեց:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

ԿԱՆԴԱՀԱՐ, 21 յուլիսի: Բօերներէ կառաւարները հետեւեալն են. 20 օֆիցեր, 400 եւրոպացի, 800 տեղացի սպանված են կամ անհետացած:

Կ. ՊՕԼԻՍ, 22 յուլիսի: Այսօր Արեւպիւֆաշային հասցրած է պետութիւնների հանձնած գրութիւնը Զերնոգորիայի վերաբերութեամբ: Բ. Դրանը երեք շաբաթ ժամանակամիջոց է արուած Զերնոգորիայի հետ ապրիլի 12-ին կապած դաշնագրութիւնը կատարելու համար: Եթէ Թիւրքիան այդ դաշնագրութիւնը յիշեալ ժամանակամիջոցի մէջ չի կատարի, նա կը հրաւիրվի միանալ պետութիւնների հետ Դուլցինեան Զերնոգորիային յանձնելու համար:

ԼՕՆԴՕՆ, 22 յուլիսի: Վիեննայից իրիւլար հաղորդում են, որ աշխարհական ցեղերը միանում են Եամանի և Կանդահարի մէջ: Էյուբ-խան առաջ քաշվեց մինչև Միրկարէյ և իր զօրքերի մի մասը ուղարկեց Եամանի վրա յարձակվելու համար: Նրա հետեւակը գնում է Կոկրանի վրա Կանդահարի համար ուղարկված պաշարները յափշտակելու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի: Երեկ հատուկ այտուզ եւրոպական դեսպան իշխան Լիվենգուլբա իր ամուսնի հետ:

խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐԻԿԱԶԸ ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՑԻ ԹՈՒՅԼՏՈՒԹԵԱՆ *Հիման վրա իր ներկայացեալ Նորին Բարձրութեան Կովկասեան Փոխարքայի թոյլտուութեան Նորին Ս. Գերազանցութեան Կովկասեան զօրաբանակի զինուորական Ս. Խորհրդի նախագահ, զօրավար ադիւտանտ Լորիս-Մելիքովի, նոյնպէս Նորին Ս. Գերազանցութեան Թիֆլիսի քաղաքային Հիւանդանոցի ազգատանոցի և երախտաւորների (Ֆոնդերի) ուսումնարանի համար, հետևեալը:* Ա. Հիւանդանոցի համար 300 տղամարդկանց շապիկներ քաթանից, 103 կտաւից, 300 փոխաններ քաթանից և 103 կտաւից, 100 շապիկ կանանց քաթանից, 125 կտաւից, 76 կօշիկ ֆլանելեան կտաւից, 400 երեսսրիչ կտաւից, գուլպաներ կանանց 500, գոգնոցներ բամբնդուկից 103, իւպկաններ 68, յատակ սրբելու բամբնդուկ 1,733 արշին, գլխարկներ քաթանից 18 վիրշկանոց լայնութեան 150, բարձի երեսներ ֆլանելեան կտաւից 400, կօվտաններ արուեստի ունեցող 7 կանանց համար սպիտակ պիկեից 14, սպիտակ պիկեից իւպկաններ 10, բայկի 15 լկներներ արուեստի ունեցող 15 կանանց համար, պիկեի լկներներ 15, սպիտակ պիկեի խալաթաներ 15, բամբակի չուլքիներ 30, աուշիլներ 400, 2 խոհարարներին հագուստ բամբնդուկից 6, նրանց գլխարկներ ֆլանելեան կտաւից 9, նահատակ վիրակ և նիլքիմի երեսներ պարտաւորին 325 գոյգ, փայտի աթոռներ 60, ժեշտ չը ներկուած վիրքներ 30: Բ) Աղքատանոցի համար. Տղամարդկանց շապիկներ քաթանից մի արշին լայնութեան 30, փոխաններ անդլիական պարտաւորից 40, մահուդի գդակներ 30, կանանց շապիկներ քաթանից մի արշին լայնութեան 50, շորթ քաթանից 20, բրդէ գուլպաներ 100, բամբակէ 100, կօշիկներ 100,, գոգնոցներ բամբնդուկից 24, սպիտակ սփռոցներ քաթանից 2 արշին լայնութեան 6, սալֆէտներ մի արշին լայնութեան 100, ուզգի մահուդից վերարկուներ 20, ժեստի վիրքներ չը ներկուած 4, կաթսաներ 1 պուդ 10 ֆունտ քաշով գետային ձուկ թեան, 10 պահարաններ, 40 սեղաններից պահարաններ շինել և գ.) երախտաւորի համար շապիկներ կտաւից 30, փոխաններ կտաւից 110, տղի փամփոցներ կտաւից 90, թաշկինակներ 80, մէլուոնից բլուզաններ 54, վարտիքներ մէլուոնից 67, պալտոներ մէլուոնից 13, բլուզաններ և պալտոներ անգլիական պարտաւորից 65, գլխարկներ 38, գուլպաներ 90, բալշի երեսներ 270, ամբողջ կտրատը 6,375 ր., 81½ կ.:

Ձաւրդը կը կատարվի բերանացի և փակված ծրարներով, օրէնքների հիման վրա, իւրաքանչիւր առարկան առանձին, ձաւրդը վերջացնելուց յետոյ յայտութիւններ չեն ընդունվում: Բերանացի և փակված ծրարներով ձաւրդին մասնակցող անձանց յայտարարութիւնները կընդունվեն միայն ձաւրդի և կրկնաձաւրդի օրը 12 ժամից ոչ ուշ Պրիկազի ներկայութեամբ. փոստով ուղարկված յայտարարութիւններ կընդունվեն և ձաւրդի ժամանակ: Յայտարարութեան հետ պէտք է լինի դիւղական վկայական և յուրաքանչիւր կոպեկի 1/3 դումարի: Սկզբնական փոդերը ստանալու համար հարկաւոր է դրան դնեցած հիմնարկութիւնների ստամպիներով:

Ձաւրդ կատարելու պայմանները կարելի է տեսնել ամենայն օր Պրիկազի կանցելեարիայում առաւօտեան 10—2 ժամը:

3—3

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

Հրացաններ, բեմօլկիներ, դանակներ, դրիչներ, անուշահոտութիւններ, ոսկի, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԴԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

20—20

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄՍԱՑԱԾ ՎԵՐՋԸ ԱՆԴԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ մեծ զեղչ: Դուլպաներ (տղամարդկանց և կանանց), թաշկինակներ, պարտէզներ, պատկերներ, հոտաւէտ ջրեր, հրացաններ, բեմօլկիներ, կոպէկներ, սոցոյներ, դանակներ, դրչաներ, ցիտրատ-մագնեզիա ծարաւից և այլն. այժմ ծախում են 25%—50% էժան քան թէ ուրիշ տեղ:

8—10

Համեմատեցէք անգլիական խանութի թէյն գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուլկանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

39—100

Երևանայ Ագ. Հոգ. Դպրանոցին հարկաւոր է ուսս լեզուի համար մի ուսուցիչ Սեպտեմբերից. շաբաթական 26 դասին կը տանայ 1000 բուլ տարեկան ռոճիկ: Յանկացողները պէտք է դիմէ մի արբանեակ մէջ նախկին դպրոցում ատաթած լինին և ծանօթ լինին հայոց լեզուին ևս:

Տեսուչ Երևանայ թեմական դպրանոցի Ս. Թէք-Նազարեանց:

2—5

Ծախվում են ԳՐԱՍԵԼԱՆ, ՀԱՅԻ ՍԵԼԱՆ և ԱՓՈՒՆԵՐ: Երևանի ափեսիայի փողոց № 46 Թիֆլիսում:

2—5

Ս. Էջմիածնի Գիւղական Ոստիկանութիւնից Ս. Էջմիածնի Գիւղական Ոստիկանութիւնից

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Օրալև միչ ներքին հ., Բօտկանց կանանց և երեխաների հ., Քուչարևանց խնդրագիական և աչքերի հ., Շտեմրօնսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խնդրագիական հ., Վ. զօրօվ վիներական և բոգային հ., Բելյե աչքի հ., Բախտուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրաևօգլև ատրօվ, Լխտցով և Վ. Միչ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լխտցով և Բուդօվսկի ներքին հ., Շտեյմրօնսկի վիներական և կաշու հ., Ասատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բոգային հ., Բօտկին և Գավրօնսկի կանանց և երեխաների հ., Լխտցով և Վ. Երմիշով ներքին հ., Քուչարևանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևիչ խնդրագիական հ., Կրաևօգլևատրօվ և Լխտցով ներքին հ., Բախտուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմրօնսկի և Ասատուրօվ վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և ներքին հ.:

Շաբաթ. Լխտցով և Վ. Երմիշով ներքին հ., Բարայեան ջղային և հոգեկան հ., Եանկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անփարձ ապրատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարայեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սկրգիևփայա փողոցի վրա, Բարանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օրբելեան ապրատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտօր Լխտցով:

Ս. Էջմիածնի Գիւղական Ոստիկանութիւնից

ՄԱՆԿԱԿԱՆ ԳԱՐՏԻՉ

ԵՒ

ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսէ քննութիւնները և նոր կինները ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԿԱՅ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՐ ԿԸՆԴՈՒՆՎԻ ԳԻՇԵՐՕՐԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕՐԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Մխիթարեանց

Յուլիսի 1-ից վարշավսկացի գեհերնիալցին կից կը բացվին սենեկապներ, որտեղ կարելի կը լինի տանալ կաթնի, շոկոլադ, թէյ և պատրաստված հանգստեան զանազան բաներ: 28—40

Ս. Էջմիածնի Գիւղական Ոստիկանութիւնից

ԹԻՖԼԻՍԻ ՓՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԱՃԱՌՈՒՆ, հայոց ծխական և մասնաւոր ուսումնարանների 8 ՏԱՐԻ գասախօսութիւն ունեցած մի ԵՊԻՏԱՒՐԻ ներկայ սեպտեմբերի 1-ից կանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ առանց բացառութեան ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, Նոյնպէս և դուրսանների: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՃԻՄԱՆՋԻԱՆՑ ԳՐԱՎԱՃԱՌՈՒԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

4—22

ՄԻՆԱՍ ԳԻԼՋԱՏԵԱՆ, որ կանուսյ ունի ՓԱՐԻՉ քաղաքում, բնդունում է ամէն տեսակ ԱՒԵՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ և օձի ձևով կատարելու անպարագ. ամենայն ճշտութեամբ, և գիտէ ս. ս. վաճառականներին, առաջարկելով իր ծառայութիւնը:

3—5

Ամենայն տեսակից գործ ևկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրախաւսանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ ԸՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵՑՑԻՑ:

Ա. ՏԱՐԻ նախապատրաստելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին գինքան կը լինի: Ամեն մի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

13—20

Աղէքսանդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ուսուց լեզուի մի ուսուցիչ, որ տեղատած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձութ { Արտիս Մխրտչեանց.
Ստեփան Խանհամկեանց.

ԱՒԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱԼՍՈՒՄՕՎ ԵՒ ԸՆԿ. *յայտնում է այդ տեղերի տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի բնդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Վեժանկլի տան մէրին յարկը Դանօվսկայա փողոցի և Երևանսկայա հրապարակի անկիւնի վրայ: Տուրքերի տալու և մուտքերի առնելու համար գրասենեակը հաստատ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում ժամ ունի տարածից այն 20 համարներին, որոնք ցոյց են տրված վիլայականի մէջ չորս ամիսներին: Ցանձնարարութեամբ գնում է և ծախում է մանաւանդ անձանց ամեն տեսակ անշարժ կալքեր, կօմիսիայով ծախում է ապրանքներ և նրեխներ: Ծախում է ապված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և գաստարկ սեղեր քրէհոյ տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է:*

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%, 2 տարի և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կարգի պայ անեցողների մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%: Պարտամարհակով յայտնի անձի ապահովութեամբ փոդ տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթի ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ դանելացողները կարող են առանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

8—10 (2)

Дозволено Цензурою 24 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 130 Յուլիսի 26 (Օգոստոսի 7) 1880 Յուլիսի 26 (Օգոստոսի 7) № 130

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի. Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ, Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւնները. — Ներքին տեսութիւն. Նամակ Փօթիից. Նամակ Նուխուց. Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր. — Արտաքին տեսութիւն. Անգլիական համաձայնութեան նիւթը. Պետութիւնների ծովային ցոյցը. Բուլգարիա. Նամակ Թիւրքիայից. — «Մշակի» հեռագիրներ. — Յայտարարութիւններ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թիւրքաց հայերի մասին քաղում ենք զանազան լրագիրներից հետևեալ տեղեկութիւնները:

Փարիզում հրատարակվող «Débats» լրագիրը նորերումս մի մեծ յօդուած է տպել Թիւրքաց հայերի վերաբերութեամբ, «La question Arménienne» վերնագրով: Կաշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին այդ նշանաւոր յօդուածի հետ: Լրագիրը ասում է որ հայերը ցոյց են տուել իրանց ընդունակութիւնը կառավարչական և զինուորական արհեստի մէջ և բերում է մի շարք յայտնի ազգանունների, ինչպէս կոմս Լօրիս-Մէլիքօվ, Տէր-Ղուկասով, Նուբար-փաշայ և շատ ուրիշներ: Յօդուածը վերջանում է դրանով, որ յայտնում է թէ Թիւրքաց հայերը երբէք չեն ապստամբի, ինչքան էլ անտանելի լինի նրանց դրութիւնը, բայց բոլորն էլ կը գաղթեն իրանց հայրենիքից և կընկնեն Ռուսաստանի գիրկը, եթէ ինքնավարութիւն չը ստանան:

Կ. Պօլսի մէջ հրատարակվող ֆրանսիական «Semaphore» լրագիրը հաղորդում է Ներսէս պատրիարքի կողմից եւրոպական դեսպաններին ուղղած թղթի բովանդակութիւնը, որի մէջ նա բողոքում է Թիւրքաց արտաքին գործերի մինիստրութեան դէմ, որ ցոյց է տուել իր պաշտօնական գրութեան մէջ, իբր թէ հայերի թիւը Հայաստանում 17% է կազմում ընդհանուր ազգաբնակութենից:

Մի ուրիշ ֆրանսիական լրագիր, որ նոյնպէս Կ. Պօլսի մէջ է հրատարակվում, այն է «Stamboul» լրագիրը հաղորդում է հետևեալ տեղեկութիւնները: Թիւրքաց կայսերական կոմիսիաները կազմելով վերանորոգութիւնների յանձնաժողով Վանի նահանգի մէջ, նշանակեցին այդ յանձնաժողովի 17 անդամների մէջ 9 թիւրք անդամներ, 6 հայ անդամներ, 1 ասորի և մի հրէայ: Յանձնաժողովի հայ անդամները բոլորն էլ անմիջապէս իրանց հրաժարականը տուին, յայտնելով որ վեց մարդ չեն կարող ներկայացնել մի յանձնաժողովի մէջ հայոց ազգաբնակութեան շահերը մի նահանգում, որտեղ հայերը մեծամասնութիւն են կազմում: Նրանք պահանջում են որ հայ անդամները յանձնաժողովի մէջ աւելի բազմաթիւ լինեն, քան թէ թիւրքերը:

Նոյն լրագրում կարդում ենք որ Վանի անգլիական հիւպատոսը հաղորդեց սովատանջներին օգնող Կ. Պօլսի հայոց մասնաժողովին, որ սովը Հայաստանում շարունակվում է և նիւթական օգնութիւն խնդրեց մասնաժողովից, որ անմիջապէս 500 լիրա հասցրեց Վանի քաղաքը:

«Stamboul» լրագիրը զարմանում է թէ Էրզրումի ռուս հիւպատոսը ինչ շարժառիթներից դրդված նորերումս զեկուցում տուեց կենտրոնական մասնաժողովին, որի մէջ յայտնում է թէ սով ամենևին չը կայ Հայաստանում:

Ներսէս պատրիարքը նորերումս թագրիր ներկայացրեց Բ. Դրանը, որի մէջ նկարագրում է Հայաստանի անտանելի դրութիւնը այդ նահանգում թէ սովի և թէ քիւրդերի հարստահարութեան պատճառով:

Անգլիական «Daily News» լրագրին գրում են Էրզրումից որ այդ քաղաքի ֆրանսիական նոր հիւպատոս պ. Լակոստ ոգևորված կերպով ընդունեցաւ Էրզրումի հայ ազգաբնակութեան կողմից: Պ. Լակոստ գլխաւորապէս լի մի ճառ ասեց իրան ընդունող հայերին, և յայտնեց հետևեալ միտքը: «Շնորհակալութիւն յայտնելով ձեր ինձ արած սիրալիր ընդունելութեան համար, ես հասկանում եմ որ հայերը այն պատճառով ինձ ոգևորված ընդունում են, որ մինչև այժմ Հայաստան ուղարկվող հիւպատոսները, մանաւանդ Բիկօնսֆիլդի մինիստրութեան ձեռքով ուղարկված ներկայացուցիչները, թշնամաբար էին վերաբերվում ձեր ազգային ձգտումներին, պաշտպանում էին քիւրդերին և մինչև անգամ Հայաստանի անունը Քիւրդիստանի փոխեցին: Հաստատ է որ Ֆրանսիան կամենում է տարածել իր ազդեցութիւնը Փոքր-Ասիայում, բայց նոր ֆրանսիական կառավարութիւնը կը պաշտպանի քրիստոնեայ փոքր ազգութիւնները, առանց հարցնելու արդեօք նրանք կաթօլիկ դաւանութեան են պատկանում, թէ ոչ»:

Կ. Պօլսի թիւրք լրագիրները շարունակում են գրգռել ժողովրդի մէջ մահմեդական ֆանատիկոսութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՓՕԹԻԻՑ

Յունիսի 27

Հասարակական գործով ապրիլ ամսին Փօթի հանդիպելով, թոյլ տուէք ինձ յայտնել ձեզ իմ առաջին տպաւորութիւնը այդ քաղաքի մասին.

Ռիօնի ձախ ափում տարածված այդ փոքրիկ քաղաքը ունի շատ ընդարձակ և լայն փողոցներ բաւականին յարմարութեամբ շինված տներով, դուքաններով, որոց ամենամեծ մասը փայտաշէն է.—Ցորենառը այս քաղաքում բաւական ընդարձակ է.—Ռուսաստանի ալիւրի մանաւանդ մեծ առևտուր է լինում. Անդադար եկած ալիւրը մեծամեծ քանակութեամբ, անդադար սպառվում է, փոխադրվելով Կովկասեան և Անդրկովկասեան զանազան քաղաքները. Օդեսայի, Ռոստովի ալիւր վաճառող յայտնի վաճառականները այստեղ իրանց սեփական տներ և գործակատարներ ունեն. Ցորենը և մանաւանդ գարին նոյնպէս շատ է վաճառվում.

Բնակիչները ոչ այնքան բազմութեամբ, որքան բազմազգութեամբ շատ աչքի են ընկնում.

Եւրոպացին, ասիացին և աֆրիկեցին (վերջինից 4 հոգի միմիայն տեսայ) իրանց լեզուով, շորերով և կենցաղավարութեամբ առանձնապէս գրաւում են ճանապարհորդին. Բազարային պարտէզում (առհասարակ ժամանակ այդտեղ եղող բերդի արևմտեան պատի մի փոքրիկ մասն է մնում այժմ) բազմաթիւ կանայք՝ ռուս, ֆրանսիացի, հայ, յոյն, վրացի, մինգրել և հրէայ, իրանց խայտաճամուկ ազգային զգեստներով զարդված համարձակ ճեմում են և ականջի ծիծաղ պատող մի զինուորական նուագախմբի զարդարող զուարճանում կարծես. Փօթիի զորանոցի և այդ նուագախմբի առած նուագակների մէջ շատ զանազանութիւն չը պիտի լինի կարծեմ, թէև, ինչպէս ասացին, այդ նուագախումբը քաղաքը իր հաշւով է պահում, զոհելով տարեկան բաւական նշանաւոր գումար. Վատ չէր լինի եթէ փօթեցիք դրանից կոկաջներով բաւականանային և այդ գումարը գործադրէին առաջնակարգական մի քանի բաների, որոց այնքան կարօտ է այդ քաղաքը. Փօթիում կայ ժողովարան, որի համար գլխաւորապէս կարծեմ վարձված է քիչ նշանաւոր նուագախումբը, հինգ հիւրանոց, տասնից աւելի կաֆէներ, որոնք եւրոպական կաֆէների ամենահեռաւոր նմանութիւն ունեն,—բաւականութիւն տալով և ուտելու ճաշակին. Լաւ սպիտակ հացի ֆունտը արժէ 5 կ., իսկ սև հասարակները 4 կ.,—մսի օխան 15 կ. է, բայց 17 կոպէկից երբէք պակաս չեն տայ. Մսավաճառները և հացագործները այստեղ, ասում են, իրանց կանոնազանցութեամբ շատ յայտնի են. Օրինակ բուխար առնելը տակոյով թէև 1 ր. 20 կ., բայց 3 ր. պակաս ձեզ չեն տանում, չը նայելով նոյն իսկ պօլիցիական առաջարկութեանը. Գօվական և փառաւոր կամուրջը, որ Ռիօնի վրայ է ձգված, շատ նեղ է.

Այնքան յարաբերութեան համար յատկացրած մի կամրջի համար դա մի մեծ պակասութիւն է. Վանեցի և մեւցի մշակների շատութիւնը և ճարպկութիւնն ու գործունէութիւնը աչքի առնելու թեան գլխաւոր շարժիչն է.

Մօտ 20 տարուայ մշտական հայեր կան և բաւականաչափ ժամանակաւորապէս բնակվողներ գրեթէ բոլորն էլ քօմիսիոներներ. Ունեն մի փայտաշէն եկեղեցի և մի Տէր-Դաւիթ անունով քահանայ, որից ամենքն էլ անխտիր սաստիկ դժգոհ են. Փօթի նման տեղում հայութեան պատւոյն համար գէթ լաւ քահանայ պէտք է ունենալ. Ինձ ասացին որ քահանան տարեկան մինչև 1500 ր. արդիւնք կարող է ունենալ. Ռուսական փայտաշէն եկեղեցին համեմատաբար աւելի լաւ է. Փօթիում կայ և քաղաքային ուսումնարան, որը այսօր դոց լինելով չը կարողացայ հանդիպել. Ուսումնարանի դասեթում մի քանի մարմնամարզական գործիքներ կան. Փօթիի թէ մշտական և թէ ժամանակաւոր կերպով կեցող հայք միմեանց հետ սիրով են ապրում. Բացի այն նուէրներից, որ մինչև հիմայ այդ ազնիւ մարդիկը արին յօգուտ Վասպուրականի սովյալներին, վերջին օրերումս կրկին մօտ 300 ր. հաւաքել էին և ուզում էին շուտով ուղարկել «Մշակին».

Այն յարգը և արժէքը ինչ որ հողը Փօթիում ունէր պատերազմից առաջ, այժմ բոլորովին կորած է և 3000 ր. առաջ գնահատվող հողը այժմ 500 ր. կը տան և առնող չը կայ. Բացի Բաթումի գրաւելը, ասացին, կան և մի քանի ուրիշ պատճառներ, հաւանականաբար կլիմայական. Տները և կրպակները համեմատաբար լաւ վարձ են տալիս իրանց տէրերին. Փօթին և իր շրջական հարուստ է բաւականութեամբ, որոց միակ ազդեցութիւնը կարծես լինի որ մարդ կարօտանում է այդ ճահճոտ և տղմոտ անկիւնում փորր ինչ օդ քաշել. Այսօր դեռ. յունիսի 27-ն է և ճաշին անտանելի շոգ տրաւ.

Տեղական հայք լինելով զանազան քաղաքներից և աշխարհներից եկած, բնականապէս ունեն իրանց բարբառը, բայց ես շատ զարմացայ երբ յանկարծ տեսնում եմ քաղաքային պարտէզում եւրոպական շորեր հագած մի կին իր երկու փոքրիկ աղջիկներով ամենամաքուր հայերէն խօսելիս իր որդոց հետ. Այդ կինը և իր մանուկները իրանց ընտիր լեզուով իմ ուշադրութիւնը գրաւեցին մանաւանդ նրանով, որ Փօթիում հայոց ուսումնարան չը կայ. Կինը ինքը, ինչպէս իմացայ, մի այնպիսի քաղաքից է, որտեղի բարբառը մի բարեկական խառնակութիւն է. Ուրեմն այն կինը ինքնուրոյնաբար սովորել և սովորեցրել է իր զաւակներին իր մայրենի լեզուի մաքուր տեսակը.

Մայիսի 1-ին այստեղ, ասում են, գալիս է Քութայիսից, Գօրուց, Թիֆլիսից և Բաթումից մեծ բազմութիւն, որը և քաղաքից 2 վերստաչափ հեռու մի ծառազարդ տեղում (паркъ) ուրախութիւն է անում. Խաղերի մէջ նշանաւորներն են ձիարշաւը և կռուամարտը (մուշտի-կռիւ).

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ԶՈՒՄԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Յայտնի

Փոխիմ։

—Շատ լաւ բան է, ասենք, ասում է մի ընկեր է չուտով։ Մեր ընկերն է ու ես ճանաչում եմ նրան վաղուց։ Բայց ինչո՞ւ նա ինձ չի ասում այդ մասին ինքը։ Ինչո՞ւ նա ինձ չի ասում, որ ես ինձ պահեմ այնպես, ինչպես պահում է ինձ համար ամենամեծ թշնամին։ Ինչո՞ւ նա ինձ չի ասում, որ ես ինձ պահեմ այնպես, ինչպես ես պահում եմ ինձ համար ամենամեծ բարեկամի հանդէպ

Fonds A.R.A.M

Ս. Պոլսոյ, 14 յուլիս 80

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ընդհանուր ժողովոյ մը ատենապետ ընտրուեցաւ Ռիֆաաթ փաշա, որ ներկայ էր նաեւ Սուլթանին։ Ժողովոյ նպատակն էր քննել Ռումելիոյ ֆինանսական վիճակը։ Ռումելիոյ գանձապետ Ռաշիտ պէյ ներկայացուց տարեկան հաշիւները, որոնց համաձայն տարեկան ընդհանուր մուտքը կը հասնի 282 միլիոն 50 հազար 902 ղրուշի, իսկ ծախքերը 372 միլիոն 24 հազար 102 ղրուշ։ Ռումելիոյ պարտքերուն տոկոսները կը հասնին 90 միլիոն ղրուշի։ Ռաշիտ պէյ կը յայտնէ, որ Ռումելիոյ ֆինանսական վիճակը ամենեւին յուսադրիչ չէ։ Ռումելիոյ ֆինանսները կը գտնուին ամենաանկանոն վիճակի մէջ։ Ռաշիտ պէյ կը պնդէ, որ Ռումելիոյ ֆինանսները պէտք է անկախ ըլլան Պոլսոյ ֆինանսներէն։ Ռաշիտ պէյ կը պնդէ, որ Ռումելիոյ ֆինանսները պէտք է անկախ ըլլան Պոլսոյ ֆինանսներէն։

Ռումելիոյ ընդհանուր նահանգապետ Ռաշիտ փաշա կը պնդէ, որ Ռումելիոյ ֆինանսները պէտք է անկախ ըլլան Պոլսոյ ֆինանսներէն։ Ռաշիտ փաշա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԴԵՀԱՇԻՒՆ, ԱՑԳԻՆԵՐԻՆ, ԹՈՂԱԿԱՑՆԵՐԻՆ, նոր հրդհ հաշիւը «ԿՕՄՊՈՊՈԼԻՏԱ», ամէն տեսակ գործածութեան համար չաթ քաշող մեքենաներ և ամէն տեսակ պատկանելիք ջրանցքների համար, ԳԻՐԾԱՐԱՆ ԲԻՒՐ. ԼԱՆԳԵՆՋԻՊԵՆ ԲՈՒԿԱՈՒ–ՄԱԳԴԵՆԲՈՒՐԳԻ մէջ։ Չաթ քաշող մեքենաների Բիւր. Լանգենզիպէն Ֆիլիալով Բուկաու–Մագդեբուրգի մէջ եղած գործարանի Ուսուցանողի միակ ներկայացուցիչ, ԱԼՖԻԵՒ ԼԱՆԳԵՆՋԻՊԵՆ, Ս. Պետերբուրգ, ՄԱԼԱՑԱ–ԻՏԱԼԵԱՆՍԿԱՑԱ № 11 առաջարկում է։ Ունենալով մեր սեփական գործարանի պատրաստած ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՀՐԴԵՀԱՇԻՒՆ խոզակներ ՊԱՀԵՍՏ ամենատոր ձևերի, նոյնպէս և ՋՈՒԲ ՔԱՇՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ գատնազան ձևերի, ՉԵՒՔԵՐՈՎ, ՉԻԱՆԵՐՈՎ և ՇՈՒՒՈՎ գործելու համար, կարող եմ բաւականացնել ամէն տեսակ ԳԻՐԾԱՐԱՆՆԵՐԻ, ԳԻՒՂԱՏՆՏԱՄՆԵՐԻ ՁԱՄՍՏՎՕՆԵՐԻ, գլուխային և քաղաքային ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ։ Եթէ յիշեալ առարկաներից մէկը հարկաւոր լինի, խնդրեմ պատուել ինձ ցանկութիւն յայտնելով։ Նամակ առանցատոց յետոյ կուղարկեմ ՁՐԻԱԲԱՐ նկարներով, ծածկված ՊԱՏՇԱՒՈՐԱՆՔ և ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ կը հաղորդեմ։

1—3

Իր յատկութիւններով մաքիւր մասերի, մանաւանդ ոսկի մասների քրոմից առաջ եկած փառան ոչնչացնող յատկութեան նկատմամբ,

ԳԱԼՄԱՆԻՆ

անհնաւ, ծախսում է երեսպատի բոլոր մեծ քարքանների գեղաքանների և գրոհիանների մատ Ղեկաւոր դէպքերի հնարող Ֆարմացիի մասրատոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՒ գեղատան մէջն է Ցանկում, Վարչական փողոց, № 5։ Գալմանինի մէծ արկղիկը արժէ Վարչական 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.։ Պէտք է ընդգուշանալ խարդախութիւններից։

17—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԱԻԻՒՆ

քաղաքի մի մանաւոր դպրոցի համար պահանջվում է մի հմուտ

ՎԱՐԺԱՊԵՏ ՀԱՅՈՑ ԼԻ ՈՒՍՄԱՑ

լեզուների համար խիստ նպաստաւոր պայմաններով։ Յանկացողները կարող են դիմել ՀԱՒԻՆՈՎԻ բարեկամասան պ. **ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆՑԻ** կանուորը։

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՉՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9–ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ։

Սրկաւշաբթի։ Դամբօնակի կանանց հիւանդ. Երօրալեվից ներքին հ., Թոռնեանց կանանց և երեխաների հ., Բնբաբանց խերուբգիական և աչքերի հ., Եան մ բօրակի վիներական և կաշու հ., Բաբայեան Ջղային և հոգեկան հ.։

Երեքշաբթի։ Մինակեվից խերուբգիական հ., Վ. գօրօվ վիներական և բորաղի հ., Իւյս աչքի հ., Թախտամով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլազով, Լիսենկով և Վեռմիշեվ ներքին հ.։

Չորեքշաբթի։ Լիսենկով և Բաւդմօվակի ներքին հ., Եոսէյ մրօրակի կիներական և կաշու հ., Ամատուածատուրօվ կանանց հիւանդութիւններից։

Հինգշաբթի։ Վ. գօրօվ վիներական և բորաղի հ., Թոռնեանց կանանց և երեխաների հ., Լիսենկով և Վերմիշեվ ներքին հ., Բնբաբանց սիւֆիլիսի և սեռական օրգաններից հ.։

Ուրբաթ։ Դամբօնակի կանանց հ., Մինակեվից խերուբգիական հ., Կրասնօգլազով և Լիսենկով ներքին հ., Բախտամով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Եան մ բօրակի վիներական և կաշու հ., Բաբայեվ Ջղային և ներքին հ.։

Շաբաթ Լիսենկով և Վերմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Եան կօվակի վիներական և կաշու հ.։

Բացի այդ բժիշկ Վ. գօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը։

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9–ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար։ Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրայ, Բայանդուրովի տանը։

Առաւիաբոյժ Օբրեխտ ազքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ։

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։

Բժշկանոցի դիրեկտոր Լիսենկով։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԳՈՒՐՍ ԵԿԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նորա տեղը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԵՐՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՄՈՆԵՑՑԻ։

Ա. ՏՄԲԻ նախադիտելիք (իբրև Հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի Հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏՄԲԻ մնան ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջում մի լինի։ Մամուլի տակ է Գ. ՏՄԲԻՆ մնալ բաղաքական։

14—20

Ղէ-քասնդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ուսուց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով։

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց։

Հոգաբարձու { Սարգիս Միրզայեանց.
Ասատուր Խաչակեանց.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ ԵՒ ԸՆԿ. յայտնում է այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1–ից կը տեղափոխվի Վժանկիի տան վերին յարկը Վանօվկայա փողոցի և Երիվանսկայա հրապարակի անկիւնը վրայ։ Տուրքերի տալու և մուտքերի առանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ։ Գնում է 1 և 2 փոխառութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի։ Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարեկան ընթացքում ման ուրախ է 20 համարներին, որոնք ցոյց են տրված վիկայականի մէջ չորս տիրաժներին։ Ցանձնարարութեամբ գնում է և ծախում է մանուածոյ անձանց ամէն տեսակ անշարժ կայքեր, կոմիսիայով ծախում է ապրանքներ և նիւթեր։ Ծախում է տպված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և դատարկ տեղեր քրէհով տալու համար։ Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը փոփոխում է։

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%½, 2 տարով և աւելի 9։ 3) Այդ ընկերութեան 1 կալի պայ ունեցողների մանաւոր պայմանաւոր տուրքերին 9%։ Գործառնութեամբ յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%։

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամէն օր գրասենեակի կառավարիչից։

9—10 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20–ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը։

ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼՈՒ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆԵՎՆ ԳԻՇԵՐՕՐԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕՐԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ։

Ց. Մխրիմանեանց

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՅՐԱՆ, հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դաստիարակութիւն ստած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1–ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ստանալ բացատրէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՆՈՒԹԵՒՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում։ Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՖԻԱՆՋԻանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ։

5—22

Վաճառվում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՅԻ ՍԵՂԱՆ և ԱՔՈՒՈՆԵՐ։ Ելիսաւետինսկայա փողոց № 46 Թիֆլիսում։

3—5

Հաճախորդներ անպիսական խառնուքի թէյին գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆունտի հաշիւ այն թէյերի հետ, որոնք ուրիշ խառնուքներում 30%–ով թանգ են ծախվում և այդ խառնուքի Ֆունտալի բուրլեանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ։

40—100

Երևանայ Ազ. Հոգ. Պարտեզին հարկաւոր է ուսուց լեզուի համար մի ուսուցիչ Սեպտեմբերից։ Շաբաթական 26 դասին կը տանայ 1000 բուրլ տարեկան ռոճիկ։ Յանկացողները պէտք է գոնէ մի արքունի միջնակարգ դպրոցում աւարտած լինեն և ծանօթ լինեն հայոց լեզուին ևս։

Տեսուչ Երևանայ Թեմական դպրանոցի Ս. Բէգ–Նազարեանց։

3—5

Ծախվում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՅԻ ՍԵՂԱՆ և ԱՔՈՒՈՆԵՐ։ Ելիսաւետինսկայա փողոց № 46 Թիֆլիսում։

3—5

Ճանապարհ 1–ից վարշավսկացի գնկարներին կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի տանալ կանայք, շոկոլադ, թէյ և պատրաստված հանգստեան գանազան ՁՐԵՐ։

28—40

Дозволено Цензурою 25 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Մխիթարեանց Типографія А. А. Мхельсона

Fonds A.R.A.M

№ 131 Յուլիսի 30 (Օգոստոսի 11) 1880 Յուլիսի 30 (Օգոստոսի 11) № 131

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յատուկ պատգամներ դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դատի կիրակի և տան օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք չենք նկատում—Ներքին տեսութիւն։ Նամակ Իգդիրից։ Նամակ Գանձակից։ Նամակ Վարսից։ Նամակ Առտաքանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Աֆղանիստան, Թուրքիա։ Նամակ Պարսկաստանից։—Զմշակից հնագիրներ։—Յայտարարութիւններ։—Բ ա ն ա տ ր ա կ ա ն։ Գրականական նկատողութիւններ։

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՆԿԱՏՈՒՄ

Պարելով Թիֆլիսի մէջ, մենք ուշադրութիւն չենք դարձնում Ներսիսեան դպրոցի վրա, չենք հետևում նրա հոգաբարձուների, տնտէսի և ուսուցիչների գործունէութեանը, մանաւանդ որ արդէն հեռուից զգվում ենք այդ գործունէութիւնից, պարզ տեսնելով, թէ մեր այդ բոլոր գործիչների ապրելն մատուցած ծառայութիւնը հիմնվում է միմիայն անասնական կրքերի, թշնամութեան, նախանձի, առելութեան և ամենակեղտոտ ինտրիգների վրա։ Մենք վաղուց արդէն ձեռք վերցրինք Ներսիսեան դպրոցից, բայց երբ ամպարիշտ համարելով նրա դրութեան ուսումնասիրելը, ապարդիւն համարելով նրա անձռնի բնթացքի քննադատութիւնը։

Մենք վաղուց համոզվել ենք, որ Ներսիսեան դպրոցը ազգային հիմնարկութիւն չէ, այլ յայտնի մի տեսակ մարդիկների նեղ շրջանի համար ապրուստի ապրիւր է, դոյութեան անհրաժեշտ պայման է, անկեղծութ է....

Կրկնում ենք, մենք վաղուց ձեռք վերցրինք Ներսիսեան դպրոցից։

Բայց մեզ պէս չեն կարող վերաբերվել գաւառացի հայերը Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին. նրանք անտարբեր չեն կարող լինել դէպի այդ դպրոցի առաջադիմութիւնը կամ յետադիմութիւնը, որովհետև այդ դպրոցի վրա նայում են, որպէս գաւառական բոլոր դպրոցներին ուղղութիւն տուղ, ամենքի համար ուսուցիչներ պատրաստող դպրոցի վրա։

Գաւառներում հաստատացած են, որ Ներսիսեան դպրոցը անհամեմատ բարձր է, քան թէ մեր գաւառական բոլոր թեմական դպրոցները, Էրզրում, Կարս, Ալէքսանդրապոլ, Շուշի, Ներսիսեան և այլ միջնակարգ հոգևոր ուսումնարանները. գաւառներում հաստատացած են, որ Ներսիսեան դպրոցը մի տեսակ ուսուցչական սեմինարիա է, որ յանձն է առել պատրաստել ուսուցիչներ բոլոր գաւառական ծխական և մինչև անգամ միջնակարգ հոգևոր դպրոցների համար։

Բայց որքա՜ն մեծ է լինում գաւառացի հայի զարմացքը, որքան աննկարագրելի նրա զայրոյթը, երբ գալով Թիֆլիս և այցելելով Ներսիսեան դպրոցը, նա համոզվում է որ խաբված է եղել իր կարմած համոզմունքի մէջ։

Նրա առջև յանկարծ ներկայանում է հետևեալ տեսարանը. ողորմելի, կիսատ շինութիւն, տպէտ, գրեթէ անդրապետ ուսուցիչներ, բարձր դասարաններում երկու անգամ երկու հաշիւ անկարող աշակերտներ, անհոգ, անտարբեր, դպրոցը երբէք չայցելող հոգաբարձուներ, մանկավարժական կուրսերի կատարեալ բացակայութիւն, և այլն....

Գաւառացի հայը համոզված էր, որ բացի ընդհանուր միջնակարգ դպրոցի դասատուներից, Ներսիսեան դպրոցը ունի և մի բարձր, մանկավարժական դասատուների համար մասնաւոր դասատուն, դասատուին այդ նպատակով իր հաշուով սուներ է պահում Թիֆլիսի այդ կարծեցեալ ուսուցչական դպրոցի մէջ, —բայց որքան է նրա զարմացումը, երբ Թիֆլիս գալով նա տեղեկանում է, որ մի տարի է արդէն այդ դասատունը գոյութիւն չունի, որ այդ դասատունը պատեհ հոգաբարձուների և նախկին տեսչի, պ. Մանդինեանի անճնական հաճոյքի, կապրիզի ժամանակաւոր արդիւնքն էր, որ բացի ընդհանուր միջնակարգ դպրոցի դասատուներից, Ներսիսեան դպրոցը ունի և մի բարձր, մանկավարժական դասատուների համար մասնաւոր դասատուն, դասատուին այդ նպատակով իր հաշուով սուներ է պահում Թիֆլիսի այդ կարծեցեալ ուսուցչական դպրոցի մէջ, —բայց որքան է նրա զարմացումը, երբ Թիֆլիս գալով նա տեղեկանում է, որ մի տարի է արդէն այդ դասատունը գոյութիւն չունի, որ այդ դասատունը պատեհ հոգաբարձուների և նախկին տեսչի, պ. Մանդինեանի անճնական հաճոյքի, կապրիզի ժամանակաւոր արդիւնքն էր, որ բացի ընդհանուր միջնակարգ դպրոցի վարչութիւնը հանդիսաւոր, փառաւոր կերպով հրապարակապէս յայտնած էր, բայց նոյն դասատուն փակման մասին մի ամբողջ տարի է արդէն որ լուռ է կենում, դիտմամբ ոչ որին չէ յայտնում....

Այսպէս են մեր բոլոր ապագ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԳԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

„ДВАДЦАТЬ ПЯТЬ ЛѢТЪ НА КАВКАЗѢ“

1842—1867

Л. А. ЗИССЕРМАНА

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիս-Վլադիկավկասի ճանապարհի վրա, Անանուրի և Պասանաուրի կայարանների մէջ այս օրերս վեց հոգի լուս ընկնացած աւազակներ յարձակվել են դրամ տանող փոստի սայլի վրա, փորձել են դրամարկղը յափշտակել, բայց այդ նրանց չէ աջողվել, որովհետև հէնց այդ միջոցում վրա են հասել մի տարտնաւոր և մի սայլ։ Աւազակները երկիղից փախել են, ոչինչ չը կարողանալով տանել։

—

«Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Օդեսայում հաստատված է քաղաքային վարչութեան մէջ մի նոր պաշտօն, այն է քաղաքագլխի օգնականի պաշտօնը։

—

Թիֆլիսից գրած մի թղթակցութիւն «Голосъ» լրագրում գատաղութիւն է տալիս Անդրկովկասի դատաստանական մասի դրութեան վերաբերութեամբ։ Թղթակիցը ասում է որ այժմ բարեգործող իրաւաբանական ուժով սահմանած երկատարդները բազմաթիւ են կովկասեան ամեն ազգութեան մէջ։ Որովհետև շատ հեշտ կը լինէր նշանակել մեր երկրի այլ և այլ մասերում այնպիսի հաշտարար դատաւորներ, քննիչներ և այլն, որոնք ծանօթ են այս կամ այն տեղական լեզուի հետ, որպէս զի կարողանան ժողովրդի հետ անմիջական յարաբերութիւն ունենալ, առանց դիմելու թարգմանիչներին, որոնք մի կողմից շատ ոգէշ, անընդունակ և վատ պատրաստված են լինում, մեւս կողմից կարող են այս և այն կողմին հակվել, յափշտակվելով նիւթական չահերով։ Բայց դժբաղդաբար, ասելացնում է «Голосъ» լրագրի թղթակիցը, մինչև այժմ հակառակն է լինում. մեր դատաստանական իշխանութիւնը կարծես դիտմամբ աշխատում է նշանակել հայ քննիչն և հաշտարար դատաւորին Ախալցխայում, վրացուն առաւել Հայաստանում, յոյնին Կարսում և այլն։ Այդպիսով, ասելացնում է թղթակիցը, արդարադատութիւնը ոչ թէ միայն իր նպատակին չէ հասնում, այլ ընդհակառակն ծնեցնում է տեղական ամբոխի մէջ թերահաւատութիւն դէպի դատաստանական գործը։

—

Այժմ, երբ ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Տօլստոյ հրաժարական է տուել իր պաշտօնից, Ռուսաստանի ամբողջ մամուլը քննադատում է նախկին մինիստրի գործունէութիւնը։ Ռուսաց «Дѣло» ամսագիրը բերում է այդ առիթով հետևեալ խօսակցութիւնը մի ուսած և մի անգրագետ մէջ։ «Զարմանալի ազգ էք դուք ուսածները —«Ինչի էք կարծում»—«Ձեզ մօտ ամեն բան թարս է և ոչ թէ ինչպէս մեզ մօտ։ Օրինակ մեզ մօտ քննադատում են մինիստրին քանի որ նա պաշտօնի մէջ է որպէս զի նա կարողանայ փոխել իր արած կարգադրութիւնները և ոչ թէ երբ նա իր պաշտօնը թողել է։ Այն ժամանակ արդէն ուշ է և ոչինչ օգուտ չը կայ քննադատել կարգադրութիւնները, որոնք մարդուց կախված չեն, որովհետև նա այլ ևս պաշտօնի մէջ չէ»։

—

«Вѣстникъ Европы», «Дѣло», «Отеч. записки» ամսագիրները, «Голосъ», «Молва», «Новое Время», «Новости» և ուրիշ լրագիրները, բոլորն էլ միաբերան փափագում են մամուլի ազատութիւնը Ռուսաստանում։

—

Ռուս լրագիրները հաղորդում են որ ծայրագոյն յանձնաժողովի կարգադրութեամբ վերջում է այսուհետև այն իրաւունքը, որ ունէին Ռուսաստանի բոլոր թէ գիւղական և թէ քաղաքական վարչութիւնների մեծաւորները, առանց պատճառների և բացատրութեան, կամայական կերպով հրաժարեցնել իրանց ծառայութիւններից ծառայութիւնից։ Այդ իրաւունքը անուանված էր հեռացնել ծառայութիւնից 3-րդ կէտի հիման վրա։ Այդ սարսափելի կէտը ծանօթ էր բոլոր ծառայողներին։

—

Յուլիսի 28-ին մեր սազանդաւոր բանաստեղծ պ. Ռաֆայէլ Պատկանեան ՆԻՒ-ՆԱԻՕՐԿԻԱՆԻՑ հասաւ Թիֆլիս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Աթէնքից։

Ա. յաճախ ստացված հեռագիրները հաղորդիչին, որ Ք. Դուբը մտադիր չէ ներկայիս Բերլինի կոնգրեսին գալու, և որ թիւրքաց կառավարութիւնը տեղափոխում է իւրքաց գործերին Կպերտաւ և Հօքարտ-փաշայի հրամանատարութեամբ պինաւորած են մի նաւատորմ է ուղարկում յունական ջրերը։ Այդ լուրերից գրգռված տեղական մամուլը առաջարկում է յունական կառավարութեանը պատրաստվել պատերազմի համար, որովհետև տաննց պատերազմի յունաստանը անկարող կը լինի միացնել իր հետ իրան վիճակված երկիրները։

Թէսալիայից հաղորդում են, որ երբ Բերլինի կոնգրեսից վճիռը՝ այդ նահանգը յունաստանի հետ միացնելու մասին յայտնի եղաւ Թէսալիայի մի քանի բազաքների մէջ, թիւրքերը չափազանց շտապեցան և թիւրքաց վարչութիւնը արգելից քրիստոնեայ բնակիչներին խօսել քաղաքական գործերի մասին, մանաւանդ Թէսալիան յունաստանի հետ միացնելու մասին։ Այդ հրամանը չը կատարողը ենթարկվում է առաջին անգամ 5 թիւրքաց լիրա տուգանքի, իսկ երկրորդ անգամ բանտարկման մի քանի ամսով։ Նոյն օրը, երբ յայտնի եղաւ Թէսալիայում Բերլինի կոնգրեսից վճիռը, Ալմիրոյի մէջ եղած կանոնաւոր զօրքերի գունդը յայտնեց, որ եթէ իր ռոճիկը չը տանայ, ամբողջապէս կը ցրվի, մասամբ կը միանայ և մասամբ կերթայ հայրենիք։ Նահանգապետ փաշան առաջ աշխատում էր սպառնալիքներով հանգստացնել գունդը, բայց տեսնելով, որ նրանք չեն ազդում զօրքերի վրա, ստիպված էր վճարել գունդին ռոճկի մի մասը և միւս օրը նրան տեղափոխել։ Քրիստոնեայ բնակիչները երկիւղի մէջ են գտնվում և սպասում են օրից օր, որ Թէսալիան սպաշարված կը յայտնվի։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Եանինան միանում է Յունաստանի հետ, աւելորդ չէ մի քանի տեղեկութիւններ հաղորդել նրա ազգաբնակութեան և զարգացման աստիճանի մասին։ Եանինայի ամբողջ ազգաբնակութիւնը 155,228 է, որոնցից 147,298 յոյներ են, 4,500 բայազատ յունաբէն խօսող թիւրքեր և 3450 հրէաներ։ Ամբողջ գաւառի մէջ 373 յունական ուսումնարաններ կան, 11,057 աշակերտներով և 324 ուսուցիչներով։ Թիւրքաց տակաւին ուսումնարաններ կան միայն Եանինա քաղաքի մէջ և նրանց մէջ էլ առարկաները ուսանվում են յունարէն լեզուով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 28 յուլիսի։ Սուլթանը հրամայից գինուորական մինիստրին ուղարկել Դուլցինօ 2000 գինուորներով։ Մինիստրը խոստանում է, որ Դուլցինոյի նահանգը կը յանձնի չերնոգորցիներին առանց ժամանակամիջոցի մէջ։ Սուլթանը հրամայից Յունաստանի իսկական սահմանական գիծը պատրաստել և յանձնել սիւուրիներին։ Սպասում են, որ գործը բարեկամաբար կը վերջանայ։

ՍՕՖԻԱ, 28 յուլիսի։ Բոլգարական իշխանը հրաժարվից հաստատել բոլգարական ազգային գործերի այն օրէնքը, որի համեմատ գործերի հրամանատարը ընտրված պէտք է լինի։

ՏԱՇԿԵՆԴ, 28 յուլիսի։ Աբդուրահման բարձրացաւ Կարուլի գահը յուլիսի 27-ին։ Աֆղանիստանի բոլոր մեչեաների մէջ շնորհակալութեան մաղթանքներ կատարվեցան։ Ամու-Դարիա գետի ձախ ափի վրա գտնված աֆղանական բոլոր քաղաքները լուսաւորված էին։ Մօզարի և Շերիխի մէջ թնդանօթներ արձակվեցան 101 անգամ։ Յուլիսի 26-ին կատարման այցելից Ֆերիօնի նահանգը, գնեց կաշգարի սահմանը։ Մեր գործերը Ա[illegible]յի մէջ են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յուլիսի։ Օգոստոսի 2-ին ուղեւորվում են Ախալ-Տեկէի գօրաբաժինը Կարմիր Կաչի ողորմած քոյրերը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԵՇՏԱՆԵՑ, ԱՅԳԻՆԵՐԻ, ԽՈՂՈՎԱՆԵՐԻ, նոր հրովհարձիգ «ՀՕՍՄՕՊՕԼԻՏ», ամեն տեսակ գործածութեան համար ջուր քաշող մեքենաներ և ամեն տեսակ պատկանելիք ջրանցքերի համար, ԳԼՈՒԽԱՒՈՐ ՐԻՒ. ԼԱՆԳԵՆԶԻՊԵՆ ԲՈՒԿՈՎՈՒ-ՄԱԳԴԵՆԲՈՒՐԳԻ մէջ: Ջուր քաշող մեքենաների Բիւս. Լանգենզիպէն ֆիրմայով Բուկաու-Մագդենբուրգի մէջ նոյն գործատանէն Ռուսաստանի միակ ներկայացուցիչ, ԱԼՖԻՐԻ ԼԱՆԳԵՆԶԻՊԵՆ, Ս. Պետերբուրգ, ՄԱԼԱՑԱ-ԻՏԱԼԻԱՆԱԿԱՆ № 11 տան առաջարկում է: Ընդունելով մեր սեփական գործատանէն պատրաստած ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱՆԵՑ խողովակների ՊԱՀԵՍՏ ամենամոր ձևերի, նոյնպէս և ՋՈՒՐ ՔԱՇՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ գոնազան ձևերի, ՋԵՌՔԵՐՈՎ, ՋԱՆԵՐՈՎ և ՇՈՂԻՈՎ գործելու համար, կարող եմ բաւականացնել ամեն տեսակ ԳՈՒՆԱՒՈՐԱՆՆԵՐԻ, ԳԻՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՋԵՄՊԻՈՆՆԵՐԻ, գիւղային և քաղաքային ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն ՊԱՀԱՆՋՆԵՐին: Եթէ յիշեալ առարկաներից մէկը հարկաւոր լինի, խնդրեմ պատուել ինձ յանձնարարել: Նամակ ստանալուց յետոյ կուղարկեմ ՁՐԻԱՒՈՐ նկարներով ծանօթագիր ՊՐԻՑԱԿՈՒՐԱՆՏ և ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ: կը հաղորդեմ:

3—5

ՁՈՐՈՒԹՅԱՆԻ, ՑՈՒԼԻՍԻ 30-ից կը սկսվին հասարակական աճուրդով ծախվել անանձնացած պարտատէր ԵՂՐԱՑԻՐ ՋԱՆՋՈՒՂԱԶՈՎՆԵՐի ապրանքները: Աճուրդը կը լինի ամեն օր 9 ժամից Ջանջուղազիների ՈՒՏՈՒՍՏՆԵՐի խանութում, գօլօվինսկայա փողոցի վրայ, ՄՈՒՒՐԱՆՍԿՈՒ տանը:

1—3

Ծախվում են ԴՐԱՍԵՂԱՆ, ՀԱՑԻ ՍԵՂԱՆ և ԱՓՈՒՆՆԵՐ: Ելիսավետինսկայա փողոց № 46 Թիֆլիսում:

3—5

Շուտով լոյս կը տեսնէ ԴԱՇՆԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐ ՁԱՑՆԱԴՐԱԾ Ժողովրդական գործածական երգերի

Երկրորդ տետրակը

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուքիասեանցի, և կը պարունակէ իւր մէջ վեց երգեր:

1) «Ազնիւ ընկեր մեռանում եմ»
2) Ակնատիպ անձայն»
3) «Քաժակներ առնուենք, եղբայրք»
4) Մեր հայրենիքը, Թշուառ անտէրը»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիքը Սրբազան»

Երկրորդ տետրակի գինը լինելու է մի րուբլի. ցանկացողները ստանալ գաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տետրակը, որ պարունակում է իւր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ». 3) Ծուռթը փչէց» և 4) «Ծիծեռնակ» պէտք է ուղարկին մի րուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջումն է լինելու:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է նոր ԵՐԳԱՐԱՆ ՖՐԻՑԻՈՒՆԻ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակված երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները ստանալու և՛ ձայնագրած երգերը, և՛ Ֆրէյտաունի նոր երգարանը, պէտք է ուղարկեն մէկ րուբլի և 30 կոպէկ. հետևեալ հասցէով:
Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 14.

Համեմատելով անցեալ տարուայ թիւերի հետ գնով 1 р. 10 к., 1 р. 20 к., 1 р. 40 к., 1 р. 60 к., 1 р. 80 к. Ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի Ֆունտը2 րուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 р. ծախվող թէյի հետ:

42—100

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՊԵՏՈՒԿԱՆԴՊՐՈՑԻՑ-Առաջիկայ 1880/81 ուսումնական տարին, դասկացողների համար Սեմինարիա (փարժատական դպրոց) մտնելու, կան 4 փոխանցիա ներ պատրաստական դասատան և 6 փոխանցիաներ առաջին դասատան մէջ: Խնդիրքները ընդունելութեան մասին արվում են մինչև 15 օգոստոսի: Մրցողական հարցաքննութիւնները կը լինեն 20 օգոստոսից մինչև նոյն ամսի 25:

1—3 (1)

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կառանց հիւանդ. Գօրալևիչ ներքին հ., Թոմիանց կառանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շահմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկիվիչ խիրուրգիական հ., Վ. գօրօվ վիներական և բազարգի հ., Լիխյ աչքի հ., Թախտամով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլազօվ, Լիսիցիվ և Վ. Միշիվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցիվ Բուդվօսկի ներքին հ., Շահմբօրսկի կնիերական և կաշու հ., Ասատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. գօրօվ վիներական և բազարգի հ., Թոմիանց կանանց և երեխաների հ., Լիսիցիվ և Վ. Երժիշևսկի ներքին հ., Ասատուրօվ մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շահմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և ներքին հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկիվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլազօվ և Լիսիցիվ ներքին հ., Թախտամով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շահմբօրսկի վիներական և կաշու հ., Ասատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցիվ և Վերմիշևվ ներքին հ., Բաբօվ հուծքի հ., Կանկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. գօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազգաս հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբայեան չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւաւարով 9 բրնի խա ազգաս հիւանդները բժշկանոցի տամակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցիվ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶ

ԵՒ

ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը ապագայ և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԿԱՅ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Ց. Մխիթարեանց

Ծուխի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԻ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԵՅ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ:

29—40

ՄԱՄՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԳՈՒՐՄՈՒ ԵԿԱՒ ՀՐԱՏԱՐԱԿ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Д. ГРИГОРЬЕВА) Կովկասեան Գրամաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՀԹԵՐՀԱՑԻՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄՈՆԵՑԻՑ: Ը. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայբենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայբենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Ր. ՏԱՐԻ ման ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

դրամատով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը բազաբական:

15—20

Ղէկ-քանդրատօլու երկաթ դպրոցից բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ուսուցց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկաթ. դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձու { Սարգիս Մխիթարեանց.
Ասատուր Խահակեանց.

ԱՒԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՊՈՒՄՕՎ ԵՒ ԸՆԿ. յայտնում է այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Վերակիլի տան վերին յարկը Վանօվսկայա փողոցի և Երևիմանսկայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի տալու և մաւթերի ստանալու համար գրասենեակը հետագայ օրերում բաց է լինում առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխադրութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում ժամ առնի տարածից այն 20 համարներին, որոնք ցոյց են տրված վիրայականի մէջ չորս տերժաններին: Ցանձնարարութեամբ գնում է և ծախու է մանաւանդ անձանց ամեն տեսակ անշարժ կայքեր, կոմիսիայով ծախում է ապրանքներ և նրբեթներ: Վճարում է տրված պայմանագիրների, բնակարաններ, խանութներ և պատարի տեղեր քրէհով տալու համար: Տուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է.

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%½, 2 տարով և աւելի 9: 3) Այդ ընկերութեան 1 կոպէկ պայ ունեցողների մանաւանդ պայմանաւոր տուրքերին 9%: Պարտամուրհակով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շարաթ ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

9—10 (2)

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕՏԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱՆՔ, հայոց ծխական և մանաւանդ ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ տեղեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացատրելիս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՆՈՒԹԻՆ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՃԻԽԱՆՋԻանցի ԴՐԱՎԱՃԱՌՈՒԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

6—22

ՄԻՆԱՍ ԳԻԼԶԱՏԵԱՆ, որ կանոթայ ունի ԹԱՒՐԻԶ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՑԱՆԶՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կոմիսիոն ով կատարելու անյապաղ, ամենայն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վաճառականներին, տառաջարկելով իր ծառայութիւնը:

4—5

Дозволено Цензурою 30 Іюля 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 134 Օգոստոսի 2 (14) **1880** Օգոստոսի 2 (14) № 134

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Բոլոր բաժանորդագրութիւնները դիմում են միմիայն խմբագրատան անունով։

Յայտարարութիւնները ընդունվում են միմիայն խմբագրատան միջոցով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ւրբագուով։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին ազատութիւն—նէր քին աեսուքիւն։ Մի խնդիր գէպի մեր հեղինակները։ Նամակ Նուխայից։ Նամակ Նոր-Բայազէտից։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ Ջիլթայիից։ Նամակ Վարդենից։—Արտաքին տեսութիւն։ «Голосъ» լրագրի թղթակցութիւնը հայերի մասին։ Թիւրքիա։ Անգլիա։—«Մշակի» հետագիրները։—Յայտարարութիւններ։

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ուրախ մտմտուք, մանաւանդ «Вѣстникъ Европы» ամսագիրը և «Голосъ» լրագիրը, խօսելով ռուս մամուլին կատարեալ ազատութիւն տալու անհրաժեշտութեան վրա, յայտնում են այն միտքը, որ մամուլը Ռուսաստանում մինչև այժմ այն միակ հասարակական հիմնարկութիւնն էր, որ ընդհանուր պետական օրէնքների պաշտպանութիւնը չէր վայելում։ Նա մի տեսակ անհարագատ երեխայ էր ռուսաց կեանքի մէջ։

Իւրաքանչիւր քաղաքացի, ամենաանձն յանցանք էլ գործելով, այն ժամանակ միայն կրում է իր պատիժը, երբ դատարանի քննութեան ենթարկվելուց յետոյ գըտվում է, կամ մեռածը, կամ կատարեալ իր քաղաքացիական իրաւունքներից։ Քաղաքական յանցաւորն անգամ, հրեշաւոր չարագործը, ենթարկվում է միշտ կամ զինուորական կամ բաղաքական դատաստանին և յետոյ պատժվում է։ Իսկ լրագրութիւնը այդ իրաւունքները չունի, նա պետական օրէնքներից դուրս է։

Մի կաղաւածառէր, մի սեփականատէր իր սեփականութենից զրկվելու համար, պէտք է մի նշանաւոր յանցանք գործած լինի, որի պատճառով նա ենթարկվում է դատարանի քննութեանը և դատարանի վճիռը միայն կարող է զրկել նրան սեփականութենից։ Իսկ լրագրապետը, կարող է ամեն րոպէ զրկվել իր սեփականութենից, իր ձեռքով հիմնված և իր սեփականութիւնը հանդիսացող լրագրից կամ ամսագրից, առանց դատարանի վճռին ենթարկվելու, միմիայն վարչական կարգադրութեամբ։

Լրագրապետը և ոչ մի բանում, իբր հասարակական ոչ մի գործոնութեան մէջ չէ վայելում իր միւս համաքաղաքացիներին, պատասխանատուութիւնից միւս հասարակ իրաւունքներ օրէնքների առջև։

Օրինակ մի անհնազանդ յանցանքի համար լինում են տուգանքներ, որոնց ենթարկվում են ամեն քաղաքացիները, բայց ոչ մի քաղաքացի, ինչքան հարուստ էլ լինէր, երբէք չէ ենթարկվում, օրինակ, այնպիսի ահագին, աներևակայելի տուգանքների, ինչպէս մի լրագիր։ Աներևակայելի մի լրագիր, որ ունի 10,000 բաժանորդ, մեծ քանակութեամբ հատուկ է ծախվում ամեն օր, ունի մեծ արդիւնք յայտարարութիւններից, բայց ուրիշ կողմից ունի և օրական ահագին ծախսեր։ Յանկարծ մի յօդուածի համար վարչութիւնը արգելում է այդ լրագրին երեք, չորս ամսով հատուկ ծախվել, կամ յայտարարութիւններ ընդունելու իրաւունքից է զրկում նրան։ Եւ ահա լրագիրը երեք, չորս ամիսների ընթացքում վաճառուն հազար րուբլու կորուստ է կրում։ Երբ է տեսնված, ասում է «Вѣстн. Европы» ամսագիրը, որ ռուսաց դատաւորներից մինը ենթարկէր մի քաղաքացուն 60,000 րուբլի տուգանքի պատժին։ Եւ այդ տեսակ պատժին լրագիրը կամ ամսագիրը կարող է ենթարկվել երկու, երեք անգամ տարվայ ընթացքում։

Ռուս լրագրութեան փափագը միայն այն է, որ մամուլը ենթարկված լինի նոյն օրէնքներին, որոնց ենթարկվում է ամեն քաղաքացի, այսինքն ամեն տեսակ փոքր թէ մեծ յանցանք գործելուց յետոյ նոյն դատարաններին ենթարկվի, որոնց ենթարկվում են Ռուսաստանի միւս բաղաքացիները։

Մինչև այժմ ռուսաց մամուլը պետական օրէնքների համար մի տեսակ խորթ որդի էր։ Ռուսաց մամուլի փափագը այժմ շատ հասկանալի և իրաւացի է. նա ցանկանում է որ մամուլը բոլոր միւս քաղաքացիների հետ հաւասար իրաւունքներ վայելէր օրէնքի առջև, ենթարկվէր պետական նոյն պատասխանատուութեան, որոնց ենթարկվում են Ռուսաստանի բոլոր միւս քաղաքացիները ընդհանուր պետական օրէնսդրութեան հիման վրա և ոչ թէ ինչպէս մինչև այժմ եղել է առանձնական օրէնքների դրութեան մէջ դրված լինէր, կառավարվելով մամուլի համար ըստ տեղւոյն դրաքննական առանձին օրէնքների կանոնադրութեամբ և կախման լինելով միմիայն վարչութեան կամքից։

Այդ է բոլորը ինչ որ փափագում է լրագրութիւնը, ինչ որ փափագում ենք և մենք՝ հաւասարեցրած լինել մեր իրաւունքների մէջ, ռուսաց բոլոր միւս քաղաքացիների հետ, ընդհանուր պետական օրէնքի առջև։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽՆԴԻՐ ԴԷՊԻ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Որքան էլ թոյլ կոմիք ունենայ ներկայ հայ ուսանողութիւնը, այնուամենայնիւ անկարելի է ուրանալ այն հանգամանքը, որ նա իր նախորդ սերունդների հետ համեմատութեամբ մի հսկայական քայլ է փոխել դէպի առաջ, մի յառաջադիմական քայլ, որ ժամանակի ծնունդ է, որ հետզհետէ զարգացող կեանքի արգասիք է։ Ռուսաստանի հայ ուսանողութեան մէջ զարթնած սէրը դէպի իր ազգութիւնը, նրա անուրանալի համակրութիւնը դէպի ազգային կեանքի պայծառ երևոյթները, ֆրանսիական ուսանողութեան առաջին ինքնաճանաչութեան քայլը, նրա զարնար թմրութիւնից սթափվիլը, գերմանական ուսանողութեան համախոհութիւնը նրանց հետ,—այդ բոլորը յառաջադիմութեան փառաւոր ապացոյցներ են։

Կապիտ եսականութիւնը, աւանգական անտարբերութիւնը, ձշմարիտ է, գեռ ունեն իրանց պաշտօնեները, իրանց գերիները, բայց մի տասը տարի էլ ժամանակ,—և կեանքի հոսանքը կը սրբի իսպառ այդ բիծը, կը մղի նրան դէպի անցեալը, դէպի պատմութեան շրջանը։

Ուսանողական կեանքի զարգացման նշաններից մէկը անշուշտ այն ուրախալի երևոյթն է, որ ուսանողութիւնը մի տանձին հանդիսութեամբ է վերաբերում դէպի ազգային գրականութիւնը, ձգտում է մինչև անգամ ներգործական դեր կատարելու նրա զարգացման և յառաջադիմութեան գործի մէջ։ Պրահանան ամեն մի նորութիւն՝ թէ լրագիր, թէ նոր ամսագիր, թէ նոր գրքեր, նոր հրատարակութիւններ մի անասելի ուրախութիւն են պատճառում ներկայ ուսանողին. նա պարզ տեսնում է, որ իր փոքրաթիւ ազգը շատ հեռու է կորչելուց, որ նա ընդհակառակը վերածնում է, կարելի է ասել, համաբաձակ քարշ է գալիս թէև դազ առով համամարդկային քաղաքակրթութեան ընթացքի հետ։ Հայ ուսանողը գոհ է այն համոզմանը, որ ոչ թէ միայն արժէ հետաքրքրվել հայ գրականութեամբ, այլ մինչև անգամ բարոյական յանգանք կը լինի կարդալ նրա գարգացմանը։ Նա ձգտում է կարդալ մայրենի հեղինակներին, տեղեկութիւններ ունենալ գրականական նորութիւններից, հետևել գրականութեան դանազան ճիւղերի յառաջադիմութեանը։

Բայց որքան էլ ջերմեռանդութեամբ նա ձգտի բաւականութիւն տալու իր ցանկութեանը, դժբաղդաբար նա անկարող է։ Մասկվայում, Պետերբուրգում, Փարիզում, Սարատովում ընկած ազգաց ուսանողը շատ է լրագիրներից որ դուրս է եկել այս կամ այն նոր գրքը, նոր հեղինակութիւնը, նա ծանրաբեռում է կարդալու, քննելու, դուցէ կրիտիկա գրելու, բայց անկարող է դանում, որովհետև չունի այնքան նիւթական միջոց, որ կարողանայ ձեռք բերելու ամեն մի նոր գրքվածք։ Նա ճարահատեալ ստիպված է լինում սպասել և 4—5 տարուց յետոյ հայրենիք վերադառնալով կարդալ։ Ծիծաղը դրութիւն է այս, և այդ դրութիւնից է դուրս գալիս յօդուածիս նպատակը՝ իմ խնդիրը գէպի մեր հեղինակները։ Ես զգում եմ իմ խոնարհաբար խնդրով դէպի այս վերջիններս (ես չիտօր չեմ իմ ընկերներից, բայց ծիծաղալի կը լինէր ի հարկէ, եթէ նրանց վերաբերէր այս խնդիրը)—ես խնդրում եմ, որ նրանք աչքի առաջ առնեն ուսանողութեան այդ անյարմար դրութիւնը և եթէ ցանկանում են աւելացնելու իրանց գրուածների հասկացող կարդացողների թիւը, չը խնայեն մի մի օրինակ իրանց գրքերից ուղարկել ձրիաբար այս կամ այն համալսարանական քաղաքը, ինչպես կան հայեր։ Մեր լրագրութիւնը հասկացել է ուսանողների այդ դրութիւնը՝ «Մշակ», «Ուլուս» և «Պատկ» ստացում են գոնէ Մոսկվայում մի քանի օրինակ ձրիաբար—թող մեր պատեհ հեղինակներն էլ հետևեն այդ գեղեցիկ օրինակին։ Ինչպէս Մոսկվայի ուսանող, ես ի հարկէ առանձնապէս կը խնդրեմ իմ այսաեղի ընկերների համար։ Գրքեր կարելի է ուղարկել ուղիղ համալսարան մի որ և է ուսանողի անունով՝ սա կը կարդայ և կը տայ ընկերներին։ Ամեն մի տասացած գրքի համար շնորհակալութիւն կը յայտնվի լրագրում։ Կը սպասենք...

Ս. Պապեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

22 յուլիսի

Եթէ իւրաքանչիւր քաղաք մի բանում չնորհ ունի, Նուխին, պէտք է ասած, այդ կողմից անհնից առաջ է վարձատրված. Նուխին բազմակողմանի շնորհների կենտրոն է։ Անգիտութիւն, չարագործութիւն, աւազակութիւն, մարդասպանութիւն, սահանապարհութիւն, [illegible]

Fonds A.R.A.M

ՈՐԴԻ

1880—№ 134

Fonds A.R.A.M

ՆԱՄԱԿ ՄԻՔԱՅԵԼԻՆ

8 յունվար

Ես ամենայն վստահությամբ կարող եմ ասել, որ ոչ մի ռուս հասարակական գործիչ այնքան չի ենթարկվել հալածանքների, որքան ես։

յիսուէթ 20 կ., Տէր-Դաւթեանց Արամ 20 կ., Վարդապետրիկեանց Յակոբ 20 կ., Վարդապետրիկեանց Բագրատ 20 կ., Վարդապետրիկեանց Յովհաննէս 20 կ., Տէր Ներսէսեանց Սենեքերիմ 20 կ., Պարոնակեանց Կարապետ 20 կ., Պալեանց Համազասպ 20 կ., Յովսէփեանց Թադէոս 20 կ., Սաղաթէլեանց Արմենակ 25 կ., Սաղաթէլեանց Յակոբ 20 կ., Փալանճեանց Համազասպ 10 կ., Գգիրեանց Աղէքսան 15 կ., Բասալեանց Երուանդ 10 կ., Նալբանդեանց Սարգիս 10 կ., Ղուկասեանց Սենեքերիմ 5 կ., Ղազարեանց Արտաշէս 5 կ., Նալբանդեանց Յովհաննէս 5 կ.: Գումարը 17 ր. 15 կ.: Նոյն դպրոցի աշակերտաց փողը 12 ր. 85 կ.: Ընդամէնը 30 րուբլի:

Աղէքսանդր Խանամիրեանց, Մկրտիչ Ղազարեանց, Յարութիւն Դուրկարեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Голосъ» լրագրի № 199 մէջ տպած է հետեւեալ թղթակցութիւնը Կ. Պոլսից:

Թիւրքերը չափազանց վրդովված են նրանով, որ սուլթանի ամենաբարեմիտ քրիստոնեայ հպատակները՝ յոյները և հայերը, նրանք էլ այնչափ փչացել են, որ հանգիստ չեն տալիս Եւրոպային իրանց բողոքներով: Բուլղարացիներից յետոյ, իրանց կարգին հասնելով, յոյները և հայերը չեն հանգչում: Իրանց քարոզութիւնների և աշխատանքների կենտրոնը Թիւրքիայի մայրաքաղաքը ընտրելուց յետոյ, նրանք բոլոր ջանքերը գործ են դնում գործի աջող հետեւանքին հասնելու համար: Մի և նոյն ժամանակ յոյները և հայերը լաւ իմանում են, որ Թիւրքերը այժմ այնպիսի դիրքի մէջ են, երբ ճակատի վրա սառը քրտինք է երեւում, որ մահուան տանջանքների նշան է: Այդ պատճառով նրանք այնչափ հաւատացած և համարձակ են գործում, ինչպէս վաղուց կալուածատիրոջ օրինաւոր ժառանգներ:

Դեռ XIII դարից, այսինքն Հայոց թագաւորութեան վերջնական անկումից յետոյ, Հայաստանի քաղաքական ինքնագոյութիւնը վերականգնելու ցանկութիւնը այնչափ մեծ է հայերի մէջ, որ նա մինչեւ անգամ կրօնադաւանական բնաւորութիւն է առացել: Ներսէս Մեծի առաջարկութեան համեմատ հայ հոգեւորականութիւնը խոստովանեց, որ մահմետականների տիրապետութիւնը Հայաստանի մէջ Նեռի գործ է, որի ձեռքերին կը տանջվին քրիստոնեաները մինչեւ այն ժամանակ, երբ սատանայի բոլոր ոյժերը կը ոչնչանան Աստուծոյ Օծեալի ձեռքով: Հոգեւորականութեան ջանքերով պահպանված այդ հաւատը առանձին ոյժ ստացաւ ժողովրդի մէջ վերջին ռուս-թիւրքական պատերազմից յետոյ, երբ ռուսաց բանակը տեղ բռնեց Կ. Պոլսից եօթ վերստ հեռաւորութեամբ: Քրիստոնէական ազատութեան Թագակիր Առաջնորդին հայերը համարեցին նոյն Օծեալին, որի մասին հազար տարի առաջ մարգարէացաւ իր ժողովրդին Մեծ սուրբը: Առհասարակ հայ ժողովրդի պատմութեան ամենալաւ էջերը վերաբերվում են հայ հոգեւորականութեանը, որոնք գործել են ոգեւորված ազգասիրութեամբ և անձնազոհութեամբ:

Այդ բարձրութեան վրա է գտնվում այժմ էլ հայ հոգեւորականութիւնը Թիւրքիայի մէջ, որտեղ նա ամենագործունեայ դեր է կատարում ազգային ինքնագոյութեան տենչելու գործի մէջ: Հոգեւորականների հետ միասին նոյնքան եռանդով աշխատում է հայ ինտելիգենցիան և հայ երիտասարդութիւնը: Ամենամօտ համերաշխութեամբ միմեանց հետ կապված, առաջնորդված փորձված քաղաքական գործողներից, Կ. Պոլսի մէջ գտնված Հայաստանի վիճակը կարգադրողները ամենաուժեղ յարաբերութիւններ ունեն մի կողմից Եւրոպայի քաղաքական և գրականական աշխարհի մեծ ազդեցութիւն ունեցող անձանց հետ և միւս կողմից Մեծ և Փոքր Հայաստանի ամբողջ ազգաբնակութեան հետ: Այդ երկրի ամբողջ տարածութեան վրա մեծ քանակութեամբ ազգային ուսումնարաններ բացվեցան, որոնց իւրաքանչիւր օր այցելում են մօտ 50,000 երկսեռ երեխաներ:

Ժողովրդական ուսուցիչները այնտեղ ուրիշ պաշտօններ էլ են կատարում, ի միջի այլոց Կ. Պոլսի կենտրոնական խմբագրական մասնաժողովի թղթակիցների պարտականութիւնները: Այնտեղ ուղարկվում են ամենամանրամասն տեղեկութիւններ քրդերի կամ թիւրքերի իւրաքանչիւր հարստահարութեան և չարագործութեան մասին: Ժամանակագրական ձեւով նրանց դասաւորելով և կարգի բերելով, մասնաժողովը տպում է նրանց առանձին գրքոյկներով ֆրանսիերէն լեզուով և տասնեակ հազար օրինակներով տարածում է ամբողջ Եւրոպայի մէջ:

Արտաքին պարսկական և եգիպտական կառավարութիւնների դիպլոմատիական նշանաւոր պաշտօնները Եւրոպայի մայրաքաղաքների մէջ գրեթէ բացառապէս հայերն են վարում, այդ քաղաքագէտներն էլ իրանց կողմից մասնակից են լինում իրանց հայրենակիցների գործին: Ժամանակ առ ժամանակ նրանց գրչի տակից դուրս են գալիս լրագրական կամ ամսագրական այնպիսի յօդուածներ արեւելեան հարցի վերաբերութեամբ, որոնք եւրոպական հասարակական կարծիքի վրա մեծ ազդեցութիւն են գործում: Այդպիսի յօդուածներ են վերջին ժամանակներում ֆրանսիական «Journal des Débats» և անգլիական «Standard» լրագիրների մէջ տպվածները: Այդ երկու յօդուածներն էլ Ֆրանսիայի և Անգլիայի մէջ մեծ տպաւորութիւն գործեցին և Փարիզի թիւրքաց ներկայացուցիչը շտապեց հեռագրել Կ. Պոլիս, «Journal des Débats» լրագրի համարների կալանաւորելու մասին, որը իր մէջ պարունակում էր «մտքեր թշնամաւորող» բովանդակութեան յօդուած: Չը նայելով գործադրած բոլոր միջոցներին ֆրանսիական լրագրի համարները Բուլղարիայի վրա անցան Թիւրքիա և մեծ քանակութեամբ տարածվեցին Կ. Պոլսի ազգաբնակութեան մէջ:

Յայտնի դիպլոմատների օրինակներից, ինչպէս են Նուբար-փաշա և Միրզա-Մելքում-խան, պարսկական դեսպան Լոնդոնում, յետ չեն մնում հայ երիտասարդ գիտնականները Եւրոպայում: Ստանալով պրոֆեսորների ամբիոններ Բեռլինի, Ցիւրիխի, Վիէննայի, Վենետիկի, Փարիզի և Օքսֆորդի մէջ, գիտութեան այդ մշակները իրանց թանգագին ժամանակի մի մասը նուիրում են ազգային գործին, երբեմն մամուլի ներկայացուցիչներին անհրաժեշտ տեղեկութիւններ տալով Փոքր-Ասիայի և Հայաստանի մասին, երբեմն իրանց հետաքրքիր պաշտօնակիցներին ծանօթացնելով Արեւելքի և Հայաստանի մէջ պատահած գործերի հետ: Պրոֆեսորների օրինակին հետեւում են նրանց հայրենակից ուսանողները, որոնք վերջին ժամանակներում նախապատւում են գերմանական համալսարանները, որտեղ այժմ 100 մարդու չափ հայ ուսանողներ կան:

Այսպիսով ազգային ազատութիւնը պատրաստելու համար կենտրոնացած են բոլոր ոյժերը, Արեւելքի երեք միլիոնաւոր ամենազարգացած ցեղի բոլոր հոգեկան և նիւթական միջոցները: Լրագրական գրիչը, դիպլոմատի արհեստը, հրապարակախօսի քարոզը, ամենավերջին գիւղացու կոպէկը, այս բոլոր նուիրած է ընդհանուր գործին: Մինչեւ անգամ կանայք չեն հեռանում տղամարդկերանց գործին մասնակցելուց. վերջին տարի ժամանակ նուիրատւութիւններ հաւաքելով զբաղված էին բացառապէս կանայք, որոնք միայն Կ. Պոլսի մէջ մօտ 400,000 րուբլ հաւաքեցին:

Ընդհանուր համերաշխութիւնը աւելի ամրացնելու համար մի նոր ոյժ երեւան եկաւ՝ դա հայ-կաթոլիկների, հայ-բողոքականների և հայ-լուսաւորչականների կատարեալ հաշտութիւնն է: Համաձայնութիւնը կատարված իրողութիւն է, որովհետև Ներսէս պատրիարքը եղբայրացաւ Կ. Պոլսի հայ-կաթոլիկների և հայ-բողոքականների հետ: Ներսէս պատրիարքը այդ ուղղութեամբ ինքը առաջին քայլն արաւ, ինքը իր սինոդով առաջինը այցելեց հայ-կաթոլիկների և բողոքականների առաջնորդներին իր եղբայրական զգացմունքները յայտնելու համար: Արժանապատիւ պատրիարքի այդ վարմունքը մեծ տպաւորութիւն գործեց Կ. Պոլսի հայ հասարակութեան վրա, իսկ միւս օրը ներկայացան պատրիարքին կաթոլիկների և բողոքականների հոգեւորականները իրանց հոգևոր որդիներանց առաջին պատգամաւորութեան հետ:

ԹԻՒՐՔԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները:

Ամեն բան ապացուցանում է, որ Արեւելեան հարցը վաղուց նախատեսված և սպասված դժուարութիւնների հանդիպեց: Բ. Դրան պատասխանը պետութիւնների գրութեանը արդէն հրատարակված է և նոյն բովանդակութիւնը ունի, ինչ որ հաղորդում էին մի քանի ժամանակ առաջ տարածված լուրերը: Բ. Դուռը հրաժարվում է զիջել Յունաստանին Եանինա, Լարիսա և Մեցովո և առաջարկում է բանակցութիւններ սկսել պետութիւնների հաւատարմատարների հետ Կ. Պոլսի մէջ «յոյն-թիւրքական սահմանական գծի և մի քանի երկրորդական հարցերը վերջնականապէս վճռելու համար»: Ֆրանսիական „Rappel" լրագրի հաղորդած լուրը Վիկտորիա թագուհուց սուլթանին ուղարկված նամակի մասին նոյնպէս հաստատվեցաւ: Լորդ Գրենվիլ յայտնեց պարլամենտի մէջ, որ այդ նամակը անգլիական թագուհին գրել է կառավարութեան համաձայնութեամբ և որ նրա մէջ թագուհին յոյս է յայտնում, թէ սուլթանը մինչեւ անգամ մի քանի զոհաբերութիւններ կանի և կը կատարի Եւրոպայի միաձայն ցանկութիւնը:

Բրիտանական թագուհու այդ յոյսը չը կատարվեցաւ: Աբդուլ-Համիդ չը կատարեց անսահմանափակ թագաւորի պարտականութիւնը վիճելի հարցը վճռելու համար: Նա յայտնեց անգլիական դեսպան պ. Գոշենին, որ իբրև սահմանադրական թագաւոր, հարցի վճռելը յանձնում է Բ. Դրանը, իսկ այս վերջինի պատասխանը արդէն յայտնի է:

Այսպիսով այժմ էլ, ինչպէս 1877 թուականի Կ. Պոլսի կոնֆերենցիայի ժամանակ, առաջ է գալիս Թիւրքաց սահմանադրութիւնը: Մի անգամ խաղացված կատակը նորից երեւան է գալիս, միայն մի քանի փոփոխութիւններով: Այս անգամ սուլթանը չէ համարձակվում պարլամենտ հրաւիրել, համոզված լինելով, որ վերջին պատերազմից նուաղած և աղքատացած Թիւրքիայի մէջ անկարելի կը լինի այնպիսի մարդիկ հաւաքել, որոնք մեծամասնութիւն կազմեին և պաշտպանեին այն քաղաքականութիւնը, որին այժմ հետեւում է Բ. Դուռը: Կ. Պոլսից ստացված վերջին լուրերից երեւում է, որ սուլթանը չէ համարձակվում մինչեւ անգամ «ազգային մեծ ժողով» հրաւիրել, որովհետև Թիւրքաց աստիճանաւորներից անգամ, որոնցից մտադրված էր ժողով կազմել, մի մեծամասնութիւն չի կայանայ, որ հաւանի Եւրոպային ընդդիմանալու միտքը: Այդ ընդդիմադրութիւնը այժմ խորհուրդ են տալիս միայն ալբանացիները, որոնք այժմ շրջապատում են սուլթանին մինիստրների, բարձրաստիճան անձանց և այլ պաշտօնների: «Times» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ սուլթանը անձնականապէս վախենում է ալբանացիների անբաւականութեան հետեւանքներից և այդ լուրը ճիշտ կարող է լինել, եթէ ի նկատի առնենք սուլթանի երկիւղը իր ապահովութեան համար: Այդ է պատճառը, որ սուլթանը այժմ իրան սահմանադրական թագաւոր է յայտնում և խօսում է Բ. Դրան մասին, որպէս զի, եթէ մի բան պատահի, պատասխանատուութիւնը այս վերջինի վրա ընկնի:

Գործերի այսպիսի դրութեան ժամանակ պետութիւնների համար անկարելի է դառնում գործը այն կարգով տանել, որ ընդունված է քաղաքակրթված կառավարութիւնների մէջ: Բանակցութիւնների ժամանակը անցել է, այժմ գործելու ժամանակ է: Բ. Դուռը այժմ կարող է սպասել միայն պետութիւնների վճռական գրութեանը, որով նրանք իրանց պահանջների կատարելու ժամանակամիջոցը կը նշանակեն և կը յայտնեն, որ այդ ժամանակամիջոցի անցնելուց յետոյ Թիւրքաց ջրերի մէջ կերեւայ պետութիւնների զինուորական միացեալ նաւատորմը: Դուցէ այդ ժամանակամիջոցը բաւական երկար կը լինի, որպէս զի Յունաստանը կարողանայ իր զօրքերը կազմակերպել:

Եթէ նշանակված ժամանակամիջոցի մէջ Բ. Դուռը չի կատարի պահանջները, այն ժամանակ պետութիւններին կը մնայ իրագործել իրանց սպառնալիքը:

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալը:

Մի չար բաղդ ծանրանում է անգլիական պատուաւոր կառավարութեան վրա: Գլադստոնի նոյն իսկ առաջին քայլերին դժուարութիւններ պատահեցան: Մի շարք ներքին անբաւականութիւններից յետոյ պատահեցան Կանդահարի անցքերը և ապստամբութիւն Հարաւային Աֆրիկայի մէջ: Այժմ այդ բոլոր դժուարութիւններին աւելանում է և Գլադստոնի հիւանդութիւնը, որ բաւական վտանգաւոր պէտք է լինի, որովհետև հեռագիրը հիւանդութեան մանրամասները չէ հաղորդում:

Անգլիական թիւրքասէրները, որոնք չափազանց անբաւական էին Անգլիայի արեւելեան քաղաքականութեան փոփոխութեամբ, այժմ ուրախանում են Գլադստոնի հիւանդութեան պատճառով, յուսալով որ այդ հիւանդութիւնը միջոց կը տայ անգլիական կառավարութեանը շարունակել իր նախկին արեւելեան քաղաքականութիւնը:

Բայց եթէ անգլիական պահպանողականները կարծում են, որ Գլադստոնի հիւանդութիւնը, կամ մինչեւ անգամ մահը կարող է փոխել արեւելեան անցքերի ընթացքը, նրանք չափազանց սխալվում են: Արեւելեան հարցի առնթիւ այժմեան մինիստրութեան անդամների մէջ կատարեալ համաձայնութիւն է տիրում: Սկսած եւրոպական ճնշումից Բ. Դրան վրա նոյնքան լորդ Գրենվիլի, մարկիզ Հարտինգտոնի և պ. Բրայտի գործ է, որքան պ. Գլադստոնի: Քանի որ կառավարչական ղեկը ազատամիտների ձեռքին կը լինի, ով ուզում է լինի մինիստրութեան առաջնորդը, բրիտանական կառավարութեան նախագիծը Բ. Դրան վերաբերութեամբ չի փոփոխվի:

Եթէ մինչեւ անգամ Անգլիան յետ կանգնի իր բռնած ընթացքից, հազիւ թէ դրանով նա կարողանայ ազդել պատրաստվող անցքերի վրա: Արդէն Եւրոպան հաշտվել է այն մտքի հետ, որ պէտք է ստիպել թիւրքաց կառավարութեանը կատարել Եւրոպայի պահանջները: Այժմ գործը արդէն կանոնաւոր ուղղութիւն է ստացել և անգլիական կառավարութեան յետ կանգնելը մինչեւ անգամ վնասաւոր կարող է լինել Թիւրքիայի համար:

Բայց ինչպէս Անգլիայի համար Գլադստոնի մահը անփոխարինելի կորուստ կարող է լինել: Բացի այն, որ Անգլիան կը կորցնէր մի հանճարաւոր ֆինանսիստ, որ կարողանում է կարգի բերել անգլիական խառնված ֆինանսները, ազատամիտները կը կորցնէին նրա մէջ մի այնպիսի առաջնորդի, որ միակ կարողանում է յաղթել չափաւոր ազատամիտների յամառութեանը ներքին վերանորոգութիւնների գործի մէջ:

Fonds A.R.A.M

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՈՒՄԱՆ, 30 յուլիսի: Կանգահարի զօրքերը մի քանի կռիւներ ունեցան հարեւան պետերի բնակիչների հետ և յետ մղեցին թշնամուն: Այսօր Արգունախանան Սոխյարայի հետ ատելութիւն կունենայ Ներպուրի մէջ Կաբուլի մօտ: Ցետոյ Սոխյարա իր զօրքերով խոկոյն կուգայ Գանդամակ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 յուլիսի: Պետական բանկի 5% առմանակը առաջին շրջանի արժէ 93 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 37 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան առմանակը արժէ 224 ր. 50 կ., երկրորդ 223 ր. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան առմանակը արժէ 91 ր. 62 կ., երկրորդ 91 ր. 12 կ., երրորդ 91 ր. 12 կ., ասկի 7 ր. 84 կ.: Ռուսաց 1 բուրլ Լօնդօնի վրա արժէ 25, 25 պէնս, ռուսաց 100 բուրլ Համբուրգի վրա 215 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 266 Ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը շատ հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՏԱԿՍԱ

Ուսուցիչներուն համար, որոնք ծախսում են Թիֆլիսի բազարներում, խանութներում և մանաճելով, օգոստոսի 1-ից մինչև 15 ներկայ 1880 թ.:

ԹԱՆՁ ՀԱՑ

Ցորենի ալիւրից

1	տեսակի	1 Ֆունտ	5 կոպ.
2	»	» »	4 »
3	»	» »	— —

Նոյն ալիւրից թանրի մէջ թխած

1	տեսակի	1 Ֆունտ	6 կոպ.
2	»	» »	4½ »

Կրպակակից խառն ցորենի ալիւրի հետ

Լաւաշ	1 տեսակի . . .	1 Ֆ.	8 կոպ.
	2 »	» »	5½ »
	3 »	» »	5 »

Տաւարի միս

1	տեսակի	1 Ֆ.	8 կոպ.
2	»	» »	7 »
Սուկի	. . . . .	» »	14 »
Ոչխարի միս.	. . . . .	» »	9 »

Այդ տական չէ վերաբերվում գիւղական արդիւնաբերողներին, որոնք ծախում են իրանց արդիւնքները Թիֆլիսի հրապարակների և վաճառանոցների վրա:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԳՈՒՐՍ ԵԿԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Ջ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրամաճառանոցի և ծախւում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՈՆԵՆՑԻՑ: Ա. ՏՏՐԻ Նախապիտելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Ր. ՏՏՐԻ մեծ ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

դրամարկղ առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏՏՐԻՆ մեծ քարտէսը:

16—20

Ազգ. քանդրատօրաց երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձու { Սարգիս Միրզայեանց. / Ղաստուր Խաչակեանց.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախվում են ԳՐԱՍԵԼԱՆ, ՀԱՑԻ ՍԵԼԱՆ և ԱԹՈՌՆԵՐ: Ելիսավետինսկայա փողոց № 46 Թիֆլիսում:

4—5

Շուտով լոյս կը տեսնէ ԴԱՇՆԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐ ՁԱՁՆԱԳՐԱՑ ժողովրդական գործածական նրբերի

ՆՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԲԱԿԸ

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուքիասեանցի, և կը պարունակէ իւր մէջ վեց երգեր:

1) «Ազնիւ ընկեր մեռանում եմ»
2) Ախնապիշ անձայն»
3) «Քաժանիներ առնուինք, եղբայրք»
4) Մեր հայրենիքը, թշուառ. անտէր»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տեսարակի գինը լինելու է մի բուրլի. ցանկացողները առանալ գաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տեսարակը, որ պարունակում է իւր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ». 3) Ցուրտը փչեց» և 4) «Մինճեուանակ» պէսք է ուղարկեն մի բուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջումն է լինելում:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է նոր ԵՐԳԱՐԱՆ ՖԼԻԳՈՒՆԻ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակված երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները առանալու և՛ ձայնագրած երգերը, և՛ Ֆլեյտաւնի նոր երգարանը, պէսք է ուղարկեն մէկ բուբլի և 30 կոպէկ. հետևեալ հասցէով: Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузамаджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 13.

Համեմատեցէք անգլիական խանութի թէյի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

43—100

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Դավրօնակի կանանց հիւանդ. Գօրալեվիչ նեքբին հ., Յօանեանց կանանց և երեխաների հ., Ջիւչաբեանց խիրուրգիական և աչքերի հ., Շամբօրակի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինակ վիշ խիրուրգիան հ., Վ. զօրօվ վիներական և բողոքի հ., Լևյիս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեագօվ, Լիսիցեվ և Վամիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուպվօվակի ներքին հ., Շամբօրակի վիներական և կաշու հ., Ասատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բողոքի հ., Յօանեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերտիշեվ ներքին հ., Ջիւչաբեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Դավրօնակի կանանց հ., Մինակեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեագօվ և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շամբօրակի և Ասատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Շամկօվի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւեաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ, ԵԻ ԸՆԿ.

*յայտնում է այդ աւելտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Վժակելի տան վերին յարկը Գանօվկայա փողոցի և Երիվանսկայա հրապարակի անկիւնի վրա: Ցուրքերի տալու և մուտքերի ստանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինելու առաւօտեան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փոխադրութեան տոմսակներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հատուցանվի: Այդ պայմաններով մի տոմսակ գնողը տարվայ ընթացքում մատ ուղի տարածից այն 20 համարներին, որոնք ցոյց են տրված վկայականի մէջ չորս տիրաժներին: Ցանձնարարութեամբ գնում է և ծախում է մատնաւոր անձանց ամեն տեսակ անշարժ կայքեր, կոմիսիայով ծախում է ապրանքներ և նկուճներ: Ճախում է տրված պայմանագիրներ, բնակարաններ, խանութներ և դասարկ տեղեր քարհոլով տալու համար: Ցուրքերին մինչև նոր կարգադրութիւնը վճարում է.

1) Պահելու համար մինչև պահանջելը 4½%, պայմանաւոր 5½%, 2) տուրքերին 6 ամսով 5½%, 9 ամսով 6½%, 1 տարով 7½% 1½ տարով 8%, 2 տարով և աւելի 9:

3) Այդ ընկերութեան 1 կոպեկի պայ ունեցողների մատնաւոր պայմանաւոր տուրքերին 9%:

Պարտամուրհակով յայտնի անձի ապահովութեամբ փող տալու ժամանակ առնում է մի ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:

Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենեակի կառավարչից:

10—10 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵԻ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորակոչների ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԿԱՅ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆԵՎԵՆ ԳԻՇԵՐՕՐԻԿ ԵԻ ԿԻՍԱԳԻՇԵՐՕՐԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Մխիթարեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի առանալ ԿԱՖԻ, ՇՕԿՕԼԱՓ, ԹԷ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ:

30—40

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱՆ՝ հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ տեսակների 1-ից յանկանում է ՈՒՍՄՈՑՉԻ ՊԱՇՏՕՆ առանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և դասատներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՖԻԱՆՋԻԱՆՑ ԴՐԱՎԱՃԱՌՈՒԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

7—22

ՄԻՆԱԱ ԳԻԻԼԶԱՏԵԱՆ, որ կանտօրայ ունի ԹԱՓԻՒՉ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ ԱՈՒՏՐԱԿԱՆ ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կօմիսիօնով կատարելու անյապաղ, ամենայն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վաճառականներին, առաջարկելով իր ծառայութիւնը:

5—5

Дозволено Цензурою 1 Августа 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա Մխիթարեանի Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 135 Օգոստոսի 5 (17) 1880 Օգոստոսի 5 (17) № 135

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կօպէկ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կօպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վարժուհիների խնդիրը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։—Արտաքին տեսութիւն։ Բէլգիա։ Աֆգանիստան։ Նամակ Թուրքիայից։ Նամակ Թուրքիայից։—«Մշակի» հեռագիրները։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Նամակ Շամախուց։

ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ընդգագար մեր լրագիրների մէջ տպվում են յայտարարութիւններ մեր գաւառական այլ և այլ քաղաքների օրիորդական դպրոցների կողմից, որոնցով հրաւիրվում են միջնակարգ դպրոցների համար վարժուհիներ։

Գաւառական հայաբնակ քաղաքները միշտ Թիֆլիսին են դիմում թէ ուսուցիչներ և թէ վարժուհիներ իրանց դպրոցների համար հրաւիրելու նպատակով։ Գաւառացին առում է՝ Թիֆլիսում կայ Ներսիսեան դպրոց, Թիֆլիսում կայ Գայեանեան օրիորդական դպրոց. առաջինը ուսուցիչներ է պատրաստում, երկրորդը վարժուհիներ է պատրաստում։

Բայց Ներսէսեան դպրոցի վերաբերութեամբ մենք արդէն մեր կարծիքը յայտնեցինք, ցոյց տալով թէ անհնարին է այդ դպրոցից սպասել որ նա պատրաստի կրթված ժամկավարժներ։ Բայց այնուամենայնիւ, երբ մի գաւառական քաղաքից յայտարարութիւն է լինում, որով հրաւիրվում է ուսուցիչ այս կամ այն գաւառական դպրոցի համար, դարձեալ գտնվում են Թիֆլիսում վարժապետներ, որոնք պատրաստ են գնալ գաւառները։

Բայց Գայեանեան օրիորդական դպրոցից, չը նայելով որ այդ դպրոցը համեմատաբար աւելի բարձր է իր ուսման ընթացքով, իր կազմակերպութեամբ ու կանոնաւորութեամբ, քան թէ Ներսիսեան դպրոցը, դարձեալ երբէք չեն գտնվում օրիորդներ, որոնք պատրաստ լինէին գնալ գաւառներ վարժուհիների պաշտօնը ընդունելու համար։

Թիֆլիսում ուսում առած հայ աղջիկը երբէք չէ համաձայնվում Թիֆլիսից հեռանալ և մի որ և է պաշտօն վարել գաւառական մի ուսումնարանում։ Պատճառը գուցէ այն է, որ Թիֆլիսեցի հայ օրիորդը միշտ ճնշված է նախապաշարմունքի տակ, աւանդական կապերով կապված է իր նեղ շրջանի, իր ընտանիքի հետ։ Թիֆլիսի հայ աղջիկը միայն այն ժամանակ կը համաձայնի հեռանալ Թիֆլիսից, երբ կը պսակվի մի տղայի հետ, որի պարապմունքն ու պաշտօնը գաւառներումն է։ Բայց միայն գընալ իր ապրուստը իր աշխատանքով ապահովացնելու համար,—Թիֆլիսեցի հայուհին իր արժանաւորութիւնից ստոր է համարում, չը նայելով որ գաւառական վարժուհիներին առաջարկվող ռոճիկները բաւական գրաւիչ են։

Թիֆլիսեցի հայերը առհասարակ և մասնաւորապէս Թիֆլիսեցի հայուհիները իրանց բնաւորութեամբ չափից դուրս անշարժ, նախապաշարված պահպանողական են, սեփական նիստ-կացից զուրկ են, անընդունակ են նոր մտքեր, նոր գաղափարներ սեփականացնելու, նոր, ժամանակակից շարժմանը յարմարվելու։ Թիֆլիսեցին հնամոլ է։

Գաւառացի հայը աւելի շարժվող է, աւելի առաջադէմ է, աւելի նորասէր է, աւելի ընդունակ է նոր գաղափարներ, կեանքի նոր եղանակներ իւրացնելու։

Այդ պատճառով մենք կառաջարկէինք մեր գաւառացի հայերին, որպէս զի նրանք անդադար կարօտութիւն չը զգային վարժուհիների մէջ իրանց իգական դըպրոցների համար, այսուհետև այլ ևս երբէք յոյս չը դնեն Թիֆլիսեցի հայ օրիորդների վրա, այլ իրանք մտածէին իրանց քաղաքներից աշակերտուհիներ ուղարկել Թիֆլիսի Գայեանեան դպրոցը, որպէս զի իրանց դպրոցների համար իրանց հաշւով վարժուհիներ պատրաստեն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

26 յուլիսի

«Մշակի» լրագրի մէջ ուրախութեամբ կարդում ենք այն յօդուածները, որոնք պարունակում են իրանց մէջ լուսաւորչական, բողոքական և կաթօլիկ հայերին իրար մօտեցնելու և ազգային խնդիրներին վերաբերեալ անհրաժեշտ միաբանութիւնը ձեռք բերելու ջանքը։ Գովելի է յիշեալ լրագրի բռնած ներկայիս իմաստուն ընթացքը, որը յոյս է տալիս մեզ, որ կրօնական խնդիրների պատճառաւ իրարից օտարացած հայ եղբայրները՝ մոռանալով անցեալը, ճանաչեն միմեանց ինչպէս հարազատ արիւնակից եղբայրներ, ձեռք ձեռքի տուած սիրով և միաբանութեամբ աշխատեն ազգօգուտ գործերի մէջ, չը դիպչելով ի հարկէ իրար կրօնական համոզմունքներին։ Կրօնական համոզմունքը իւրաքանչիւր մարդու խղճի և Աստուծոյ մէջի բան է, որի վրա ոչ մարդացեալ Աստուածը և ոչ էլ նրա աշակերտները կամեցան իշխել։ Աստուած տուել է մարդուն ազատ կամք և համոզմունք, որոնց մէջ սխալուածների դատաստանը չէ տալիս ոչ պատրիարքների և ոչ առաքեալների ձեռքը, այլ թողում է իրան միայն։ Ուրեմն մեծ ծառայութիւն արած պիտի չը լինենք Բարձրեալին, եթէ մենք աշխատենք ստիպողութեամբ և հալածմունքով փոխել մեր եղբօր համոզմունքը և ստիպել նրան ակամայ ընդունել այն ինչ որ ընդունում ենք մենք, որը անհնար է և ընդդէմ մարդկութեան ազատ իրաւունքներին։ Խղճի և համոզմունքի ազատութիւնը մարդուս սեփականութիւնն է, խլել նրանից այդ ազատութիւնը նշանակում է զրկել նրան իր սեփականութիւնից և գերի անել օտարի համոզմունքին։ Մենք տեսնում ենք մարդիկ մի և նոյն բանի վրա զանազան համոզմունք և գաղափար ունեն, վասնորոյ համոզմունքի տարբերութեան պատճառաւ այս լուսաւորեալ դարում արիւնակից եղբօր թշնամի դառնալն աններելի սխալմունք է մանաւանդ կրօնական խնդիրների մէջ։ Աստծոյ թող տուր մարդուն իր կրօնական հաշիւն իր Աստուծոյ հետ տեսնէ, ինչպէս նա համոզված է, որը սորանում ուրիշի հաշիւ տալ պարտաւոր չէ, քանզի նրան դատողը և արդարացնողը Աստուած է։ Մի խառնուիր օտարի գործի մէջ, քեզ Աստուծոյ հաւատարիմ ծառայ ցուցանելով, այլ բաւականացիր նրանով թէ որ կարող եղար քո այլադաւան եղբօրը ազգային ընդհանուր խնդիրների մէջ համաձայնեցնել քեզ։ Բայց սա ուրիշ կերպ չէ կարող լինել, եթէ ոչ քեզ նրան անկեղծ և հաւատարիմ բարեկամ ճանաչեցնելով։ Ինչ է պատճառն, լուսաւորչական հայ եղբայր, որ հալածում ես քո արիւնակից հայ-բողոքական և հայ-կաթօլիկ եղբայրները, չէ որ նրա համար, որ նրանք այն կրօնական համոզմունքը չունեն, ինչպէս դու և կը կամենայիր՝ թէ որ ճշմարտապէս Աւետարան հոգւով Աստուծոյ եկեղեցւոյ նախանձաւորն ես, որ նրանք ևս քեզպէս հաւատային և քեզպէս մտածէին հոգւոյ փրկութեան վրա, թէ ոչ կորած են։ Նպատակը բարի է, բայց տես խնդրեմ, "որ ճանապարհով կարելի էր քեզ հասնել քո բաղձանքին, հալածմունքի թէ սիրոյ և յորդորանաց ճանապարհով։ Չէ որ ամենասխալ համոզմունքն անգամ հալածանաց մէջ աւելի հաստատվում է և խոր արմատ գցում մարդուս սրտի մէջ։ Թէ չես ուզում հայ-բողոքականների և հայ-կաթօլիկների թիւը շատանայ, դադարիր նրանց հալածելուց։ Թողնելով կրօնական վէճերը մի կողմը մենք զանազան դաւանութեան պատկանող հայերս մօտենանք իրար սիրով, քաղցրութեամբ և միաբանութեամբ գործենք ազգիս յառաջդիմութեան համար, սա իրեն գուցէ կը բանայ մեզ ժամանակով մօտենալու իրար և կրօնական խնդիրների մէջ անգամ։ Մարդս մի և նոյն համոզմունքի չէ մնում ամեն ժամանակ։ Պօղոս առաքեալն որքան համոզված էր հրէից օրէնքների մէջ և ինչպէս իր կրօնքի նախանձաւոր դառած եռանդով հալածում էր քրիստոնեաներին, որ նոյն օրէնքներին չէին հնազանդում, բայց ինչպէս շուտով փոխում է նա իր կրօնական համոզմունքը և սկսում մաքառել ընդդէմ այն կրօնքին, որի ախոյեանն էր հանդիսանում իր ժամանակին։ Ոչ մի եկեղեցի թող չը կարծէ, որ նրա բոլոր օրէնքները, կանոնները և իսկ համոզմունքը այն աստիճանի անսխալ և Աստուծոյ աւետարանին համաձայն են, որ նրանից այժմեան լուսաւորեալ դարում մին կէտ ոչ կարելի է պակասացնել և ոչ աւելացնել։ Առաքեալներն անգամ իրանց կենդանութեան ժամանակին Աստուծոյ նորակառոյց եկեղեցւոյ մէջ ժամանակին նայելով փոփոխութիւններ արին. նրանք առաջ համոզված էին, որ սրբութեան հացը և գինին առհասարակ հաղորդութեան ժամանակ ամեն մինը կարող է վեր առնել, ինքը ուտել և խմել, վասն որոյ մի առժամանակ թոյլ տուին քրիստոնեաներին սրբութեան ընթրիքի խորհուրդը այդ տեսակ կատարելու, բայց երբ տեսան սրա դառն հետևանքը, փոխեցին այդ կարգը, առանձին մարդիկ ընտրելով նրան մատակարարելու համար։ Երբ որ առաքեալներն այդ կարճ միջոցում փոխում են իրանց համոզմունքը և ստիպվում նորոգութիւններ մտցնելու Աստուծոյ նորակառոյց և աւելորդապաշտութիւնից մաքուր եկեղեցւոյ մէջ, ապա ինչ մեծ բան է այժմեան թէ լուսաւորչական, թէ բողոքական, թէ կաթօլիկ և թէ այլ եկեղեցիների հետ այնպէս վարվել, երբ դարերի ընթացքում եղել են նրանց մէջ պօղոսեաններ և ապօղոսեաններ և նրանց իւրաքանչիւր կարգի հոգևորականները իրանց հասկացողութեան համեմատ մի բան աւելացրել են կամ պակասացրել նրանց մէջ։ Վեր առ կարդա զանազան եկեղեցիների աստուածաբանութիւններն և տես թէ որքան տարբեր գաղափարներ, նոյնպէս, բացատրութիւններ այս և անհամաձայնութիւններ կան մի և նոյն եկեղեցւոյ վարդապետների մէջ։ Հիմայ ով կը յանդգնի ասել, թէ այս կամ այն ինչ եկեղեցի աստուածաբանի գրուածներն անկարելի է մարդկանց այժմեան գաղափարները և հասկացողութիւնները աւելի հասուն և զարգացած ժամանակը անաչառ կրիտիկայի ենթարկել։ Կը գայ ժամանակ և կը գայ մեր լուսաւորեալ ապագայ սերունդը, որին յոյս կայ որ յաջողի և կրօնական համոզմունքների տարբերութիւնները վերացնելու և զանազան դաւանութեան պատկանող հայերից կազմելու մի ամբողջ եկեղեցի, մի կողմը դնելով ի հարկէ լուսաւորչական, բողոքական և կաթօլիկ անունները, կոչելով նրան շատ կարելի է ընդհանրական հայոց բարեկարգեալ եկեղեցի կամ մի աւելի յարմար անունով։ Սա մեզ համար դեռ վաղ է, համարեա թէ անկարելի է, քանզի մեզ ազգը տակաւին զարգացած չէ և յայտնի է, որ ֆանատիկոսութիւնը ազգի անկիրթ մասի վրա մեծ ուժ և ներգործութիւն ունի։ Բայց յառաջ քան սա, մենք դաւանութեան պատճառաւ ցիր ու ցան եղած բոլոր հայերս պարտ ենք հոգալ ամբողջ ազգ դառնալու որ կարող լինինք ապագայում ամբողջ եկեղեցի կազմելու, թէ ոչ մենք ատելով և կծելով իրար աւելի կօտորանք իրարից և կը հեռանանք բուն խնդրից, որով և պատճառ կը տանք մեր [illegible], քանզի մենք նրա գործը դժուարացրած կը լինենք ապագայում և արգելք դառած այդ գեղեցիկ նպատակին հասնելու։ Միմիայն փափագելի էր մեզ ազգիս լուսաւորութեան և բարգաւաճութեան վրա ուրախացողներիս, որ հայոց լրագիրներն սիրով և միաբանութեամբ գործէին ազգիս միութիւնը պահպանելու, մին աչքով նայելով ամեն մի դաւանութեան պատկանող հայի վրա, ինչպէս անում է «Մշակը», բայց տեսնելով դոցա անմիաբանութիւնը, յառաջ նորոգվում են մեր հին ցաւերը, մեր անցեալը, երբ ազգիս անդամների անմիաբանութեանը զոհ եղան նրա լուսաւորութիւնը, տեսակ տեսակ շահերը, թագաւորական գահը, այս և նոյն իսկ ամբողջ ազգն անգամ։

Հայ-աւետարանական

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՍԷՐ

—

Ամսագիր 25

«Հայկազն» տպարան № 545 տպագրեր է մեր մեծ

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԱՐՈՒԹԻՒՆ

Վարչական ոճրագործութիւնները Պարսկաստանի մէջ։

Տեսնենք թէ հասարակութիւնը ինչ իրաւունք ունի բժշկին ամեն րոպէ անհանգստացնել, գիշեր թէ ցերեկ, քաղցած թէ յոգնած, շոգին թէ ցրտին, փոքր ինչ սկար, թէ հարսանիքից, պահանջում է թէ՝ բժիշկ, արի հիւանդիս տես (երբեմն էլ սուտ), բայց եթէ իր բնակարանը յանկարծ քանդվում է, ուստի և մշակներին չէ ասում եկէք տունս շուտ շինէք, ձմեռ է, ապրելու տեղ չունեմ, կամ թէ անրագրութիւն պատահելիս չէ ասում փաստաբան, արի փաստաբանէն սկսի պաշտպանել ինձ պաշտպանելու դատաւորի առջև, որովհետև տեսով տեղով կորչում ենք. կամ թէ երբ վաճառականը քէֆ է անում, չէ ասում, արի շուտ դուքանդ բաց արա, մահուդ տուր այս րոպէիս չօր պէտք է կարել տամ, տկլոր եմ, ձմեռ է, կը հիւանդանամ, կը մեռնեմ: Հասարակութիւնը միայն այն ժամանակ այդպէս պահանջ կարող է անել, եթէ բժիշկը նրա հաշւով գիմնազիայում կրթված լինէր և համալսարանում բժշկութիւն ուսած լինէր: Օրինակ, գերձակի աշակերտութեան ժամանակ, ես չեմ հոգացել նրա մասին, ինչպէս կարող եմ պահանջել, որ նա ամբողջ օր աշխատելուց յետոյ գիշերը անքուն մնայ և ինձ համար չոր կարի այն էլ ձրիաբար, որովհետև հակառակ դէպքում ես էքուց չոր չեմ ունենալու, որովհետև ես ալեկոր ման պէտք է գամ, կամ որովհետև ես կարող եմ հիւանդանալ: Եթէ ես կամենում եմ գիտութիւն սովորել, միթէ իրաւունք ունեմ մի վարժապետից պահանջել որ նա ինձ ձրիաբար դաս տայ, օրը քանի անգամ էլ ցանկանամ, և երբ կամենամ, նա պատրաստ լինի ինձ դաս տալու, առաջ բերելով թէ ոգէտ միայն ինձ համար մահից վատ է: Բայց իմացէք, պարոններ, որ իրաւունք ճանաչելը անհրաժեշտ է ամեն մարդու համար: Բոլոր դասակարգի մարդկանց հետ իրաւունքով են բան բռնում, բայց բժշկի վերաբերմամբ մեր հայերը իրաւունք չեն ճանաչում: Ցեմնում էք, որ ձեր պահանջը բժշկից անիրաւ է, բժիշկն երբէք չէ հրաժարվում ձեզ օգնել ինչպէս փաստաբանը, ուսուցիչն և այլն: Բայց նա պահանջում է միայն վարձատրութիւն, ոչ թէ անպատճառ, կամ շուտ բժշկելու համար, այլ նրա համար որ ինչքան կարողանում է՝ աշխատում է: Պէտք է իմանալ որ բժշկի համար պարծանք է և մեծ ուրախութիւն բժշկել հիւանդին, ինչքան կարելի է շուտ և յաջողակ, բայց երբեմն բժշկի այս ցանկութիւնը նրանից զանազան անկախ պատճառներով չէ իրագործվում: Հասկանալի է, որ երբէք չը պէտք է կարծել որ բժիշկը ցանկութիւն չունենայ շուտով բժշկելու իր հիւանդին, եթէ հիւանդը չէ բժշկվում. այս պատճառները կարող են լինել հետեւեալները:

1) Բժշկի պատուէրները չեն կատարում, երբեմն չնչին պատճառներից է կախված հիւանդի բժշկվելը. լաւ գիտցէք, որ եթէ բժշկի պատուէրները իր ժամանակին չը կատարէք, հիւանդութիւնը այն ժամանակ դառնում է անբուժելի, օրինակ թոքի բորբոքում, որ կարող է դառնալ բարակացաւ:

2) Երբեմն հիւանդի կազմվածքը թոյլ է լինում և չէ կարողանում դիմանալ հիւանդութեանը:

3) Երբեմն գեղատունը տալիս է հին, իր ուժը արդէն կորցրած դեղ, որ, ի հարկէ, չէ ներգործում ցաւի դէմ.

4) Հիւանդի բնակարանը մեծ նշանակութիւն ունի, որ շատ անգամ անպարկեշտ, նաև վնասակար է (խոնաւ, կամ ցուրտ) այդ դէպքում յաջողակ բժշկելն անկարելի է:

5) Շատ անգամ ցաւը լինում է անբժշկելի, օրինակի համար բարակացաւը:

6) Արդարութեան համար խոստովանում եմ, որ տարաբաղդաբար երբեմն բժիշկն ինքն է մեղաւոր լինում, որ հիւանդը չէ առողջանում, որովհետև չը կարողացաւ հասկանալ նրա հիւանդութիւնը: Բժիշկը Աստուած չէ, նրան ամենագէտ չը պէտք է կարծէք, բայց պէտք է աւելացնեմ, որ ցաւը չը հասկանալը շատ սակաւ է պատահում, որովհետև դժուար դէպքում բժիշկը պրպտում է գրականութեան մէջ, թէ այդ հիւանդութիւնը ինչից է գոյանում և ինչպէս պէտք է յաջող բժշկել, կամ թէ խորհրդակցում է ընկերակից բժիշկների հետ, հրաւիրում է, ցոյց է տալիս հիւանդին և նրանց միաբան խորհրդով հիւանդութիւնը որոշում են և այդ որոշումին համաձայն դեղ ու դարման անում: Պէտք է գիտենաք, որ բժիշկը դիպլոմ ստանալու ժամանակ, նա երդվում է, որ ամենայն դժուար դէպքում նա իրեն պարտաւոր է համարում օգնութիւն կանչել իր ընկերներին, խորհրդակցել նրանց հետ, և եթէ ընկերն է կանչում, գնալ իր կարծիքը ու հմտութիւնը հաղորդել: Եթէ նա չերդվէր էլ, այնուամենայնիւ վերոյիշեալ կերպիւ պէտք է վարվէր, որովհետև մարդկային զգացմունքը և իր օգուտը այնպէս են պահանջում. օրինակի համար երկու մարդ տիֆ են ստանում, երկուսին էլ մի և նոյն բժիշկն է բժշկում մի և նոյն կերպիւ և դեղերով, որոնցից մէկը առողջանում է, միւսը մեռնում, միթէ բժիշկն է մեղաւոր.—այստեղ մեղաւոր են կամ հիւանդի կազմվածքը, կամ նրա առողջապահական հանգամանքները, [...]երը:

Fonds A.R.A.M

դայմոններին, բաւականութիւն կը տայ իր չնչին, մանր բնաւորութեան անտանելի պահանջներին։

Մինչև սպիտակ մազերը, մինչև գերեզմանը նա մնում է բնաւորութեամբ անչափահաս աշակերտ, շ կ օ լ ն ի կ, մանր, սրտմեղի խորհրդաներ և թշնամութիւններ վարող, նախանձոտ էակ, զուրկ բարձր իդէալներից, լայն գաղափարներից, ամեն գովելի բանին նախանձոտ և փոսող մարդ, կարճատես մտածող, մանր պակասութիւններ բըբրող և խոշոր պակասութիւններ չը նկատող, ուրիշի ընտանեկան կեանքին դիպչող և նրա հասարակական գործունէութիւնը գնահատել անկարող մարդ....

Փակված դպրոցի աշակերտական կեանքը իր անջնջելի դրօշմով դրօշմել է նրա բնաւորութիւնը ամբողջ կեանքի համար։

Եւ ահա այդ բոլոր մարդիկ, զուրկ որ և է բարձր հասարակական գաղափարից, հեռու մեծացած ընտանեկան կեանքից, ընտանեկան հսկողութիւնից և նրա բարերար ազդեցութիւնից, իրանց հասակակից տղամարդիկների չոր ու ցամաք շրջանում կրթված, մանր և չնչին էակներ՝ նրանք ասպարէզում գտնում են հասարակական գործիչներ մեզ մօտ....

Հասկանալի է, ուրեմն, թէ ինչ կը լինի այն հասարակութիւնը, որ առաջնորդվում է այդ տեսակ գործիչներով, որոնք արդիւնք են այլանդակ, հիւանդոտ, հրէշաւոր, անբնական հիմնարկութեան, որին անուանում են փակված դպրոց։

Եւ բաւական չէ որ մեր գործիչների մեծ մասը իրանց կրթութիւնը ստանում էին փ ա կ վ ա ծ դպրոցներում, որոնք ժամանակակից մանկավարժութեան մէջ համարվում են հնացած, վնասակար, անժամանակակից հիմնարկութիւններ, — մեր արդէն եղած այդ դպրոցներին դարձեալ աւելացաւ մի փ ա կ վ ա ծ դպրոց, որ աւելի էլ հեռու է հասարակական կեանքից, աւելի էլ առանձնացած է, քան թէ մինչև այժմ եղածները։ Դա Էջմիածնի ճեմարանն է։

Կարող ենք երևակայել թէ ինչ հրէշներ կընծայի նա մեզ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Օգոստոսի 3-ին

Ահա երկու տարին լրանում է երբ Բաթումը անցաւ ռուսաց իշխանութեան ներքոյ կարծես ամենայն կողմից ամեն դասակարգի ժողովուրդ վազում սպասում էր այդ՝ գուշակելով Բաթումին երևելի ապագայ, առաջին վաճառաշահ քաղաք լինելու։

Թիֆլիսցւոց իսկոյն վաճառականներ, զանազան ընկերութիւնների ներկայացուցիչներ, արուեստաւորներ, գիւղացիներ, և մանաւանդ Թիֆլիսցւոց բազդախնդիր առևտրականներ, պարապ և անգործ իշխաններ, իւրաքանչիւրի ձեռին մի ծանօթագիր այս և այն նշանաւոր ազգականներից մի որ և է պաշտօն ձեռք բերելու համար, և այսպէս կարճ միջոցում Բաթումը դարձաւ մի խառն խառնիճաղանճ և պէս պէս ժողովրդի։ Վաշխառու վաճառականները շտապեցին վարձել հարիւրապատիկ գներով մահմետական վրացի բէգերի հոտած տները, գոմերը, գարմանատները և շուտով կարկատելով հարիւր մի տեղ քանդված պատերը, ծուխից սևացած առաստաղները թղթերով ծածկելով և մի կերպ գեղեցկացնելով մագազիններ, հիւրանոցներ և գինետներ պատրաստեցին մէկին հարիւր վաստակելու մտքով։ Ըստ երևոյթին կարծում էին թէ՝ իրաւ Բաթումը այնպէս է առաջանում, որ բոլոր եկած բազդախնդիրների գրպանները ոսկով պիտի լցվեն։—Պետերբուրգից նոր դարձած օֆիցերները շռայլութեամբ վառում էին այս և այն միջոցով ձեռք բերած փողերը ուրախ և զուարթ կոծծելով պօրտօ-ֆրանկօ՝ Բաթումի արժան շամպանիա գինին։ Հիւրանոցի տէրերն էլ յափշտակվելով ռուս օֆիցերների առատաձեռնութեամբ աւելի և աւելի զարդարում էին հոտած հիւրանոցները, վաճառականները աւելցնում էին խանութների թիւը, այնպէս որ մրգավաճառը, կերակուր պատրաստողը, հացթուխը և այլն իրենց վերջին կոպէկները ծախսեցին մանր փայտեայ խրճիթներ շինելու պօլիցիայից նշանակած տեղերում, յայտնի վճարով յօգուտ քաղաքի և այսպէս կարճ ժամանակում ունեցանք ուտելեղէնների առանձին փայտաշէն բազար, հազար և մէկ հիւրանոց ու խանութներ թիւով այնքան, որքան հոգի չէր կար Բաթումում, ինչպէս վերջին անգամ հաշւեցին։

Քանի մի ամսից յետոյ աշխուժութիւն տեղ Բաթումը նուազեց ժողովրդից, առևտուրը բոլորովին դադարեց։ Տարեկան 100 ռուբլու արժեցող տունը (Թուրքի ժամանակ), որ վարձել էին մինչև 2000 ռուբլով, այսպիսիները ամենքից առաջ գրպանները թափ տալով փախան, գալիս էին դոցա տեղ ուրիշները, նոյն կերպով վարձում և նոյն կերպով սնանկանալուց յետոյ փախչում էին։

Այսպիսի անհամբերչիս, անկանոն գործերի հետևանքը բնականապէս այն եղաւ, որ շրջմոլիկ վաճառականների պատրաստմամբ վաստակած փողերը՝ բոլորը անցան Բաթումի կալուածատէրերի ձեռքը, որոնք երազով չէին տեսած ռուսի թղթադրամի կապոցը, որ մեծ հաւատարմութեամբ ընդունում էին Թուրք կայմէի փոխարէն։ Իսկ մեր վաճառականները հառաչելով և իրանց խաբված տեսնելով, խեթում էին աչքերը Բաթումի վրա ու անիծելով հեռանում էին։ Ներկայումս Բաթումի այդ աննախանձելի դրութիւնը աւելի աստկանում է և օրից օր Բաթումը ամայանալու վրա է։ Աւելացրու սրա վրա և դժգոհ ժողովրդի գաղթելը։ Բաթումի նահանգը, որի բնակիչները վրացի-մահմետականներ են, բոլորը մեծ դժգոհութեամբ գաղթում են Տրապիզոնի և Բրուսայի շրջակայքը. ինչպէս լսեցի ժողովրդի կէս մասը արդէն գաղթել է և դեռ շարունակում են գաղթել։ Ի՞նչ անեն այն հին՝ թէով աւելի շատ խանութպանները, որոնց առևտուրը այդ գաղթող աջարացիների հետ է. կարծիք չը կայ, որ այս անգամ Աջարա ասված բազարը, որ Բաթումի մի հին բաղն է կազմում, կամայանայ բոլորովին և քաղաքիս մեծ դժուարութիւն կը լինի այդ անճոռնի և տգեղ շինութիւնները վերանորոգել սալ կամ ջնջել, երբ պարապ և անգործ կը մնան։ Աջարացոց գաղթել սկսելուց յետոյ օրէ օր աւելի թանգանում են անհրաժեշտ ուտելեղէնները, օրինակ ձուն, հաւը, միսը, ածուխը և այլն, այնպէս որ քիչ ժամանակից յետոյ շատ կը դժուարանայ մեր բաթումցոց ապրուստը։ Միւս ակնածութեան պատճառը երբեմն 10 օրով ոչ մի քաղաքի հետ հաղորդակցութիւն չէ ունենում և այդ միջոցում ուտելու ոչինչ չէք գտնի այստեղ,—որպէս մի կղզիացած «Սահարայում»։ Ինչ կարելի է սպասել այսպիսի մի քաղաքից, որ իրան կերակրել անկարող է և սպասում է ուրիշ քաղաքներից։ Իր շրջակայքում ոչինչ չունի արտահանելու և ոչ քաղաքում ծախելու բացի քանի մի մրգեղէններ, իսկ ժողովուրդը դեռ կիսավայրենի դրութեան մէջ և պարապմունքը յոկ առևտրականութիւն և մարդասպանութիւն է, ուտելիքն էլ միայն ճաղի է (կուկուրուզ) և լոբի։ Ահա այսպէս, մեր երևելի և հաչակված Բաթումը գտնվում է իր վաճառականութեամբ աւելի վատթար դրութեան մէջ, քան սպասում էինք, քան թէ սկզբներումն էր։ Աւելցան տէրութեան քանի մի շինութիւններ և միայն տէրութեան պաշտօնեաների տներ, որոնց մասին ուրիշ անգամ կը գրեմ։ Հայերս ունենք այստեղ մի փայտաշէն եկեղեցի, որ շինվեցաւ շնորհիւ տեղիս արժանապատիւ Տէր-Կոստանդին Տէր-Ստեփանեանի և տղայոց ու օրիորդաց ուսումնարան։ Հայերի թիւը (լուսաւորչական) հասնում է 400 հոգու, որոնց մեծ մասը Տրապիզոնից վաճառականներ են։ Ուսումնարանը կառավարում են հինգ հոգաբարձուներ, որոնք յանձն են առել ժողովրդից ամսական վճարք (իւրաքանչիւրի կարողութեան համեմատ) ժողովել, կամ ուրիշ մի այլ միջոց գտնել։ Ցաւօք սրտի պէտք է ասեմ, որ մեր տաճկահայ եղբայրները բոլորովին անտարբեր են մնում դէպի ուսումնարանը և եկեղեցին։ Խեղճ ռուսիայի

Երկու մարդոց ոտքը կտրվում է, ծանր կտրվածինը առողջանում է, իսկ թեթև վնասվողը մեռնում է, թէպէտև բժիշկն երկուսին էլ միակերպ էր բժշկում։

Զարմանալին այն է, որ բժշկին կանչում են, երբ արդէն հիւանդը հոգեվարքի մէջ է և պահանջում են նրանից առողջացնել մեռնողին։

Եթէ հարցնում ես, թէ ինչի վաղ չը կանչեցիք, պատասխանում են, թէ մենք կարծում էինք, որ հիւանդութիւնը չնչին է։ Եթէ իրանք իրանց թոյլ են տալիս բժշկական դատողութիւն տալ, բժիշկը չէ կարող յարութիւն տալ։

Ձեզ մեղադրեցի ամենայն կողմից, մեղադրեցի և բժիշկներին։

Ուրեմն ինչ անենք, որ հիւանդը կարողանայ յաջող բժշկվել։ Ես ձեզ ցոյց կը տամ ճանապարհը, հետևեցէք իմ խորհուրդներին և ինձնից միայն շնորհակալ կը լինէք։

Հասարակութեան մէջ տարածված է մի շատ վատ սովորութիւն, այն է հիւանդի վրա մի քանի բժիշկ փոխել, դրա հետևանքը շատ վատ է։

Եթէ ամենայն անգամ նոր բժիշկ է մտնում ձեր տուն, համոզված կացէք, որ նա առանձին ցաւակցութիւն չէ կարող ունենալ ձեզ համար, նա ձեզ չէ կարող սիրել։ Նա իր պարտքը կատարում է և գնում է, մանաւանդ երբ նա գիտէ, որ այդ մարդը խաբելու է նրան և թողնելու բժշկին առանց վարձատրութեան. Եթէ բժիշկը երկրորդ անգամ այդ տունը մտնի, նա շատ յարգելի մարդ է. այսպէս բժիշկների թիւը շատ մեծ է։

Դուք գերդաստան ունէք մեծ կամ փոքր, հարկադրված էք լինում տարին մի քանի անգամ բժիշկ կանչել ձեր տուն։

Ընտրեցէք մի բժիշկ ձեզ, որին դուք լաւ և գիտուն էք համարում, նրան ձեզնից մի՛ք թողնի, նրա բոլոր պահանջները կատարեցէք անտրտունջ և ուրախութեամբ, նա ձեզ համար շատ հարկաւոր մարդ է, աշխատեցէք որ նա ձեր գերդաստանը սիրի, որ նա ձեր տուն մտնելուս կարծի թէ իր տունն է մտնում։

3) Բժիշկը կարծում էք պարզ մարդ է, նա շատ մեծ է և զօրաւոր է, որովհետև ձեր ցաւը, երբեմն ձեր կեանքը նրա ձեռքին է։

4) Այն բժիշկը, որին դուք կընտրէք ձեզ համար, նա պէտք է լինի ոչ թէ միայն գիտուն, այլ և բարի, ազնիւ և բարոյական մարդ. Նա իմանում է ձեր բոլոր հանգամանքները, որովհետև և պահանջում է, և երբեմն պէտք է ասէք այն, ինչ որ ձեր կինը կամ դուք խոստովանելուս նաև քահանային չէք ասում։ Նա պիտէ ձեր տան բոլոր գաղտնիքը։ Տանու բժիշկ ունենալու օգուտն այն է, որ նա ուսանում է տանեցոց մարմնի որպիսութիւնը ինչպէս առողջ, նմանապէս և հիւանդ ժամանակ, գիտէ ինչ հիւանդութիւններ են ունեցել առաջուցը, գիտէ ո՞ր դեղն է ինչպէս ազդել նրա վրա և այլն։ Յայտնի է որ մի դեղ մէկին օգնում է, իսկ մի և նոյն դեղը միւսին՝ մի և նոյն հիւանդութիւն ունեցողին չէ օգնում կամ ուշ է ազդում։ Այս բոլոր բժշկական հաշիւները ի հարկէ հասարակութիւնը չը գիտէ. մենք բժիշկներս պարտաւոր ենք բացատրել, բայց առաջին լսող պիտի։

5) Տանու բժիշկը (բայց ոչ բոլոր բժիշկները) պէտք է լինի երեխայք սիրող մարդ, որ երեխայքն էլ նրան սիրեն, նրան ուրախութեամբ տեսնեն, նրան շատ սովորեն, չը վախենան նրանից և իրենց տանուտէր, իրենց բարեկամ համարեն։ Եթէ այս պայմանները կը կատարէք, այն ժամանակ երեխան ամեն հարցի կը պատասխանի, նրան քննելը, նրա ցաւն որոշելը և բժշկելը շատ կը հեշտանայ։ Բժիշկը այդ պարզ մարդու բարեկամն է, նա նրանից չէ վախենում, այլ սիրով է ընդունում նրա բոլոր խորհուրդները և յաջող բժշկվում։

Մի քանի գերդաստանում, որտեղ ես լաւ ծանօթ եմ, տուն մտնելուս, տանեցիք երբեմն ասում են երեխանց՝ սուս կաց, բժիշկը եկաւ. երեխայքին բժշկից վախեցնելը շատ վատ սովորութիւն է, կարծես թէ բժիշկը պէտք է զօրոզ լինի երեխանց համար. ընդհակառակը, նրանք չը պէտք է վախենան բժշկից, բայց ես այդ երեխէքի հետ լաւ ծանօթ լինելով, նրանք իրենց մօր ասածի վերա ամենևին ուշադրութիւն չեն դարձնում, և թռչտելով գալիս են մօտս, որովհետև ես նրանց հին բարեկամն եմ, նրանք ինչի պէտք է վախենան ինձանից։

6) Երբ դուք այնտեղ հասնէք, որ բժիշկը իրան համարում է ձեր տան բարեկամ, այն ժամանակ գիշեր թէ ցերեկ, երբ հարկաւոր լինի, նա կանգնած կը լինի իր հիւանդ փոքրիկ բարեկամի անկողնու մօտ, որովհետև երկուսն էլ միմեանց սիրում են։ Ինչպէս թողնես մի փոքրիկ մարդու հիւանդ, առանց նրան տեսնելու և օգնելու, երբ նրան սիրում ես, ինչպէս չը սիրես նրան, երբ գիտես, որ նրանք են միայնակ ազնիւ մարդիկ։

Եթէ մի բժիշկ երեխաներին չէ սիրում, նրանց հետ վարվել չի գիտէ, նա տանու բժիշկ չէ կարող լինել, որովհետև երեխան սիրում է միայն այն մարդուն, ով որ նրան սիրում է։ Եթէ մի մարդ, որ երեխայ չէ սիրում, պատահում է գերդաստանում և ծնողներին հաճոյանալու կամ քաղաքավարութեան համար կանչում է գուրգուրելու երեխային, որ շատ տգեղ բան է, երեխան նոթերը կիտում է և չէ մօտենում նրան, թէպէտ և նրան արդէն մի քանի անգամ տեսել է, իսկ երեխայ սիրող մարդուն իսկոյն մօտենում է, կամ թէ շուտ է սովորում նրան և միշտ ժպտալով է հանդիպում այդ մարդուն։

7) Եթէ պատահեց, որ ձեր բժիշկը դժուարանում է հիւանդութիւնը որոշել, նա միշտ օգնութիւն կը կանչի իր ընկերոջ, իսկ եթէ դուք պահանջէք մի որ և իցէ բժշկի հետ խորհրդակցել ձեր հիւանդի մասին, նա ձեր պահանջը միշտ ուրախութեամբ կը կատարի, որովհետև իրան օգուտը այդ է պահանջում։

8) Եթէ բժիշկը գիտէ, որ նա ձեզ համար թանգ չէ և դուք նրան արհամարհում էք, երբ նա ձեզ հարկաւոր չէ, ընդհակառակը նա ձեզ պէտք է արհամարհէ։

Աշխարհումս ամենայն բան փոխադարձաբար է, ուրեմն և հիւանդի և բժշկի յարաբերութիւնը փոխադարձաբար պէտք է լինի։ Բժիշկը հրեշտակ չէ, այնքան ինքնազոհութիւն մեզ պահանջել նրանից, նա մարդ է։ Նա ինչի համար ամենայն բոպէ պէտք է պատրաստ լինի ձեզ ծառայելու։

9) Տանու բժիշկ ունենալը և նրան առճիկ տալը այնպէս հարկաւոր է գերդաստանի և ամեն մարդու համար, ինչպէս տան նորոգելը (րէմօնտ) տան տիրոջ համար։ Ամենայն տարի պէտք է մի գումար մտնել և տունը պահպանել, որ փուլ չը գայ և արդիւնք բերի, նմանապէս և ամենայն տարի իւրաքանչիւր գերդաստան պէտք է մի գումար նշանակէ իր մարմնի պահպանելու համար։ Դուք գիտէք, որ բժիշկները մեծ մասամբ զբաղված են, երբեմն յոգնած են և չեն կարող ձեր հիւանդի մօտ գալ և ձեր հիւանդը մնում է առանց բժշկի։ Եթէ կամենում էք, որ բժիշկը ձեզ համար միշտ պատրաստ լինի և յաջողակ բժշկէ, պէտք է հետևեալ կարգադրութիւնն անէք։ Եթէ մի քանի գերդաստան միանայ, կարող էք ամենաչնչին տարեկան տուրքով (ամեն մէկից) ունենալ բժիշկ, որ միշտ պատրաստ կը լինի միայն ձեզ համար և հարկաւորութիւն չի ունենայ ոչ ծառայել, ոչ առանձին պրակտիկայի ետևից ընկնել, որովհետև ձեր տուածը նրա համար բոլորովին բաւականացուցիչ կը լինի և նա կարող է իր գործով և ձեզ համար աւելի խնամքով աշխատել։ Կարճ, պէտք է մի բժշկի ժողովուրդ դառնալ, ինչպէս մի եկեղեցու ժողովուրդ էք դրվում, որտեղ և մկրտվում, պսակվում, կնքվում, աղօթում էք։ Այսպէս են անում եւրոպական գերդաստանները, որ օգտուելով և թէ իրենց և թէ բժշկին։

10) Բժշկին հարկադրել բժշկելու, անկարելի է, որովհետև և ոչ մի լաւ հետևանք չէք կարող ստանալ, ուրեմն աշխատեցէք որ բժիշկը ձեր բարեկամը լինի, սիրի ձեզ, և նրանից միայն օգուտ կը տեսնէք։ Ես բացատրեցի ձեզ թէ ինչպէս պէտք է վարվել բժշկի հետ, ինչ նրանից պէտք է պահանջել և ինչ է բժշկի պահանջը։ Իմ միակ ցանկութիւնն էր տալ ձեզ օգտաւէտ խորհուրդներ։ Եթէ ձեզնից գոնէ մի քանիսին համոզեցի ընդունել իմ կարծիքներս, աշխատեցէք տարածել այդ աւելի ձեր օգուտն է քան թէ բժշկին։

Բժիշկ Լ.

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

Խմբագիր—Հրատարակիչ ԳԱՐԵԳԻՆ ՊԱՐՈՆԵԱՆ

ՎԱՂՎԱ ՕՐԱԹԵՐԹ

ԱՆԳԼԻԱ

Լոնդոնի նամակագրից մեզ գրում են հետևյալը։

Ամենայն ինչ ցույց է տալիս, որ Անգլիայի ներկայ նախարարությունը ոչ միայն ամուր տեղավորվել է իշխանության գահին, այլև ամրացրել է իր դիրքը։ Ընտրությունների ժամանակ նրա հակառակորդները հույս ունեին, որ նա կարող է ընտրություններում հաղթություն տանել միայն Իռլանդիայում, որտեղ նրա դեմ կազմակերպվել էր ամենասարսափելի ընդդիմությունը։ Ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ Իռլանդիայում էլ նա ունի մեծ մեծամասնություն։ Ընտրված 103 անդամներից 61-ը պատկանում են Իռլանդիայի ազգայնական կուսակցությանը, որի առաջնորդ Փարնել-Փարնելն է։ Ընտրությունների ժամանակ Գլադստոնի կուսակցությունը կրել է մեծ պարտություն, որովհետև Իռլանդիայում նրա անդամներից ոչ մեկը չի ընտրվել։ Ընտրությունների ժամանակ Գլադստոնի կուսակցությունը կրել է մեծ պարտություն, որովհետև Իռլանդիայում նրա անդամներից ոչ մեկը չի ընտրվել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՆՍ ՄԵԼՔՈՒԵԱՆԻ

«ՄԱՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ»

Թիֆլիս-կուկիայում Ալէքսէևսկի փողոցի վերայ Ռոստոմ Մանդինեանի տանն:

Օգոստոսի 20-ին կը սկըսուին նորակների քննութիւնները և բնդունելութիւն. ուսումնարանն բնդունելու է պիշերօթիկ և կիսապիշերօթիկ աշակերտներ:

1—6 (2)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՑ-Առաջիկայ $18^{80}/_{81}$ ուսումնական տարին, յանկացողների համար Սեմինարիա (վարժապետական դպրոցը) մանելու, կան 4 վականոխներ պատրաստական դասատան և 6 վականոխներ պատրաստական դասատան մէջ: Խնդիրքները բնդունելութեան մասին տրվում են մինչև 15 օգոստոսի: Մրցողական հարցաքննութիւնները կը լինեն 20 օգոստոսից մինչև նոյն ամսի 25:

3—3 (1)

Ծախվում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՅԻ ՍԵՂԱՆ և ԱԲՈՒՆՆԻ: Սլիսավէտինսկայա փողոց № 46 Թիֆլիսում:

5—5

Նուազով յոթ կը տևանէ ԴԱՇՆԱՄՈՒԻՐԻ ՀԱՄԱՐ ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ *ժողովրդական գործածական երգերի*

Երկրորդ տետրակը

Զայնագրութիւն և հրատարակութիւն Ցավհաննէս Սուքիասեանցի, և կը պարունակէ իր մէջ վերց երգեր:

1) «Ադնիս բնկեր մեռանում եմ»
2) Ակնապիշ անձայն»
3) «Բաժակներ առնենք, եղբայրք»
4) Մեր հայրենիք, էշխանաս անուէր»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տետրակի գինը լինելու է մի րուբլի. ցանկացողները ստանալ գաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տետրակը, որ պարունակում է իր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ», 3) Ցուրտը վշնց» և 4) «Մխիթարական» պէտք է ուղարկին մի րուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջումն է լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառքում է նոր ԵՐԳԱՐԱՆ ՖԼԻԳՈՒՈՆԻ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակված երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները ստանալու և՛ ձայնագրած երգերը, և՛ Ֆլէյտուսնի նոր երգարանը, պէտք է ուղարկին մէկ րուբլի և 30 կոպ. հեռևեալ հասցէով: Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузамаджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 13.

Համեմատելէք անզլիական խանութի թէյի գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի Ֆունտը 2 րուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

46—100

Գոյանան և Նեբռէևան դպրոցների ուսուցիչ պ. Վարձելեանը իր բերդատան մէջ ընդունում է միայն ՉՈՐՍ դիշեր օթիկ աշակերտուհիներ: Գիմել ուղղակի «Մշակի» խմբագրութեանը:

2—5

ՉԱՆԶՈՒԱԳՈՎԻ ՄԵՆ ՄԱՂԱԶԻՆՈՒՄ շաբաթական վերջնական վաճառումն ամեն օր ժամը 9-ից առաւօտեան մինչև 12 կէսօրէն, թէ րակում և թէ մազապինում:

1—4



Իր յաջողութիւններով մարմնի մասերի, մանաւանդ աչքի մասերի քրմիքից առաջ եկած փառուն ոչնչացնող յատկութեան Նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անուանած, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրօգիստների մօտ գլխաւոր դէպօ Նիւթի հնարող Ֆարմացեի մօտ Փարիզում, վ. Արչավայում, Էլէկտօրալնի փողոց № 5: Գալմանինի մեծ արկղիկը արժէ վ. Արչավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է զգուշանալ խարդախութիւններից:

17—25 վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ (1

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՒՈՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Դավրօնսկի կանանց հիւանդ. Օրալեվիչ ներքին հ., Թոխտնեանց կանանց և երեխաների հ., Ֆիշչաբեանց խիրուրգիական և աչքերի հ., Շահմբօրսկի վինեբական և կաշու հ., Բարայեան ջղային և հոդական հ.:

Երեքշաբթի. Մինկևիչ խիրուրգիական հ., Վզօրով վինեբական և բազապի հ., Էյխ աչքի հ., Թախուառով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեացով, Լիսիցեվ և Վեմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Ռուդվովսկի ներքին հ., Շտէյմբօրսկի կնեբական և կաշու հ., Ստուաձատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրով վինեբական և բոզազի հ., Օսիպեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վեբմիշեվ ներքին հ., Ֆիւշաբեանց սիֆիլիսի և մոռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեացով. Լիսիցեվ ներքին հ., Թախուառով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Ստուաձատուրօվ վինեբական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Վեբմիշեվ ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Եանկօվսկի վինեբական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անփարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առանձնարոյժ Օրև խա ազքատ հիւանդներին բժշկանոցի տամնակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտօր Լիսիցեվ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորակների ընդունելութիւնը ապագայ և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼՈՒ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆԿԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Միրիմանեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԻ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ: 31—40

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱԾ, Հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դաստիարակութիւն ստացած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑԻՉի ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՆՈՒԹԵՒՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՖԻԱՆՋԻԱՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

7—22

ՄԻՆԱՍ ԳԻԼՋԱՏԵԱՆ, որ կանոթայ ունի ԹԱՒԻԶ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ ԱՈՒԵՏՐԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ կօմիսիօնով կատարելու անյապաղ, ամենայն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վաճառականներին, առաջարկելով իր ծառայութիւնը:

5—5

Дозволено Цензурою 6 Августа 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 138 Օգոստոսի 9 (21) **1880** Օգոստոսի 9 (21) № 138

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարուանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Յիշեալ գրուած են միմիայն խմբագրատան մէջ։

Յայտարարութիւնք գիտուած են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այսպէս է միշտ—Ներքին տեսութիւն, Նամակ Փօթիից, Նամակ Բագուից, Նամակ Կարսից, Նամակ Շամախուց, Նամակ Թաւրիզից, Նամակ Խմբագրին, Ներքին լուրեր,—Արտաքին տեսութիւն, Թիւրքիա, Աւստրօ-Ունգարիա, Ֆրանսիա, Նամակ Թիւրքիայից,—Մշակից հետագիրներ,—Յայտարարութիւններ,—Բաշնախրականն, Հայրենասէր տիկին, Հայ-աւետարանական տիկին։

ԱՑՍՊԷՍ Է ՄԻՇՏ

Ուշադրութիւն ենք դարձնում ընթերցողին «Մշակի» ներկայ համարի մէջ տպված մեր Կ. Պօլսի մտաւորական թղթակցի նամակի վրա, որի մէջ նա հաղորդում է որ Թիւրքաց Հայաստանի մէջ եղեռնացել են գինաւորված հայերի խմբեր, որոնք սկսեցին յարձակումներ գործել Հայաստանի թիւրդ ցեղերի դէմ դրժած լինելով վերէ ինդրական պատճառներից այն բոլոր նեղութիւնների համար, որ կրել են հայերը քիւրդերից։ Նամակը աւելացնում է որ այդ լուրը մեծ յուզմունք պատճառեց Թիւրքաց կառավարչական շրջաններում և հայոց խնդիրը, որ արդէն քանի մի օր է երկրորդական դիրը էր բռնել Համեմատելով յունաց և Ձերնօգորիայի խնդիրների հետ, կրկին իր վրա բոլորի ուշադրութիւնը դարձրեց։

Նամակը հաղորդում է որ հայերը ոչնչացրին արդէն քիւրդերի հօտի գիւղեր։

Ընդհակառակն է լինում միշտ, մինչև որ մի ազգ միմիայն բողոքներ է անում, յայտնում է իր ցաւերը պրուստր կերպով, թիւրքաց տէրութեան պէս մի տէրութիւն ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում ազգի տառապանքների վրա, բայց միայն այն ժամանակ սկսում է ուշադրութիւն դարձնել, երբ ազգը իր իրաւունքները սկսում է պէնքը ձեռին պաշտպանել։

Ցաւալի է, բայց այսպէս է. միայն արիւն թափող ազգի վրա թիւրքաց տէրութեան պէս մի փտած տէրութիւն սկսում է ուշադրութիւն դարձնել։

Ցաւալի է, բայց այսպէս է. միայն զէնքը, արիւնը, բռնի ոյժը, այդ հնացած միջոցները մեր լուսաւորված դարում դեռ ունեն մի ազգութեան գոյութեան մասին վկայելու համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

Յուլիսի 8-ին

Յօգուտ Հայաստանի սովելոց տեղս հանդանակութիւն մը բանալով կարողացայ հաւաքել պ. Յովհ. Թիւրքեանի և պ. Յովհ. Պետրոսեանի աջակցութեամբ 81 ր., խաւրելով սոյն դումարը նախ-

բատուց ցուցակի հետ միատեղ խմբագրութեանդ, խնդրեմ հաստատէք որ հարկն է, և նախրատուց ցուցակը ձեր պատուական «Մշակի» առաջիկայ համարներու մէկուն մէջ տպագրէք ի գիտութիւն նախրատուաց։

Յովհ. Պետրոսեան 6 ր., Ս. Ռամարիճէ (վրացի) 1 ր., Ղամբարով, Աժճիեան 5 ր., Յար. Թիւրքեան 3 ր., Մ. Մազլումեան 10 ր., Մ. Չէֆնար-օղլի (աստղիկ) 5 ր., Բ. Զարուքեվի (յոյն) 2 ր., Ց. Կօթօղլի 2 ր., Բ. Գամիլիատի (յոյն) 3 ր., Բ. Ջիմկիրով 1 ր., Յ. Ջամիչով 1 ր., Ա. Մազիրով 1 ր. 50 կ., Գարիա. Դիմիտրի (յոյն) 50 կ., Մ. Տէր-Թաճատով 20 կ., Գ. Բլիումբերգ (հրէայ) 3 ր., Գ. Տէր-Օվակիմեան 1 ր. 40 կ., Գ. Ուղուռով 1 ր. 60 կ., Գ. Ջիւրիճեան 5 ր. 50 կ., Կ. Կապունիայ (վրացի) 1 ր., Ի. Կալտնտաձէ (վրացի) 50 կ., Գ. Մարիճան 3 ր., Մ. Ղլիճեան 1 ր., Բ. Շեհեանց 1 ր., Յ. Թանիելբեկեանց 1 ր., Մ. Փափիսով 1 ր., Միխայիլա-չվիլի (հրէայ) 1 ր., Հ. Սավրագեանց 3 ր., Ա. Թանջումեան 50 կ., Լ. Պասանիայ 1 ր., Ոմն (վրացի) 30 կ., Ա. Մովսէեան 2 ր., Օգրովակի 1 ր., Յովհ. Թիւրքեան 5 ր. 20 կ., Ա. Քէօմիւր ճեան 5 ր. 80 կ., Գումարն է 81 ր.

Փոստի ծախքը ես վճարեցի, գումարը ընդամէնը ութսունը մէկ րուբլի։

Ա. Քէօմիւրճեանց

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Օգոստոսի 1-ին

«Մշակը» և Մէլիքզադէն, որոնք յայտնում են թէ նոցանց նպատակը չէ կրօնական վէճ բանալու, այնու ամենայնիւ ստիպված են լինում այժմ քրիստոնէական ճշմարտութեան պաշտպան հանդիսանալու թէ որքան ներդործութիւն ունի գաւառների վրա «Մշակի» խօսքը ժողովրդի մոլեռանդութիւնը չափաւորելու նկատմամբ, դա ժամանակով յայտնի կը լինի։

Չը գիտեմ «Մեղուն» ինչի իրան անձնեձնիս աւարկայով է պարապում։ «Մշակը» յարուցեց ազգային խնդիրը, իսկ «Մեղուն» դարձրեց նրան կրօնական խնդիր։ Բայց եթէ այժմ ժամանակ է կրօնական հարցով պրոպովեդ անել, ինչի «Արարատը» լռում է. երևի «Արարատի» խմբագիրը աւելի ազատ գաղափարի տէր է, քան թէ «Մեղուի» խմբագիրը։ Այդ վերջինից միջին դարերի սրբակեր թթված հոտ է փչում։ Ցաւալի է երբ նախանձի հոգին է խօսեցնում մարդուն և ոչ թէ ճշմարտութիւնը պաշտպանելու ցանկութիւնը։

Երբ որ «Մեղուն» միտք ունի ազգային եկեղեցին իրեն աղգութեան պաշտպան ներկայացնելու, ինչի իրեն յանձն չէ առնում հայոց պատմութեան մէջ նկարագրված իրողութիւնները ժողովելու, այլ հրաւիրում է որ ուրիշները իր համար գործեն։

Մինչէ ճշմարիտ «Մեղուն» այնքան ազէտ է, որ Պոլսեանների ազգասիրութեան մեղր վերարերում է աւետարանականութեանը կամ բողոքականութեանը. այդ խելքով դատած ժամանակ պէտք է ասենք որ վաճառ ևս բողոքական էր, Վահան Սարդիան էլ, Մեհրուժանն էլ բողոքական էին։

Իսկ ես կասեմ, որ ազգի այլ և այլ մասերի մէջ երկպառակութիւն գողները «Մեղուն» խմբագրի պէս ազգասէրներն են, ինչ կրօնին և պատկանէլին նրանք։

«Մեղուի» պաշտպանութեան գլխաւոր դէմքերը այն հնացած և ժանգոտած բառերն են, որ չատ անպատմ կրկնված են դարերի ընթացքում. հայ-բողոքականները փարիսեան են մտնում, գոռանում են, կլանում են, գազաններ են, հրէշներ են, պատառում են հօտը, սխտարագծնած գայլեր են և այլն... Դիցուք թէ այդ բոլորը այդպէս է. բայց ով է դլխաւորապէս մեղադրելի. նա որ գալիս է ու յայտնում, տանում է, թէ նա, որ իր ստացուածքը ամայր չէ պահում, չէ գնահատում իր թանկագին համարված բանը...

Ծառայական, սորկական ոգի է, որ ուրիշ բան չը գիտէ, բացի լաց լինելուց, ազաղակելուց, գանգատվելուց թէ օտարները կլանում, գոզանում, յափշտակում են....

Հայ-աւետարանական

ՆԱՄԱԿ ԴԱՐՍԻՑ

26 յուլիսի

Դարս քաղաքի մէջ և իր գաւառները պատահած մի քանի հրէշաւոր դէպքերի վրա խօսելը ապագայի թողնելով, տեղս գտնված պարսից և հայոց մէջ ներկայիս ծագած խառնաթիթնը կուզեմ նկարագրել։

Ամսոյս 13-ին հայ և պարսիկ մրցավաճառները մի չնչին գործի վրա վէճ բանալով, կը սկսեն անպատուել միմեանց։ Այն միջոցին պարսիկներին մի քանին տեսնելով, որ նոցա համախոհուրդներու գործած անիրաւութիւնները պիտի յայտնվեն և ըստ օրինի պիտի պատասխանատուին, կը սոիպուին պաշտպանել իրենց ընկերներին, և հետզհետէ ձայները բարձրացնելով, հայհոյութեամբ և հարուածներով կը դանակոծեն խեղճ հայերին։

Պարսիկները, որ բնականաբար միութիւն կազմող

Նա անձամբ սկսեց իր հողի մշակութիւնը և ընդարձակեց այն հաստատուն և հմուտ գործունէութիւնը, որ ալպասցի մշակների բնութեանը յատուկ է։

Նա այն անմշակ, գառիվայր և խորատուրատ ձորը մէկ ուրախ, պտղաբեր հովիտ գարձրեց։ Մացառուտ անտառների տեղ բարձրացան բնդհանուր գլուխ կոչված բայերը։ Այն տեղերում, ուր առաջ վայրի թուփեր էին բուսնում, նա տնկեց վուշ և ծխախոտ։ Այն տեղերում, ուր առաջ մրրիկ, կծռխուրը և վայրի թուխը միախառնում էին իրանց անպտուղ ծղօտները, նա տնկեց խաղողի որթ։ Եւ հողը, մանաւանդ այն հողը, որի համար աշխատանք և անդադար հոգացողութիւն է պահանջում, բայց որը երբէք ապիրախտ չէ,—այն հողը նրան առատապէս վարձատրեց։ Անձնուէր աշխատանքով և խնայողութեամբ արիացան մայրը հասաւ իր նպատակին։

Նա իր երկու որդիներին այնպէս էր դաստիարակել, որ հայրենիքի օգուտը ամեն բանից գերադասում էին։

Երկու մեծ որդիքը, Saint-Cyr դպրոցի մէջ զատիարակված, աստիճանաւորներ էին,—Ամենանոսը հեծելազօրների հարիւրապետ էր, իսկ կրտսերը սպանների լիէութենանտ. իսկ ամենից փոքրը՝ Ֆրանցը իր ուսումն աւարտել էր օրինակելի ջերմեռանդութեամբ. նա էր միւսների մօր հետ և օգնում էր նրան հողի մշակութեան մէջ։

Ինչ վերաբերում է նրա մանկահասակ աղջիկ,

գեղուհիկ Արիատնային, նա օգնում էր իր մօրը անային գործերում։ Նա գուարթացնում էր տունը իր ուրախ երգերով։ Նա հաւանոցի թագուհին էր, իսկ ծաղկանոցի ամենագեղեցիկ ծաղիկը, որի չընորհիւ նրանց դաստակերտը ուրախալի տեսարան էր ներկայացնում։

Այդ չորս զաւակները համարեա պաշտում էին իրանց մօրը և նրա անձնուէր աշխատութեան և սիրոյ փոխանակ մատուցանում էին փոխադարձ սէր և յարգանք։ Մէկ խօսքով, այս այն նահապետական ընտանիքներից մինն էր, որպիսին միայն գեղեցիկ և անկեղծ Ալպասում կարելի է գտնել։

Տիկին Փերարին իր ամենու հոգւով ոչ միայն ձըմեռնում ապրատուն կարելի է համարել, այլ և անվնաս հայրենասէր։ Ազատց նա առում էր պրուսացիներին, իրր թէ, ինչպէս նա ասում էր, նրանց ծածուկ չարութեան, կեղծաւոր խոնարհութեան և մանաւանդ նրանց յափշտակութեան համար։ Սակայն այդ ոչնը չէր տարածվում բոլոր գերմանացիների վրա։

Կրիստինան չերմ սրտով սիրում էր մի երիտասարդ վիրաւորների, որ մերձակայ գործարանի պաշտօնեայ էր, և որը նրա հետ կիրակի օրերը երաժշտութեամբ էր պարապում։ Տիկին Փերարը հաւանութիւն էր տալիս այդ սիրոյն։

Երկու սիրող սրտերը նոր էին նշանվել, երբ յանկարծ յայտնվեցաւ, թէ զարհուրելի պատերազմ է լինելու։

ցին իրրև ազգութեան պաշտպան ներկայացնելու, որին ինքն չէ առնում հայոց պատմութեան մէջ նկարագրված իրողութիւնները ժողովելու, այլ հրաւիրում է որ ուրիշները իր համար գործեն։

Մինչէ ճշմարիտ «Մեղուն» այնքան ազէտ է, որ Պոլսեանների ազգասիրութեան մեղր վերաբերում է աւետարանականութեանը կամ բողոքականութեանը. այդ խելքով դատած ժամանակ պէտք է ասենք որ վաճառ ևս բողոքական էր, Վահան Սարդիան էլ, Մեհրուժանն էլ բողոքական էին։

Իսկ ես կասեմ, որ ազգի այլ և այլ մասերի մէջ երկպառակութիւն գողները «Մեղուն» խմբագրի պէս ազգասէրներն են, ինչ կրօնին և պատկանէլին նրանք։

«Մեղուի» պաշտպանութեան գլխաւոր դէմքերը այն հնացած և ժանգոտած բառերն են, որ չատ անպատմ կրկնված են դարերի ընթացքում. հայ-բողոքականները փարիսեան են մտնում, գոռանում են, կլանում են, գազաններ են, հրէշներ են, պատառում են հօտը, սխտարագծնած գայլեր են և այլն... Դիցուք թէ այդ բոլորը այդպէս է. բայց ով է դլխաւորապէս մեղադրելի. նա որ գալիս է ու յայտնում, տանում է, թէ նա, որ իր ստացուածքը ամայր չէ պահում, չէ գնահատում իր թանկագին համարված բանը...

Ծառայական, սորկական ոգի է, որ ուրիշ բան չը գիտէ, բացի լաց լինելուց, ազաղակելուց, գանգատվելուց թէ օտարները կլանում, գոզանում, յափշտակում են....

Հայ-աւետարանական

ՆԱՄԱԿ ԴԱՐՍԻՑ

26 յուլիսի

Դարս քաղաքի մէջ և իր գաւառները պատահած մի քանի հրէշաւոր դէպքերի վրա խօսելը ապագայի թողնելով, տեղս գտնված պարսից և հայոց մէջ ներկայիս ծագած խառնաթիթնը կուզեմ նկարագրել։

Ամսոյս 13-ին հայ և պարսիկ մրցավաճառները մի չնչին գործի վրա վէճ բանալով, կը սկսեն անպատուել միմեանց։ Այն միջոցին պարսիկներին մի քանին տեսնելով, որ նոցա համախոհուրդներու գործած անիրաւութիւնները պիտի յայտնվեն և ըստ օրինի պիտի պատասխանատուին, կը սոիպուին պաշտպանել իրենց ընկերներին, և հետզհետէ ձայները բարձրացնելով, հայհոյութեամբ և հարուածներով կը դանակոծեն խեղճ հայերին։

Պարսիկները, որ բնականաբար միութիւն կազմող

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ *)

I

Ֆրանսուազ Ժէրարի անունը արժանի է Ալպասի ժամանակագրութեան մէջ յիշվելու։

Ալպասցու գծագրութիւնը,—դէմքը քառանկիւնի, ծանրահայեաց, չէկ մազերով չրջապատած։

Կապոյտ աչերը գրաւիչ, հանդարտ և հաստատուն են։

Դէմի չարժուածքի մէջ մի տեսակ վստահութիւն, ազնուութիւն կայ, որ զարմանալի է տեսնել առանձին կնոջ մէջ, որի համար կեանքը դաժանութիւն է անցել։

Ջարմանքը անյայտանում է, երբ ծանօթանում ես այդ կնոջ անցեալի հետ։

Երեսուն տարեկան այրի էր նա, ունէր չորս մանկահասակ երեխաներ,—մի աղջիկ և երեք տղայ.—Նրա ողջ հարստութիւնը բաղկանում էր վաղեմների միջնադարեանում գտնվող մի փոքրիկ դատակնքից, երբ սկսեց մեծ եռանդով աշխատել իր ընտանիքը կերակրելու և իր զաւակները կրթելու համար։

*) Այս վէպը տիկին Լ. Գաներէրի հեղինակութիւնն է և թարգմանված է. «L'offrande par la société des gens de lettres, aux alsaciens et aus lorrains» գրքից։

Fonds A.R.A.M.

Fonds A.R.A.M

(Ի մի հատոր)

— Ես ինչպե՞ս կարող եմ հավատալ, որ դուք ինձ սիրում եք, եթե ինձ ոչ մի նվեր չեք անում։

Ես ինչպե՞ս կարող եմ հավատալ, որ դուք ինձ սիրում եք, եթե ինձ ոչ մի նվեր չեք անում։

Ես ինչպե՞ս կարող եմ հավատալ, որ դուք ինձ սիրում եք, եթե ինձ ոչ մի նվեր չեք անում։

համար խմբագրութեան կանոնները ես քաջ եմ նոյն գրքից, բայց եթէ այնտեղ ես ցոյց չեմ տուած թէ ինչ աղբիւրից են քաղած իմ տեղեկութիւնները, այդ մի պատահական բան էր և ոչ թէ դիտմամբ ես կամեցել եմ ինձ սեփականացնել այլոց աշխատութիւնը, մանաւանդ որ ես արդէն գիտնականութեան վերաբերեալ առաջին յօդուածովս յայտնած էի, որ իմ յօդուածների տեղեկութիւնները քաղած կը լինեն զանազան աղբիւրներից»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսում հրատարակվող «Վաքիթ» թիւրքաց լրագիրը լսել է, որ Կ. Պոլսի եւրոպական դեսպանները յանձնեցին անգլիական դեսպան Գօշէնին և ֆրանսիական դեսպան Տիսօին յօրինել եւրոպական պետութիւնների կողմից Բ. Դրան արվելու պատասխանը Հայաստանի մէջ մտցնելու բարենորոգումների վերաբերութեամբ:

Կ. Պոլսից «Polit. Corresp» լրագրին գրում են հետեւեալը:

Բ. Դրան պատասխանը պետութիւնների դրութեանը անկասկած բաւականացուցիչ չի համարվի: Կարելի է հաստատ ասել, որ դեսպաններից շատերը ուրախ են պատասխանի չափաւոր լինելու առիթով, որովհետեւ կարող են նոր բանակցութիւններ սկսել և այդպիսով կը պահպանվի խաղաղութիւնը թէ Եւրոպայի և թէ Արեւելքի մէջ: Եթէ Թիւրքիայի մէջ կայ հասարակական կարծիք, նա պաշտպանում է թիւրքաց կառավարութեան բռնած ընթացքը: «Վակիթ» լրագիրը յարձակվում է Եւրոպայի վճռի վրա, իսկ «Թէրջըմանի-Հակիկաթ» լրագիրը անարգում է Եւրոպայի անիրաւութիւնը: Այս վերջինը յայտնում է, որ մահմետականներին միայն ուժով կարելի կը լինի ստիպել, որ նրանք թողնեն իրանց գրաւած երկիրը և որ Թիւրքիան պատրաստ է մեռնել, քան թէ խոնարհվել Եւրոպայի վճռի առաջ: Ոչ սուլթանը և ոչ նրա կառավարութիւնը ընդունակ չեն մինչև այդ աստիճան թոյլ լինելու և ամբողջ մահմետական աշխարհը պատրաստ է պաշտպանել քաջ ալբանացիների ընդդիմադրութիւնը: Ալբանեան հարցի վերաբերութեամբ ընդհանուրի կարծիքը այն է, որ կարելի կը լինի խաղաղութիւնը պահպանել, եթէ յոյները չեն յարձակվի ալբանացիների վրա և եթէ այս վերջինները կը կարողանան զսպել իրանց պատերազմական եռանդը: Տարաբաղդաբար ալբանացիները չափազանց անհամբեր են: Հաւատացնում են, որ վերջին օրերում ալբանական առաջնորդները բաց հեռագիրներ են ուղարկել սուլթանին և Աբեդին-փաշային, որոնցով նրանք յայտնում են, թէ մտադիր են թշնամական գործողութիւններ սկսել Յունաստանի դէմ և թիւրքաց կառավարութեան հրամանին են սպասում: Օրերումս պալատի մէջ ծառայող ալբանացիները մօտ 550 մարդ առանձին առանձին կանչվեցան պալատի սենեակներից մէկը, որտեղ սուլթանի ադիւտանտը յայտնեց նրանց ալբանական լեզուով, որ նրանք հայրենիք ուղևորվեն, որովհետեւ իրանց յոյները շուտով կը յարձակվեն ալբանացիների վրա: Նրանց պարտականութիւնն է պաշտպանել Ալբանիայի ամբողջութիւնը և սուլթանի իշխանութիւնը: Սուլթանի հրամանով նրանցից իւրաքանչիւրին տրվեցաւ նոր զգեստ, Հէնրի-Մարտինի հրացան, հեծելազօրքի րէվոլվեր և թիւրքաց չորս լիրա: Բացի այդ ալբանացիները կուղեւորվեն հայրենիք կառավարութեան հաշւով: Ալբանացիները չափազանց ուրախ էին և յուլիսի 23-ին սկսեցին նրանց խումբերով ուղարկել, իսկ այսօր յուլիսի 30-ին ուղևորվում են վերջին հարիւր ալբանացիները: Բացի այդ հաւատացնում են, որ ալբանական առաջնորդները սպառնալիքներով պահանջում են սուլթանից իրանց երկրին անկախութիւն և ինքնավարութիւն տալ մեծ արտօնութիւններով:

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Երբ պետութիւնները համաձայնեցին ծովային ցոյց կատարել թիւրքաց ջրերի մէջ, առաջարկութիւն եղաւ չը բաւականանալ միայն նաւեր ուղարկելով Բօսֆօրի ափերը, այլ զինուորական նաւերի վրա բաւականաչափ զօրքեր ունենալ, որպէս զի այդ զօրքերը հարկաւոր դէպքում կարողանային օգնութիւն հասցնել յունական և չերնոգօրիական զօրքերին, երբ նրանցից առաջինները կը սկսէին գրաւել այն նահանգները, որոնց Բերլինի կոնֆերենցիան տուել է Յունաստանին, իսկ երկրորդները կը սկսէին գրաւել Դուլցինիօ: Յայտնի է, որ աւստրօ-ունգարական կառավարութիւնը ընդդէմ էր միացեալ նաւատորմի վրա զօրքեր ունենալու մտքին: Այժմ լրագիրներին հաղորդում են, որ աւստրիական «Pester Lloyd» լրագրի մէջ մի կիսապաշտօնական յօդուած է տպվել, որ հաւատացնում է, թէ կառավարչական շրջաններում յաղթող է հանդիսանում ծովային ցոյցի անբաւականացուցիչ լինելու միտքը: Ծովային ցոյցը, լրագրի կարծիքով, բաւական չի լինի պետութիւնների միացեալ գործունէութեան համար Բ. Դրան վերաբերութեամբ: Լրագիրը չէ կասկածում, որ թիւրքաց կառավարութեան բռնած դիրքը կը ստիպէ պետութիւններին աւելի էլ պնդել, կամ իրանց հեղինակութիւնը պահպանելու համար աւելի վճռողական միջոցներ գործադրել, քան թէ ծովային ցոյցը: Լրագիրը աւելացնում է, որ Յունաստանը և Չերնոգօրիան համարձակ կարող են յոյս ունենալ, որ նրանց ցանկութիւնները կը կատարվեն:

Վիեննայից լրագիրներին գրում են, որ Ֆրանսիայից արտաքսված եզուիտները արժանացրին իրանց ուշադրութեան Գալիցիան, մանաւանդ Կրակով և Տարնօվ քաղաքները: Առժամանակ նրանք վանքերի և մենաստանների մէջ են բնակվում, բայց արդէն տուն և կալուածներ են գնել, այնպէս որ Կրակով քաղաքը, այդ «երկրորդ Հռոմը», կարող է շատ լաւ ապաստանարան լինել դժբաղդ աքսորականների համար:

Մի քանի օր սրանից առաջ լուր տարածվեցաւ, իբր թէ աւստրիական կայսր Ֆրանց-Յովսէփը հիւանդ է, այնպէս որ գերմանական լրագիրները ենթադրում էին թէ կայսրը Գալիցիա չի ճանապարհորդի: Այս լուրը պաշտօնապէս հերքվեցաւ: Վաղ թէ ուշ կայսրը կայցելէ Գալիցիա, որտեղ պատրաստութիւններ են տեսնվում նրան հանդիսաւոր կերպով ընդունելու համար: «Allgemeine Zeitung» լրագիրը խիստ լուրջ կերպով խորհուրդ է տալիս լեհացիներին չը չափազանցացնել իրանց ցոյցերը: Առհասարակ աւստրիական լեհացիները պէտք է բաւական լինեն իրանց դրութենից. իրանց քաղաքական ընդունակութեան շնորհիւ նրանք աւստրիական բոլոր ազգերից աւելի մեծ ազատութիւն և անկախութիւն են վայելում:

ՖՐԱՆՍԻԱ

Փարիզից «Polit. Corresp.» լրագրի դիպլոմատիական թղթակիցը գրում է հետեւեալը յուլիսի 31-ից:

Ֆրանսիական կառավարութեան խիստ քաղաքականութեան մասին այնքան շատ սխալ լուրեր են տարածված, որ աւելորդ չի լինի ճշտութեամբ նրան որոշել: Ընդդիմադրական կուսակցութեան և մինչև անգամ մի քանի այլ լրագիրները, յայտնի չէ ինչ հիման վրա, երկիւղ են կրում, որ Ֆրանսիան գործնականապէս կը մասնակցի արեւելեան հարցի վճռելուն: Ինչպէս Ֆրանսիան ոչ իրաւունք ունի և ոչ պարտաւոր է առանց Եւրոպայի օգնութեան միայնակ սկսել յունական հարցի վճռելը: Թէպէտ կոնֆերենցիան ընդունեց Ֆրանսիայի առաջարկած սահմանագիծը, բայց պէտք չէ մոռանալ, որ կոնֆերենցիան Անգլիայից առաջարկվեցաւ, որ կոնֆերենցիային Գերմանիան էր նախագահում, որ նա Բերլինի կոնգրեսի և դաշնագրի հետեւանք էր և վերջապէս բոլոր պետութիւններից աւելի մեծ ազդեցութիւն արեւելեան գործերի վրա Գերմանիան ունեցաւ: Ֆրանսիան Յունաստանի մէջ առանձին շահեր չունի, նրա գործողութիւնները առաջնորդվում են ընդհանուր հաւասարակշռութեան և քաղաքակրթութեան գաղափարներով: Այս պատճառով Ֆրանսիան չէ կարող գործել ոչ Գերմանիայի և ոչ Աւստրօ-Ունգարիայի օգտին: Նա կամենում է միայն չափաւոր և Եւրոպայի հետ համաձայն գործել: Ֆրանսիայի մէջ այդ հարցի վրա ամենքը միաձայն են նայում. բոլոր կուսակցութիւնները ընդդէմ են զինուորված ձեռնմխելու, որ պատերազմի առիթ կը դառնար: Գործի վրա այսպէս են նայում և կառավարչական անձինք: Մի և նոյն ժամանակ ֆրանսիական ազգային ժողովները այժմ նիստեր չունեն և առիթ չը կայ ենթադրելու, որ նրանք շուտով կը հրաւիրվեն, իսկ առանց ազգային ժողովների գիտութեան նշանաւոր վճիռ երբէք չի տրվի: Ներկայումս ֆրանսիական կառավարութիւնը խորհուրդ տուեց Յունաստանին չափաւորութեամբ գործել: Գէորգ թագաւորը հետեւեց այդ խորհուրդներին և Յունաստանի պատրաստութիւնները երկրի պաշտպանութեան համար են կատարվում: Մինչև անգամ ֆրանսիական գեներալ Տօմասէնի Յունաստան ուղարկելը յետաձգված է: Ուրեմն կարելի է հաւատացած լինել, որ ֆրանսիական կառավարութեան քաղաքականութիւնը ձգտում է խաղաղութիւնը պահպանել:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 30 յուլիս

Երէկ և այսօր յուզեալ օրեր են Կ. Պոլսոյ հայոց համար: Յուլիսի 28-ին լուր տարածուեցաւ թէ Հայաստանի վերաբերեալ կարեւոր հեռագիրներ կառավարութիւնը վար դրեր է. նոյն երեկ կէսօրին «Stamboul» կը հրատարակէ, «[illegible]» և «Վաքթ» կը հաստատեն թէ «յանուն ազգային վրէժխնդրութեան հայոց զինեալ զօրաց խմբեր յարձակեր են Վասպուրականի քիւրդ գիւղերու վրա և 7 գիւղ այրեր մորթեր են»:—Այս լուրը որոյ ստուգութիւնը ինչ աստիճան լինելն չը կարողացանք իմանալ, մեծ ազդեցութիւն ունեցաւ: Համոզուած կայ որ եթէ այս դէպքը ճշմարիտ լինի, Եւրոպայի վրա խոր տպաւորութիւն մը պիտի ընէ և հայկական խնդրոյն այնպիսի քայլ մը առնել տայ պիտի, յորմէ շատ և շատ օգուտ պիտի լինէր: Այսօր Պատրիարքը դեսպանաց այցելութեան պիտի շրջագայի: Վաղը դեսպանք նիստ ունին հայոց խնդրոյն համար. տակաւին Հայաստանի վարչական ծրագիրն չեն աւարտած և վաղուան նիստի մէջ այս հարցը պիտի կարգադրեն: Սրբազանը հրջաբերական մը պատրաստեց, զոր այս երեկոյ պիտի խրկէ բոլոր դեսպանաց. վասնզի առ Ազգ. Ընդհ. Ժողովն մատուցած բողոքագիրն պիտի խրկէ միասին, հանդերձ կարեւոր բացատրութեամբ առ դեսպանս: Վերջապէս հայոց խնդիրն որ օրերս երկրորդական կերպարանք մը առած էր յունաց և Մօնթէնէկրոյի հարցերու բաղդատմամբ, երկու աւուրց մէջ կերպարանափոխ եղաւ, հայոց զինեալ խմբերու արշաւանաց լրոյն շնորհիւ: Կըսեն որ այս միջոցին Վանայ մէջ ալ շարժում մը տեղի պիտի ունենայ: Այն ատեն խրաց վիճակը անհնազանդելի կերպով կը լաւանայ: Երէկ սախալ թղթատարը եկաւ, բայց Վանի նամակներն չը յանձնուեցան մեզ.—Մենք կը սպասենք ստոյգ և մանրամասն տեղեկութիւններ:

Ազգ. Ժողովը գումարեցաւ. կը զբաղի վարչական ծրագրի խնդրով: Կերեւի թէ շատ հակամէտ են պաշտօնէից դրութիւնը ընդունել. այսինքն ազգ. արտաքին յարաբերութեանց, ներքին յարաբերութեանց, վանական, ուսումնական, նիւթական գործոց տեսուչներ ընտրել, որք պիտի կազմեն ազգ. վարչութիւնը իւրաքանչիւրը պատասխանատու առ ազգ. ժողովն, միանգամայն ամբողջ վարչութիւնը պատասխանատու: Ազգ. ժողովը ներկայ տարւոյս մէջ կերեւի թէ աւելի օգտաւէտ պիտի գործէ. «Հայրենիք» լրագիրը որ շաբաթաթերթ էր օգոստոս 1-էն սկսեալ օրական պիտի լինի. և կարծեմ թէ ազգ. ժողովոյ ընդդիմադիր մասին, այսինքն Պատրիարքի և վարչութեան գործոց հսկող և համար պահանջող մասին թերթը պիտի լինի:

Ջէրքէզք Զէյթունի մերձակայները Անմէլիք գիւղի վրա յարձակելով, աւերեր կողոպտեր են, եկեղեցին մզկիթ փոխած էին, Պատրիարքը բողոքեց ումանկ է, դեռ գոհացուցիչ պատասխան չընդունեցաւ:

Աւստրիոյ կայսրը 1000 ֆիորին նուիրեց Հայաստանի սովելոց համար մեր կեդրոնական ժողովին: Նուպար բաշայի նախաձեռնութեամբ Եգիպտոսի մէջ մասնաժողով մը կը կազմվի և 800 ոսկի կը հաւաքվի և կը խրկեն մեր մասնաժողովին: Պ. Լօարն ուրիշ նամակաւ մը մեծ ցաւ կը յայտնէ հայոց դէմ բերնէն սպրդած խօսքին համար—ինչ օգուտ, խնդրոյն էն սաք միջոցին բերնէն ելած խօսքը չը գիտնար: Այս օրերս «Թայմզին» մի նամակ պիտի խրկուի պ. Համլի կողմէ (Stamboul»-ի անգղիացի տնօրէնը), որ պիտի հաստատէ թէ ինչպէս հայերն պատճառ եղան Անգղիացոց Հնդկաստան հաստատուելուն:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 5 օգոստոսի: Համայնքների ժողովի մէջ մարկիզ Հարրինգտօն յայտնեց, որ Հնդկաստանի բիւջէտի մէջ 7005000 ֆունտ ստերլինգ պակասորդ կայ, այս տարի այդ պակասորդից 3,500,000 կը ծածկվի: Հարտինգտօն յոյս ունի, որ Աֆղանիստանի պատերազմի համար ուրիշ ծախսեր չեն հարկաւորվի:

ՓԱՐԻԶ 4 օգոստոսի: «République Française» լրագիրը յայտնում է, որ «Virité» լրագրի հրատարակած նամակը վերաբերվում է 1871 թուականի հոկտեմբերի 16-ին և բոլոր լրագիրների մէջ տպված էր:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 օգոստոսի: Լիգովկայի մէջ պատահած երէկվայ հրդեհը ոչնչացրել է 22 տուն: Վնասները միլիոնաւոր են: Այրվեցին 18 ձիաներ, երկու կով: Մի փոքր աղջիկ կորաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 92 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 25 կ., երկրորդ 223 ր. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 37 կ., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 12 կ., ոսկի 7 ր. 85 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,09 պէնս, ռուսաց 100 ր., Բերլինի վրա 227 մարկ, Համբուրգի վրա 214 մարկ 37 պֆ., Փարիզի վրա 264 ֆր. 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի: Պաշտօնապէս հաղորդվում է, որ կոմս Լօրիս-Մէլիքով նշանակված է ներքին գործերի մինիստր, իսկ Չերէվին նրա օգնական: Ժանդարմների զօրաբաժնի կառավարութիւնը յանձնված է ներքին գործերի մինիստրին:

Կ. ՊՕԼԻՍ, 7 օգոստոսի: Պօլիցիայի մինիստրը Հաֆիզ-փաշան հրաժարվեցաւ է իր պաշտօնից մոլեռանդ գործունէութեան եղանակի պատճառով: Նրա տեղը նշանակված է Դաղի-Հաֆիզ-փաշան:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ

«ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ»

Թիֆլիս-Կուկիայում Ա.էքսէյևակի փողոցի վերայ Յոսեփոմ Մանդինեանի տանում:

Օգոստոսի 20-ին կը սկսուին նորեկների քննութիւնները և ընդունելութիւն, ուսումնարանն ընդունելու է գիշերօթիկ և կիսաթոշակ աշակերտներ:

1—6 (2)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆԴՊՐՈՑԻՑ-Առաջիկայ 18⁸⁰/₈₁ ուսումնական տարին, ցանկացողների համար Սեմինարիա (վարժապետական դպրոցը) մտնելու, կան 4 վականսիաներ պատրաստական դասատան և 6 վականսիաներ առաջին դասատան մէջ: Խնդիրքները ընդունելութեան մասին տրվում են մինչև 15 օգոստոսի: Մրցողական հարցաքննութիւնները կը լինեն 20 օգոստոսից մինչև նոյն ամսի 25:

3—3 (1)

Վաճառւում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՑԻ ՍԵՂԱՆ և ԱՓՈՒՆԵՐ: Ելիսավետինսկայա փողոց № 46 Թիֆլիսում:

5—5

Շուտով լոյս կը տեսնէ ԴԱՇՆԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐ ԶԱՅՆԱԳՐԱԾ ժողովրդական գործածական երգերի

Երկրորդ տետրակը

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուքիասեանցի, և կը պարունակէ իր մէջ մէկ երգեր:

1) «Ախնի ընկեր մեռանում եմ»
2) Ախնապուշ անձայն»
3) «Բաժակներ առնուենք, եղբայրք»
4) Մեր Հայրենիք, թշուառ անտէրս»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբոցդան»

Երկրորդ տետրակի գինը լինելու է մի րուբլի. ցանկացողները սուռնալ դաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տետրակը, որ պարունակում է իր մէջ հետեւեալ երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ». 3) Ցուրտը փչեց» և 4) «Միծեռնակ» պէսք է ուղարկին մի րուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջում է լինելու:

Նոյն հեղինակի մօտ վաճառւում է նոր ԵՐԳԱՐԱՆ ՖՐԻԳՈՒՆԻՆ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակված երգեր: Գինը 30 կոպէկ: Յանկացողները սուռնալու և՛ ձայնագրած երգերը, և՛ Ֆրէյտունի նոր երգարանը, պէսք է ուղարկին մէկ րուբլի և 30 կոպէկ. հետեւեալ հասցէով: Въ Тифлисъ Ивану Артемьевичу Сузаналджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 13.

Համեմատելիք անգլիական խանութի թէյից գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի Ֆունտը2 րուբլանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

47—100

Գայանեան և Ներսէսեան դպրոցների ուսուցիչ պ. Վարձկեանը իր գերդաստան մէջ ընդունում է միայն ՉՈՐՍ գիշերօթիկ աշակերտուհիներ: Դիմել ուղղակի «Շահին» խմբագրութեանը:

2—5

ՉԱՆԳԱՒՈՂԱՋՈՂԻ ՄԵՐ ՄԱՂԱԶԻՆՈՒՄ շաբաթական է վերջնական վաճառումն ամեն օր ժամը 9-ից առաւօտեան մինչև 12 կէսօրի, թէ բակում և թէ մաղազինում:

2—4



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումին ազնչացնող յատկութիւնը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անուանված, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատներում և դրօգիստների մօտ գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացեւտ Մարտոս վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է Գոնտում, վարշավայում, էչմիածնի փողոց, № 5: Գալմանինի մեծ արկղիկը արժէ վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է զգուշանալ խարդախութիւններից:

17—25 վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ (1

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Ծօրաձևվիչ ներքին հ., Ծատնանց կանանց և երեխաների հ., Քուշաբեանց խիթութգիական և աչքերի հ., Շատմբօրսկի վիներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոդևկան հ.:

Երեքշաբթի. Մինկևվիչ խիթութգիական հ., Վ. ղօրօվ վիներական և բոցաքի հ., Էչյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլևադով, Լիսիցև և Վանմիշևի ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցև և Ռուվոմակի ներքին հ., Շատչմբօրսկի կնևերական և կաշու հ., Ռասուածասուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. ղօրօվ վիներական և բոցաքի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցև և Վ. երմիշևի ներքին հ., Քուշաբեանց խիթութգիական և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկևվիչ խիթութգիական հ., Կրասնօգլևադով և Լիսիցև ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շատչմբօրսկի և Ռասուածասուրօվ վիներական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցև և Վերմիշև ներքին հ., Բաբօվ կուրծքի հ., Սանկօվսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. ղօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազգաս հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բարանով չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւեաբոյժ Օբրև խա ազգաս հիւանդներին բժշկանոցի տեղակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դերեկտոր Լիսիցև:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Ջ. **ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ**) Կովկասեան Գրամատառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԻՆԵՆՑԻՑ:

Ա. ՏԱՐԻ նախապատերիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ արուած է Թիֆլիզի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մանուկ ուսումնական և բնական երեւոյթներ և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ.

դուժարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է **Գ. ՏԱՐԻՆ** մասը քաղաքական:

19—20

Աղէքսանդրապոլու երկսեռ դպրոցայ բարձր դասատուց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար առաջ լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների հոգաբարձութեանց:

հոգաբարձք { Արտիս Միրզայեանց.
Ղազար Խաչակեանց.

«Մշակի» 138-դ համարում տպված Թիւրքիայից (Կ. Պօլսից) նամակը, մեծ ուրախութիւն պատճառեց ամեն մի ճշմարիտ հային։ Պ. նամակագիրը գրում է, որ յանուն ազգային վերժինգրութեան թիւրքիացի հայոց գինեալ զօրեղ խմբեր յարձակվել են Վասպուրականի բուրդ գիւղերի վրայ, և 7 գիւղ աւերել, ոչնչացրել են։ Արդարև, մեծ նշանակութիւն ունի այս լուրը. ոչ թէ նորա համար, որ յիշեալ հայերը կոտորել են քրդերին, այլ նորա համար որ նրանք ձանաչել են ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը։ Ուրեմն թիւրքիացի հայը, թողնելով դարաւոր նախապաշարմունքները, թողնելով ապէտ հոգևորականաց քարոզութիւնները, որոնք թշնամուն միայն «օրհնել» էին քարոզում, այսօր զէնքը ձեռքին գիմադրում է և մահացնում է իր արիւնարբու այն թշնամիներին, որոնց սրի տակ այսքան դարեր շարունակ տարել է դաժան տանջանքներ և ամօթալի մահ։ Թիւրքիացի հայը հասկացել է, թէ զէնքով միայն կարելի է պաշտպանել իր կեանքը, Թիւրքիայի նման մի տէրութեան մէջ, և զէնք բարձրացնելով իր թշնամու դէմ, միայն կարող է գրաւել լուսաւորեալ Եւրոպայի ուշադրութիւնը և ցոյց տալ, թէ հայն էլ ընդունակ է մի քաղաքական ազատ մարմին կազմելու, որովհետև իր թշնամիներին կարողանում է զէնքով պատասխանել, և ոչ թէ միայն լացով և բողոքներով, ինչպէս մինչև ցայժմ։ Այսուհետև թող Թիւրքիան հասկանայ, որ իր հպատակ հայը կարող է ապրել թշնամու հետ իբրև թշնամի, և բարեկամի հետ իբրև բարեկամ և պաշտպան։ Ահա այսօր Վասպուրականցի հայը առաջին քայլն արեց Եւրոպայի առաջ հանդէս գալու, և այս քայլին դուցէ կը հետևեն Թիւրքիացի միւս հայերը։ Այսպիսի դէպքերում միայն կարող է Եւրոպան իր ուշադրութիւնը դարձնել Թիւրքիայի լծի տակ տանջվող հայի վրայ, և նրա վիճակը բարւոքել։

Թիւրքիայի հայը լսեց բողոքներով և աղերսագիրներով Հայաստանում եղած եւրոպական հիւպատոսարանները, Վանի առաջնորդարանը և Կ. Պօլսի պատրիարքարանը, բայց մինչև այժմ ոչինչ բաւականութիւն չը ստացաւ.... Թիւրքիացի հայը տեսաւ, որ թէպէտ Կ. Պօլսի պատրիարքարանը և Վանի առաջնորդարանը չափազանց շատ են աշխատում, բայց հասկացաւ, որ առանց իր մասնակցութեան գործը շատ դանդաղ է ընթանում. մտածեց ինքն էլ մի կերպով օգնել գործին, և ահա այսօր Վասպուրականցի հայը առաջ է մղում իր ազգային գործը, և յոյս ունի պսակելու այն բաղձանքը վերջապէս, որին մինչև այսօր ցանկանում են և աշխատում են հայոց խնդրի գլուխ ցողն և ազգանուէր Ներսէսը, առիւծասիրտ և անվեհեր Խրիմեան Մկրտիչ եպիսկոպոսը։ Ուրեմն յոյս կայ, որ թիւրքիացի հայը պէտք է պսակի Ս. Ներսէսի և Խրիմեանի բաղձանքը, և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏՐԱԿՏԱՏԻ ԱՌԻԹՈՎ

—

Վերջին տասը տարին մի չօշափելի զարկ տուեց մեր ազգային ինքնաճանաչութեանը. Մենք հասկացանք, որ հայ ազգը, չը նայելով պատմական տխուր հանգամանքների ազդեցութեանը, պահպանել է մինչև այժմ իր գոյութիւնը և ինչպէս կուլտուրական տարր ընդունակ է ըմբռնելու եւրոպական քաղաքակրթութեան սկզբունքները. Այս համոզումը կեանք տուեց մեր լրագրութեանը, կեանք տուեց գրականութեան և ուսումնարանական գործին, հրաւիրեց դէպի գործունէութեան ասպարէզը ընդունակ ույժեր. Մեր առաջաւոր մարդիկ սկսեցին գործել և շարունակում են գործել մինչև այժմ իրանց նպատակի և գործունէութեան նշանաբան ունենալով—հետևել Եւրոպային. Ուսումնարան, թատրոն, լրագիր, հասարակական դաստիարակութիւն և ուրիշ կրթողական հիմնարկութիւններ, որոնք կեանք առան մեր մէջ և չեն դադարում հետզհետէ աճել և զարգանալ—պարզ ապացուցանում են, որ մենք մեր թոյլ ուժերով ձգտում ենք կառուցանել ազգային յառաջադիմութեան հսկայական շինութիւնը Եւրոպայից աւանդվող հիմունքների վրայ. Անհերքելի է ուրեմն այն միտքը որ մի անգամ համոզվելով այդ հիմունքների հաստատութեան և բարեբարութեան մէջ, մենք պէտք է չը շեղվենք մեր նպատակից, պէտք է առաջ տանենք ազգային լուսաւորութեան գործը հաւատարիմ մնալով մեր նշանաբանին. կարճ ասած՝ լուսաւոր ազգ լինելու համար անհրաժեշտ պէտք է հետևենք ամեն մի քաղաքակրթեալ ընդհանուր մարդկութեան ուսուցիչ արևմտեան Եւրոպային.

Որքան պարզ և հետևողական է այս տարրական ճշմարտութիւնը, այնու ամենայնիւ դեռ գտնվում են մեր մէջ այնպիսի սրտացաւ մտածողներ (!), որոնք կարծես չը հաւանելով այն ուղղութեանը, որ ընդունել է ազգը առաջադիմական ճանապարհի վրայ, իրանց խելքին զոռ տալով համարձակվում են դրականապէս ասպարէզ դուրս գալ անմիտ, ցնդաբանական ծրագրներով. Այդպիսի ազգի յառաջադիմութեան մասին գլուխ տրաքացնողներից մէկի խելքի ծնունդը ընթերցողը կարող է գտնել «Պսակ» շաբաթաթերթի № 15-ում տպված «Յառաջադիմութեան մասին հայերի հրահանգս վերնագրով յօդուածը. Ինչպէս երևում է այդ յօդուածը շարունակութիւն է, որի սկիզբը դժբաղդաբար ձեռքս չէ ընկել. բայց որովհետև նա պարունակում է իր մէջ մի առանձին, վերջացրած միտք, ես անկարելի չեմ համարում մի թեթև քննողական հայեացք գցել նրա վրայ.

Այս հանճարաւոր յօդուածի տաղանդաւոր հեղինակը ինչպէս երևում է գրել է իրան մի նպատակ ցոյց տալու, թէ հասարակութեան ամեն մի դասակարգութիւնը ինչ պարտականութիւններ ունի և ինչպէս պէտք է կատարի նա այդ պարտականութիւնները, որ «ազգի յառաջադիմութիւնը իր շարունակութիւնից չը դադարի», որ «ազգը իբրև մարդ (sic) հարկաւոր վայելչութիւններից չը զրկվի»....

Դասակարգութիւնների մէջ առաջինը հայրերինն է. Այս դասակարգը հեղինակի մտքով «պէտք է գործէ հրահանգ տալով», այսինքն նա պէտք է ունենայ զէպի որդոց դասակարգը մանկավարժական պարտականութիւն.

Որովհետև «Մշակի» բոլոր ընթերցողները հազիւ թէ կարդացած լինեն վերոյիշեալ յօդուածը, ես հարկաւոր եմ համարում դուրս գրել այն վեց զըլխաւոր հրահանգները, որոնք—հեղինակի մտքով—«եթէ անթերի կերպով կատարվին ազգի կատարելութիւն անհերև պիտի երևի ամենին իր արգիւնքովը». 1) Հրահանգ՝ քրիստոնէութեան ճշմարիտ հաւատքը, կամ ճշմարիտ աստուածպաշտութիւնը ձեռքէ չը թողելու համար 2) Հրահանգ՝ ճշմարիտ քրիստոնէութեան պարզ կանոնների վերայ աւելորդ կամ նորանոր տրտաքոյ աւետարանին կանոններին տեղի չը տալու մասին. 3) Հրահանգ՝ երկրին (ուր որ կը բնակին) օրինաց և կարգերին հնազանդ լինելու և նոյն օրինաց սահմանները ճշդութեամբ պահպանելու մասին. 4) Հրահանգ՝ իրանց հօր և նախնեաց սուրբ յիշատակները անկորուստ պահպանելու մասին. 5) Հրահանգ՝ ընտանեաց, ազգականաց, ազգին և ամեն ազգերի հետ մարդկային բուն կենցաղավարութեան պահանջածին համեմատ՝ անկեղծ սէր և անխռով խաղաղութիւն պահպանելու մասին. 6) Հրահանգ՝ վերոյ գրեալ հինգ տեսակ հրահանգները անթերի կերպով կատարելու միջոցը ձեռքէ չը թողելու, կամ եթէ թողել են՝ վերստին ձեռք բերելու մասին.

Ինչպէս տեսնում է ընթերցողը յօդուածի հեղինակը այդ հրահանգներով պահանջում է, որ մեր հայրերը աւանդեն իրանց որդոցը հետևեալ գիտութիւնները՝ աստուածաբանութիւն, իրաւագիտութիւն (հարկի և պատուի օրէնք, հողային օրէնք, տարաց յարաբերութեան օրէնք, դատաստանական օրէնք և այլ տեսակ օրէնքներ, որ երկրի պետութիւնից հաստատվում են և պաշտպանվում. Այս օրէնքները համարում է ինքը հեղինակը), գրականութիւն և պատմութիւն—ինչպէս բացատրում է հեղինակը 4-դ հրահանգը—և ճշմարիտ բարոյականութեան սկզբունքներ. Ընթերցողը այս տողերը կարդալուց յետոյ անշուշտ բերանը կէս բաց բաց կանի և այս հարցը կը տայ ինքն իրան՝ տո, հրանց չը լինի այդ պարոնը. Ճշմարիտ ես ինքս շատ մտածել եմ այդ հարցի վրայ, բայց ոչ մի եզրակացութեան չեմ հասել. Աւելի լաւ է մի փոքր նրա հետ մտերմանալ անենք, կարելի է բանը պարզվի....

Պարոն Կ. Ս., եթէ դուք, փառք Աստուծոյ, ողջ և առողջ էք, եթէ Երևանի

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

1880—№ 143

1880

ՈՒ Շ Ա Կ

ԱԶԱՏԱՄԱՐՏ

Ամսագիր գրականության, քաղաքականության և հասարակական կյանքի

Հրատարակվում է ամեն ամսի 1-ին, 15-ին և 30-ին։ Գնում է տարեկան 12 ռ., կիսամյակը 6 ռ., եռամսյակը 3 ռ. Առանձին համարը 40 կ.։ Արտասահման՝ տարեկան 15 ռ., կիսամյակը 8 ռ., եռամսյակը 4 ռ.։ Ընդունվում են նաև բաժանորդագրություններ ամսվա 1-ից։ Գումարը ուղարկել հետևյալ հասցեով՝ Թիֆլիս, Ազատամարտ խմբագրության։ Ձրի նմուշներ չեն ուղարկվում։ Հրատարակության գինը՝ 5 կոպ.։

Բովանդակություն

Ներքին տեսություն. Ա. Ա. Ա

լով, որ օրիորդը սովորականից աւելի ուշացաւ, կատարի պատուհաններից նայում են, և տեսնում են նա ընկած է աւազանի մօտ, իսկոյն խնացում են տալիս աստիկանութեանը, որը գալով բաց է անում դռները, գտնում է օրիորդին անձնատուր եղած։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մի քանի շաբեցի վաճառականներ չնորհակալութիւն են յայտնում Շուշի քաղաքի բնակիչ մեծատաւոր Մինաս Խունդկեանցին, նորա այս ձմեռ կատարած բարերարութիւնների համար, որով այս տարվայ թանգութեան ժամանակ թեթևացրեց աղքատ ընտանիքների ապրուստի դժուարութիւնները, թէ իր սեպհական ծախքերով և թէ մի քանի պարոնների հետ բարեգործական նպատակով ժամանակաւոր ընկերութիւններ կազմելով։

—

Մեզ գրում են ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ այս օրերում վախճանվեցաւ Թումբուլ գիւղի բնակիչ Բագալ Շ. կատարեալը, որ թողեց մօտ 30,000 րուբլի հարստութիւն։ Հանգուցեալը իր հարստութիւնից կտակել է 5000 ր. Հին-Նախիջեւանի հոգևոր դպրոցին, 3000 ր., Երուսաղէմի Ս. Յակոբեայ աւետարանչարանին և Էջմիածնի վանքին 100 ր.։ Հանգուցեալը յայտնի էր Նախիջեւանի գաւառի մէջ, որպէս մի չափազանց հանգիստ և խնայող մարդ, նա իր կեանքում արած է բաւական բարերարութիւններ։ Բայց նամակագիրը զարմանք է յայտնում, ինչպէս է պատահել, որ հանգուցեալը իր կտակի մէջ մոռացել է իր բնակված Թումբուլ գիւղի աղօրմելի աւետարանը։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են, որ երէկ թուրքեր մանելով մի առուս աղջկայ առևն, սկսում են մինանց հետ վիճել, որպէս զի գրաւեն այն աղջկան։ Վէճը հասնում է կռիւ և թուրքերից երկուսը սպանվում են, կռւի ժամանակ աղջկան էլ վիրաւորում են։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են որ հոգևոր դպրոցի նոր բնտրված հոգաբարձութիւնը խիստ եռանդով և խղճմտաբար աշխատում է։ Անցեալ տարի այդ դպրոցում կար մի վարժապետ, պ. Ա-դամեան, որ ամենայն վարժապետներից մէկն էր։ Պ. Պաօչեանց նրան հրաժարեցրեց պաշտօնից իր անձնական անհամակրութեան պատճառով։ Նոր ընտրված հոգաբարձութիւնը կրկին պաշտօնի հրաւիրեց յիշեալ վարժապետին, բայց յանկարծ էջմիածնից ստացվում է հրաման պ. Պաօչեանցի թելագրութեամբ յօրինված, որով Հին-Նախիջեւանի հոգաբարձութեանը արգելվում է ընդունել իր դպրոցում պ. Ադամեանցին։

—

ԲԱՔՈՒԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Մեզու» Հայաստանի լրագրում, որ Բաքուի 7 ոճանդից գաղթած աշխարհիները նորից վերադառնում են իրանց հայրենիք և որ իբր թէ ոմանցից գաղթողները գադարել են գաղթելուց։ Այդ լուրը քաղաքիս մէջ չէ, ոչ մի ընտանիք մինչև այսօր դեռ չէ վերադարձել։ Իսկ եթէ ա-ջխարհիները իրանց ընտանիքը Թիւրքիայում թողած վերադառնում են Բաքուայ գաւառը աւազակութիւն անելու համար, այդ չէ նշանակում թէ գաղթականները վերադառնում են։ Արդէն այդ տեսակ աւազակների մի խումբ իր աւազակութեամբ և մարդասպանութեամբ այնքան սարսափեցրել է ամբողջ գաւառը, որ տէրութեան ծառայողները ճանապարհորդելու ժամանակ իրանց հետ առնում են քսան կամ երեսուն ձիաւորներ։ Այնուամենայնիւ այդ աւազակներին աջողվել է նոքեքում չարագործութիւններ կատարել։ Արդ-վինի գաւառապետի թարգման պ. Զաքարիձէ նոքեքում ապանվեցաւ աւազակների ձեռքով, իսկ մի պարոն որ մեր կապալառու է, մնթ ի մէջ վիրաւորվեցաւ հրացանի գնդակներով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրների մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Փարիզից։

Բրևվիի այցելութիւնը Եերբուր քաղաքին Ֆրանսիական Հանրապետութեան պատմութեան մի գարնզուխ կարող է գառնալ։ Այդ այցելութիւնը մի այնպիսի հասարակ ճանապարհորդութիւն չէր, որով պետութիւնների կառավարիչները կամենում են արտայայտել հատուկ կարեկցութիւն որևէ ազգի կամ անձի հանդէպ։ Հասարակութիւնը յօգուտ որևէ նշանակութիւն չէ տալիս։

Հրաժարվելով ներկայ գտնվել Եերբուր քաղաքի երկաթ ուղիներին ի պատիւ Ֆրանսիական Նաւատորմի, Գրեվի շուտով հասկացաւ, որ ինքը սխալված է։ Ոչ ոք չէր կարող նախատեսել ոչ այն ահագին ցոյցերը, որով ժողովուրդը, գօրքերը և նաւատորմը հանդիպեցին բարձր իշխանութեան ներկայացուցիչներին և ոչ այն մեծ ազդեցութիւնը, որ գործեց Գրեվի ամբոխի վրա։ Եթէ Եերբուրի ուղիները, որ իսկապէս պաշտօնական բնաւորութիւն ունէր, նախագահէր միայն Գամբետտա, Գրեվիի նախագահութիւնը վերջ կը դնվէր դեռ ընտրութիւններից առաջ։

Պէտք է նկատել, որ Գամբետտայի վարմունքը Եերբուրի ուղիների ժամանակ ոչ թէ միայն անբիծ էր, այլ ընդհակառակը ցոյց տուեց նրա բազմակողմանի հանճարի նոր կողմերը։ Գամբետտան առաջին անգամ ցոյց տուեց, թէ ինքը, երբ կամենում է, կարող է յետ քաշուել և երկրորդական դեր խաղալ, թէպէտ նրա ահագին ծառայութիւնները և ինքնուրոյն ստացաբէդը իրաւունք են տալիս նրան առաջին տեղը բռնել։

Որքան կամենում են ստախօսին միապետական լրագիրները վարձկան թղթակիցները, բայց Եերբուրի ուղիների բոլոր անկողմնապահ այցելուները միաբերան հաստատում են, որ Գամբետտայի ներկայութիւնը բոլորովին յետ չէր մղում հանրապետութեան նախատեսին։ Գրեվին թէ իր արտաքին տեսքով և թէ վարմունքով արժանաւոր կերպով էր պահում իրան։ Ամենքը նրան համակրում և յարգում են, հէնց որ նրա հետ գործ են ունենում։ Նա բնածին ընտանեկանութիւն ունի իւրաքանչիւր դէպքին տալ միայն այն, ինչ որ հարկաւոր է։ Ոչ մի աւելորդ խօսք և ոչ մի պարկաութիւն չէ կարելի գտնել այն բազմաթիւ ճառերի մէջ, որոնցով նա պատասխանեց իրան յարգողներին։ Թէ Ծովապետի, թէ եպիսկոպոսի, թէ քաղաքագլխի և թէ պատգամաւորի հետ խօսելու ժամանակ իւրաքանչիւրին նա կարողանում է յարմար պատասխան տալ։

Նա մեծ հեղինակութիւն ստացաւ իր զբօսանքներով քաղաքի մէջ, ամբոխով շրջապատված։ Ամենից մեծ և անսպասելի տպաւորութիւն Գրեվի գործեց Գամբետտայի վրա։ Գամբետտա այժմ նախագահի ամենահաւատարիմ երկրպագու է։ Պատգամաւորների ժողովի նախագահը իւրաքանչիւր դէպքից օգուտ էր քաղում Գրեվիին իր յարգանքը և համակրութիւնը յայտնելու համար։

Այդ միակ լաւ տպաւորութիւնը չէ, որ գործեց Եերբուր քաղաքը Գամբետտայի վրա։ Ժողովրդական ցոյցերը յարգող մարդիկ չեն կարող ընդդիմանալ ժողովրդական շնորհակալութեան արտայայտութեանը, չեն կարող չը գթալ, որ վերջ ի վերջոյ իրանք պարտական են Ճեւում իր անսահման հաւատարմութիւնը յայտնող հարիւր հազարաւոր ամբոխին։ Բաւական է կարդալ Գամբետտայի արտասանած գեղեցիկ ճառերը իմանալու համար, թէ նա ընդհանուր կանոնից բացառութիւն չէ կազմում։ Նրա արտասանած ճառերը սրտի խորքից են բղխել։

Պէտք է ցանկանալ որ այդ տպաւորութիւնները չանհետանան քաղաքական մանր ինարիների պատճառով։ Գամբետտան Եերբուրից ուելի հաճոյ վերադարձաւ։ Գրեվի հասկացաւ, որ նա կարող է մի և նոյն ժամանակ հաճոյ լինել և պետութեան գլխաւորի գերը խաղալ։ Այս երկու հետևանքները բաւական են, որ Եերբուրի ուղիները բարերար ազդեցութիւն գործեն Ֆրանսիական Հանրապետութեան ապագայի վրա։

Մոսկուա Ծօրեզիրների հետևեալ ճառով ընդունեց Գրեվիին «Սլաւեր» նաւի վրա։

«Պ. Նախագահ, ես բաղդաւոր եմ, որ կարող եմ մեր ազգային նաւատորմը հիմնողի անունը կրող նաւի վրա ներկայացնել ձեզ Ֆրանսիական նաւատորմի ներկա ղեկավարներին։ Շնորհակալ եմ այն պատճառով, որ այսօր գուք մեզ արիք։ Դուք այստեղ տեսնում էք այնպիսի մարդկերանց, որոնք հետաքրքրված են կուսակցութիւններից և խուսափում են դէպի քաղաքական կրքերի հրաւէրները, որոնք մի միտք, մի ձգտումն, մի բարձր նպատակ ունին՝ պաշտպանել հանրապետական Ֆրանսիայի դրօշակը, որ հպարտութեամբ ծածանվում է մեր նաւերի վրա։ Նրանք խորին յարգանքով վերաբերվում են դէպի այն դրօշակը, որ հովանաւորում է ազատութեանը, քաղաքակրթութեանը և մեր թանգագին հայրենիքի պատիւն։»

Գրեվի պատասխանեց։ «Պ. Մինիստր, նաւատորմի հրամանատար և օֆիցերներ։ Շնորհակալ եմ այն զգացմունքների համար, որ յայտնեց ինձ մեր նաւատորմը։ Ես ուրախութեամբ հանդիպում եմ Ֆրանսիական նաւատորմին, որովհետև կարող եմ յայտնել նրան իմ յարգանքը, շնորհաւորութիւնը, և հաւանութիւնը։ Սենատի և պատգամաւորների ժողովի նախագահների ներկայութիւնը ապացուցանում է, որ ես հանրապետութեան բոլոր բաբեր ատիճանաւորների զգացմունքներն եմ յայտնում։ Դեռ ևս շատ բան կայ անելու Ֆրանսիական նաւատորմի համար և հէնց որ մենք կը կարողանանք մեր եկամուտի մի մասը նուիրել նաւատորմին, կառավարութիւնը անյապաղ կանի այդ բանը և երկիրը նրան կը ծափահարէ։ Ֆրանսիան իր նաւատորմին և գործերին միատեսակ է սիրում։ Նրանք երկուսն էլ միատեսակ հարկաւոր են և նա պէտք է նաւատորմի համար նոյնը անէ, ինչ որ արտգործերի համար։ Ֆրանսիան իր նաւատորմը այն դրութեանը պէտք է հասցնէ, որ նա վտանգների և ծանր աշխատանքների չենթարկվի։ Մեր նաւատորմերը ամենաբարձր քաջութեան են հասել։ Նրանք տպացուցին այդ հանգամանքը, երբ մեր տարաբաղդութեան ժամանակ շտապեցին պաշտպանել Ֆրանսիան և մեր դինուորների կարգերում պատերազմում էին անձնազոհութեամբ և քաջութեամբ։ Դա Ֆրանսիական նաւատորմի պատմութեան ամենափայլուն էջերից մէկն է։ Այդ վարմունքը անջնջելի տառերով դրոշմված է ազգի սրտի վրա։»

Անգլիական կառավարութիւնը ուզում էր իր նաւերը ծանօթացնել Ֆրանսիայի նաւատորմութեամբ, որ ի պատիւ Գրեվիի տուած հոգևկրոյթին ասաց հետևեալը. «Եթէ առաջ անգլիացին գար Ֆրանսիա և նրա նաւատորմը այսպէս ուժեղ տեսնէր, նա իր կառավարութենից փող կը պահանջէր անգլիական նաւատորմը զինաւորելու համար, որովհետև 50 տարի առաջ այդ երկու նաւատորմերը պատերազմում էին։ Այժմ հանգամանքները փոխվել են։ Անգլիացիները սրտանութեամբ են տեսնում ձեր նաւատորմի զարգանալը։ Վաթսուն տարի է, ինչ Ֆրանսիան և Անգլիան չեն պատերազմում միմեանց հետ և այդ հանգամանքը յատուկ նշանակութիւն է տալիս նրանց բարեկամական խօսքերին։ Մեր կառավարական հիմնարկութիւնների նմանութիւն էլ խազազութեան մի այլ գրաւական է ներկայացնում։ Դրանք թէև ձեռք զանազանվում են, բայց նոյն ազատամիտ հիմունքների վրա են հաստատված, որոնք այժ են տալիս Ֆրանսիայի և Անգլիայի բարեկամութեանը քաղաքակրթութիւնը փառաւորելու համար։» Այդ հոգևկրոյթի ժամանակ ամենանշանաւոր ոտսար Գամբետտան առաջարկեց ի պատիւ Հանրապետութեան նախագահի։

«Այն ժամանակից, ասաց Գամբետտա, երբ Ֆրանսիան իշխանութիւն ուներ Գրեվիին, նրա անունը խորը տպաւորվեցաւ բոլոր Ֆրանսիացիների սրտերի մէջ և երկրին ապրած նրա ահագին ծառայութիւնները ըստ արժանոյն գնահատվում են։ Երկրի ապահովութեան գրաւականը մենք նրա մէջն ենք տեսնում, որ Գրեվին միշտ ազդում է այն գործերի վրա, որոնք շօշափում են հանրապետական հիմնարկութիւնների հաստատութիւնը և ազգային ոյժերի զարգացումը։ Նա Ֆրանսիացի չէ, ով չնորհակալ չէ ամենքից յարգված նախագահ Գրեվիին։»

ԳԱՄԲԵՏՏԱՑԻ ՃԱՌԸ

—

Եերբուրի մէջ ի պատիւ Գամբետտայի տուած հացկերոյթի ժամանակ պատգամաւորների ժողովի նախագահը երկու ճառ արտասանեց, որոնցից, մէկով նա դիմում էր Գրեվիին, իսկ միւսով պատասխանեց Եերբուրի պատգամաւորին։ Ահա երկրորդ ճառը։

«Ես չափազանց շարժված եմ այն խօսքերով, որ խոկոյն արտասանվեցան և մանաւանդ այն ընդհանուր հաւանութեամբ, որով ընդունվեցան այդ խօսքերը։ Ես երբէք չեմ մոռացել, թէ ես ով եմ, որտեղից եմ դուրս եկել և ուր եմ գնում։ Ես գիտեմ, որ դուրս եմ եկել աշխատող ժողովրդի ամենայնեան կարգերից և ես ամբողջապէս նրան եմ պատկանում։ (Մասիահարութիւններ)։ Ոչ այն հասար օրերի ժամանակ, որ դուք ինձ յիշեցրիք, ոչ էլ այժմ ես դիկտատուրայի չեմ ձգտում, ես ցանկանում եմ ժողովրդի ծառայ լինել և իմ անդը ծառայել (Ծափահարութիւններ)։ Այստեղ յիշվեցաւ տանջանքների այն ժամանակամիջոցը, երբ տաս տարի առաջ իմ օրրասան պարտականութիւնը կատարելու համար ես եկայ Եերբուր։ Բաղդը մեզ պատճառեց, բայց ահա տաս տարի է, ինչ մենք ոչ մի կռւաբար բառ չենք արտասանել։ Ժողովրդների պատմութիւնների մէջ բոպէներ են լինում, երբ իրաւունքը ժամանակաւորապէս խաւարվում է, բայց այդ մեայլ բոպէների ժամանակ ժողովրդները իրանք իրանց տէրական իշխանաւորներ պէտք է դառնան և անձնաւորութիւններից չը պէտք է բռնանան ազատութիւնը։ Նրանք պէտք է ընդունեն հաւատարիմ օգնութիւնը և մերժեն ամեն տեսակ միապետութիւն։ Նրանք պէտք է ապահեն հանգստութեամբ, հաշտեցնեն բոլոր ձգտումները, պահպանեն իրանց ձեռքերի և գէնքի ազատութիւնը։ Իրաւունքը միակ է, որ կարող է տալ ամենամեծ բաւականութիւն. մենք կամ մեր երեխաները կարող ենք յուսալ, որովհետև ապագան բաց է ամենքի համար։ (Ա յս տեղ նարկութիւնը Ալզաս և Լոտարինգիան Ֆրանսիայի հետ միացնելու մասին ծածկվեցաւ ողևորված ծափահարութիւններով)։ Այդ կողմից մեզ արած նախատինքին ես մի խօսքով կը պատասխանեմ։ Մի քանի անգամ ասել են, որ մենք կռվնասպահ ենք դէպի մեր դօրքերը, դէպի այն դօրքերը, որոնց մէջ գանվում են ազգային բոլոր մեր ոյժերը, երկրի ամենալաւ արիները։ Մեզ մեղադրում էին, որ մենք շատ ժամանակ ենք նուիրում պատերազմական արհեստին։ Մենք այդ պատերազմի համար չենք անում. այդ կիրքը մեզ ներշնչված է անհրաժեշտութեամբ բարձրացնել Ֆրանսիան, որ ընկած է, և տալ նրան իր վայել տեղը աշխարհի մէջ։ Մեր սրտերը այդ նպատակի համար են բաբախում և ոչ թէ մի սրբանանկ դաղափարի ձգտումից։ Մենք կամենում ենք անմատչելի անել այն, ինչ որ Ճեացել է Ֆրանսիային։ Մենք ցանկանում ենք յուսալ ապագայի վրա և ապահել, եթէ աշխարհի մէջ կայ արդարութիւն և նա երեւում է նշանակված օրին և ժամին։ Այսպիսով են առացվում, պարոններ, պատմութեան իսկական դասերը։

«Պատմութիւնը մարդկերանց և անցքերի վերջնական դատաւորն է։ Մինչդեռ մենք ապրողներս արևի և շուաքի մասի վրա միատեսակ իրաւունքներ ունենք, Ճեացածը ինքն իրան է գալիս։ Ներկայ եմ, պարոններ, և խնդրում եմ յայտնել ձեր համաքաղաքացիներին, թէ մենք ինչ ոգով ենք միմեանց հանդիպում։»

Այս ողևորված ճառը մեծ տպաւորութիւն գործեց ներկայ եղողների վրա։ Գամբետտան կարողացաւ շարժել իր ունկնդիրների ամենազգայուն լարերը, ծափահարութիւններ առանալ և չասել ոչ մի խօսք, որ կարողանար վիրաւորել Վերսանիայինն։ Ամբողջ մամուլը այդ ճառին տուեց իր հաւանութիւնը։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՏՆՈՒԵՑԱՒ

12-ին այս օգոստոս ամսի, առաջին սահաթին գինի ծախին Նազար Գրիգորիչ Յարութիւնեանցի մագազինի առաջը յանդէպ Ներսէսի քարվանսարային Արծրունոյ, գաւագերահասակ աշակերտ նրա Սեդրակ Պետրոսեանց. մի բումաժնիկ զանազան վէքսիլներով 60 րուբլի, րօսպիսկաներով 300 րուբլի, ուրիշ մի վճարած վէքսիլ 1085 րուբլի և այլ րօսպիսկաներ թւով 43 հատ, նմանապէս մորկայք և պատրաստի փող 73 րուբլ. որս կորցնողն հրավիրվում է յիշեալ Յարութիւնովի մագազինն ապացուցութիւններով նրան պատկանելութեան այն կորուսեալ բումաժնիկի, փառն ստանալոյ:

3—3

ՆԵՐՍԷՍ ՄԻՋԻՔԵԱՆԻ
«ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ»

Թիֆլիս-Կուկիայում Աշէքսէյեւսկի փողոցի վերայ Ոսկանով Մանդինեանի տանն:

Օգոստոսի 20-ին կը սկսուին նորեկների քննութիւնները և ընդունելութիւն. ուսումնարանն ընդունելու է գիշերօթիկ և կիսաթօշակ աշակերտներ:

5—6 (2)

Այս օգոստոսի 20-ից Օրբէլ Օրբէլեանցի և Կարապետ Բէկախեանցի մասնաւոր ուսումնարանում կը սկսուեն նորեկ աշակերտների ընդունելութիւն: Ուսումնարանը պահպանում է գիշերօթիկ և ընդունում կիսաթօշակ աշակերտներ, պատրաստելով նրանց Տփխիսու բոլոր միջնակարգ դպրոցների առաջին և երկրորդ դասատանց համար:

4—6

Նուաստ լոյս կը տեսնէ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ ՁԱՅՆԱԳՐԱԾ ժողովրդական գործածական երգերի

Երկրորդ տետրակը

Ձայնագրութիւն և հրատարակութիւն Յովհաննէս Սուգանամեանցի, և կը պարունակէ իւր մէջ վեց երգեր:

1) «Աղնիւ ընկեր մնա՛նում եմ»
2) Անմարիչ անձայն»
3) «Բաժակներ առնունք, եղբա՛րք»
4) Մեր հայրենիք, Թշուառ անտէր»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տետրակի գինը լինելու է մի րուբլի. ցանկացողները ստանալ գաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տետրակը, որ պարունակում է իւր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք» 2) «Ինձ համար, չէ». 3) Յուրտը փչեց» և 4) «Մրծեանակ» պէտք է ուղարկեն մի րուբլի. տասից աւելի գնողներին 20 % զիջումն է լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է Նոր ԵՐԳԱՐԱՆ ՁՐԻԵԹՈՒՆԻ, որի մէջ պարունակվում են 50 հատ ընտիր նոր հրատարակած երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները ստանալու և՛ ձայնագրած երգերը, և՛ Ձրէյթունի Նոր երգարանը, պէտք է ուղարկեն մէկ րուբլի և 30 կոպ. հետեւեալ հասցէով:

Въ Тифлисъ· Ивану Артемьевичу Сузанаджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 13.

Դպրեանի և Ներսէսեան դպրոցների ուսուցիչ պ. Կարճեւեանը իր վերդատուն մէջ ընդունում է միայն ՉՈՐՍ գիշերօթիկ աշակերտուհիներ: Դիմել ուղղակի «Մշակի» խմբագրութեանը:

4—5

Մի երիտասարդ, որ գիտէ հաշուապահութիւն, կամենում է տեղ ունենալ, կարող է և Գործակատարի կամ կանտորշչիկի պաշտոն կատարել. հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը:

1—5

ՃԱՆՃՈՂԱՃՕՎԻ ՄԵԾ ՄԱՂԱՋԻՆՈՒՄ շարունակվում է վերջնական վաճառումն ամեն օր ժամը 9-ից առաւօտեան մինչև 12 կէսօրի, թէ բակում և թէ մագազինում:

3—4

Թիֆլիսից հեռանալու պատճառով ծախվում է 225 րուբլով վարտգոյրներ շինելու մի ՄԵՔԵՆԱՅ: Ծախողը յանձն է առնում նրա գործածութեան մասին սովորեցնել առնողին:

Դիմել Եփրեմ ՄԱՍԻԿԵՐԳԱՑԻՆ, Մուխրանսկի փողոց, Սոլդատսկի բազարի անկիւն Գամբարովի տանը, № 8.

2—5

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց հիւանդ. Գորալեվիչ ներքին հ., Բոտինեանց կանանց և երեխաների հ., Քիւշարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շաեմրօրսկի վեներական և կաշու հ., Բարայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզորով վեներական և բաղագի հ., Բէյխ աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդզովսկի ներքին հ., Շաեյմբօրսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզորով վեներական և բաղագի հ., Բոտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւշարեանց ակիջների և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրոնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շաեյմբօրսկի և Աստուածատուրով վեներական և կաշու հ., Բարայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բարօվ կուրծքի հ., Եանկովսկի վեներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզորով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բարաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիկական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Աստամնոյժ Օրբելով աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՀՐԱՏԱՐԱԿ

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կովկասեան Գրավաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԷՈՆԵԱՆՑԻ:

Ա. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի հայրենագիտութիւնը), հինգ պատկերներով, գինն է . . . . 35 կոպ.

Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեւոյթ և մէկ պատկերներով, գինն է . . . . 60 կոպ.

գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

19—20

Աղէքսանդրապօլու երկսեռ դպրոցաց բարձր դասատանց համար հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ռուսաց լեզուի մի ուսուցիչ, որ աւարտած լինի ոչ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Ցանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց. Աստուր Խաչակեանց.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան արք եպիսկոպոս, Միքայէլ Միանսարեանց, Նուբար-փաշա, Կարին քաղաք, Պետերբուրգայ Հայոց եկեղեցին, Սրճարան Հայոց 'ի Կարին, Ամեայ Հայ ընտանիք 'ի Վան, Վան քաղաք, Կաշ Հայերէն աւետարանին, նուիրելոյ Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթուղիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են պատուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ.:

Տփխիսում ստանալ կարելի է պ. Զ. Գրիգորեանցի և կենդրոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼՈՒ Է ՊԱՆՍԻՕՆ ՈՐԸ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Միրիմանեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ:

34—40

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱԾ հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ Էնֆիանջեանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

12—22

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացվել է մեծ քանակութեամբ ԹԷՅ ուղղակի Թէյխփործներից, նոյնպէս ՑՒՏՐԱՏ ՄԱԳՆԵԶԻԱ ծարաւութեան դէմ և կարբոլեան ՓՕՇԻ և ՀՆԴԻԿ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ:

2—10

Fonds A.R.A.M

№ 144 Օգոստոսի 20 (Սեպտեմբերի 1) 1880 Օգոստոսի 20 (Սեպտեմբերի 1) № 144

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի կէս տարվանը 6 բուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թղթակցութիւն գրվում են միմիայն խմբագրատան անձի։

Տարաբաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տան օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Մի խռովարարութեան առիթով։ Նամակ Կ. Օբալից։ Նամակ Երեանից։ Նամակ Մանգլիսից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թուրքիա։ Արևելեան գործերը։—«Մշակի» հեռագիրներ,—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Նամակ Ալէքսանդրապոլից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ.

—

Թէև հայրենիքի շահերը պահանջում են ամեն դէպքում պահպանել նրան օտարների առաջ, բայց ինչպէս այդ անում, երբ խրճահարվում եմ։ Անցնում օրերը ես առիթ ունենայ խօսակցելու մի օտարազգի պատուական պարոնի հետ, որը մօտ երեք տարի է Թիֆլիսումն է բնակվում։ Զանազան մեզ հետաքրքիր հարցերով զրաղվելուց յետոյ, յանկարծ մեր հարցը փոխվեց հայ վաճառականների մասին։ Նա ասում է, որ երեք տարվայ ընթացքում Թիֆլիսի հայ վաճառականների մասին այն կարծիքս բնաւորութեան վրա։ Նա ասում է, որ ես երեք տարվայ ընթացքում Թիֆլիսի հայ վաճառականների մասին այն կարծիքս եմ կազմել, որ նրանք չափազանց փոքրոգի, նաստիկ և ժլատ են։ Նրանց համար աշխատել ամենևին չարժէ։ Ինչ ասես նրանց համար կարող ես անել, նրանք ոչ մի բանից գոհ չեն մնում

Fonds A.R.A.M

ՆԱՄԱԿ ԲԱՆԱՆԻՑ

— Թիւ 9

Ս. Չէլեպեան

Ես ալ ուզեցի ձեզի գրել, որ ինծի ալ ուրախութիւն պատճառէք ձեր նամակներով։ Ես ալ ձեզ կը սիրեմ, ինչպէս որ դուք ինծի կը սիրէք։ Ես ալ կ'ուզեմ որ ինծի ալ գրէք ձեր ամէն մանր գործերը, ինչպէս որ ես ձեզի կը գրեմ

սաւմ. (Օբ. Տէր Մարկոսեանի ձեռամբ հաւաքված) Անաստասիա Փիլիպեան 5 ր., Մարիամ Մխիթարեան 5 ր., Ոսկի 3 ր., Ն. Ռոստիսեան 3 ր., Մ. Զիլիսեան 18 ր., Ա. Զիլիսեան 15 ր., Ախալքալաքում. (Պետիկեանի ձեռամբ հաւաքված) ընդամենը 33 ր., Ագուլիսում. (Արտախանեանի ձեռամբ հաւաքված) ընդամենը (գեռ չենք ստացած) 33 ր.

Երեւանում՝ (կամաւորականի ձեռամբ հաւաքված) ընդամենը (գեռ ոչ գրեանք և ոչ փողն ենք ստացած) 5 ր. Բոլոր գումարն է 117 ր.

Յուսալով որ մեր յարգոյ հաւաքակութիւնը հանգամանալով այսպիսի մի հիմնարկութեան մեծ օգուտը ալ ևս չի դանդաղի օգնել գործի յաջողութեանը, հաղորդելով իր նուէրները պ. Յ. Կուսիկեանի ձեռքը՝ Երմոլովսկի փողոց, սեպհական տուն № 12.

Երբ որ բաւականաչափ գրքեր կը հաւաքվին՝ այն ժամանակ պ. Կուսիկեանցը արտօնութիւն կը խնդրի և դրադարանի բացումն ու կանոնագրութիւնը տեղական թերթերի միջոցաւ կը հրատարակի՝ ի գիտութիւն հասարակութեան։

Նախկին աշակերտներ Թիֆլիսի Էլեալական ուսումնարանի։

Միրզոյեանց, Պապինեանց, Պիճիկեանց և Զիլինգարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի ՀԱՒԼԱԲԱՐ կոչված մասը բոլորովին արհամարհված է քաղաքային վարչութիւնից, նրա թէ լուսաւորութեան, թէ փողոցների մաքրութեան վրա ուշադրութիւն չեն դարձնում. Սուրբ Կարապետի ձորում չլինված է տապան պատրաստելու մի գործարան, որ սարսափելի գարշահոտութիւն է տարածում իր չորջը գտնվող տների մէջ. բնակիչները հանգստութիւն չունեն այդ հոտից, իսկ հիւանդութիւնը, վնասակար ազդեցութիւնը ինչն ըստ ինքեան հասկանալի է։

—

ԻԴԻԻՐԻՑ մեզ գրում են, թէ երկաթ ղղրոցների հարցաքննութիւնները վերջանալուց յետոյ, հոգաբարձութիւնը պ. տեսուչ Գալանթարեանցի հետ նոր պայման կապց, որ առաջիկայ ուսումնական տարում նոյնպէս չարունակէ իր պաշտօնը։ Իսկ պ. տեսուչը, որ այժմ Թիֆլիսում է, լսում ենք, որ չէ կամենում կատարել իր պայմանը։ Հոգաբարձունները այդ մասին չեն մտածում, չը նայելով, որ չուտով ուսումը պէտք է սկսվի։ Ղղրոցները հազիւ փոքր ինչ կարգի էին բերված, այժմ կ'կին պէտք է նորոգվին հին, անյաջողակների ձեռքին։

—

Մեզ գրում են Հին-Նախիջևան գաւառի Ռուբթափայ գիւղից, թէ անդային ուսումնարանը, որ չնուած է 1879 թուին, խիստ ծչուաւ դրութեան մէջ է, ոչ վարժապետներ ունի և ոչ աշակերտներ։ Ուսումնարանի փակման պատճառը գիւղական հասարակութեան երկպառակութիւնն է և անհամաձայնութիւնը։ Այդ գիւղում մի քանի տարի առաջ գտնվեցաւ սուրբ Հռիփսիմէի կուսի մասունքը, որը ամեն տարի գալում է ղէպի ինքը ուխտաւորների մեծ բազմութիւն հեռաւոր տեղերից։ Ուխտաւորներից գոյացած արդիւնքը մի քանի այլ ազգութիւնների հետ կարող էին ուսումնարանը բարեկարգ դրութեան մէջ պահել, եթէ փողերը պանազան շահասէր անձանց քսակները չը մտնէին։

—

Երկարդ անգամ գրում են մեզ ՇՈՒՇՈՒԻՑ մի և նոյն հարցի պատճառով, որ տպվեցաւ «Մշակի» անցեալ համարներում։ Այս քաղաքի հարուստները. որպէս լինում է ամեն մի հայաբնակ քաղաքների հասարակութեան մէջ, կազմել են մի տեսակ կաստա, որ ժառանգի միւս դասակարգերի ո՛ր խնամութիւն չեն անում. երկար տարիներ միմեանց ազգիկ տալով և առնելով, համարեա բոլոր հարուստները խնամացել են։ Այժմ հոգ. իշխանութիւնը արգելում է նրանց մէջ ամուսնութիւնը, ասելով, որ հարս ու փեսայի արիւնը պէտք է օթն ալարտից բաժանված լինի միմեանցից։ Այժմ չատերը մտածում են և պատրաստ են «ՀԸ-հատ» ամուսնութիւնները հնարաւոր կացուցանել առաջ եկեղեցիների միջնորդութեամբ, եթէ հայ եկեղեցականները յամառութեամբ իրանց «օխտը պորտը» կը կրկնեն։ Նամակագիրը յիշում է մի քանի դէպքեր։

—

ՂՈՒԲԱՆԻՑ մեզ գրում են, որ այդտեղ վաճառականութիւնը չափազանց ընկած դրութեան մէջ է, առևտուրը շատ խուլացած է, իսկ հացը և կենդանական ուրիշ պիտոյքները բաւական էժանացել են։ Ալիւրի պուդը արժէ 60 կոպէկ, գարին 35 կոպ., մաի փունջը 5 կ., խոզը 20 կ., ձուի 8 հատը 5 կոպ., հաւի մի հատը 15 կոպ., փայտի սաժէնը 4 բուբլ, ածուխի սայլը 1 ր. 20 կոպ.։

—

Մեզ գրում են ՂՈՒԲԱՅԻՑ որ քաղաքից մի քանի վերստ հեռաւորութեամբ, Դերբէնդի ճանապարհի վրա, աւազակները կողոպտել են երկու հայ վաճառականի, որոնցից մէկի մօտ, ինչպէս ասում են, գանվելիս է եղել մինչև 7000 բուբլ։ Նոյն տեղից հաղորդում են, թէ չը նայելով, որ մահմեդականների ծոմապահութեան ևՁաստպաչխարութեան օրերն են, կռիւը, աղմուկը և սպանութիւնը համարեա ամեն օր պակաս չեն լինում քաղաքի թիւրքերի միջից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Կ. Պօլսից «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են հետևեալը։

Թիւրքաց կառավարչական «Osmanli» նոր լրագիրը, որ «Թէրճիմանի—Հաղիղաթի» փոքրանակերէն թարգմանութիւնը կարելի է համարել, յայտնեց նորերումս, որ Բ. Դրան և Զևրնօգօրիայի մէջ համաձայնութիւն կը կայանայ, որովհետև փոխադարձ յարգանք կայ քաջ չևրնօգօրցիների և թիւրքերի մէջ, որոնք սովորեցին միմեանց դնահատել պատերազմական գաշտերի վրա, մինչդեռ թիւրքերը չեն կարող յարգել պարծենկոտ յոյներին, որոնք միշտ ուրիշներից են օգնութիւն սպասում և մեծարում են կարգով ռուսներին, ֆրանսիացիներին և այլ ազգերին։ Պաշտօնական լրագիրը ասում է, որ Դուլցինոյի նահանգի մի մասի զիջելը Չևրնօգօրիային կարելի է կատարված համարել, մանաւանդ որ ալբանցիները այլ ևս չեն ընդդիմանում։ Ինչ կը վերաբերի նահանգի միւս մասին, լրագրի կարծիքով, բանակցութիւնների յետոյ անպատճառ համաձայնութիւն կը կայանայ, որովհետև Բ. Դուռը առանց վիճաբանութիւնների և բանակցութիւնների չէ կարող ընդունել պետութիւնների երկու առաջարկութիւնից մէկը։ Անգլիական առաջին մինիստրը մտածել է, որ լաւ է Ծովային ցոյցին ժամանակից անել Թիւրքիային, որովհետև այդպիսով ալբանցիները անբաւական կը ձևան Բ. Դռնից։ Այժմ այդ բոլոր դիտաւորութիւնները, ինչպէս յայտնի է, յետաձգված են։ Այժմ երբ Բ. Դուռը մտադիր է վերջ դնել չևրնօգօրիական հարցին, նրա վրա շատ մեծ պատասխանատուութիւն գործից այն լուրը, իբր թէ ալբանական միութիւնը կազմված է սուլթանին գահընկէց անելու և թիւրքերից իշխանութիւնը խլելու նպատակով։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Փարիզից «Polit. Corresp.» լրագրին գրում են հետևեալը։

Ներկայումս հանգստութիւն է տիրում մասամբ այն պատճառով, որ ամենքը սպասում են սկսված ձեռնարկութիւնների հետևանքներին և մասամբ, որ դիպլոմատիան հանգստանում է, որովհետև սկսել են ամբարային արձակուրդները։ Բ. Դուռը վճռել է երկու չարիքներից ամենափոքրը ընտրել և Դուլցինիո յանձնել Չևրնօգօրիային։ Թիւրքաց զօրքերը, որոնք Բիզա-փաշայի հրամանատարութեան տակ ուղարկված են Սկուտարի, նպատակ ունեն պահպանել Բ. Դրան հեղինակութիւնը։ Մի քանի նշաններից երևում է, որ ալբանցիները այժմ աւելի դիմողներ կանեն։ Փարիզում ոչ ոք չէ ծածկում, որ այդ բոլորը մասամբ կը վնասի յունական գործին։ Բ. Դուռը կը կենտրոնացնի իր բոլոր զօրքերը և գործ կը դնի իր բոլոր միջոցները մինչև վերջին շունչը Եանինա, Մետցովօ և Արթասա պաշարելու համար։ Երևի այդ պաշտպանութիւնը յամառ կը լինի և երկար կը տևի։ Թիւրքերը մտածել անգամ չեն կարող ևրօպային դիւանագործած ուժով ընդդիմանալու մասին։ Նրանք դիպլոմատական խորամանկութիւն են անում ժամանակը երկարացնելու համար, որպէս զի պետութիւնների մէջ անհամաձայնութիւն պատահի և այդ անհամաձայնութիւնից նրանք օգուտ քաղեն։ ԵՒրօպան պէտք է հետացնէ անհամաձայնութեան բոլոր առիթները. եթէ նա համաձայնութեամբ կը գործէ, սուլթանը զիջումներ կանէ։ Բ. Դրանը կարելի է այնպէս պաշարել, որ նրա համբերութիւնը կը հատնի. կը կամենա՞յ արդեօք Թիւրքիան սոսկալի լինել։ Կարելի է Բ. Դրանը պաշտօնապէս յայտնել Ծովային ցոյցերի մասին և այդ հանգամանքը կը սաստկէ նրան Ճունատանին զիջումներ անել։ ԵՒրօպան այդպէս էլ կանի։ Իսկապէս ոչ մի պետութիւն չէ մտածում ոչ առանձնացած գործունէութեան և ոչ հետանալու մասին։ Մի քանի չափազանց վախկոտ ձայներ Ֆրանսիայի մէջ հարցից հետու են ճնում և ցանկանում են, որ Ֆրանսիան չը կատարէ իրան նշանակած դերը ԵՒրօպայի մէջ։ Նրանց կարծիքով Ֆրանսիայիր արտաքին գործերով չափազանց շատ են զբաղվում։ Այնուամենայնիւ այդ գործերից մի քանիսը յարաբերութիւն ունեն Ֆրանսիայի շահերի հետ։ Այդ պատճառով Ֆրանսիան իրաւունք ունի և պարտական է այդ ուղղութեամբ գործել։ Այժմի հանգամանքը պահանջում է, որ Ֆրանսիական կառավարութիւնը Տունիսից աչք չը հեռացնէ։ Եգիպտոսի և Սիրիայի մէջ նա պէտք է ազդեցութիւն ունենայ։ Արևելեան հարցերը միմեանց հետ սերտ կապված են։ Այդ պատճառով Ֆրանսիան պէտք է շարունակ կատարէ մեծ պետութեան դերը և նա ոչինչ վտանգի չի ենթարկվի։ Նրա խառնվելը գործի մէջ միակողմանի չէ։ Նա չէ կամենում բաց անել արևելեան հարցը, այլ ընդհակառակը կամենում է ծածկել նրան Բերլինի դաշնագրով։

«Daily News» լրագրի Հռոմի թղթակիցը գրում է. այստեղ ստացված լուրերից երեւում է, որ Բ. Դուռը որոշմունքված չէ առանձին դիջումներ անել Դուլցինիոյի հարցի մէջ։ Օգոստոսի 24-ին լրանում է պետութիւններից Բ. Դրանը սուած երկշաբաթվայ ժամանակամիջոցը և եթէ Բ. Դուռը զիջումն չի անի, պետութիւնները ստիպված կը լինեն դիմել Ծովային ցոյցին։

«Իէյտերի ընկերութեանը» հեռագրում են Կ. Պօլսից, որ օգոստոսի 11-ին ուսարիական նոր դեսպան բարձր կալիցէ ներկայացաւ սուլթանին և յանձնեց նրան իր հաւատարմաթղթերը։ Դեսպանը մի փոքրիկ ճառով յանկութիւն յայտնեց սուլթանի հաւատարմութիւնը ստանալու համար, որովհետև միայն այդ ճանապարհով կարելի կը լինի կատարել իր յանձնարարութիւնը, որի նպատակն է աւելի ամրացնել Թիւրքաց և ուսարիական կառավարութիւնների մէջ եղած բարեկամութիւնը։ Նոր դեսպանը սուլթանի ոտքը ձեռքի հրաւիրվեցաւ։

Մակեդոնիայի մէջ պատահողող անցքերի մասին «Polit. Corresp.» լրագրին Սալոնիկից գրում են։ Առհասարակ Բալկանեան թերակղզու վրա ապստամբութիւնները սկսվում են գարնանը, երբ սարերը կանաչում են։ Այս տարի գոնէ Մակեդոնիայի մէջ այդ կանոնից մենք բացառութիւն ենք տեսնում։ Այդ նահանգի մէջ այս տարի դարունը չը խանգարվեցաւ հրացանաձգութիւններով և գործը միայն ուշ ամառը կը սկսվի, երբ ցուենատանը ձեռք կը տայ իր վիճակված նահանգների դրաւելուն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի։ «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ հրամայված է չորրորդ բաժինը անուանել Թագաւորի սեփական կանցելեարիա Թագուհի Մարիայի հիմնարկութիւնների համար։

Կ. ՊՕԼԻՍ, 13 օգոստոսի։ Դեսպանները յայտնեցին Բ. Դրանը, որ եթէ Դուլցինիոյի յանձնելը անյապաղ չի կատարվի, նաւատորմիների ցոյցը անխափան կը լինի։ Հմիտ-էֆէնտի-փաշա Հմիդ-Մուխտար-փաշայի տեղ Մօնտոտորի նահանգապետ է նշանակված։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 14 օգոստոսի։ Ռուսաստանի մէջ հինգ տարի տպրող Կօկանդի նախկին խան Նար-Էդին ազատութիւն ստացաւ օգոստոսի 12-ին։ Ուղևորվում է Տաշկենտ։ Երէկ նա հասաւ Նիժնի։ Այսօր ուղևորվում է Կ. Պօլիս։

Կ. ՊՕԼԻՍ, 14 օգոստոսի։ Հաստատ ասում են, որ այսօր կը յանձնվի ԵՒրօպայի միաձայն պատասխանը Թիւրքաց շրջաբերականին յունական խնդրի վերաբերութեամբ։

ԲՕՄԲԷՑ, 14 օգոստոսի։ Գեներալ Անկյարտ հրաման ստացաւ կանգնել Զալտպարագի մէջ Կարուլի կրիտիկական դրութեան պատճառով։ Աբդուրահմանի զօրքերը սկսում են հեռանալ նրանից։ Էյուբ-խանի կուսակցութիւնը մեծ ցոյց արաւ յօգուտ Էյուբի։

ՇԱՄԱՆ 14, օգոստոսի։ Կռւարար խանի զօրքերը ապստամբվեցին։ Բրիտանական զօրաբաժինը ուղևորվում է Կանին օգնելու համար։

ԲԷՐԼԻՆ, 14 օգոստոսի։ Ահաւորական միներութեան կառավարութիւնը ժամանակաւորապէս յանձնված է իշխան Բիսմարկին։ Հօշման պաշտօնից արձակված է։

Կ. ՊՕԼԻՍ, 14 օգոստոսի։ Այսօր կոմս Հայդֆելդ ներկայացրեց Բ. Դրանը պետութիւնների միաձայն պատասխանը Թիւրքաց շրջաբերականին յունական խնդրի վերաբերութեամբ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոստոսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Թագաւոր Կայսրը Յարկոե Սելոյից ուղևորվեցաւ Լիվադիա։

ՎԻՆՆԱ, 18 օգոստոսի։ Ծուատատանի Կայսրը աւստրիական Ֆրանց-Յոսէֆի կայսրին շնորհեց ուլանների գունդի շէֆի տարեկան։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՒՆՆԵՐ

ԳՏՆՈՒՆՑՆ

12-ին այս օգոստոս ամսի, առաջին սահմանի գինի ձագին Նազար Խրիմյանի Յարութիւնեանցի մազապուրծ առաջը յանդիպ նեռքեի քարվանսարային Աբծրանոյ, գաւառս Ղարահասակ աշակերտ նրա Անդրակ Պետրոսեանց, մի բուժմունիկ գանապան վէրքոտիներով 60 բուրլի, բազմիսկանիներով 300 բուրլի, ուրիշ մի վճարած փիքսիլ 1085 բուրլի և այլ բազմիսկաններ թուով 43 հատ, նամանաւանդ մարկայք և պատրաստի փող 73 բուրլ. որա կորցնողն հրավիրվում է յիշեալ Ցարութիւնովի մազապուրծն ապացոյցներով նրան պատկանելութեան այն կորուսեալ բուժմունիկին, վան տանելոյ:

3—3

ՆԵՐՔԻՆԻՑ ՄԵԼԻՔԵԱՆԻ

«ՄԱՄՆԱԻՈՐ ՕԻՍՈՒՄՆԱԲԱՆԸ»

Թիֆլիս-Կուկիայում Էէ-քսէ-յնակի փողոցի վերայ Ոստամ Մանդինեանի տանն:

Օգոստոսի 20-ին կը սկսուին նորեկների քննութիւնները և ընդունելութիւն. ուսումնարանն ընդունելու է պիշերօթիկ և կիսատ-թոշակ աշակերտներ:

5—6 (2)

Ա-յս օգոստոսի 20-ից Օրբէլ Օրբէլեանցի և Կարապետ Բէլամեանցի ժառանգաւոր ուսումնարանում կը սկսուին նորեկ աշակերտների ընդունելութիւն: Ուսումնարանը պահպանում է պիշերօթիկ և ընդունում կիսաթոշակ աշակերտներ, պատրաստելով նրանց Տփխիսոյ բոլոր միջնակարգ դպրոցների առաջին և երկրորդ դասարանց համար:

4—6

Նուազ լոյս կը տանէ ԴԱՇՆԱՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՐ ԶԱՑՆԱՊԻՒՆ ժողովրդական գործածական երգերի

ՆԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԸ

Զայնագրութիւն և հրատարակութիւն Յարութիւն Սարգսեանցի. և կը պարունակէ իր մէջ վեց երգեր:

1) «Ազնիւ ընկեր մեռանում եմ»
2) Ակնապիշ անձայն»
3) «Քաժանենք առնուք, նորա՛ր»
4) Մեր հարևնիք. իշխատա անուէր»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տետրակի գինը մնում է մի բուրլի. դանկացողները սուտակ գաշնամուրի համար ձայնագրած երգերի առաջին տետրակը, որ պարունակում է իւր մէջ չորս երգեր. 1) «Անի քաղաք». 2) «Ինձ համար, չէ». 3) Ցաւոտ փչից» և 4) «Միծնանակ» պէտք է ուզարկին մի բուրլի. տասից աւելի գնողներին 20 % պիջում են լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառքում է նոր ԵՐԳԱՐԱՆ ՖԼՅԳԻՈՒՆԻ, որի մէջ պարունակում են 50 հատ ընտիր նոր հրատարակած երգեր: Գինը 30 կոպէկ: Դանկացողները սուտակում և՛ ձայնագրած երգերը, և՛ Ֆլէյտուն նոր երգարանը, պէտք է ուզարկին մէկ բուրլի և 30 կոպ. հետևեալ հասցէով: Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджянцъ На Петхаинской ул. собственный домъ № 13.

Դայանեան և Ներսէսեան դպրոցների ուսուցչ պ. Վարդանեանը իր վերադասուն մէջ ընդունում է միայն ՉՈՒՅ պիշերօթիկ աշակերտուհիներ: Իմանալ ուզողին «Աշակերտ» խմբագրատեղիները:

4—5

Մի երիտասարդ, որ գիտէ հաշուապահութիւն, կամենում է տեղ ունենալ, կարող է և Գործակատարի կամ Կոնտորշչիկի պաշտան կատարել. հասցէն իմանալ «Աշակերտ» խմբագրատեղը:

2—5

ՋԱՆԶՈՒԼԱՋՈՎ ՄԵՆ ՄԱՂԱԶԻՆՈՒՄ շաբաթական վերջնական վաճառումն ամեն օր ժամը 9-ից առաւօտեան մինչև 12 կէսօրն, թէ բակում և թէ մազազինում:

4—4

Թիֆլիսից հեռանալու պատճառով ծախվում է 225 բուրլով վարպետների շինելու մի ՄԵՔԵՆԱ: Մախաղը յանձն է առնում նրա գործադրութեան մասին տեղեկացնել առնողին:

Դիմել Ճավախի ԱԱՍԿԵՊԱՅԻՆ, Մուխրանակի փողոց, Սոլդատսկի բազարի անկիւն Դամբարովի տանը, № 8.

3—5

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉՅԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Դավրօնակի կանանց հիւանդ. Դօրալեվիչ նեռքին Հ., Թօռնեատց կանանց և երեխաների Հ., Գեուշաբեանց խէրատրգիական և աչքերի Հ., Շահմրօնակի վիներական և կաշու Հ., Բաթայեան ջգային և Հողնկան Հ:

Երեքշաբթի. Մինակովիչ խէրատրգիական Հ., Կզօրով վիներական և բազաղի Հ., Իչլա աչքի Հ., Բախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների Հ., Կրատնօզլեատզով, Լխտիցով և Վեմիշով նեռքին Հ:

Չորեքշաբթի. Լխտիցով և Ռուզովակի նեռքին Հ., Շահչմրօնակի կիներական և կաշու Հ., Առաուատնօրով կանանց հիւանդութիւններին:

Հինգշաբթի. Կզօրով վիներական և բազաղի Հ., Թօռնեատց կանանց և երեխաների Հ., Լխտիցով և Վերեշով նեռքին Հ., Բուշաբեանց սիֆիլիսի և սեռական օրգանների Հ:

Ուրբաթ. Դավրօնակի կանանց Հ., Մինակովիչ խէրատրգիական Հ., Կրատնօզլեատզով և Լխտիցով նեռքին Հ., Բախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների Հ., Շահչմրօնակի վիներական և կաշու Հ., Բաթայեվ ջգային և նեռքին Հ:

Շաբաթ Լխտիցով և Վերմիշով նեռքին Հ., Բաթով կուրծքի Հ., Եանկօվսկի վիներական և կաշու Հ:

Բացի այդ բժիշկ Կ. զօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ ազքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաթայով չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրականան բժշկութեան և նեռքին Հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առաւիտուրյ 6 ր ե և ա ազքատ հիւանդներին բժշկանոցի տանտիկով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամուտակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լխտիցով:

Ամենայն տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) Կոմկատեան Գրամաճառանոցի և ծախվում է բացառապէս նոյն տեղը:

ԸՆԹԵՐՑԱԿԱՆ ԸՇԽԱՐՀԱԳԻՏՈՒԹԻՒՆ ձեռնարկներ աշխատասիրութեամբ Ն. ՍԻՄԷՈՆԵԱՆՑԻ: Ը. ՏԱՐԻ նախապիտելիք (իբրև Հայրենագիտութեան դասերի օրինակ տրուած է Թիֆլիսի Հայրենագիտութիւնը). հինգ պատկերներով, գինն է . . . . . 35 կոպ.

Ր. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ պատկերներով, գինն է . . . . . 60 կոպ. գումարով առնողներին զիջումն կը լինի: Ամենի տակ է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

19—20

Աղէքսանդրապոլու երկսեռ դպրոցայ բարձր դասատանց համար Հարկաւոր է եկող ուսումնական տարուան համար ուսուցչ լեզուի մի ուսուցչ. որ աւարտած լինի որ և է բարձրագոյն դպրոցում, շաբաթական 24 դասով:

Յանկացողները իրանց պայմանները կարող են յայտնել երկսեռ դպրոցների Հոգաբարձութեանց:

Հոգաբարձք { Սարգիս Մխրտչեանց.
Ստեփան Խաչակեանց.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ Հանդիսի ներկայ տարի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն տպագիր պատկեր, յորոց ոմանք նկարուած և փորագրուած են յատուկ մեր Հանդիսի համար: Ընդհանուր պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Ակիսեան աղբ եպիսկոպոս, Միքայել Ա. Խանասարեանց, Ստեփան-Փաշա, Կարին քաղաք, Պետրոս Քրդոյ Հայոց եկեղեցին, Սրճաբան Հայոց ի Կարին, Մոհեալ Հայ ընտանիք ի Վան, Վան քաղաք, Կազմ Հայերէն աւետարանին, Նուիրելոյ Կարին Կայսերական Մեծութեան ի Կամիտղիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ տարի բաժանորդագրութիւնն վերջացած լինելով յանկացողքն առանձին կամ գնել «Փարոս Հայաստանի» Հանդէսն վճարում են այսուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ.:

Տփխիսում առանձին կարելի է պ. Օ. Գրիգորեանցի և Կենդրոնական գրամաճառանոցներում:

Հրատարակիչ Օ. Մ. Մաթևոսեանց:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳԱՐՏԻՉ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԲԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկների ընդունելութիւնը տղոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակի:

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԲԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԱԾ Է ՊԱՆՍԻՈՆ ՈՒՐ ԿԸՆԴՈՒՆՎԻՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԿԻՍԱԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ:

Բ. Մխիթարեանց

Թիֆլիսի ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ վերջացրած հայոց ծխական և ժառանգաւոր ուսումնարանների 8 տարի դասախոսութիւն տրած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ նորեկ ուսումնարանի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ առանձ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐՔԱՑՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ կամ ԷՆՇԻՐՃԻՆՍԿԱՅԻՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՍՆՈՑՆԵՐՈՒՄ:

13—22

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՆԱԻՈՒԹ մէջ սաստիկ է մեծ բանակութեամբ թէճ ուղղակի քէչպոշնեից, նոյնպէս ՅԱՏՐԱԳ ՄԱԳՆԵԶԻԱ ծարաւութեան դէմ և կարբոլեան փոշի և ՀԵՂՈՒԿ սարսափելիք հիւանդութիւնների դէմ:

3—10

Дозволено Цензурою 19 Августа 1880 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона

Fonds A.R.A.M

№ 145 Օգոստոսի 21 (Սեպտեմբերի 2) 1880 Օգոստոսի 21 (Սեպտեմբերի 2) № 145

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Փոխիլեստով գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յաղորդագրութիւնք գրվում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նոյն կիրակի և օրեն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն չափով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի ոչինչ չէ աջողվում—Ներքին տեսութիւն։ Նամակ Ալէքսանդրապոլից։ Նամակ Վրաստից։ Նամակ կապուտանից։ Նամակ Խմրագրին։ Նամակ Խմրագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Արևելեան գործերը։—Վաչկատուն հեռագրեր։—Յայտարարութիւններ։—Բանաստեղծութիւն։ Վանան վարդապետ Բաստամեանցի յոբելեանը։

ԻՆՉԻ ՈՉԻՆՉ ՉԷ ԱՋՈՂՎՈՒՄ

Մեր Հասարակութեան մէջ ինչ գործին և ձեռք տային, ինչ Հաստատութիւն և հիմնէին,—գրեթէ երբէք ոչինչ չէ աջողվում։

Մեր Հասարակական Հաստատութիւնների մեծ մասը մի և նոյն անձների խմբի ձեռքին է։

Չհիմնվում է մի Հաստատութիւն, մի ընկերութիւն,—գործողները նոյն մարդիկ են, որոնք գործում էին և բոլոր մեռածած հիմնարկութիւնների մէջ... Ուշադրութիւն դարձրէք և կը տեսնէք, որ այս կամ այն բանկի ծառայողները, նոյն մարդիկ են, որոնք Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան անդամներ են, նոյն մարդիկ են, որոնք թատրօնական մանուժողովի անդամներ են, նոյն մարդիկ են, որոնք թարգմանական ընկերութեան վարչութեան անդամներ են....և այլն։

Եւ որտեղ մտնում է մի յայտնի խումբ, նա իսկոյն սկսում է տեղաւորել իր կատարեալ թանձեռած հիմնարկութեան մէջ իր բոլոր բարեկամներին և ազգականներին։

Չյոգնելով մեր Հասարակական բոլոր հիմնարկութիւնները իսկապէս Հասարակական հիմնարկութիւններ չեն, այլ յայտնի անձերից բաղկացած գործոնների մի յայտնի մանաւոր խմբի սեփականութիւն են։ Չհասարակութեան բոլոր ոյժերը երբէք չեն մասնակցում մեր ազգային և Հասարակական հիմնարկութիւնների մէջ, այլ նրանց մէջ մասնակցում են միշտ մի և նոյն անձինք, ինչպէս օպերայի մէջ մի և նոյն անձինք խաղում են և պալատականների և գիւղացիների և գիւղացիների դերերը... Արդիկ նոյն են մնում, միայն փոխում են իրանց դիմակները....

Հասկանալի է այժմ, թէ ինչ է պատճառը, որ մեր Հասարակական և ազգային հիմնարկութիւնները միշտ անաջող են գնում։ Պատճառն այն է, որ մասնաւոր շրջանի սեփականութիւն լինելով, այդ բոլոր Հաստատութիւնները դուրկ են մնում Հասարակութեան բոլոր թարմ ոյժերի գործակցութիւնից, ազատ են մնում Հասարակութեան կօնտրօլից։

Հետ անգամ մտրակ է լինում։ Չհիմնվում է մի նոր Հաստատութիւն, մի նոր ընկերութիւն. նոյն, թարմ, ժողովրդական ոյժեր, որոնք կը կամենային նոյնպէս իրանց ամբողջ մասնաւոր կարողութիւնը Հասարակութեան ծառայութեանը, իրանց առաջարկում են ընդՀանուր ժողովի քուէարկութեանը։ Բայց նրանց չեն ընդունում, սևացնում են, այլ ընտրում են դարձեալ Հներին։

Չյոգնելով մեր ոչ մի Հասարական գործունէութեան մէջ մեր Հասարակութեան ամբողջ ոյժերը երբէք չեն մասնակցում, այլ մասնակցում են միշտ մի և նոյն անձինք, որոնք պատկանում են մի նեղ շրջանին։

Հասկանալի է, ուրեմն, թէ ինչն մեզանում ոչինչ չէ աջողվում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

14 Օգոստոսի

Երեքն սահմված է մարդ խօսել այնպիսի մի առարկայի վրա, որի մասին ժամանակն անգամ ծիծաղելի կը լինէր։

Կարդացէք «Մեղու» վերջին համարները, որոնց մէջ գտատպարաված է «Մշակը» որպէս յանցաւոր, որպէս ժխտական...որովհետև քարոզում է, թէ կրօնը և ազգութիւնը տարբեր գաղափարներ են, թէ այդ երկու գաղափարները պէտք չէ շփոթել միմեանց հետ,—քարոզում է, որ հայերը առանց կրօնի խարուխնան պէտք է եղբայրանան մի ազգային ամբողջութեան մէջ, գործերն եկեղեցու և դատաստիանի գործերան պատճառով միմեանց առել, միմեանց հալածել։

«Մշակը» առաջ բերեց մեր մինչև այժմ ունեցած վարմունքը, բոլորը միտսակար գտաւ։ Նա ցոյց տուեց մեզ ազգային գոյութիւնը պահպանելու համար առնի անհրաժեշտ, առնի հատատուն հիմունքներ։ Բայց գանվեցան մարդիկ, որ սկսեցին հակառակել, սկսեցին ծուռ ու մռայլ բացատրութիւններ տալ։

«Մեղուն»,—«Մշակին» երդուեալ հակառակորդը, նոր և թարմ մտքերի թշնամին, առաջ գաստղութեան գահին,—աչխատեց ապիտակը սև ցոյց տալ, աչխատեց ճշմարտութիւնը քօղարկել։ Եվ այդ խառաբասէր լրագրին արհամարհանքը և ատելին գղուանքը կարող էին առնի ազդու պատասխան լինել, բայց դժբազդաբար գանվեցան պարզամիտներ, որ հետևեցին նրա մոլորութեանը։

«Մեղուն» ասում է. հայոց ազգը լուսաւորչական եկեղեցով միայն կարողացաւ իր գոյութիւնը պահպանել մինչև մեր ժամանակը (որը չատ կարծիքական է) և այսուհետև պէտք է նոյն հիման վրա շարունակէ իր գոյութիւնը։ (Իսկ երբ որ հիմքը ինքն իրան քանդվում է, ինչ պէտք է արած)։

«Մեղուն» առաջ բերելով այլազան հայերի դէմ լուսաւորչականները ունեցած փոխադարձ առելութիւնը և նրանց «հայ» անունից խորշելը, պնդում է, թէ [illegible] միայն նրանք կարող են հանդիսել, որոնք պատկանում են լուսաւորչական եկեղեցուն, իսկ ով որ դուրս է այդ եկեղեցուց, նրան հայ չէ կարելի կոչել։ Եւ այդ մտքով քարոզում է՝ աչխատել, այլազան հայերին կրկին իրանց հին եկեղեցու գիրկը վերադարձնել։ (Իսկ եթէ չը վերադառնան, ինչ պէտք է արած։—«Մեղուի» կարծիքով պէտք է կտրել ազգային ամբողջութիւնից)....

Բայց «Մեղուի» պ. խմբագիրը, որ առանձները սրած լուսաւորչական եկեղեցու ինքնակոչ պաշտպան է հանդիսանում (կարծես, «Մշակը» նրա թշնամին լինի) մինչև չէ հասկանում, որ ինքը, իր նման հոգարներն և ամբողջ հայ եկեղեցականները (թէ ոչ. ասեն չը կայ, ընտանիք չը կայ, ուր այդ հարցը ծանր նշանակութիւն ունեցող տեղ չը բռնէ նրանց հանապազօրեայ կենաց մէջ։ Ուրեմն ամեն մարդ մեծ անհամբերութիւնով քաց է անում այդ յօդուածը, որ համալսարանական իրաւաբանական վարդապետի բերանից անաչառ, պարզ և արդար քննադատութիւնների վրա հիմնված վճիռներ լսէ, բայց չատ խաբված դէն է գցում մեծ անբարականութեամբ։

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գլուխգլուխ:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ձիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ հատորների համար կարևոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ յաւելուածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Աղգային գպրոցների համար 10 օրինակից աւել առնողին 10% զեղչում կը պատ. գնելու համար դիմել—Աչէբատնդրատօր—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տփխիս—Կենդրոնական գրավաճառանոց:

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մեկրտն Փանեանցին:

10—10



Կ. ՊՈԼՍԻՑ ԷՏԱՄԱՆՈՒՄԸ ՍԿԱՅԻ ՓՈՂՈՑ տուն ՉՈՒՐՍԻԼՕՎԻ: Նկատ. ՃՐՄԱԿԱՅ սեզոնի համար առաջարկում եմ պատուէրի հետեւեալ բանակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԵՒԻՒ և ՕՏԻՒ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրօպական առաջնակարգ ԳԻՄՈՒՄԸՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԻՒ չափազանց էժան գներով, այսինքն: Ձեռքի մեքենաներ 12—15 բուքլի: Ոտքի 50—80 բուքլի:



7—52

Дозволено цензурою Тифлисъ, 19 Сентября 1880 г. Տպարան եղբայրք Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ

Fonds A.R.A.M

№ 167 Սեպտեմբերի 23 (Հոկտեմբերի 5) 1880 Սեպտեմբերի 23 (Հոկտեմբերի 5) № 167

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարեմանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յառաջադրութիւնը պիտի ուղղուի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վրացիները և Հայը։ — Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Նկարին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Նամակ Պարսկաստանից։ — «Մշակի» հեռագիրները։ — Յայտարարութիւններ։ Բանասիրական։ Քրդական միութիւն։

ՎՐԱՑԻՆԵՐ ԵՒ ՀԱՅԸ

Ինչքան էլ պահպանողական վրացիները, մեզ հայերիս հետ համեմատելով, բայց մի բանի մէջ վրացիները մեզանից անհամեմատ բարձր են։

Ճշմարիտ է, վրացիները հայերիս պէս չունեն հարուստ պատմական անցեալ, չունեն մեր հին գրականութեան պէս հարուստ գրականութիւն, չունեն մերնման լեզուի պէս ճգուն, դարգացման ընդունակ, ժամանակակից հարուստ լեզու, չունեն անկախ ազգային եկեղեցի,—բայց ուրիշ կողմից նրանց մէջ ազգային ինքնաճանաչողութիւնը աւելի դարգացած է, քան թէ հայերիս մէջ։

Ձր նայելով, որ վրացիները չունեն առանձին եկեղեցի, այլ պատկանում են պետական կրօնին, նրանք պահպանել են իրանց մայրենի լեզուն, նրանք ոչ թէ միայն իրանք միշտ վրացերէն են խօսում իրանց մէջ, բայց և բոլորպէս ասիլում են իրանց հետ ապրող հայերին խօսել իրանց հետ վրացերէն լեզուով։ Այդ բաւական չէ. հայը իր առիւնակից հային հայ չէ ճանաչում, եթէ սա ուրիշ կրօնին է պատկանում, քան թէ մեծամասնութիւնը, իսկ վրացիների մէջ այն աստիճան զօրեղ է ազգային ինքնաճանաչողութեան զգացմունքը, որ նրանք կարողացան դրաւել դէպի իրանց ազգութիւնը ուրիշ ցեղին և ուրիշ կրօնին պատկանող ոնհատներին։ Հայ-կաթոլիկը Թիֆլիսում, Ախալցխայում և Ղարսի նահանգում իրան վրացի է անուանում։ Նա ցեղով հայ է, կրօնով կաթոլիկ, բայց վրացիները իրանց զօրեղ ազգային դպացմունքի միջոցով կարողացան դրաւել այդ հայերին և պատրաստի գինուորներ են Թիֆլիսի համար, և կառավարութիւնը պէտք է փորձ ի շահել գիջանի նրանց անկախութիւններին, որպէս զի, նրանք միջոցներ ունենային ապրելու և տարկատրած ժամանակ ծառայելու որպէս քաջ պատերազմողներ։

Իսկ այդ գիջողութիւնը խոտո՞նջ էր ներսում կառավարութեանը։ Անհայացնելով սահմանադրի ամրողջ գաւառները, վերջին չքաւորութեան մէջ ձգելով ժողովրդին, խանգարելով երկրագործութիւնը և վաճառականութիւնը, քրդերը, ոչ միայն իրանք չարկ չէին վճարում, բայց մի և նոյն ժամանակ պրկում էին ռէյոնիների գանձարանը որ և իցէ եկամտաբեր առարկայից, որ այդ վայրենիները դարձրել էին իրանց յափշտակութիւնների ասպարէզ։

Սուլթան Աբդուլ Ազիզի կառավարութիւնը քրդերին զսպելու համար այն եղրակացութեան եկաւ, թէ պէտք էր նրանց գինաթափ անել, թէ պէտք էր նրանց հետ այնել վրանատեղ ցեղի թափառաշրջիկ կեանքից և ընտելացնել երկրագործի հաստատուն կեանքին։ Ամեն աշխատութիւններ ապարդիւն անցան։ Քրդերը միշտ մնացին միշտ ատանդական ցեղեր և իրանց անասունների գօտերով ամառը թափառում էին Հայաստանի ցովատեղ լեռների վրա, իսկ ձմեռը իջնում էին Տիգրիսի ցովիտի ջերմ տափարակների վրա։ Իսկ ինչ որ վերաբերում է նրանց գինաթափ անելուն,—այդ ոնչպէս մեզ անկատար, չը նայելով, որ Վանի փաշաներից մէկը հնարեց մի ծիծաղելի տուրք, որով քրդերը պարտաւորվում էին վճարել մի նշանակեալ հարկ, եթէ կը շարունակէին գէնք կրել։

Այդ միջոցներում սկսվեցան կառավարութեան ճնշումները քաղդ ցեղապետների վրա։ Բաղբերխան-բէյին սպանելը և նրա ազգատոհմի մեծ մասը սրից անցկացնելը պէտք է համարել այն ամենից ուժգին հարուածներից մէկը, որ Թուրք կառավարութիւնը որ և իցէ ժամանակ հասցրել է քրդերին։ Դրանից յետոյ քուրդ ցեղապետները դարձան կառավարութեան ներկայացուցիչների ձեռքում մի տեսակ արդիւնքի աղբիւր։ Նրանց բանտարկում էին, տանջում էին, սպատրում էին, և այդ բոլորը կատարվում էր ոչ այնքան երկիրը խաղաղացնելու նպատակով, որքան օգուտ էր քերում միւշաներին, որոնք կաշառքներ ընդունելով, կրկին բաց էին թողնում կալանաւորներին։ Կարդ և կանոն պահպանելու այդ ձևը ուժի էր տալիս քուրդ աւազակներին աւելի ևս ևրանդով յարատևել իրանց յափշտակութիւնների մէջ, կապիտալ ձեռք բերելու համար, որ նրանով կարողանային ազատվել, եթէ միւսանգամ կը պատահէր նրանց կալանաւորված լինել։

Այդ, քրդերի հնազանդութեամբ, անիրաւացի ճնշումներ, այդ անդադար հալածանքները մնում էին քրդերի մէջ մի տաստիկ ինքնատիրութիւն դէպի Թուրք կառավարիչները մանաւանդ և դէպի առհասարակ Թուրքերը ընդհանրապէս։ Ինքնագործ էին նրանց տոհմական կեանքի եղանակը, դրկում էին նրանց ապրուստի միջոցներից, աւազակութիւնից, որը քրդերի ցեղային և ազգային տնտեսութեամբ համարվում էր ոչ բոլորովին անբարոյական մի պարագայում։

Այդ առնչութիւնը դէպի Թուրքերը, առիթ տուեց քրդերին աւելի մտերնալ հայերին և աւելի մտերմանալ նրանց հետ։

Քրդերի ամբողջ ժողովուրդը, բաժանված լինելով բազմաթիւ տարբեր և միմեանց հետ թշնամի ցեղերի, անկարելի էր, որ նրանց մէջ կազմվեր միութիւն, որով կարողանային ընդդիմանալ կառավարութեան ճնշումներին։ Պատատարված լինելով հայկական լեռների մէջ, նրանք իրանց վրէժխնդրութիւնը լրացնում էին նրանով, որ կողոպտելով երկրի մի մասը, ջնջում էին նման անցնում այն ազգութիւնը պատկանող։ Նրանք չէին ուզում հայերը չաշխատանի իրանց ընդունելու, այլ վրացու հետ վրացերէն կը խօսէին, թիւրքի հետ քիւրքերէն կը խօսէին,—ինչքան էլ աշխատէին պահպանել իրանց կրօնը, դարձեալ վերջ ի վերջոյ կը կորցնեն իրանց ազգութիւնը։

Յունադաւան վրացին կարողանում է կաթոլիկ հային ազգութեամբ վրացի դարձնել, իսկ հայ լուսաւորչականը ոչ թէ միայն չէ կարողանում, բայց հրաժարվում է կաթոլիկ, բողոքական, մահմետական և յունադաւան հային հայ ճանաչել և ազգութեամբ ու լեզուով նրանց հայ դարձնել։

Այսպէս մեծ մասը իրանց հայրենիքում են ապրում, ունեն իրանց անկախ, ազգային եկեղեցի,—բայց քանի որ չեն պահպանում իրանց մայրենի լեզուն, նրանք կանհետանան որպէս ազգութիւն։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

—

Թերլինի վերջին կոնգրէսի վճիռները Ռուսաստանի ու Զերնոգորիայի վերաբերութեամբ կազմելի կերպով մերժելու համար և եւրոպական պետութիւնների պահանջումներն առջև ժուռաբութիւններ յորդորանելու համար Բ. Դուռը տեղծեց այբանական միութիւնը։ Իսկ հայկական խնդիրը իր խանձարուրի մէջ խեղդելու համար նա աշխատում է այժմ կազմել մի քրդական միութիւն։

Դեռ մի քանի ամիս առաջ Կ. Պոլսի Թուրք մամուլը անամօթաբար սկսեց հրապարակ քաղդ տարրի քաղաքակրթական հրաշալիքները, որոնցով հայկական լեռները այդ վայրենի գազաններին ապրաստում էր ներկայացնել Եւրոպայի աչքում ոչ միայն իբրև արնեզբի, այլ և իբրև արևմուտքի լուսատուիչներ։ Մի այսպիսի երևոյթական աչքակապութիւնը Թուրք մամուլի կողմից, ստոր է ամեն կրիտիկայից, այն մասին, որ մի ժամանակ պահանջում էր քրդերի խոպան բնաջինջ անելը, երբանց ոչնչացնելը, որպէս անպէտք և վնասակար մի տարր, որպէս զի ասիական Թիւրքիայի արևելեան ռազմանագրութիւնները ազատվէին այդ աւազակների անընդհատ ապստամբութիւններից։

Սուլթան Աբդուլ Ազիզը յայտնվեցաւ որպէս մի ապառնալի գործիք քրդերին զինաթափ անելու համար և նրանց անշուշտ վճռակված կը լինէր հնազանդեցնել կառավարութեան, եթէ այն ժամանակվայ երևելի դիպլոմատ և առաջին վեզիր Ալի փաշան չը մեռնէր սուլթանի բարկութիւնը։ Թորամանկ վէզիրը կարողացաւ համոզել խալիֆների դիւրահաւան դահակալին, յայտնելով այն միտքը, թէ քուրդերը թէև աւազակ, բայց մի և նոյն ժամանակ պատերազմական ոգի ունեցող ցեղ են, որոնք կարող են մի ուրիշ երկիր, և անդային վարչութիւնները իրանց անզօր ուժերով երբէք չէին կարողանում վերջ դնել քրդերի անընդհատ արշաւանքներին։

Իսկ այդ ցեղերի մէջ կային և ձիաղլոխները, որոնք համեմատաբար աւելի հանգիստ էին ընտանեկան, որոնք, որպէս միամիտ հովիւներ, ապրում էին նախապատմական պարզ կեանքով։ Այդ վերջիններն ցեղապետները ոչ սակաւ անգամ դիմում էին հայ էֆէնդիների և հայոց հոգևոր առաջնորդների օգնութեանը, Թուրք կառավարիչների կամայականութիւնից պաշտպանութիւն գտնելու համար։ Հայ էֆէնդիները և հայոց հոգևոր առաջնորդները, որոնք աւելի նշանակութիւն ունէին կառավարութեան առջև, որպէս երկրի գլխաւոր և մեծամասնութիւն կազմող ազգաբնակութեան ներկայացուցիչներ, չէին իմանում իրանց պաշտպանութիւնը, իսկ այդ պաշտպանութիւնը շատ հաճելի չէր կարող լինել հայ ժողովրդին, որը պատմական առնչութիւն ունէր դէպի քրդերի առհասարակ բոլոր ցեղերը։ Այդ էր պատճառը, որ Վանի առաջնորդ Պօղոս վարդապետը յարուց իր դէմ մի աշտին կռուակցութիւն, այն պատճառով միայն, որ նա պաշտպանում էր քուրդ ցեղապետներին, նրանց հետ բարեկամութիւն էր պահպանում, և պատրաստ ժամանակ, իր սեպհական ձախքերով ազատում էր նրանց բանտերից։ Շատ տարի Վանի հայերը բաժանված էին երկու կռուակցութեան, որոնցից մէկը աշխատում էր պահպանից հեռացնել քրդասէր առաջնորդին, իսկ միւսը աշխատում էր պահպանել նրան։ Այդ կռիւները երկար ցնցեցրին Կ. Պոլսի հայոց մամուլին և ոչ սակաւ հոգևոր պատճառներին պատրիարքարանին։

Հայ առաջնորդների և հայ էֆէնդիների քրդերի խնամակալութեան պատճառները մի ուրիշ նպատակ չունէր, բացի նրանից, որ հայ վաճառականները այդ ցեղերի հետ առևտրական յարաբերու-

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՄՇԱԿ

1880—№ 167

Զբ մեռանելիք որ ներսիսեան գպրոցը ունի այժմ 40,000 րուբլ տարեկան եկամուտից աւելի: Եռապիկը կարելի է տեսնել պ. Խուբովի տանը: Գանձը առիթուած էր չանել պատանուն Ներսիսեան գպրոցից և տալ նրան մի գերմանացու պանսիօն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

— Փարիզից լրագիրներին հաղորդում են հետեւեալ տեղեկութիւնները:

Մի քանի օր է, որ Ֆրանսիացիները միջազգային գժուարութիւնների սպառնալիքի են ենթարկուած: Թէպէտ նրա պատճառը շատ չնչին է, բայց քաղաքական և ֆինանսական շրջանները անտարբեր չը Ցնացին դէպի այդ դժուարութիւնները: Գանի որ եւրոպական միացեալ նաւատորմերը ցոյց են անում Դուլցինիոյ առաջ, որ կարող է համաշխարհային հրդեհ գցել, յարմար է տեսնել որ մի մեծ ազգութիւն կառավարող անձինք գժուարութիւններ են պատճառում մի քանի տասնեակ հոգեւորականներին արձակելու հարցի պատճառով:

Սեպտեմբերի 15-ին փարիզի մէջ պէտք է մինիստրների խորհուրդ լինէր Ֆրէյսինէի և Կոնստանի մէջ պատահած անբաւականութեանը մասին հրամանների առիթով վերջ տալու համար: Եթէ Ֆրանսիական կառավարութիւնը հեռանար ահմանադրական ձշմարտութենից, այդպիսի անցքը շուտ կը վերջանար: Երբ անկլիական արտաքին գործերի մինիստրը չը կամենար Ընդհատանից Մալտա կղզին գօրքեր կանչել Բիկօնսֆիլդի ցանկութեան համեմատ, նա հրաժարական տուին: Ա յս օրինակին հետեւելով Ֆրանսիացիներ նրբին գործերի մինիստր Կոնստանն կարող էր հրաժարական տալ, եթէ նա չէր հաւանում Ֆրէյսինէի խաղաղասէր քաղաքականութիւնը: Ա յս դէպքում գժուարութիւն չէր պատահի և մինիստրների արատաքոյ կարգի խորհուրդներ չէին հարկաւորվի:

Բայց այս դէպքում Կոնստանը մի գործիք է հոգ Գամբետտայի ձեռքին: Սա հաւանութիւն չը տուեց Ֆրէյսինէի քաղաքականութեանը այն պատճառով, որ առաջին մինիստրը չէր բաժանում նրա հայեացքները յունական խնդրի վերաբերութեամբ:

Ֆրէյսինէի անկման համար բաւական կր, որ նա պրկուցաւ Գամբետտայի պաշտպանութիւնից թէ Գրեվի և թէ մինիստրները սոխուած էին թողնել իրանց ամբարտաւանները և Փարիզ գալ Գամբետտայից ծագեցրած գործը կարգի բերելու համար, իսկ ինքը Գամբետտա գնաց որս անելու, իբր թէ գործին բոլորովին մասնակից չէ:

Վերջին օրերում Գրեվիի նախագահութեամբ մինիստրական չորս խորհուրդներ կայացան, որոնց ժամանակ քննվում էր հոգեւոր միաբանութիւնների հարցը: Առաջին նիստի ժամանակ արդէն երեւաց, որ Ֆրէյսինէի և Կոնստանի մէջ կատարեալ անհամաձայնութիւն է սիրում Ֆրէյսինէ պրիստում էր, որ թէպէտ կառավարութիւնը ազատ է գործելու համար, բայց կարիք չը կայ իսկոյն իրագործել մարտի հրամանները հոգեւոր միաբանութիւնների վերաբերութեամբ: Ներքին գործերի մինիստրը ընդհակառակը պնդում էր, թէ հարկաւոր է գոնեա մի միաբանութիւն վրա ապացուցանել, որ մարտի հրամանները այժ ունեն: Ասում են, որ Գրեվի պաշտպանում էր իր ընկերոջը: Երեք նիստերը անաջող հեռաձանքներ ունեցան և վերջին նիստի ժամանակ Գրեվիի օգնութեամբ Ֆրէյսինէն յաղթեց, միայն թէ այդ յաղթութիւնը երկարատեւ չէ լինելու:

Ա յս անցքի վրա մտածելով, կարելի է այն եզրակացութեան հանել, որ եթէ Գամբետտա շարունակէ Ֆրանսիայի անտահմանադրական առաջնորդի դերը խաղալ, Ֆրանսիայի մէջ ոչ մի մինիստրութիւն երկարատեւ չէ կարող լինել:

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ առաջնորդող յօդուածը:

Ֆրանսիական նոր մինիստրութեան առաջնորդ Փիլ Ֆերրի դեռ եւս չէ ընտրել արտաքին գործերի մինիստր: Գործի այսպիսի յետաձգութիւնը շատ հասկանալի է, որովհետեւ արտաքին գործերի մինիստրը ոչ թէ միայն այդ պաշտօնը վարելու համար ընդունակ մարդ պէտք է լինի, այլ և նրա քաղաքական հայացքները չը պէտք է զանազանվեն Գամբետտայի հայեացքներից: Այդ պաշտօնի համար ամենից յարմար է Ֆրանսիական այժմեան դեսպանը Լօնդօնում՝ Տալվէ-Լակուր: Բայց սրա մինիստր նշանակելը օտար պետութիւնները հաղիւ թէ հաւանեն:

Ֆրանսիական այժմեան դեսպանին Լօնդօնում դիպլոմատները բոլորովին չեն համակրում: Նա չափազանց առելի է Ֆրանսիական միապետական կուսակցութեան անդամներին, որոնք բոլոր միջոցներով աշխատում էին օտար պետութիւնների առաջ նրան ձեւասակար և արիւնարբու ստմատական ցոյց տալու համար: Այդ աշխատանքները կատարելապէս ազդում վճռեցան: Տալվէ-Լակուր անունը եւրոպական պատհպանողականների առաջ չափազանց ստմատականութեան նշանաբան դարձաւ և նրան մինիստր նշանակելը վատ ազդեցութիւն կը գործէր: Թէպէտ անպիտան կառավարութիւնը կը գործէր: Թէպէտ անպիտան կառավարութիւնը կը գործէր, Տալվէ-Լակուր առժամանակ կը շարունակի դեսպանի պաշտօնը վարել մինչեւ հանգամանքները փոխվին: Առժամանակ մինիստր կը նշանակվի Ժոլիպեա Փօրես կամ Տիասս, որոնք անչեան անձնաւորութիւններ են:

Իսկապէս վաղ թէ ուշ Տալվէ-Լակուր պէտք է առանց արտաքին գործերի մինիստրի պաշտօնը, որ կատարելապէս բաժանում է Գամբետտայի քաղաքական բոլոր կարծիքները:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

— Թաւրիզ, 10 սեպտեմբերի

Սալմաստ գաւառից գրում են, որ երբ Ատրպատականի վիճակաւոր առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը այցելութիւն գործից այդ գաւառին, նրա առաջին հոգը եղաւ բացատել մի գպրոց առելի ընդարձակ ծրագրով: Սրբազանը հրատիրեց իր մօտ տեղային հայ հասարակութեան գլխաւոր ներկայացուցիչներին, գպրոցի անունով առարգրութիւն բացվեցաւ, որի գումարը հասաւ 400 Թումանի: Առարգրութիւնը շարունակվում է:

Արդերիլ քաղաքից գրում են, որ տեղային մուշտէյիը (հոգեւորականների գլխաւորը) պաշտօնապէս հրամայեց, եթէ անձրեւային օրերում քրիստոնեաները համարձակվին փողոց կամ շուկայ դուրս գալ, ամեն մի մահմետական իրաւունք ունի նրանց ապտակելու, որովհետեւ պարսիկների կրօնական գրէնքով եթէ քրիստոնեան թրջված շորերով դիպչելու լինի մահմետականին, կարող է պղծել նրան:

Ռաշտ քաղաքից գրում են, որ այդտեղ մի ամբողջ շաբաթ անընդհատ անձրեւ տեղայ, յետոյ մի սարսափելի մրրիկ բարձրացաւ, որ անասելի չարութիւն աշխատին, հարիւրաւոր ծառերը արմատախիլ էր անում: Անզալիի մէջ շատ նաւեր կոչված պատսար մրրիկը հինգհատակ անելով Կասպից ծովը նետեց: «Մուսայ» կոչված շոգենաւը փոթորիկներից մղվելով ձգվեցաւ Անզալիի ցամաքի վրա: «Բօզդան» անունով շոգենաւը, որ լիքն էր ապրանքով, ընկղմվեցաւ ծովի մէջ: Մի այլ շոգենաւ ևս, «Հաջի-Եէյիս-Ալի» անունով, որ դիմում էր դէպի Բագու, որի վրա կային մինչեւ 300 ուխտաւոր մահմետականներ, որոնք Մէքքայ պիտի գնային, այդ շոգենաւը կորած է, յայտնի չէ, թէ ինչ է պատահել նրա հետ:

Սօվուկ-Բուլախ քաղաքից գրում են թէ այն կողմերի քրդերը, բոլորը Մարթենի հրացաններով զինված, Եէյիս-Իրագուլաշի առաջնորդութեամբ ապստամբեցան պարսից կառավարութեան դէմ: Քրդերը ինքնավարութիւն են պահանջում: Գանի օր առաջ Թաւրիզից մի քանի հազար հեծելազօրք և մի քանի զունդ հետեակ զօրք ուղարկվեցաւ քրդերին զսպելու համար: Սօվուկ-Բուլախի հայ վաճառականները, որոնք մեծ գործեր ունեն այնտեղ, թողնելին այդ քաղաքը: Եէյիս-Իրագուլաշը, որ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ մեծ ծառայութիւն էր մատուցել թուրքաց Հայաստանին, այժմ ըսկսել է Պարսկաստանում աւերածներ գործել:

Թիւրքաց Հայաստանի Վան քաղաքից հասնում են մեզ հետեւեալ լուրերը: Սամիէ-փաշայ մի աւազակին կախաղանելով, կամեցել էր ապացնել տալ Խրիմեան հայրիկին. այդ փորձը անաջող անցաւ: Սրբազանը համարեա մի հրաշքով ազատվեցաւ:

Թավրիզի ազգային գպրոցի նոր տեսուչը ղրկված է միայն վարժապետների ռոճիկը աւելացնելով, թղթերի վրա նոր կանոններ գրելով, բայց չը գործադրելով, գաւառների պատերը զանազան անմիտ թղթերով զարդարելով, և այլ այսպիսի ֆորմալիտութիւններով: Ամեն օր ժողով, ժողով, բայց ոչինչ արդիւնք չը կայ: Նոր տեսչի նոր կարգադրութեան գլխաւոր արդիւնքն այն եղաւ, որ չքաւոր աշակերտների վրա վճար նշանակեց և դրանով ազգատներին զրկեց գպրոցից. մինչդեռ առաջ գպրոցի բոլոր աշակերտները, թէ ազգատ և թէ հարուստ, ձրի էին ուսանում:

***

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

ՓԱՐԻԶ, 19 սեպտեմբերի: «Times» լրագրի հաղորդած լուրը Դուլցինիոյ այրելու մասին հերքվում է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 սեպտեմբերի: «Новое Время» լրագրին կ. Պոլսից հեռագրում են. պետութիւնների բողոքից յետոյ օսլթանը այնպիսի դրութեան մէջ ընկաւ, որ անդամալոյծ լինելու մօտ է: Դործերի դրութիւնը Աբդուլ-Ազիզի վերջին օրերն է յիշեցնում: Շատերը սպասում են, որ պալատի մէջ խառնակութիւններ կը պատահին:

Կ. ՊՕԼԻՍ, 19 սեպտեմբերի: Դեսպանները առորագրեցին մի պրոտոկոլ, որով պետութիւնները ապացուցանում են իրանց կատարեալ անշահասիրութիւնը Բերլինի դաշնագիրը իրագործելու մէջ: Պետութիւնները պարտաւորվում են իրանց անհատական շահերի հետից չընկնել, չը ձգտել երկիրներ, առևտրական շահեր կամ բացառական ազդեցութիւն ձեռք բերելուն:

Ս, ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 55 կ., երկրորդ 92 ր. 37 կ., երրորդ 93 ր. 35 կ., չորրորդ 92 ր. 50 կ., ներքին 5% առաջին փախառութեան տոմսակը արժէ 220 ր. 50 կ., երկրորդ 216 ր. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը 91 ր., երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 91 ր., ոսկի 7 ր. 98 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 24,5/8 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 211 մարկ, Փարիզի վրա 261 ֆր. 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը հանդիստ է:

ԼՕՆԴՕՆ, 19 սեպտեմբերի: Անգլիական մինիստրների խորհուրդի նիստից յետոյ Ֆրանսիայի, Գերմանիայի, Խաչիայի, Ռուսաստանի և Թիւրքիայի դեսպանները խորհրդակցեցին Գրենվիլի հետ արտաքին գործերի մինիստրութեան մէջ: «Times» լրագիրը հաղորդում է, որ, չը նայելով պատահած արգելքներին, պետութիւնների համաձայնութիւնը աւելի ամրանում է: «Daily News» լրագիրը հաղորդում է, թէ մինիստրների խորհուրդը հաւանութեան գեսպանների արած քայլը որոնք հրաժարվեցան յետ առնել համաձայնութիւնը: Կառավարութիւնը չի փոխի իր գիտաւորութիւնը: Ա յդ առարկայի վերաբերութեամբ բոլոր մինիստրները համաձայն են միմեանց հետ: Գործի նորից յետաձգելը, կամ կամակորութիւնը Բ. Դրան կողմից՝ Գարդանելի վրա գործողութիւնների սկսվելու պատճառ կը դառնայ: Մարկիզ Հարտինգտոն կուղևորվի Բելմօրալ մինիստրութեան ներկայացնելու համար:

ՓԱՐԻԶ, 19 սեպտեմբերի: Կառավարութիւնը հաստատ վճռել է չը հեռանալ եւրոպական համաձայնութիւնից:

ԼՕՆԴՕՆ, 20 սեպտեմբերի: Եղուց դարձեալ լինելու է մինիստրների խորհուրդ, այդ պատճառով մարկիզ Հարտինգտոն յետաձգեց իր ճանապարհորդութիւնը դէպի Բելմօրալ:

ՄԱԼԲՈՒՐՆ, 20 սեպտեմբերի: Երկկ բացվեց աշխատասիրանդէս:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 սեպտեմբերի: «Отечественныя Записки» ամսագրի մէջ տպված է. կոմս Լօրիս-Մելիքով հրաւիրեց նշանաւոր մտաւորի խմբագիրներին, որպէս զի մեծին նրանց կառավարութեան իսկական դիտաւորութիւնները ներքին վերաբերութիւնների մասին և այդպիսով նախապատրաստեն նրանց ցնորքներից և հասարակութեան մէջ անհիմն յոյսեր ցրելուց: Ա յդ ժամանակ կոմս Լօրիս-Մելիքով մեկնեց նախագծի հետեւեալ հինգ կէտերը. 1) գատակարգային հիմնարկութիւններին ընորհած իրաւունքների ամենամեծ ապահովութիւնը և նրանց գործունէութեան ահմանների ընդարձակելը հարկաւոր եղածին համեմատ, 2) պոլիցիական հիմնարկութիւնների համաձայնացնելը նոր կարգադրութիւնների պայմաններին հետ. 3) տեղական հիմնարկութիւնների գործին մասնակցելու իրաւունքների ուժեղացնելը հակակենտրոնական ուղղութեամբ, 4) տեղական ազգաբնակութեան պէտքերի մանրամասն հետազոտութիւնը. այդ նպատակին հասնելու համար արդէն իրաւունք է տացված, որ տեղաւորները քննեն մի քանի նահանգներ, 5) մամուլին միջոց տալ քննել կառավարութեան գանազան ձեռնարկութիւններ, վճռներ, կարգադրութիւններ միայն այն պայմանով, որ մամուլը չը յուշատակէ, կամ չը վրդովէ հասարակական կարծիքը իր երազական ցնորքներով:

ԳՐԱԶԴԱՆ, 20 սեպտեմբերի: Միացեալ նաւատորմը հրաման առացաւ պատրաստ լինել սեպտեմբերի 22-ին ցէօդօ ուղեւորվելու համար:

ՓԱՐԻԶ, 20 սեպտեմբերի: Կառավարութիւնը հրաժարվեցաւ թոյլատուութիւն տալ սեպտեմբերի 21-ին միջնդ կազմել, որ կամենում էր Բօշֆօր և ուղղված էր Ծավայինի դէմ:

ԲԱԳՈՒԶԱՆ, 20 սեպտեմբերի: «Ժեմչուգ» ուսանց նաւը ուղեւորվեցաւ ալբանական ջրերը հետախուզութիւններ անելու համար: Ձերնոգօրհական կառավարութիւնը առաջարկեց Ցէտինիէի ալբանցի վաճառականներին վերջացնել իրանց գործերը և հեռանալ:

ԲԵՐԼԻՆ, 20 սեպտեմբերի: Միացեալ խորհուրդը հրաւիրված է հաւաքվել հոկտեմբերի 8-ին:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայ տեղեմբերի 1-ից ՀԱՒԿ ԲԱՐՈՒԻՄ բացվեցաւ մի հայոց ԾԻԱԿԱՆ ԴՊՐՈՑ։ Հրատարակում ենք սրա վրա Հասարակութեան ուշադրութիւնը Աշակերտանք ընդունվում են ամեն օր մինչև տարեսկիզբը։ Իմ յատոյ կ'որոշուի ընդունելութեան ժամանակամիջոցը։ Քաշակի մասին կարելի է տեղեկանալ ուսումնարանում, որ գտնվում է «Մ տ ր թ ա մ ե ա ն Դ պ ր ո ց ի մ ա, Вахтангская улица,» № 32.

3—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ Վ. ԱՐՋՈՒՄԻՆԸ յայտնում է, որ նա սրել է հետևեալ կարգադրութիւնները։ 1) խոտով և փայտով բնակարովված սայլերին թոյլ չը տալ կանգնել Հաւլաբարի հրապարակի վրա, այլ ուղևորել նրանց Լօրնայա հրապարակը, որ առաջինի մօտ է գտնվում և 2) Սկեսկանդրօվսկայա և Անդրէեվսկայա փողոցների միջ գտնված Կաւկիսկայա հրապարակը բանալ և գիւղացիներին ազատկել այնտեղ ձրիաբար կանգնելու համար։

3—3

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ ԿՈՆՏԻԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒՒԱՐԻ գանագան տեսակի, մոլորակ. և բնաիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՈՆՏԻԿՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով։ Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խոստանալով, ցանկացողը կարող են գիմել ինձ հետևեալ հասցէով. Въ Тифлисѣ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ. МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ.

Ֆոտոպիւ կենդիկա պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Ախինոպարեանց.

12—50

ՀԻՄ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՖԻԼԻՊՈՎԻՉԻ ԵՒ ԸՆԿԼՈՒՄԸՆԿՄԱՆ հորս ամենայն գործունէութեան հետևանքները։ (Ընտանեսպէս լուսանկարի համար կատարված շինութեան մէջ)։ Գօլովինսկի փողոց, տուն Կ. Նա. Օ. տուրալովի, Թիֆլիսի կըլուբի մօտ։ Բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը։

2—10

Դուրս եկան մամուլի ասիից և վաճառվում են կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետևեալ գատապրքեր.

1. Ազգային Ընտանեկան աշխատիք և Այրքնատան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.
3. Ազգային Գիւղատնտեսական աշխատիք (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . . 30 կ.
4. Նահապետական և Հայրենի աշխատիք (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . 65 կ.

Վ. ԳՈՒՆԱՑԵՎ ԸՏԱՐԱՆ ՍԿՀՕՏ ՓՈՂՈՑ տուն ՉՈՒՐԱԼՕՎԻ։ Կ'ստանայ ձեռվայ սկզբնի համար առաջարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵՆՔ ՉԱՓԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՁԵՒԻ և ՕՏԻՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԵՐԻ, չափազանց էժան գներով, այսինքն՝ Ձեռքի մեքենաներ 12—5 րուբլ։ Ոտքի 50—80 րուբլ։





8—52

ՀԱՑՈՐԷՆԻ, ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՖՐԱՆՍԻԲՆԻ եւ ԻՏԱԼԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ։ ԷՋԻԿԱՆՅՆ, Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատան։

3—5 (2)

Մամուլի տակից շուտով լոյս կը տեսնի ԾԱՂԿԱԳԱՂ ԱՋՈՒԱԾՈ ԵՐԳԻՐՔ, իրեն երգեցողութեան դասագիրք հայ դպրոցների համար։ Դիրքը բաղկացած է երկու մասերից։ I մասում զետեղուած են թէ տպուած և թէ մինչև այժմ մեր միս երգչախումբում անտիպ ձայնած և ամեն տեղ տարածուած երգեր։ II մասում մանկական երգեր։ Ծաղկաքաղը այն առաւելութիւնն ունի միս երգարաններից, որ նրա մէջ չէ պարունակում դպրոցական հասակին անյարմար երգեր։ Հեղինակներից գլխաւոր տեղերը բռնում են Նալբանդեանց, Պէշիկթաշլեան, Նարիէյ, Չէրկեզեան, Գասպարեանց, Ալիշանեան, Բարխուդարեանց, Արովեան, Դուրեան, Հայկունի, Թադէոսեանց, Շահազիզեանց, Գոդեխեանց, Մէզոպուրեան, Ա. յվազեանց, Թերզեան, Մելիք-Շահորեանց, Մուրատեանց և այլն և այլն.

2—2

Դուրս է գալու մամուլի տակից Նիկոդոսոսի Ց. Ալիխանեանի շարադրութիւնը. Երեսունդ Երկրորդ, տղերգութիւն հինգ արարուածի մէջ, ոտանաւորով գրած։ Գինն է երկու բուբլի։ Պատուէրները պահանջելով մինչև Յունիս ամսի 10% զեղջուն, իսկ ապրիլը—20%։ Գիշատ ծախսը հեղինակը ստանում է իր վրա։

Ցանկացողները կարող են դիմել ուղղակի հետևեալ հասցէով։

Въ Майкопъ, Кубан. обл. Мировому Судьѣ 1 Участка, Николаю Іосифовичу Алиханову. 1—5

Հայոց պատմութիւնը խնդրոյ առարկայ դարերում ուսումնասիրելու համար կարևոր մի դիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմագրաց Հայոց» 3 հատոր, աշխատ. Կ. Կոստանեանցի։

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած դրագիր։

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ս. հատորի ձիշտ թարգմանութիւնն է։

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարևոր ծանօթութիւններ. ժամանակագրական ակնարկներ և այլն։

Գնճատվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից առնողին 10% զեղջուն կը դրուի. գնելու համար դիմել—Ալէքսանդրապոլ—Յովհ. ս. Քահանայ Կոստանեանցին.

Տփխա—Կենդրոնական գրավաճառանոց։

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մեկրտ Փանեանցին։

10—10

Дозволено цензурою Тифлисъ, 22 Сентября 1880 г. Տպ. ան. եղբայրք Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ՕԳԻՒ գործարարները հայտնում են ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒՐ յայտնում է, որ 1880 թ. յունիսի 15-ին սկսվելին ձախվելի ամենալաւ մարքված ՕԳԻՆԵՐ հետևեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆԶԻ և ՐՈՒԲԼՄԱՐԻՆ։ Երբ ամանով տաժէ 45 կ., տասնը տարի 38 կ., կես շիշը 25 կ., տասնը ամանի 20 կ. կ., ամեն այլ տեսակ օգիներ առանձին ցուցակ ունեն։ Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջում են անում։ Օգիները պատրաստված են ամենալաւ հայի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնական եղանակով և լրան յատկութեամբ ՄԱՆԳԱՆ-ԿԱԳԱՂԻՑ ամենալաւ գործարաններից մէջ պատրաստվածներից վատ չեն պ. պ. գնողները ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նմուշի վրա, որի տժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է։ Օգինների պահեստը գտնվում է Մխրգրեան կամրջի վրա, Ձիմատրնայա հիւրանոցի տակ, Լիխատչեակա տանը, Վօրօնցովի տանի դիմացը։

7—8 (2 շար.)

ՌԱՐԿԱՅԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴԵՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉՍԻ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գամբօնակի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվի Գօրալեվիչ ներքին հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրակի վեներական և կաշու հ.։

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ.. Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգեր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Շտեմբօրակի վեներական և կաշու հ., Առաուածատուրով կանանց հիւանդութիւնների։

Հինգշաբթի. Գամբօնակի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց սիվիլիսի և սեռական օրգանների հ.։

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեմբօրակի և Առաուածատուրով ներքին և կաշու հ.։

Շաբաթ. Կրիգեր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.։

Առանձնապէս օրերի խոտ հիւանդներին բժիշկները ամեն օր, ամենայն ժամանակ։

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժիշկները մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։

Բժիշկների պրիվատ Լիսիցեվ

№ 168 Սեպտեմբերի 24 (Հոկտեմբերի 6) 1880 Սեպտեմբերի 24 (Հոկտեմբերի 6) № 168

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ. Առանձին համարները 5 կոպէկ:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարքաղաքացիք գրվում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ:—Ներքին տեսութիւն: Նամակ Ալէքսանդրապոլից: Նամակ Շուշուց: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Արևելեան գործեր: Թիւրքիա: Արտաքին լուրեր:—«Մշակի» հեռագիրներ: — Յայտարարութիւններ—Բանասիրական: Քրդական միութիւն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Թիւրքիան կրկին ճգնաժամի մէջն է: Հեռագիրը մեզ տեղեկացրեց որ մեծ պետութիւնների վերջին գրութիւնը այնպիսի տպաւորութիւն ունեցաւ սուլթանի վրա, որ նա այժմ անդամալոյծ լինելու մօտ դրութեան մէջ է, փախնում են խռովութիւնների պալատի մէջ. սուլթանի այժմեան դրութիւնը յիշեցնում է Աբդուլ-Ազիզի թագաւորութեան վերջի օրերը:

Բացի սորանից լրագիրները հաղորդում են, որ Չերնոգորիայում շարժում է նշմարվում Դուլցինիօ չը յանձնելու պատճառով, ալբանացիներն էլ կրկնեցին բոլոր յարաբերութիւնները Ռիզա-փաշայի հետ, Յունաստանում մի առանձին պատերազմական ոգևորութիւն է տիրում, Ռումելիայում ապստամբութիւնը չէ դադարել, վերջապէս և Հայաստանում շարժում է սկսվել, եթէ ոչ Թիւրքաց կառավարութեան դէմ, գոնէ թափառական և հարստահարող քիւրդ ցեղերի դէմ: Հայաստանի շարժումը չունի թէև յարձակողական բնաւորութիւն, այլ միայն պաշտպանողական, բայց Թիւրքիայի մնացած երկիրների շարժման հետ միասին առանում է մի առանձին նշանակութիւն, աւելացնելով պետութեան ընդհանուր ճգնաժամին մի նոր դժուարութիւն:

Այդ բոլոր չարագուշակ երևոյթներին պէտք է աւելացնենք և այն, որ, ինչպէս տեղեկացնում է մեզ հեռագիրը, մեծ պետութիւնների համաձայնութիւնը արևելեան խնդրի վերաբերութեամբ աւելի և աւելի սերտ է դառնում, և մինչև անգամ լուր կայ որ պետութիւնները չեն բաւականանայ հասարակ ծովային ցոյցով, այլ եթէ Բ. Դուռը կընդդիմանայ պետութիւնների պահանջներին Չերնոգորիայի, Յունաստանի և Հայաստանի խնդիրները անյապաղ լուծելու, եւրոպական մեծ պետութիւնները ուղարկելու են իրանց նաւատորմը Դարդանէլեան նեղուցը և ձեռնամուխ կը լինեն վճռողական և խիստ միջոցների:

Ահա այս տեսակ լարված դրութեան, ճգնաժամի մէջն է գտնվում այժմ Օսմանեան պետութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Սեպտեմբերի 12-ին

Դարերի ընթացքում հայ ազգը սիստեմաթիկապէս տանջվեց, տառապեց մի պատճառով, այն է կրօնական նեղ անհամբերողութիւնից դրդված եղբայրասպանութեամբ: Այդ յատկութիւնը այն աստիճան ընդհանրացած է ազգութեան մէջ, որ կարելի է ժառանգական բնաւորութիւն համարել, որ շարունակ երևում է նորա կեանքի ընթացքում: Ցաւալի է, երբ այդպիսի կործանիչ զգացմունքով յափշտակվում է հայը այն ժամանակ, երբ որ նրան անհրաժեշտ է խաղաղ և ներդաշնակ ճշմարիտ եղբայրական համակրութիւնը դէպի կրօնադաւան կուսակցութիւնները: Կարելի չէ մոռանալ այն պատմական ճշմարտութիւնը, որ կրօնական վիճաբանութիւնները և եղբայրական մոլեռանդ հալածանքները միշտ աւերել և քանդել են ազգայնութեան սիւնը, որից և հայ ազգը ազատ չը մնաց: Կրօնական վիճաբանութիւնների արդիւնքը շատ զգալի է հայ ազգի համար. նա այժմ ունի իր կազմակերպութեան մէջ երեք առանձնացած կրօնական կուսակցութիւններ: Այդ բաւական է մեզ յիշեցնելու և մտաբերելու այն անհամար տխուր արկածքները, որոնք անցան և պէտք է անցնեն հայ ազգի գլխից կրօնական երկպառակութեանց պատճառով: Արտաքին քաղաքական ճնշումները չեն կարող այնքան վնասել ազգի գոյութեանը, որքան ներքին թշնամութիւնը, դաւաճանութիւնը և եղբայրատեցութիւնը: Մեր լուսաւորչական, կաթօլիկ և աւետարանական եղբայրները պէտք է հրաժարվեն եղբայրատեցութիւնից: Հայը այսօր պէտք է մտածէ միմիայն հայութեան վրա, հայը պէտք է մտածէ Թիւրքաց Հայաստանի ներկայ վիճակի և նրա ապագայի վրա, ամեն ոք, եթէ նա հայ է, պէտք է անկեղծօրէն սիրէ հայութիւնը, և ցանկայ նրա յաջող ապագան: Մեր առաջ կայ գործելու մի լայն ասպարէզ: Այդ ասպարէզը մեր ժողովրդի տնտեսական և մտաւոր շահերի միակութեան գործն է: Գլխաւորապէս հայ ազգի անհրաժեշտ պահանջը ներկայումս, ազգային զգացմամբ միութիւն է: Այդ նպատակը բաւական է մեզ համար աշխատելու. պէտք է ազգութեան գաղափարը նոր, թարմ, ժամանակակից պահանջների համեմատ ընդհանրացնել ամբոխի մտածմունքի մէջ, աշխատել միացնել բաժանած ուժերը մի մարմնի մէջ: Կրօնական վիճաբանութիւնները մեզ երբէք մի օգուտ նպատակի չեն հասցնի, այդ հարցով պարապելով մոլեռանդութիւնից երբէք դուրս չեն գայ: Մեր հանգիստը կարող ենք գտնել եղբայրական ներդաշնութեան մէջ: Կրօնական միակողմանի դատողութիւնը ունեցել է և ունի իր դառն հետևանքները, որոնցից, դժբաղդաբար, մենք կաթօլիկ հայերս էլ կատարելապէս ազատ չենք: Հաւասար պէտք է պաշտպանենք և կրօնի և ազգութեան պատկանելի նշանակութիւնները, չը պէտք է ատենք այն հային, որ մտածում է հայութեան վրա: Դաւաճան է այն հայը, որը կրօնի պատրուակով երկպառակութիւն է սերմանում հայ գերդաստանի մէջ: Հայ ազգի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Երբ Բեռլինի վերջին կօնգրէսի սեղանի վրա դրվեցան Յունաստանի և Չերնոգորիայի խնդիրները, և երբ Կ. Պօլսի եւրոպական դեսպանները ներկայացրին Բ. Դրանը իրանց միարան գրութիւնը Հայաստանի վերանորոգութիւնների մասին, այն ժամանակ Թուրքաց կառավարութիւնը յանկարծ յիշեց քրդական միութիւնը, որ Բիկոնսֆիլդի մինիստրութեան ծնունդ էր: Ասում ենք յանկարծակի, որովհետև Թուրքաց կառավարութեանը շատ հաճելի չէր կարող լինել այդ միութիւնը, որի բաժանման մասին ինքն շատ տարիներով աշխատած էր, արշաւական կերպով անհաշտութիւն սերմանելով քուրդ ցեղերի մէջ, որպէս զի նրանց միաբանութիւնը խանգարէ, նրանց ուժերը թուլացնէ և այդպիսով հպատակ և հարկատու ժողովուրդ դարձնէ:

Բայց պէտք էր հաշտվել հանգամանքների հետ, քաղաքականութիւնը այդ պահանջում էր, պէտք էր Եւրոպային մի խրտուիլ (пугало) ցոյց տալ:

Այդ ժամանակ, որպէս մեր յօդուածի սկզբում յիշեցինք, Թուրք մամուլը մի կողմից սկսեց փառաբանել քրդերի խաղաղ ֆանատիկոսութիւնը, միւս կողմից, հաշւել նրանց քաղաքակրթական արժանաւորութիւնները, նրանց զրահանութիւնը, դրօշները, արշաւը և այլն, որոնց բոլորը միայն «Հակիկաթի» և «Վակիթի» երևակայութեան մէջ գոյութիւն ունէին: Թուրք մամուլը սկսեց նաև դատապարտել «վայրենի» հայերին, որոնք «բարբարոսաբար» հարստահարում էին «խեղճ» քրդերին, այլ խօսքով, սկսեց բարբառել գառների դէմ, որ գիշատում էին գայլերին...

Դեռ Բ. Դուռը չէր տուած դեսպանների միաբան գրութեան պատասխանը Հայաստանի վերանորոգութիւնների մասին, յանկարծ Կ. Պօլսում յայտնվեցան քուրդ պատուիրակներ, իբր Շէյխ-Իբադուլլահի *) կողմից ուղարկված, (բայց իսկապէս Թիւրքաց մայրաքաղաքի մէջ սարքված) որոնք ներկայանալով Արէֆին-փաշային, պահանջում էին քրդերի և Քրդստանի (անունը փոխած Հայաստանի) համար ինքնավարութիւն:

Ի՞նչ էր նշանակում այդ աչքակապութիւնը:

Հարցը շատ պարզ է: Խօսքը Հայաստանի (Թիւրքերի հայացքով Քրդստանի) ինքնավարութեան և նրա վերանորոգութիւնների վրա էր: Եթէ պէտք էր տալ այդ երկրին ինքնավարութիւն, ինչու չը տալ քրդերի անունով, որոնք այդ երկրի տէրն էին, որոնք այդ երկրի նախկին բնիկներն էին և որոնք իրանց կուլտուրայով բարձր էին միւս բոլոր ազգաբնակութիւններից, առաւելապէս հայերից...

Եւրոպական դեսպանները, ի հարկէ, ուշադրութիւն չը դարձրին Արէֆին-փաշայի այդ ֆօկուսների վրա և քուրդ պատգամաւորութիւնը ոչինչ հետևանքի չը հասաւ:

Դրանից յետոյ ալբանական միութեան հեղինակը, Արէֆին-փաշան, սկսեց քրդական միութեան վրա երգել: Այդ միջոցին Թուրք մամուլը հետևաբար իր խօսքը փոխել սկսեց: Այժմ քրդերին մի կուլտուրական, զարգացած, խաղաղասէր և բարոյական ժողովուրդ ներկայացնելը շատ ձեռնտու չէր կարող լինել: Նոյնպէս ձեռնտու չէր ասել, թէ քրդերը այն աստիճան բարի, առաքինի և խեղճ են, որ հարստահարվում են «վայրենի» հայերից: Պէտք էր ներկայացնել նրանց որպէս անգութ գազաններ, որպէս բարբարոս ֆանատիկոսներ, որոնք պատրաստ են մի բոպէում ոչնչացնել բոլոր հայերին, եթէ նրանց ինքնավարութեան վրա խօսք կը լինէր:

Այդ բոլորի մէջ այն միտքը կար, որ Եւրոպային ցոյց տային, թէ Բ. Դուռը հակառակ չէ Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու առաջարկութեանը, և նա ինքը շատ ցանկանում է կատարել այդ, բայց նա ունի իր առջև մի մեծ դժուարութիւն, և այդ դժուարութիւնը կայանում է քրդերի ու անհամարակ մահմեդական ամբոխի մոլեռանդութեան մէջ, որոնց կրօնին և սովորութիւններին հակառակ է ամեն մի վերանորոգութիւն: Կամենում էին ցոյց տալ, եթէ կառավարութիւնը մահմեդական ժողովրդի կամքի հակառակ գնար, կարող էր պատճառ տալ մի մեծ կոտորածի քրիստոնեայց դէմ, որի համար Բ. Դուռը դժուարանում էր իրան պատասխանատու համարել:

Թէ որքան խաբէական էին այդ ենթադրութիւնները, կարող է հասկանալ ամեն մի մարդ, որ փոքր ի շատէ տեղեկութիւն ունի ասիական Թիւրքիայի դրութեան վրա: Մահմեդականները այստեղ նոյնքան ճնշված, նոյնքան հարստահարված են անկարգ կառավարութիւնից, որքան քրիստոնեաները: Մահմեդականները աւելի ևս ցանկանում են մի բարւոք կառավարութիւն, և դրան ապացոյց կարող է լինել դեռ չը զսպված Մունթէֆիկ արաբների ապստամբութիւնը, Լօզան-գաղլեների ապստամբութիւնը և այն վերանորոգութիւնները, որ պահանջում էր Միդհատ-փաշան Սիրիայի համար, որը յամառութեամբ մերժվեցաւ Բ. Դռնից:

Մահմեդական մոլեռանդութիւնը մի խրտուիլ է, որով Բ. Դուռը աշխատում է միշտ վախեցնել Եւրոպային: Այնքան խօսվում է Հայաստանի վերանորոգութիւնների, Հայաստանի ինքնավարութեան մասին,—այնքան բացատրութիւններ են տրվում Բ. Դրան կողմից, բայց որքան հայկական լեռների գայլերը տեղեկութիւն ունեն այդ բոլոր բանակցութիւնների մասին, նոյնքան տեղեկութիւն ունի քուրդ ժողովուրդը: Այդ բոլորը խօսվում, շինվում, սարքվում են Կ. Պօլսում: Քուրդերն ինչով կարող են հակառակել Հայաստանի ինքնավարութիւնը կամ այնտեղ մտցնելու վերանորոգութիւնները: Նա ոչ լրագիր է կարդում և ոչ գիտէ, թէ ինչ է կատարվում իր բնակած լեռների միւս կողմում:

Այսուամենայնիւ Բ. Դրանը նպատակայարմար էր ցոյց տալ մի քրդական միութիւն, եթէ նա գոյութիւն չունէր, պէտք էր յայտնել, թէ կարող է կազմվել, որպէս այդ ենթադրում է «Օսմանլի» լրագիրը:

Արդեօք կարող է կազմվել,—ահա այդ հարցը պարզելու համար մենք հարկաւոր ենք համարում

---

*) Շէյխ-Իբադուլլահը, Թիւրքիայի քրդերի այդ կեղծ ներկայացուցիչը, իսկապէս պարսից հպատակ մի քուրդ ցեղի շէյխն է, այսինքն մոլլան կամ հոգևորականը: Նա ինքը և իր ցեղը թափառում են պարսից երբեմն Ուշնէի, երբեմն Թարգաւարի և երբեմն Մարգաւարի կողմերում: Ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ Բայազէտի վրա յարձակվող քուրդ հրոսակներից մէկի առաջնորդն էր նա: Այստեղ նշանակութիւն ստացաւ և Թուրքաց կառավարութեան ուշադրութիւնը դարձրեց իր վրա: Այն ժամանակ, երբ Կ. Պօլսում յայտնվեցան իբր նրա կողմից պատուիրակներ, նա Պարսկաստանումն էր և գուցէ ամենևին տեղեկութիւն չունէր, որ իր անունով բանակցութիւններ են լինում Բ. Դրան հետ: «Մշակի» № 167 տեսնում ենք, որ Շէյխ-Իբադուլլահը Պարսկաստանի Սօվուջ-Բուլաղ գաւառումն է սկսել իր անկարգութիւնները:

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Նոյեմբերի 17-ին

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Ամերիկահայ մամուլի հարսանիքը տեղի ունեցավ Ֆրեզնոյում, ուր հրատարակվում է «Ազդակ» օրաթերթը։ Հարսանիքի առիթով Ֆրեզնո հրավիրված էին մամուլի ներկայացուցիչներ Նյու Յորքից, Բոստոնից, Ուաշինգթոնից, Ֆիլադելֆիայից, Չիկագոյից, Դետրոյթից, Քլիվլենդից, Սան Ֆրանսիսկոյից, Լոս Անջելոսից, Ֆրեզնոյից և այլ քաղաքներից։ Հարսանիքի հանդիսությունները տևեցին երեք օր։ Հարսանիքի առթիվ ստացվել են հարյուրավոր հեռագրեր ամերիկահայ գաղութների և հայրենիքի տարբեր կողմերից։

Հարսանիքի առաջին օրը, հոկտեմբերի 31-ին, Ֆրեզնոյի հայ համայնքի անունից հյուրերին դիմավորեցին Ֆրեզնոյի քաղաքապետ Ջեյմս Ռոլֆը, Ֆրեզնոյի Կալիֆորնիական համալսարանի նախագահ Ֆրեդերիք Ռեդը, Ֆրեզնոյի Կալիֆորնիական համալսարանի հայ ուսանողների ներկայացուցիչ Ռոբերտ Ջեյմսը, Ֆրեզնոյի Կալիֆորնիական համալսարանի հայ դասախոսների ներկայացուցիչ Ռիչարդ Ջեյմս

Fonds A.R.A.M

ՎԱՂՈՒՅՏ ՄԵՆԱԿ Նախամասան—մեկուսի

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի. «Новое Время» լրագիրն ասել է, որ նոյն ատենները Նոյտաֆէլ Լոյտ Ջորճը վճռած է ձեր մէջ Տուսթէյլ կոչուած վախճանել իր կեանքը:

ԼՈՆԴՈՆ, 21 սեպտեմբերի. Գեներալ Գրէնֆէլ, Գաճոս և Նոլսոն ի Լոյտ Ջորճ իրենց ցաւը իրենց կողմանէ հաղորդած են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 սեպտեմբերի. Պետական ծախքերուն 50% աճումը չորս տարուան մէջ: Հարկերուն 5% աճումը 94 ր. 25 կ., 95 ր. 25 կ., 96 ր. 37 կ., 97 ր. 50 կ., 98 ր. 87 կ., 99 ր. 90 կ. եղած է: Ներմուծութեան մաքուր մաքսերը 91 ր., 92 ր. 75 կ., 93 ր. 25 կ., 94 ր. 25 կ., 95 ր. 216 ր. 50 կ., 96 ր. 75 կ., 97 ր. 87 կ., 98 ր. 90 կ. եղած են: Ընդհանուր եկամուտը 1 միլիոն ոսկի աճած է, 24,62 միլիոն:

— Թղթակից «Daily Chronicle»-ի Ս. Պետերբուրգէն կը հեռագրեն, որ Ֆրանսայի նախագահ Ֆորի ժամանումը Ռուսիա ամենայն ուշադրութեամբ կը դիտուի: Ռուսիոյ մամուլը կը յուսայ, որ Ֆորի այցելութիւնը Ռուսիոյ եւ Ֆրանսայի միջեւ եղած դաշնակցութիւնը աւելի պիտի ամրապնդէ: Ռուսիոյ մամուլը կը կարծէ, որ Ֆրանսայի նախագահին ընդունելութիւնը պիտի ըլլայ ամենայն ջերմութեամբ: Ռուսիոյ մամուլը կը յուսայ, որ Ֆորի այց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ ե ն տ ր օ ն ա կ ան Գ ր ա վ ա ճ ա ռ ա ն ո ց ի Հ ր ա տ ա ր ա կ ո ւ թ ե ա մ ր այս օրերս լոյս կը տեսնի Սահմանուռս աւագ քահանայ Ցէր-Սահմանեանցի աշխատասիրած «Ակղբունք քրիստոնէական ուղղափառ Հաւատոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ» դասագրքի երկրորդ տպագրութիւնը հետեւեալ յատկութիւններով. Համար. 11. Ցանկոր Նահապետի երկրորդ ապագրութիւնը հետեւեալ յատկութիւններով. 12. Ցոմսէփը բանաւոր. 13. Ցոմսէփի վաճառքը. 14. Ցոմսէփի եղբայրները գալիս Եգիպտոս. 15. Ցոմսէփի եղբայրների երկրորդ գալուստը Եգիպտոս, 16. Թէ ինչպէս եղբայրները ճանաչեցին Ցոմսէփին. 17. Ցակոբի Եգիպտոս տեղափոխութիւնը:

Ա.զօքեր վան Թագաւորի «Խաչի գա Քրիստոս», «Ա.յսօր կանգնեցար և Յիմածին ի Հօրէ» շարականները դասաւորված են իրանց տեղերում պատմութեան իմաստին համեմատ Նկարագրութիւն առաքելական հանդէսի ու Թուարկութիւն ի պատիւ սրբոյ Հօրս մերոյ Գրիգորի Լուսաւորչի տահմանուած տներին Գները ըստ առաջնոյն 50 կոպէկ է:

Վ երջապէս Հարցմունքները, որոնք առաջին տպագրութեան մէջ զետեղուած էին իւրաքանչիւր յօդուածի ներքոյ, այժմ ամփոփուեան գրքերի վերջումը առանձնապէս:

—

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է նոյն գրավաճառանոցում «Նոր դասագիրք Թուաբանութեան» Գ. Վարդանեանի, գինն է 70 կոպէկ:

—

			Ր.	Կ.
1.	Ժողովրդական այբբենարան	. . . . .	—	5.
2.	Տէր-Դաւթեան Մայրենի լեզու ա. մ.	. . . . .	—	35.
3.	— — Մայրենի լեզու բ. մ.	. . . . .	—	40.
4.	— — Մայրենի լեզու գ. և դ. մ.	. . . . .	—	70.
5.	Ագայեանց ուսումն Մայրենի լեզուի	. . . . .	—	15.
6.	Ս. Մանդինեան Նահանգական և Հայր. աշխատ.	. . . . .	—	60.
7.	— Ագգային ընտանեկան աշխարհ ա. մ.	. . . . .	—	25.
8.	— — Դիւցազանց. աշխարհ	. . . . .	—	30.
9.	— Ագդ. ու ընտան. աշխարհ ուսուցչաց ձեռնարկ	. . . . .	—	70.
10.	Տէր-Դաւթեան գասագիրք ռ. յ. Русское Слово	. . . . .	—	45.
11.	Ա.յվազեան Գ. Ա. ն. Նախակրթանք հ. լեզուի մ. մ.	. . . . .	—	40.
12.	Եղիշէ, պատմութիւն Վարդանանց	. . . . .	1.	—
13.	— Նոյն հատարակ կազմի վրա	. . . . .	—	20.
14.	Տէր-Սարգսեան Հայերէն վարդապետութեան օրինակ.	. . . . .	—	20.
15.	Պալասանեան Քերականութիւն Մայրենի լեզուի	. . . . .	—	50.

Վ երոյիշեալ գրքերի գնողները «Կենսօգնական գրավաճառանոցից» նշանաւոր զիջումն են առնում:

Ա.ժմուռի տակից շուտով լոյս կը տեսնի ՅԱՂԿԱՔԱՂ ԱԶԴԱՑԻՆ ԵՐԳԵՐԻ, իբրև երգեցողութեան դասագիրք հայ դպրոցների համար: Դիրքը բաղկացած է երկու մասերից. I մասում դեռևզուած են թէ տպուած և թէ մինչև այժմ մեր միւս երգչականներում անտիպ Ցայսած և ամէն տեղ տարածուած երգեր: II մասում մանկական երգեր: Պաղկաքաղը այն առաւելութիւնն ունի միւս երգարաններից, որ իւր մէջ չէ պարունակում դպրոցական հասակին անվայել և անյարմար երգեր: Հեղինակներից գլխաւոր տեղերը բռնում են Նալբանդեանց, Պէշիկթաշլեան, Նարբէյ, Ցէվէկեան, Պատկանեանց, Ալիշանեան, Բարխուդարեանց, Արովեան, Խուրեան, Հայկունի, Թագիաթեանց, Շահազիզեանց, Դոմխեանց, Մէզպուրեան, Ա.յվազեանց, Թերզեան, Մելիք-Ցակոբեանց, Մուրատեանց և այլն և այլն.

2—2

Ա ՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՆՈՒԹԻ մէջ առացվեցաւ ՇՕԿՈԼԱՓ ԵԻ ԿԱԿԱՕ ՖՐԱՑ

1—20

Պ ա տ ր ա ս է գալու մասին մամուլի տակից Ս. Ա.լիխանեանի շարադրութիւնը. Երեսունչորրորդ, ողբերգութիւն չինգ արարուածի մէջ, ռուսերենով գրած: Գինն է երկու րուբլի: Գրավաճառները պահանջելով մինչև Յարիւր Յատոր ունեն 10% զիջումն. իսկ աւելի—20%: Փոշու ծախսը Յեղինակը առնում է իր վրա:

Յանկացողները կարող են դիմել ուղղակի Յասցէով:

Въ Майкопъ, Кубан. обл. Мировому Судьѣ 1 Участка, Николаю Іосифовичу Алиханову. 1—5

Վ լադիկավկասեան Օղիի գործարանը պահնա ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒՒ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվելին ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ Հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՁԻ և ԲՈՒԼՄԵՐԻՆԳ: Ն իշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս չիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամէն այլ տեսակ օղիներ առանձին յայտակ ունենալ Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անելում: Օղիները պատրաստված են ամենալաւ հայկ ՍԱԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՑՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարաններից մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օգնների գները կարող է տեղեկանալ ուսումնասիրելու համար, որ գտնվում է «Մ ա ր ի ա մ ե ա ն դ պ ր ո ց ի մ օ տ, Вахтангская улица,» № 32.

4—10



Իր յատկութիւններով մարմնի մասերի մանուածոյ ոսքի մասերից քրտինքից առաջ եկած փտուքին զգեստները յաճախ նեխը.

ԳԱԼՄԱՆԻՆ

անուշով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրօգիստների մօտ: Գլխաւոր դէպօ Նիւթի Տնարող Ֆարմացիի մագազինում Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտօրալնի փողոց, № 35, Գալմանների մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ., Պէտք է ըզգուշանալ խարդախութիւններից:

21—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ (1

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ ԿՈՆՖԻԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒԻՍԱՐԻ գանազան տեսակի, մարտրի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՈՆՖԻԿՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմտաբար. ցանկացողը կարող են դիմել ինձ հետեւեալ հասցէով, Въ Тифлисѣ, МАРТИРОСУ АХПАЗАРОВУ. ПА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ. փոստային կոնֆէկտ պատրաստների ճանապարհածախսերը ինձ վրա եմ առնում,

Մ. Ախինազարեանց.

13—50

ՆՈՒՐ ՀԱՅՆԻՒՆ

ՖԻԼԻՊՕՎԻՉԻ ԵՒ ԸՆԿԼՈՒՄԱՆՑԻՆԵՐԻ չորս ամսվայ գործունէութեան հետեւանքները: (Առանձնապէս լուսանկարի համար կառուցած շինութեան մէջ): Պօլօվինակի փողոց, առն Կ. Եա. Չուբալովի, Թիֆլիսի կըլուխի մօտ: Բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը:

3—10

Դ ա ս ե ր ն ե կ ան մամուլի տակից և վաճառվում են Կ ե ն տ ր օ ն ա կ ան և Ջ. Գ ր իգ ո ր ե ա ն ց ի գրավաճառութիւններում Ս. Մանդինեանի հետեւեալ դասագրքեր.

1. Ագգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.
3. Ագգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . . 30 կ.
4. Նահապետական և հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . 65 կ.





Կ. ՊՈՆՅԵՐ, ՏՏԱՐԱՆ ՍՊՑԱՑ ՓՈՂՈՑ տուն ՉՈՒՐԱԼՕՎԻ: Եկող ձմեռվայ սեզոնի համար առաջարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԻՈՒԻ և ՕՏԱՐԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՄԲՈՒԼՅԱՏՈՐՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԵՐՈՎ, չափազանց էժան գներով, այսինքն: Ձեռքի մեքենաներ 12—5 րուբլ: Ոտքի 50—80 րուբլ:

9—52

Дозволено цензурою Тифлисъ, 23 Сентября 1880 г. Տպարան եղբայրք Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ

Fonds A.R.A.M

№ 171 Սեպտեմբերի 28 (Հոկտեմբերի 10) 1880 Սեպտեմբերի 28 (Հոկտեմբերի 10) № 171

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ".

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լրագրութեան նշանակութիւնը: — Ն ե ր ք ի ն տ ե ս ո ւ թ ի ւ ն: Նամակ Լօռուց: Նամակ Ալէքսանդրապօլից: Նամակ Վերին-Ագուլիսից: Նամակ Ախալցխայից: Նամակ Հին-Նախիջևանից: Նամակ Գանձակից: Ներքին լուրեր:—Ա ր տ ա ք ի ն տ ե ս ո ւ թ ի ւ ն: Տօմսային ցոյց: Միացեալ Նահանգների մէջ ...: — «Մշակի» հեռագիրներ: — Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Կան րօպէներ, երբ անելորդ է յիշեցնել մարդիկներին իրանց պարտաւորութիւնը լրագրական խօսքի միջոցով, ինչքան էլ բարձր լինէր լրագրութեան նշանակութիւնը: Մեր հակառակորդները, «Մեղու» և «Պսակ» կամենում են մեզ բացատրել լրագրութեան բարձր, վսեմ նշանակութիւնը: Բայց ինչ որ իրանք մեզ են ասում, խակապէս նրանց է վերաբերվում:

«Մեղուն» իր բաց նամակի մէջ զրպարտում է մեզ որ մենք կեղծ նամակներ ենք տպում, այն ինչ մեր բոլոր թղթակիցների իսկական անունները մենք շատ հեշտութեամբ իսկոյն կարող էինք յայտնել, եթէ նրանք իրանք այդ կամենային: Երկու լրագիրների մէջ ծագած պօլէմիկի ժամանակ «Մշակի» ոչ մի թղթակցութիւն հնարված չէր, ոչ մինը գրված չէր խմբագրութեան մէջ: «Մեղուն» չէ բաւականանում մեզ զրպարտելով, այլ յանդգնում է յարձակվել մեզ վրա, բացատրելով մեզ թէ որքան մեծ յանցանք է կեղծ նամակների ստեղծելը: Ամենակեղտոտ, վիրաւորիչ կերպով Թիֆլիսի հայ ինտելիգէնցիայի օրգանը համեմատում է կեղծ նամակներ ստեղծողներին անպիտան գողերի, վաչխառուների, սուտ թղթադրամ շինողների, կեղծ վկայութիւն տուողների հետ և այլն:

Այո, կեղծ նամակ ստեղծողները նոյնքան մեծ յանցաւորներ են, որքան վերև յիշված այդ բոլոր յանցաւորները:

Բայց բանից ինչ է դուրս գալիս. «Մեղուն» այդ բոլորը գրել է, նրա համար որ ծածկի իր սեփական յանցանքը, որովհետև նոյն համարում ինքն ճշմարիտ տպում է մի կեղծ նամակ Ամիրխանեանցի անունով, որով շօշափվում է ամենաանվայել կերպով Ամիրխանեանցի պատիւը, վնաս է հասցնում նրա գործունէութեանը, նրա կեանքի անդորրութեանը, գրգռում է նրա դէմ ամբոխի մոլեռանդութիւնը, առուր է գցում Ինդրկովկասի հայերի մի ամբողջ աչագին խմբի, հայ աւետարանականների վրա...

Եւ ճշմարիտ, այդ տեսակ հանգամանքներում աւելորդ է լրագրական պօլէմիկը, անզօր է մամուլի խօսքը, որքան էլ մեծ նշանակութիւն ունենար լրագրութիւնը: Այդ տեսակ հանգամանքներում, այսինքն կեղծ նամակներ տպելու յանցանքի դէմ հնարաւոր է միմիայն օրէնքի դատաստանի միջոցով բացատրութիւն պահանջել:

Եւ չը պէտք է մոռանալ որ Ամիրխանեանցի յանցանքը այստեղ կրկնակի է. մէկը որ նա ստեղծում է և տպում է մի կեղծ նամակ, որի նպատակն է սարսափելի վնաս հասցնել մի մարդուն և մի սկզբունքին և երկրորդ՝ որ նա նոյն իսկ այդ իր յանցանքը ծածկելու համար, մեղադրում է ուրիշին, թէ նա է կեղծ նամակներ ստեղծողը և իբր թէ արդար վրդովմունքով, ազնիւ մարդու զայրացմամբ, դըրօշմում է ամօթի դրօշմով ուրիշի արածը....

Ուրեմն ո՛ր աստիճանի անբարոյականութեան է հասած ողորմելի հայոց մամուլը: Այն մարդը որի համար սովորական բան է կեղծ նամակներ շինելու յանցանքը, այդ տեսակ մարդ շատ հեշտութեամբ, ի հարկէ, կարող է ժամանակով անցնել և դէպի ուրիշ աւելի խոշոր յանցանքներ....

Բայց ամենատխրականն այն է որ այդ տեսակ մարդիկ դեռ երես ունեն խօսել բարոյականութեան վրա և ուրիշներին մեղադրել:

Այո, կան հանգամանքներ, որտեղ լրագրութիւնը անզօր է: Այդ տեսակ հանգամանքներում լրագիրը պիտի լռէ և խօսէ դատաստանը, լրագրական ապարդիւն վէճի տեղը պէտք է բռնի դատարանը:

